



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3495

~~281 (= 91.54)~~

4-39<sup>00</sup>

*A-81.*

2010

B 2001

281 (= 91.54)

4-39 ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՆԿԵՐՁ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՄԲ

ՈՐ ԸՆԴ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՍ

ՔՐԻՍՏՈՆԷԻՑ



ԹԱՐԳ. Ի ԳԱՂՂ. ԼԵԶՈՒԷ

ՀՐԱՄԱՆԱԻ Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՎԱՆԱՀՈՐ ՍՐԲՈՑ ՈՒԽՏԻՍ



ՅԱՐՄԱՇ

Ի ՎԱՆՍ ՉԱՐԽԱՓԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԽԱՆԻ

— 1871 ՌՅԻ —

20 MAY 2013

7249

**Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ**  
**Տ . Գ Է ՈՐԳԱՅ Դ . Վ Ե Հ Ա Փ Ա Ռ**  
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ի ՊԱՏՐ . Ս . ԵՐՈՒՍԱՂԵՄԻ**  
**Տ . ԵՍՍՅԵՍՅ**  
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

**Ի ՊԱՏՐ . ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ**  
**Տ . ՄԿՐՏԶԻ**  
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



**Ի ԹԱՐԳՄԱՆՁԻՆ**

Ատեն ատեն մեծ ու փոքր վարդապետարաններ հրատարակուած են եկեղեցւոյ հաւատքը եւ բարոյականը սորվեցնելու համար, եւ ամենքն ալ քիչ շատ իրենց օգուտներն ունեցած են :

Ասոնց հակառակ արեւմտեան եկեղեցւոյ զանազան ճիւղերու վարդապետութիւնը ուսուցանող գրքեր ալ հրատարակուած են հայ լեզուով, որոնք իրենց ծուռ եւ սխալ սկզբունքներով մեծ դայթակղութիւններու պատճառ եղած են եկեղեցւոյ զաւակաց հոգիներուն . ասոր համար առաջիններուն տուած շահերը, կրնայ ըսուիլ, թէ այս վերջինները փճացուցած են շատ անգամ :

Իրաւ որ արեւմտեան քրիստոնեայք, որ երկու գլխաւոր տարբերութիւններու բաժնուած են՝ եւ կըսուին պապական եւ բողոքական, իրարու դէմ իւրաքանչիւրն ինքիւր դրութիւնը ջատագովելով զիրար երեւան հանած են, եւ մէկգմէկ տասպալելով՝ ուղ-

զափառութեան կաթողիկէ ձայնը զօրացուցած են, անանկ որ քրիստոնէական սկզբանց եւ պատմութեան տեղեակ եւ քիչ մը ալ դատուածը տեղը մարդիկ անոնցմէ կըրնան որոշել ճշմարիտ վարդապետութեան ծանօթութիւնը. սակայն որչափ քիչ եւ որչափ քչերու վրայ կրնայ այս բանն յաջողիլ. եւ որչափ շատ են, դժբաղդարար, ասկէց վտանգի եկողները: Յաւազին իրողութիւն է այս եւ ոչ ենթադրութիւն մը, որուն կվկայէ Հայաստանեայց եկեղեցիէն զատուելով երկու այն մեծ տարբերութեանց կողմն անցնող պապական եւ բողոքական հայոց խումբերը. եւ այն շատ մը եղբայրները՝ որ անոնց իրարու դէմ հանած հակասութիւններէն պաշարուած ոչ այս ըլլալ որոշած են եւ ոչ այն. այլ հողմի առջև ընկած փոշիի պէս ուր կանգ առնելնին իրենք ալ չգիտեն, նոր լեզուով « անտարբեր » են, եւ սուրբ Յովհաննէս առաքելոյն բառով « դադջ » կամ « փխտուելու մօտեկած » են: « Յայտն Գ. 16 »:

Ի՞նչ ընելու էր այսպիսի վտանգներու հոսանքն արդիւրելու համար:

Վարդապետարան մը պէտք էր՝ որ ուղղափառ հաւատքը եւ բարոյականը սոր-

վեցնելու ատեն՝ փոխանակ առջիններուն պէս մէկ ուղղակի եւ դրական շաւիղ մը բռնելով անցնելու, իւրաքանչիւր նիւթի վրայ տարբերութիւններն եւ անոնց հերքումը դնէր՝ որպէս զի ոչ միայն սորվէինք հաստատականն՝ այլ եւ ժխտականն, եւ ի հակառակէն աւելի եւս հաստատուն դիտութիւն բուն վարդապետութեան վրայ ունենայինք:

Այս հանճարեղ եւ շահաւոր ծառայութիւնն ըրած է Վլադիմիր Ալէքէ աստուածաբան վարդապետ քահանայն, որ, ինչպէս ինք ալ բնած է յառաջաբանին մէջ, կիսափաքի մի միայն եկեղեցւոյ միութեան եւ ուղղափառութենէ անդիտութեամբ հեռացող եղբայրներու վերադարձին:

Զգուշութեամբ խօսելու կանոնով տարբերութիւն անուանած է անոնք միայն՝ որոնք վաւերական գրքերով եւ դրութիւններով ծանուցեալ ստոյգ տարբերութիւններ են, եւ ծանր խօսած է այն տարբերութեանց դէմ միայն՝ որոնք վարդապետութեան եւ բարոյականի խիստ էական կետերուն կդպչին:

Միրելի էր այսպիսի գործ մը, մենք սիրեցինք եւ թարգմանեցինք:

Եկեղեցւոյ կաթողիկէ ձայն կամ վար-

դասպետութիւն ըսելով Հայաստանեայց եկեղեցին ալ հետն հասկնալուն համար, ինչպէս կրտէ իւր յառաջարանին մէջ, այն տարբերութիւնները՝ որ կան մեր եւ արեւելեան ուրիշ եկեղեցեաց մէջ, զանց ըրած է, գուցէ զմեզ տարբեր չգիտնալուն համար. մենք այն տարբերութիւնները ծանօթութեամբ քնչանակեցինք: Արարողութեան մասին մէջ բոլորովին մեր եկեղեցւոյն դրութեան հետեւած ենք: Իսկ սուրբ պատարագի վրայ խօսած մասը, որով համառօտ մը Արեւելեան եկեղեցեաց ուրիշ արարողութեանց եւ ծիսից վրայ կխօսէր զանց ըրինք բոլորովին՝ անոր վրայ բաւականէն աւելի խօսած համարելով Խոսքով անձեւացի եւ Ներսէս լաբրոնացի մեր եկեղեցւոյ սուրբ Հայրերը:

Ինչպէս հեղինակն նոյնպէս մենք ալ բնաւ չենք հպարտանար եւ կարծեր՝ թէ եկեղեցին ջատագոյնութեան պէտք ունի եւ ասիկա ըստ ամենայնի անոր լրացեալն է. այլ մանաւանդ հաւատքի հաւասար իրաւունք ունի մեր խելքին վրայ սա համոզումնին՝ թէ. Մարդիկ չեն կրնար զեկեղեցին պաշտպանել, որովհետեւ անոր տէրը իրենք չեն. թէ եկեղեցին այն խորհրդա-

ւոր էակն է՝ որ բաղկացած է երկու հակառակ տարերքներէ, 'ի զօրութենէ եւ 'ի տկարութենէ. երբեմն գետեր, հողմեր, տեղատարաւ անձրեւներ շարունակ զինքը կբաղխեն, բայց ինք անշարժ կըմնայ վէմի վրայ հինն դրած առակաւոր տան պէս. երբեմն մրրկի բռնուելով՝ Բեթսայիդայ անդիլի կողմն անցնելու համար ճամբայ ելլող առաքելական նաւուն պէս հակառակ հողմերէ կտարուբերի. մենք կկարծենք թէ պիտի ընկզմի, բայց ոչ բնաւ: Այս հաստութեան մեկնութիւնն ուր կրնանք դասել: Աւելի մեծ եւ անքննելի հակասութեան մէջ. մէկ Քրիստոսի անձին վրայ աստուածային զօրութեան եւ մարդկային տկարութեան անչիոթ միաբանութեան մէջ: Այս հակասութեանց առջեւ հրեայ եւ հեթանոս կկործանին հետաքրքրութեամբ, քրիստոնեայն կվերականգնի խոստովանութեամբ: Իրաւունք չունինք երբէք պարծելութէ եկեղեցին պաշտպանեցինք, այլ կսիրենք միայն կարծելը թէ ասով ապացոյց մը տալ ուզեցինք զինքը սիրելնուս:

Քրիստոնէական հաւատքի ուսումը հաւատացելոց համար յաւելորդաց օգտակարը չէ, այլ ի հարկաւորաց անհրաժեշտը. որով-

հետեւ հողիներու մէջէն ճամբայ մը բռնե-  
լով յառաջ գացող ուսումն է • ուստի կա-  
ղաչեմք՝ որ ընդունուի այս գրուածը, ինչ-  
պէս որ կ'ըլայէ : Թէ իւր բնական հարկա-  
ւորութեամբը եւ թէ ոճոյն կողմանէ ունե-  
ցած նոր եւ խիստ օգտակար դրութեամբը :  
Բարեբաղդ պիտի համարինք ինքզինքնիս  
եթէ գոնէ քիչերու կրցանք հասկցունել՝  
թէ մեր եկեղեցւոյ վարդապետութիւնը պա-  
պական եւ բողոքական ժողովրդեանց  
դրութեանն որոշուած առաքելական յտակ  
վտակ մ' ունի, որ ծագմանէն 'ի վեր ան-  
պղտոր է • ո՛վ որ ծարաւի է՝ անկէ պէտք է  
խմէ :

ԽՈՐԷՆ Վ . ԱՇԸԳԵԱՆՑ .

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Առաջիկայ աշխատութիւնս հը-  
րատարակելնուս առաջին եւ գլխաւոր  
պատճառն է ըստ կարի եկեղեցեաց մի-  
ութեան մեծ գործոյն նպաստել : Հա-  
մոզուած ըլլալով՝ որ այս միութիւնը  
կատարեալ ուղղափառութեան սահմա-  
նին մէջ միայն կրնայ յաջողիլ, ձեռք  
դարկինք արևելեան ուղղափառ պան-  
ծալի եկեղեցւոյ վարդապետութիւնը  
երևան հանել, որ յայտնութեան աւան-  
դը Գրիստոսէ 'ի վեր ամեն մարդկային  
խառնուրդէ անարատ և մաքուր պա-  
հած ըլլալուն վրայ իրաւամբ կ'պանծայ :

Անհնար է ուրանալ այս եկեղեցւոյն  
առաքելոց ատենէն 'ի վեր անպակասե-  
լի ըլլալը, ո՛չ նուազ անժխտելի է և այս՝  
թէ մէկը չկրնար անոր մէջ և ոչ մէկ



ատեն մը նորաձևութիւն մը մտած ցը-  
նել :

Այս երկու իրողութիւնները բա-  
ւական կցցընեն՝ թէ ինչպէս անոր վը-  
կայութիւնը ընդունելի պէտք է ըլլայ  
այն ճշմարիտ քրիստոնեայներուն , որ  
գիտեն թէ յայտնութիւնը Երողութեան  
մըն է , և իրողութեան ուժը յայտնի և  
անընդհատ վկայութեան վրայ հաստա-  
տուած է :

Քրիստոնէութիւնը փիլիսոփայական  
դերութիւն մը չէ , որ ամէն մարդ ու-  
ղածին պէս մեկնելու իրաւունք ունե-  
նայ : Քրիստոս դրօշման վարդապետու-  
թիւն մը յայտնեց . և այս վարդապե-  
տութիւնը Երողութեան մըն է , որ իբր ճշ-  
մարիտ ընդունելի ըլլալու համար ամ-  
մէն իրողութեանց պէս հաստատուն վը-  
կայութեան կկարօտի : Ուստի քրիս-  
տոնէութեան մէջ ամէն վարդապետա-  
կան ինչ-իւր Երողութեանց սա հարցման կվերա-  
բերի . Քրիստոս այս ինչ կամ այն ինչ վար-  
դապետութիւնը յայտնեց : Ի՞նչպէս  
պատասխան տարու է այս հարցման ,

եթէ ոչ այնպիսի քրիստոնեայ ընկե-  
րութեան մը հաստատուն վկայու-  
թեամբ , որ իր գոյութեան մէջ Բէ ,  
իր հաւատքին մէջ անգործի , և մարդ-  
կային մտաց հնարած ամէն յիմարա-  
կան մտքութեանց դէմ ապառաժի  
պէս անշարժ կեցած ըլլայ :

Ո՞ր դասերու է այս քրիստոնեայ  
ընկերութիւնը , եթէ ոչ արեւելեան ուղ-  
ղափառ եկեղեցւոյ մէջ , Հռովմէական  
եկեղեցին կանգնէ՝ թէ ինքն է այս ըն-  
կերութիւնը . բայց պատմութիւնը ձեռ-  
քերնիս է , որ անոր վարդապետու-  
թեանց եւ սահմանադրութեանց մէջ  
հետզհետէ մտած նորաձևութիւնները  
կցցընէ , Անգղիականք եւ զանազան  
բողոքականք կանգնեն՝ թէ վեշտասա-  
ներորդ դարուն մէջ իրենք նախնի ե-  
կեղեցւոյն հետ նորէն հաստատ կերպով  
միացան . բայց չեն կրնար ուրանալ սա  
երկու յայտնի իրողութիւնները . Ա՛յ թէ  
բարեկարգութեան ատենը իրենց իբր  
ճշմարիտ հրատարակած վարդապետու-  
թիւնը դար մը առաջ ունեցածնին չէ :

Բ. թէ վեչտասաներորդ դարուն մէջ  
 իբր ճշմարիտ ընդունած վարդապետու  
 թիւննին միայն սուրբ Գրոց մեկնութեան  
 վրայ հիմնուած է , որ ինքնին անսը  
 խալութեան կնիք չունի : Այս վերջին  
 իրողութիւնը չեն կրնար ուրանալ . ու  
 բովհեաւ քրիստոնէութեան հիմնական  
 խնդիրներուն վրայ անգամ անանկ ի  
 րարմէ տարբեր այլ և այլ մեկնութիւններ  
 ընդունած են , որ տակաւին հիմայ ալ  
 յայտնի կցցընեն իրենց մէջ եղած տար  
 բերութիւնները :

Արեւմտեան ամէն եկեղեցիները ին  
 ներորդ դարէն մինչև վեչտասաներորդ  
 դարը Հռովմայ վարդապետութիւննե  
 րը դաւանեցան . այսօր շատերը անոնց  
 հակառակ վարդապետութիւններ ու  
 նին . ուստի չեն կրնար իրենց մէջ փո  
 թիւն եւ անպակասելիւն թիւն ցցընել : Յայտ  
 նեալ վարդապետութիւնը անոնց հա  
 մար փրիստոսէ մինչեւ մեր օրերը յոր  
 դեաց յորդի անընդհատ փոխանցուած լա  
 ստոնքութիւն մը չեղաւ :

Քրիստոնէութիւնը փայն արեւելեան

ուղղափառ եկեղեցւոյն ասանկ ժառան  
 դութիւն մը եղաւ . ուստի անոր հի  
 մակուան վկայութիւնն ալ առաքելա  
 կան դարուն վկայութեան հաւասար  
 է : Անոր վարդապետութիւնը առա  
 քելոց գրուածոց եւ քարոզութեանց ,  
 սուրբ Հարց վարդապետութեան , եւ  
 տիեզերական Ժողովոց վճիռներուն հա  
 ւատարիմ արձագանգն է : Արեւմտից  
 կողմերը ինչ փոփոխութիւններ որ ըրին  
 քրիստոնէութեան մէջ ` ամէնն ալ տե  
 սաւ . հռովմէական եկեղեցիէն հին ըլ  
 լալով ` պապականութեան ամեն գոր  
 ծերուն եւ հետզհետէ ըրած նորաձե  
 ւութիւններուն ականատես եղաւ . ա  
 մեն եկեղեցիներուն եւ ազանդներուն  
 ծագման առաջիկայ գտնուեցաւ . եւ  
 մտքերը յուզող ներհական շարժմանց  
 մէջ անշարժ մնաց , սրբոյն Պօղոսի սա  
 պատուէրին վրայ հաստատ մնալով թէ  
 Պահա՛ պատանդն :

Ահա այս պանծալի եկեղեցւոյն  
 վարդապետութիւնն է ` որ հոս առաջ  
 պիտի բերենք : Մեր միտքը կատա

ընլապէս զայն պաշտօնէն չըլլալով՝  
անոր նպաստաւոր ամեն գրական և աստուած-  
ան ասպացոյցները մէջ չենք բերեր: Մեր  
դիտաւորութիւնն է միայն ճիշդեղա-  
ծին պէս երևան հանել զանիկայ:

Արդարև չենք՝ պնդեր՝ թէ՛ մեր  
այս գործը բնաւ պակասութիւն չունի.  
եւ կիսաբուինք՝ թէ՛ որ այս վսեմ  
վարդապետութիւնը իր աստուածային  
մեծվայելչութեամբ առաջ բերել կար-  
ծենք. ուստի այս գործերն իսկատարե-  
լագործելու և ուղղելու միտք ունինք՝  
թէ՛ որ մեր ՚ի հաւատս հայրերը և եղ-  
բայրները բարեհաճին ասոր վրայ ըրած  
դիտողութիւնն ին մեզի հաղորդել: Մենք  
ձեռքերնէս եկածին չափ ուշի ուշով  
եւ մեծ ջանքով աշխատեցանք. բայց  
ո՞վ կրնայ ըսել՝ թէ՛ ես անսխալ եմ,  
եւ երկինքէն մեզի եկած աստուածային  
փրկիտփայլութեան ամեն խնդիրները  
կատարելապէս և անթերի հասկցած  
եմ:

Մենք եկեղեցւոյ վարդապետու-  
թիւնը երևան հանելու համար մեզի ա-  
ռաջնորդ մը չըռնեցինք: Վարդապե-  
տական մասին մէջ նիկիոյ և կոստանդ-  
նուպօլսոյ հանգումսն հետևեցանք, ա-  
մեն յօդուածի քով՝ որչափ կարելի էր՝  
համառօտ մեկնութիւն մը դնելով:  
Վարդապետական մասէն ետև բարո-  
յականին վրայ խօսեցանք, ետքը ե-  
կեղեցւոյ կարդաց և կանոնաց, ետքն ալ  
պատարագին վրայ: Այս ոճը երբեմն  
կրկնութիւններ ընելու ստիպեց մեզ.  
բայց աղէկ սեպեցինք մի և նոյն ըսած  
նիստեղ տեղ կրկնել, քան թէ՛ քե-  
սելով ընթերցողները ձանձրացնել: Օրի-  
նակի համար. «բարեւ երկն և երկր երեւ-  
ելոյ և աներևոյնից բառերը մեկնելու ա-  
տեննիս՝ միայն երկու երևելի և անե-  
րևելի աշխարհներուն վրայ չխօսեցանք,  
հապա անոնց իրարու հետ լուսնեցած  
վերաբերութեանց վրայ ալ. այս վե-  
րաբերութիւնները տեղն եկած ատենը  
չաս անգամ կրկնեցինք: Ասանկ ճա-  
պալ ոճով գրուած վարդապետութիւն»

ները մէկտեղ բերուելով իրարմով կամ բողջանան, ինչպէս որ հարեանցի կար դարով ալ դիւրաւ կտեսնուի :

**Մենք Ամերիկացի Բողոքականները առանձին չենք յիշեր այս դործոյս մէջ . որովհետեւ անոնք Անգղիականաց հետ մի և նոյն են, և անկէ ծագեցան :**

**Մենք Անգղիականները Բողոքականներէն զատ կրօնենք . ինչու որ անոնցմէ բոլորովին տարբեր հիմն ունին : Յայտնի է՝ որ Բողոքականները ձեռնադրութեամբ տրուած քահանայութիւն չեն ընդունիր . բայց Անգղիականները ձեռնադրութիւնը քահանայութիւն տալու միջոց ըլլալն ալ կրնդունին . եպիսկոպոսութեան, քահանայութեան եւ սարկաւազութեան իւրեք սրբազան աստիճաններուն եկեղեցւոյ ճշմարիտ քահանայապետութիւնը կազմելն ալ կրնդունին :**

**Բողոքականութեան ըսելով լուտերական եւ կալվինական ընկերութիւնները կը**

**հասկնանք, որոնց բոլոր նեցուկը ամենուն իր ուզածին պէս աստուածաշունչ մեկնելն է . ձեռնադրութեամբ տրուած քահանայութիւն չունին, այլ միայն հաւատացեալներէն կամ անոնց փոխանորդը՝ սեպուղներէն ընտրուած պաշտօնէութիւն ունին :**

**Դարձեալ գիտնալպէտք է՝ որ մենք Հայաստանեայց եկեղեցին ճշմարիտ եկեղեցիներուն կարգը դասած ենք : Ասիկայ ամեն կողմանէ հասկնալու չէ, հապա միայն ուղղափառ վարդապետութիւնը և եկեղեցւոյ աստուածային սահմանադրութիւնը պահպանելու կողմանէ : Հայաստանեայց եկեղեցին ֆալկեղոնի ժողովոյն ատենը արեւելեան ու արեւմտեան եկեղեցիներէն զատ ու եցաւ, և միայն նոյն ժողովոյն վարդապետութիւնը սխալ հասկնալուն համար այն ատենէն ՚ի վեր եկեղեցւոյ հասարակաց կենաց կցորդ չեղաւ, և զինքը հերձուածող ըրաւ . բայց և այնպէս իւր**

առաջին հաւատքին վրայ հաստատ  
մնաց, և տակաւին այսօր վարդապետու  
թեան մէջ ուղղափառ եկեղեցւոյ կա  
տարելապէս համաձայն է : Այս'մութով  
միայն ճշմարիտ եկեղեցւոյ մասն սե  
պեցինք զանկիայ ինչպէս որ էր իր  
միութեան ատենը հինգերորդ դարուն  
մէջ\* :

**Այս գործը յօրինելու ատեննիս  
գլխաւորապէս յետագայ աղբիւրներէն  
քաղեցինք մեր գրածները :**

\* Հեղինակը Հայոց եկեղեցւոյ վրայ այս կերպով չէր  
խօսեր, թէ որ Հառաջադանիս վերջը հերետիկոսու  
թիւն բառին վրայ տուած սահմանին պէս ճիշտ սահ  
ման մըն ալ հերձուածող բառին վրայ տուած բլլար :  
Հերձուածող է այն, որ կամաւոր կամ յաղթելի տղի  
տութեամբ, և բոտ այրոյց, սիրալնօք իրաւանց եւ ոչ  
գործոյ եկեղեցիէն կղատուի : Արդարեւ թէ որ Հա  
յատասեայց եկեղեցին ՚ի սրբոսն անդ ստոյգ իմա  
ցած բլլար թէ Բաղկեղանի ժողովը Քրիստոսի վրայ  
որջումիս վարդապետութիւն ունի համաձայն մտաց  
տարբ ժողովոյն Նփետոսի, եւ թէ ուղիղ մտօք եւ ա  
ռանց ՚ի ստորական բաժանման երկու բնութիւն ը  
տաւ ՚ի Քրիստոս, անտարակիտ կրնգուներ զանկիայ :  
Բայց որովհետեւ ոչ իր կողմանէ երեսիփոսան մը ունէր  
նայն ժողովոյն մէջ, եւ ոչ նորը պաշտօնապէս անդե  
կութիւն մը տրուեցաւ իրեն անոր վարդապետութեան  
վրայ, մանաւանդ թէ Ասորի զգալարտինիբու բերնէն

**Ուղղափառ եկեղեցւոյն համար՝ սուրբ  
Դրքէն, սուրբ Հայրերէն և տիեզերա  
կան Ժողովներէն գաա ուրիշ անդի կա**

ամէն օր չար համբաւներ կրէր անոր վրայ, ուստի  
զանկիայ համարձակ մերժելէն զատ ուրիշ ՚նչ կրնար  
ընել : Պետի բառի թէ կրնար անոր վարդապետու  
թիւնը հաւատարիմ աղբիւրներէ ստոյգ իմանալ : Բայց  
ուրիշ ուղեբու էր այն ստոյգ տեղեկութիւնը : Լա  
տիններէն, և բայց անոնք ՚ի հաւատոցս եւ ՚ի քաղաքա  
կանս բոլորովին անմասոթ էին Հայոց : Յոյներէն,  
բայց անոնց մէջ ոչ երկար ժամանակ վեճ եղաւ նոյն  
ժողովոյն որջմտութեան վրայ, և ու թուան տարեի չափ  
մերժեցին զանկիայ : Ասոնք կսեին Հայերը, եւ հակա  
ռակը չկրնայ լսելուն համար մերժեցին զանկիայ :  
Ժամանակը կհննար, եւ Ազգը իր հայրենաւանդ  
վարդապետութենէն նշոմախցի մը չափ կտտորելու  
սովորած չլլալով, անյաղթելի գաղափար մը եղաւ ա  
տկիայ Ազգին մէջ, զոր եւ ոչ իսկ Վ. Պօլսոյ կայսերաց  
սարերը եւ հուները կարող եղան անոր մէջէն իյել :  
Ահա Բաղկեղանի ժողովոյն վարդապետութեան  
վրայ Հայատաննայ, եկեղեցւոյ այս անյաղթելի սոփաու  
թիւնը իրաւամբ կարողացան : զանոնք հերձուածողու  
թեան կեղտ անունէն :

Հեղինակը թէ որ հերձուածող քնտուել կուզէ ե  
կեղեցւոյ մէջ կցցրնեք իւրեւ Բաղղիկայ եկեղեցին, որ  
միայն երկրպագութիւն բառին համար, որ բնութիւն  
տունին պէս հոմանիշ բառ մըն ալ չէ, բաւական ա  
տուն Լատինաց և Յունաց բնդունած է : տիեզերական  
ժողովը մերժեց, բայց հերձուածող չսպուռեցաւ, ինչ  
պէս որ Հեղինակն ինքն ալ չսպեր՝ մինչև վերջատա  
ներորդ գարը արեւմտեան բոյր եկեղեցիները Հրաով  
մայ եկեղեցւոյն հետ մէկ սեպրով քիւ մը վերը 4 ե  
րեսին մէջ : Այցյները իրեն Ռուսաց եկեղեցին, որ  
Յունաց հագներ գլխոյն երաւատութեան տակէն ել  
ներուն համար հակառակ կանոնաց եկեղեցւոյ անոր  
նկատմամբ հերձուածող մըն է, թէ որ Յունաց քա

րօտ չեղանք . ինչու որ ասոնք են անոր վարդապետութեան բուն շարիւրները : Բայց մեր գիտցածը ստուգելու համար՝ ուշադրութեամբ աչքէ անցուցինք Արևելեան Պարթևաբնակաց առ Պիոս իններորդ խրկած Երջաբերական Թողովը . Մոսքուայի Թիւարէթ Արքեպիսկոպոսին յօրինած ողջամիտ մեծ Վերհարանէականը , որ Ռուսիոյ սուրբ Սիւնհոդոսէն ընդունուած , և Պատրիարքաց հաւանութեամբ յունարէնի թարգմանուած է . Բարքոֆի հիմակուան Մակարիոս Արքեպիսկոպոսին Երբարանիւն Աստուածաբանութեան և Վարդապետական աստուածաբանութեան ըսուած հանձարեղ գրուածքը , որ գիտուն աստուածաբաններուն կարգալու արժա-

ղաբական նկատմունքները արգելք չըլլային այս անախորժ անունը անոց տալու : Արդ թէ որ այս երկու եկեղեցիները հերձուածող չեն սեպուիր եկեղեցւոյ մէջ , որուն արժանի էրն իրենց բաժանման ծանրակշիւ պարագաներովը , անիրաւ է Հայաստանեայց եկեղեցին յիշեալ պատճառներով հերձուածող և ճմարկտ եկեղեցւոյ հետ անմասն համարել :

Մ. Թ.

նի գիրք մըն է :

Հռովմէական եկեղեցւոյն համար Տրիտենդեան Ժողովոյն վճիռներուն և քրիստոնէականին հետևեցանք , Պապերուն կոնդակներով եւ Հռովմայ'աստուածաբաններուն ու հռովմէական եպիսկոպոսներուն զանազան գրուածքներով վարդապետութեան մէջ հետըզհետէ մտած չափաւորութիւններն ալ չըմտնալով . Այս գործերը իրաւամբ հըռովմէական եկեղեցւոյ հիմակուան վարդապետութեան արձագանգը կսեպուին . բայց մենք բաւական կսեպենք յցընել Լիդուորեայ , կուսէ կարգինային , եւ Կիւրի ձեղվիթին գործերը , եւ Տրիտենդեան Ժողովոյն վարդապետութիւնը չափաւորող կոնդակներէն . Միշտն եւ Անճառ կոնդակները , եւ 1864 ին Երջաբերականը լիւր յասելուսովը մէկտեղ :

Թէ որ հռովմէական եկեղեցւոյ վարդապետութեան վրայ մեր մէկ ըսածին հակառակող մը գտնուի , կրնանք հաստատել զայն Պապերուն պաշտօնական գը-

րու թիւններէն , եպիսկոպոսական կոն-  
գակներէն , կամ հռովմէական եկեղե-  
ցւոյ ընդունած աստուածաբանական  
գրուածքներէն :

Անգղիականաց գալով , գլխաւորապէս անոնց «լեւազրէն» դիմե-  
ցինք , որուն մէջ կրօնականներն անոնց  
քրիստոնէական վարդապետութիւնը և  
հաւատոյ կամ կրօնի երեսուն և ինն յո-  
գուածները : Այս յօդուածները անոնց  
և հռովմէական եկեղեցւոյ մէջ վէճի տակ  
ինկած կէտերուն վրայ Անգղիականաց  
վարդապետական հաւատալեաց պաշտօ-  
նական յայտարարութիւնն ըլլալով՝ ա-  
նոնց հաւատոյ ստոյգ խոստովանութիւնը  
սեպեցինք , և վարդապետութեան վրայ  
ըսելիքներնուս գլխաւոր հիմն բըռնե-  
ցինք :

Մեր միաքը Անգղիականաց և ամե-  
րիկեան Բողոքականաց արեւելեան ուղ-  
ղափառ եկեղեցւոյն հետ միանալու  
արգելքները ըստ կարի վերցընել ըլ-  
լալով , յօդուածներուն տուած ողջա-  
միտ խմաստը առինք , նոյնպէս Անգղիոյ

մեծ ընկերութեան Անգղիականաց  
վարդապետութիւնը աշխարհածանօթ  
ընելու համար հրատարակած գործերէն  
ալ բան քաղեցինք :

Բողոքականաց համար՝ Աւկսպուր-  
կի և Լառօչէլի հաւատոյ խոստովանու-  
թիւնները հիմն բռնեցինք . բայց որով  
հետեւ այս գրուածքները հիմնական  
Բողոքականներուն վարդապետութիւն  
ները ճշգրիտ չեն բացատրեր , անոր  
համար Բողոքական անուանի աստուա-  
ծաբաններուն մեր օրերը հրատարա-  
կած գործերն ալ աչքէ անցուցինք .  
Պէտք է խոստովանինք՝ որ այնչափ Բողո-  
քականութիւն գտանք , որչափ մատե-  
նագիր , և անոնց ամենուն ընդունելի  
երեցած մէկ քանի կարծիքները առ-  
նել բաւական սեպեցանք :

Մենք այս գործոյս մէջ հմտու-  
թիւն ծախել չուզեցինք : Ստիկայ ի-  
մաստուն գրուածք մը չէ՝ այս բառին  
ուամբական առմամբը , հասլա սլարդ

ճիշդ եւ գիւրբիմաց գործ մըն է , որ աստուածաբանն ալ կրնայ կարգալ , աշխարհականն ալ , եւ տգէտներն ան գամ կհասկնան :

Յաջողեցանք . ասիկայ ըսելը մեզի չիյնար : Որչափ որ մեր գործը պահասաւոր ալ ըլլայ , կյուսանք՝ թէ ինչ պէս որ մեր նպատակը օգտակար ըլլալ է , անանկ ալ սիրով կընդունուի , եւ մենք այս գործերնիս ուղղելու համար մեզի խրկուած ամեն իրաւացի դէտողութիւնները ընդունելու պատրաստ ենք :


Այս ծանօթութիւնները չվերջացուցած կիմացնենք՝ որ մենք սղղափառ եկեղեցիէն զատուած քրիստոնեայ հասարակութեանց անդամոց դէտաւորութեանց վրայ կասկած չունինք :

Մենք ճշմարիտ եկեղեցոյ հաւատոց կատարելապէս համաձայն չեղող ամէն վարդապետութիւնները մոլորու-

թիւն կսեպենք , բայց չենք կարծեր թէ ամէն խարուողները անշուշտ հերետիկոս են : Մոլորութիւն մը հերետիկոսութիւն ըլլալու համար՝ պէտք է որ եկեղեցին , որ յայտնեալ ճշմարտութեան պահապանն է , վճռած ըլլայ՝ թէ այն մոլորութիւնը աստուածային վարդապետութեան մը հակառակ է : Հերետիկոս ըլլալու համար եկեղեցոյ վճռոյն դէմ դնելով յայտնեալ ճշմարտութեան մը հակառակ կարծիք մը պաշտպանելու է : Խաբուած մարդը կրնայ պարզամիտ մէկը սեպուիլ , եւ մէկը չկրնար մեղադրել զանիկայ . հերետիկոսը հպարտ , ապստամբ եւ դատապարտութեան արժանի մէկն է :

Մենք կկարծենք թէ հերձեալ եկեղեցեաց մէջ շատ մարդիկ կան , որ բարեմտութեամբ խաբուած են , քան թէ յամառ հերետիկոսներ են : Ուստի մեր այս համառօտ գործը եղբայրական ճշմարիտ սիրոյ ամենայն ըղբացմամբ անոնց կհուլղինք , աղաչելով՝ որ ինչպէս վենք բարեմտութեամբ

Հ. 5-95011





դրեցինք ասիկայ, իրենք ալ բարեմը  
տուժեամբ կարդան, եւ կյուսանք  
որ թէ որ ճշմարտութեան ձայնը իրենց  
լսելի ըլլայ, որոնքն պիտի շնորհակցեն,  
եւ մաքերնուն մէջ ծագած լոյսը պիտի  
չմերժեն:

Թիչ որ այս գրքոյից օգուտ մը ը-  
նէ, Աստուծոյ շնորհաց կուսանք դայն,  
որ իւր հրաշագործութեանց համար  
չատ անգամ տկար գործիքներ ձեռք  
կառնէ:





**ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ**

**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

**ՀԱՆԴԵՐՁ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՄԲԻ**

**ՈՐ ԸՆԴ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՍ**

**ՔՐԻՍՏՈՆԷԻՅ**



**Թէ ո՞րն է հաւատոյ կանոնը**

**Քրիստոնէութիւնը քրիստոսի  
յայտնած կրօնքն է, Աստուծոյ՝ առաջին  
մարդուն, նահապետաց, Մովսէսի և մար  
գարէից հետզհետէ յայտնած առաջին  
կրօնքին բացայայտութիւնը և լրումն է :  
« Բազում մասամբք եւ բազում օ  
րինակօք, կրսէ սուրբն Պօղոս, կան**

խաւ խօսեցաւ Ստտուած ընդ հարսն  
մեր մարդարէիւք . 'ի վախճան աւուր  
ցլա այսոցիկ՝ խօսեցաւ ընդ մեզ  
որդւոցն " . Եբբ . Ա . 1 . 2 :

Առաջին կրօնքին նպատակն էր  
Ստտուած պաշտել Յիսուսի ֆրիստոսի  
ակնկալութեամբ եւ յուսով : ֆրիստո  
նէութիւնն ալ նոյն նպատակը ունի  
Յիսուսի ֆրիստոսի մարդոց փրկչին  
ձեռօք : « Մի՛ համարիք , կրսէ Յիսուս ,  
թէ եկի լուծանել զօրէնս կամ զմար  
դարէս , ո՛չ եկի լուծանել , այլ ընու :  
Ամեն ասեմ ձեզ՝ մինչեւ անցեն եր  
կինք եւ երկիր , յովտ մի՛ որ նշանա  
խեց մի է , ո՛չ անցցէ յօրինացն եւ 'ի  
մարդարէից՝ մինչեւ ամենայն եղիցի " .  
Մարթ . Ե . 17 . 18 :

Քրիստոս իր պաշտօնը կատարե  
լէն ետքը՝ անոր օրինակն ըլլալու եւ  
գալստեան յեշատակը պահելու հա  
մար հաստատուած ամեն բաները դադ  
րեցան : Մնացածը մնաց , ինչու որ Ստ  
տուած միշտ ճշմարտութիւնը միայն կը  
յայտնէ , որ ճէ՛ ու անփոփոխ է : Ըսելէ

թէ առաջ ծածկարար յայտնած բա  
ները միայն իր որդւոյն Յիսուսի ֆրիս  
տոսի ձեռօք բացայայտ յայտնեց , եւ  
աշխարհի անանկ ճշմարտութիւններ ի  
մացուց՝ որ անկէ յառաջ յայտնել ու  
ղած չէր :

Քրիստոնէութիւնը յայտնու  
թիւն ըլլալով՝ Ստտուծոյ խօսքին  
վրայ միայն կհաստատուի : ֆրիստոսի  
խրկած առաքեալները անկէ սորված  
նին միայն սորվըցուցին : « Գնացէ՛ք այ  
սուհետեւ , ըսաւ անոնց Տէրը , աշա  
կերտեցէ՛ք զամենայն հեթանոսս . մը  
կրտեցէ՛ք զնոսս յանուն Հօր՝ եւ Որ  
դւոյ՝ եւ Հոգւոյն սրբոյ : Ուսուցէ՛ք նո  
ցա պահել զամենայն որ ինչ պատ  
ուիրեցի ձեզ " . Մարթ . ԻԲ . 19 . 20 :

Ուրեմն Հաստոյ ճէ՛ աչքիւրը Աս  
տուծոյ խօսքն է :

Քրիստոս ասիկայ կենդանի ձայ  
նով հաղորդեց , եւ ո՛չ գրով : Առա  
քեալները թէ՛ կենդանի ձայնով և թէ՛  
գրով աւանդեցին : « Այսուհետեւ եղ  
բա՛րք , հաստատուն կացէ՛ք , կրսէ Պօ

զոս առաքեալը , պինդ կալարու՛ք զա-  
ւանդութիւնսն՝ զոր ուսարուք , եթէ  
բանիւ , եւ եթէ թղթով մերով » .  
Բ. Թե . Բ. 14 :

Առաքեալները իրենց բերանացի  
եւ գրաւոր վարդապետութիւնները  
այն ժամանակի հաւատացելոց տուին :  
Քրիստոնէից երկրորդ սերունդը ա-  
ռաջինէն առաւ զանոնք , երրորդին  
հաղորդեց , և այսպէս սերունդէ սե-  
րունդ մինչև մեր օրերը առաքելոց ժա-  
մանակէն ՚ի վեր հաստատուած եկեղե-  
ցիներուն մէջ մնացին : Աս կերպով  
եկած գրաւոր վարդապետութիւնները  
չոր կտակարանին գիրքերուն մէջ կրօ-  
վանդակին : Աս գիրքերն են .

Չորս Աւետարանները , ըստ Մատ-  
թէոսի , Մարկոսի , Դուկասու , և Յով-  
հաննու .

Գործք առաքելոցը .

Պօղոսի տասն և չորս թուղթերը .

Յակոբայ թուղթը .

Պետրոսի երկու թուղթերը .

Յովհաննու իրեք թուղթերը .

Յուդայի թուղթը .

Յովհաննու յայտնութիւնը :

Գրաւոր ու անգիր վարդապետու-  
թիւններէն միայն անոնք վաւերա-  
կան սեպելու է՝ որ առաքեալներէն  
կուգան և բոլոր առաքելական եկե-  
ղեցիներուն անընդհատ փոխանցեցան :  
Ասկէ կհետեւի՝ որ յայտնեալ ճշմարիտ  
վարդապետութիւնը ճանչնալու մէկ հա-  
տիկ յիշող առ հասարարուն եւ ընդհան-  
րակո՛ն վկայութիւնն է . որ աստու-  
թեան կրտուի :

Պէտք չէ ասիկայ շփոթել ճար-  
չային աստուրութիւններուն , այսինքն այն  
ինչ տեղը կամ այն ինչ ժամանակը  
ընդունուած կարծիքներուն հետ, որ ե-  
կեղեցական կարգաց և կանոնաց կը-  
վերաբերին , և թէ որ աստուածային  
վարդապետութեան համաձայն ըլլան՝  
ընդունելի են , ապա թէ ոչ խոտելի  
են . և բնաւ յայտնութեան լրումն չեն  
կրնար սեպուիլ :

Յայտնութիւն սեպելու բաները մի-  
այն անոնք են՝ որ կամ գրով և կամ

բերնով հաղորդուած աստուածային գրական վկայութիւն մը սենին իրենց հաստատուն ըլլալուն : Աս վկայութիւնը Քրիստոս տուաւ մեզի , և անոր առաջին աշակերտները , որ ասիկայ ամեն ժողովրդոց հաղորդելու համար ընտրուած , և Հոգւով սրբով լցուած մարդիկ էին , ասոր միակ պաշտօնական ամանդապահներն եղան :

Ապա ուրեմն յայտնեալ վարդապետութիւնը ասանդ մըն է : Ամէն քրիստոնեայ սերունդ ջանացած է՝ որ աս ամանդը անարատ ու սուրբ պահէ ամէն մարդկային խառնուրդէ , եւ իր ընդունած կերպովը ամանդէ զայն իր յետագայ սերնդոց : « Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն զորս յինէն լուար , հաւատովք եւ սիրով որ ՚ի Քրիստոս Յիսուս : Չբարւօք ամանդըն պահեսջի՛ր ՚ի ձեռն հոգւոյն սրբոյ ՚ի մեզ բնակելոյ » Բ. Տէ՛ . Ա. 13 . 14 : Ո՛վ Տիմոթէէ՛ պահեա զամանդն՝ խտուրեալ ՚ի պղծոց եւ ՚ի նորածայն բանից , եւ ՚ի հակառակութենէ , եւ ՚ի մոլորաւ

նուն դիտութենէ , զոր ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան ՚ի հաւատոց անտի : Ա . Տէ՛ . Զ . 20 . 21 : Հաստատուն կայ յոր ուսարդ , եւ հաւատարիմ եղեր » . Բ . Տէ՛ . Գ . 14 :

Մանաւոր եկեղեցի մը աստուածային ամանդոյն պահպանութեան մէջ սխալեցաւ , բայց ընդհանուր եկեղեցին չկրցաւ սխալիլ . որովհետեւ Քրիստոս ամեն օր մինչև ՚ի կոտորած աշխարհի իր եկեղեցւոյն հետ ըլլալ խոստացաւ . Մարի . Իլ . 20 : Արդ Քրիստոս , որ Աստուծոյ բանը և ճշմարտութիւն է , մուրրութիւն դաւանող եկեղեցւոյն հետ չկրնար ըլլալ : Անոր համար Պօղոս առաքեալը եկեղեցին « Սէն էս հասարակութեան ճշմարտութեան , սուրբ և անարար հարսն և մարմին Քրիստոսի » կանուանէ . Ա . Տէ՛ . Գ . 15 : Եփեսոյ . Ե . 25 : Կորն . Ա . 24 :

Ամէն մանաւոր սխալական եկեղեցիներէն վեր ընդհանրական եկեղեցի մը կայ , որուն հետ պիտի ըլլայ միշտ Քրիստոս , և որ ո՛չ ժամանակի տակ

կիցնայ, և ո՛չ միջոցի մը մէջ կամիտ-  
փուի. առաքելներէն և անոնցմով  
Քրիստոսէ կուգայ. դարերէ 'իջեր կը-  
յարատեւէ, հաստատապէս վկայելով  
ճշմարտութեան և իրենյանձնուած ա-  
ւանդը հաւատարմաբար պահելով: Իբ-  
րիստոս, որ անոր կառավարն է, յայտ-  
նապէս անոր բոլորտիքը կպատէ, և  
մասնաւոր եկեղեցիներուն մէջ բաժա-  
նում մտնելու թոյլ տրուեցաւ, որպէս  
զի անոր վկայութիւնը պայծառ փայլի:  
Աս ընդհանրական եկեղեցին այսպէս  
կրնանք ցուցնել:

Այսօր աշխարհիս մէջ իրեք  
գլխաւոր եւ առաքելական եկեղեցի  
կայ. Յունական եկեղեցի, Լատի-  
նական եկեղեցի, Հայաստանեաց ե-  
կեղեցի: Աս վերջինը չորրորդ դա-  
րուն մէջ յունական եկեղեցիէն ծագած  
ըլլալուն համար՝ անով առաքելական  
կրօնայ\* Աս իրեք եկեղեցիները քրիս-

\* Գրուածքին կերպէն կերևի թէ Հայաստանեաց  
եկեղեցւոյն ծագման նկատմամբ հեղինակին հմուտ-  
թիւնը պակասաւոր է, որ կկարծէ թէ Քրիստոսեւո-

տոնէական թուականին չորրորդ դա-  
րուն մէջ մէկ էին: Հայաստանեաց  
եկեղեցին հինգերորդ դարուն մէջ մէ-  
կալ երկուքէն զատուեցաւ: Յունաց և  
Լատինաց եկեղեցիները մինչև և և թե-  
րորդ դարը միացած էին: Իններսրդին  
մէջ սկսան իրարմէ բաժնուիլ:

Աս անժխատի իրողութիւններէն  
աս հետևութիւնները առաջ կուգան.  
Ա. թէ Յունաց և Լատինաց եկեղեցիներ-  
ուն հիմնական վարդապետութիւն-  
ները շատ շատ տխրորդ դարուն վար-  
դապետութիւններն են, սրովհետև  
իրարմէ զատուելէն և ակ բան մը չկը-  
ցան առնել մէկմէկէ. Բ. թէ Յունաց  
Լատինաց և Հայոց եկեղեցիներուն ար-  
դի վարդապետութիւնները շատ շատ  
չորրորդ դարուն վարդապետութիւն-  
ներն են, ինչու որ երրորդը աս դարէն  
ետքը մէկալ երկուքէն բան մը չառաւ:

Թիւնը Գ. դարուն մէջ մտած է մեր մէջ: Մեր  
եկեղեցւոյն սկիզբը Քարթուղիսէոս և Թագէոս ա-  
ռաքելոց միջոցաւ առաքելոց օրերէն է, թէ և ար-  
գովին եւ հանրական լուսաւորութիւնը Գ. դարուն մէջ  
կատարուեցաւ ասրը Լուսաւորիչ Հօր ձեռքը: Մ. Թ.

Ստոյգ իրողութիւն մըն է՝ թէ աս եկեղեցիներուն մէջ սաստիկ հակառակութիւն մը կայ. Տասներորդ դարուն մէջ այն աստիճան զայրացաւ Յոյն և Լատին եկեղեցիներուն մէջ եղած աս ատելութիւնը, որ Մի. քայել կերուլարիոս լոկ ծիսական սովորութիւններու համար Լատինները կյանդիմանէր. օրինակի համար, թէ ինչ<sup>՞</sup> քանի մը որոշեալ օրեր «էլուի» կերդեն. և սովորութիւն մը մէկէն Յունաց ատելի ըլլալու համար բաւական էր որ արևմտեան ըլլար. Ասկէց յայտնի կըլլայ՝ որ յունական եկեղեցին իններորդ դարէն ետև լատինական եկեղեցիէն բան մը չկրցաւ առնել. Հայերն ալ նոյն պատճառաւ Քաղկեդոնի ժողովէն ետև Յոյներէն բան մը չկրցան առնել:

Բայց Յունաց եւ Հայոց եկեղեցիներուն մէջ եղած տարբերութիւնը միայն արտաքին է, եւ քանի՞ մը քաղաքական պարագայներէ ու սովորութիւններէ զատ ուրիշ պատճառ չունի, բայց եթէ Քաղկեդոնի ժողովոյն

վարդապետութիւնը ծուռ հասկնալնին, երկու ուղղափառ եկեղեցիներուն վարդապետութիւնը մի եւ նոյն է. Հայաստանեայց եկեղեցւոյ այն վարդապետութիւնները, որոնցմով Լատինաց եկեղեցին կկշտամբէ, Յունաց եկեղեցւոյ վարդապետութիւններուն կատարելապէս համաձայն են:

Ապա ուրեմն Յունաց եւ Հայոց եկեղեցիները այսօր Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին կներկայացընեն այն կերպով՝ ինչպէս որ էր իր միութեան ատենը չորրորդ դարուն մէջ, և ինչպէս որ էր արևմտից մէջ մինչև ութերորդ դարը:

Այս իրողութեան ստուգութեանը կրնանք վկայ կանչել Քաղկեդոնի ժողովէն ՚ի վեր եկեղեցիէն զատուող արևելեան տեսակ տեսակ աղանդները: Թէ որ մէկդի թողունք անոնց բաժանման պատճառ եղող կարծիքները, մընացած բոլոր վարդապետական ինոյոց մէջ յունական եկեղեցւոյն և իններորդ դարէն առաջուան Լատինական

եկեղեցւոյն շատ մօտեցած են : նոյն պէս կրնանք վկայ կանչել վրաց եկեղեցին , որ քաղաքական պատճառներով հինգերորդ դարէն 'ի վեր մէկալ ամէն եկեղեցիներուն հետ չհաղորդեցաւ : Բայց երբոր աս դարուս ըսկիցը՝ իբր 1803 ին՝ իր , իայսպէս ըսենք , խաւարչտին վիճակէն դուրս ելաւ աս եկեղեցին , Յունա — Ռուսաց եւ Հայաց եկեղեցիներուն հետ կատարեցապէս համաձայն դտան :

Աս եղեղութիւնները բաւական յայտնի կցցնեն՝ թէ Յունա — Ռուսաց , Հայոց եւ վրաց եկեղեցիները , նոյնպէս իններորդ դարէն առաջուան լատինաց եկեղեցին ալ , Մարտիրոսաց եկեղեցին կներկայացնեն , որ նոյն ինքն Առաքելոց եւ Քրիստոսի եկեղեցին էր :

Ահա աս կերպով պարզապէս կըստի քրիստոնէական եկեղեցւոյ հասարական եւ ընդհանուր յայնը , եւ ամեն քրիստոնեայ աս ձայնին , աս հասարական եւ ընդհանուր վկայութեան մէջ դիւրաւ կըրնայ դտնել իր հասարակն կանոնը :

Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին ասանելի է . ոչ ժամանակի տակ կիյնայ եւ ոչ տեղոյ . իր կախովիւնը կամ ընդհանրականութիւնը իրեն իրապէս տարբերիչ յատկութիւնը եւ առաջնութեան վկայն է . առաքելոց ժամանակը ինչպէս էր՝ հիմայ ալ այնպէս է . եւ իր ձայնը միշտ մի եւ նոյն է . Բարոյական էակ մըն է , որ դարերէ 'ի վեր կյարատեւ է , եւ անընդհատ յաջորդութեամբ ուղղակի Քրիստոսի կտանի մեղ . աշտարակի վրայ դրուած լուսատու լապտերի պէս բոլոր աշխարհս կըլուսաւորէ . անոր հաստատուն եւ ընդհանուր վկայութիւնը ցընելու համար հարկ չէ երկար բարակ վէճի մտնել . ինքը կայ ու կիսօսի .

Մեր առաջ բերելիք վարդապետութիւնը Յունաց եւ լատինաց եկեղեցիներուն մինչեւ ութերորդ դարը 'ի միասին ունեցած , եւ հիմայ ալ Յունաց , Հայոց , եւ վրաց առաքելական եկեղեցիներուն դաւանած վարդապետութիւնն է . ըսել է թէ նախնի



եկեղեցւոյն՝ այսինքն չորրորդ դարէն  
առաջուան եկեղեցւոյն վարդապետու  
թիւնն է :

Ասկէց կմակարերենք՝ թէ առա-  
քերց վարդապետութիւնն ալ ան է .  
եւ թէ Յունա — Ռուսաց , Հայոց եւ Վը-  
րաց եկեղեցիները այս օրուան օրս  
Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին ցըրնող  
հաւատացեալներն են : թէ որ այսպէս  
է , անհնար է հարաբերել և ուղղաբար  
որոնեայ ըլլալ առանց անոնց հետ միա-  
նալու :



Հասարոյ կանոնին Վրաց բրեւոյննէց եկեղեցի-  
ներուն մէջ եղած արբերութիւնները :

Հռովմէական եկեղեցին մինչև վերջ  
առասաներորդ դարը ընդունեց թէ հա-  
սարոյ կանոնը եկեղեցւոյ հասարարան և ընդ-  
հանուր վկայութեան վրայ կկայանայ : Վերջ-

տասաներորդ դարուն մէջ քանի մը  
աստուածաբաններ , մանաւանդ Բել-  
լարմին ճիզուիթը , պապերուն պահանջ  
չունենըրը աստուածաբանական վար-  
դապետութեանց կարգը անցընելով  
սորվեցուցին՝ թէ Հռովմայ եպիսկոպոս-  
ոք յասարածային երասանց եկեղեցւոյ դը-  
րուին ըլլալով՝ ամբողջ եկեղեցին կներ-  
կայացընէ , և գրաւոր ու անդիր աւան-  
դութեամբ հաղորդուած յայտնեալ  
վարդապետութեան անսխալ մեկնիչն է :  
Ուրիշ աստուածաբաններ , մանաւանդ  
Գաղղիացիները , առաջին վարդապե-  
թեան պաշտպան կանգնեցան . անոնց  
անունը Գաղղիական դրին . Բելլարմինեան  
հերձուածողներն աւելի իտալիա՝  
այսինքն Ալպեան լեռներէն անդին ըլ-  
լալով , որ իտալիան Գաղղիայէն կզա-  
տէ , անդրալեռնական ըսուեցան , իրենց  
տոր վարդապետութիւնն ալ անդրալե-  
ռնականութեան : Այս դրութիւնը քիչ քիչ  
հռովմէական եկեղեցւոյ մէջ տարա-  
ծուեցաւ , և և այսօր այն եկեղեցւոյ  
վարդապետութիւնն աս է : Այս դը-

բութիւնը հակառակ է բուն ողջամիտ վարդապետութեան, որ հասարականքը չէ թէ Հռովմայ եպիսկոպոսին խօսքին, հապա աւաքեալներէն մինչև մեր օրերը եկող ամբողջ եկեղեցւոյ հասարականքը քննարկելով վկայութեան վրայ կընէ:

Հռովմէական եկեղեցին ուղղափառ ըլլալու համար՝ պէտք է որ ձգէ այն դրութիւնն ալ, որով պապին՝ իբր սոսկ եպիսկոպոս ունեցած իշխանութենէն բարձր վարդապետական իշխանութիւն մըն ալ կուտայ:

Անդրիականք Հասարականքն վրայ կատարելապէս որոշ և վճռական վարդապետութիւն մը չունին: Հաւատոյ վեցերորդ յօդուածին մէջ՝ թէպէտ միայն գրաւոր վարդապետութիւնը կընդունին, ինն և տասներորդ յօդուածով՝ ընդհանրական եկեղեցին կազմող բոլոր գլխաւոր եկեղեցեաց անպակասելիութիւնը կմտնեն. քսան և մէկերորդ յօդուածով ալ՝ տիեզերական ժողովները՝ թէ և բովանդակ եկեղեցին ալ ներկայացնեն՝ անխալ չեն, կրնն. բայց

քսաներորդ՝ յօդուածով ալ կընդունին թէ եկեղեցին ՚ի հաւատոյս ծագած վեճերը կտրելու իշխանութիւն ունի. երեսուն և չորսին մէջ՝ եկեղեցւոյ ծիսական շարժումներն անգամ խանգարողները կգատապարտեն. հասարակաց ժամերգութեան դրոց յարաբանին մէջ կպատուիրեն, որ «աստուածային պաշտաման ծագումը և հիմը նախնի հարց դրոց մէջ վնասուի» միայն գրաւոր վարդապետութեան հակառակ եղած բաները կմերժեն, և նախնի Հարց հաստատած կարգը աստուածային ճշմարիտ պաշտաման կանոն կսեպեն: Նիկիոյ, կոստանդնուպոլսոյ, Եփեսոսի և Քաղկեդոնի ժողովները ճանչնալով կընդունին՝ թէ անոնք առաջին հինգ դարերուն ճշմարիտ հաւատքը սահմանեցին, և թէ այն ժամանակի եկեղեցւոյն հաւատքը և կարգաւորութիւնները անարատ էին. իրենց կանոններէն մէկուն մէջ քարոզիչներուն կպատուիրեն՝ որ սուրբ գիրքը բացատրելու ատեննին ուղղափառ

Հայրերը և Զախի Եպիսկոպոսները իրենց առաջնորդ բռնեն. եկեղեցւոյ Հարց գիրքերը կարգալը շատ յարգի բան սեպած են. իրենց գիտուն աստուածաբաններուն նայելով՝ Բողոքականներուն առանձնական քննութիւնը կմերժեն: Ասանկ ըսողներն և սորվեցնողներն են Օվրալ, Հալ, Պէվրիճ, Պիլ, և մեղի ժամանակակից Կ. վորսվորթ գիտնական վարդապետը:

Անգղիականաց վարդապետութիւնը հռովմէական եկեղեցւոյ վարդապետութենէն աւելի մօտ է Արեւելեան ուղղափառ եկեղեցւոյ վարդապետութեան. Անգղիականք ուղղափառ եկեղեցւոյ կատարելապէս համաձայնելու համար՝ պէտք է որ իրենց պաշտօնական դրոց մէջ եղած վարդապետութիւնները իրարու հետ միաբանեցնեն, ու որոշակի յայտնեն՝ Ա. թէ առաքեալներուն ձեռօք Կենդանի յայնո՞վ հաղորդուած աստուածային վարդապետութիւն մը կայ. Բ. թէ այս անգիր վարդապետութիւնը անխալ կերպով

եկեղեցւոյ մէջ պահուեցաւ. Գ. թէ այս վարդապետութիւնը առաջին դարերէն ՚ի վեր իրենց հաւատքը անփոփոխ պահող առաքելական եկեղեցիներուն հասարարան և ընդհանուր վկայութեան վրայ կկայանայ:

Բողոքականները բացարձակապէս կմերժեն հասարարան և ընդհանուր վկայութեան ուղղափառ կանոնը, և չեն ընդունիր անոր ո՛չ գրաւոր վարդապետութիւնը մեկնելու, և ոչ ալ անգիր աւանդութիւնը անթերի փոխադրելու միջոց մ'ըլլալը. անոնց սկզբունքն է ահա նաև իր առաջին պէս արքեպիսկոպոսները:

Այսու ամենայնիւ գրաւոր վարդապետութեան վաւերականութիւնը հաստատելու համար եկեղեցւոյ հասարարան և ընդհանուր վկայութեանը մէջ բերելու ստիպուած են. որով հետև սուրբ գիրքը հիմակուան ունեցած կերպովս մեղի տուող եկեղեցին է. Բողոքականներուն հռովմէական եկեղեցւոյ զեղծմունքներուն դէմ ունեցած ընդդիմութիւնը շատ հեռուն կետեց զիրենք:

Այն եկեղեցւոյն ճանապարհ և ճորտական աստեղ-  
դասիւններուն զէմ կուտելու ատենին  
ամեն աստեղտեղիս խոտելի ցցուցին , ա-  
ռանց մտածելու թէ սուրբ գիրքը  
վաւերական և արգոյ ընողը ւաւանդու-  
թիւնն է :

Բողոքականները նոյն իսկ սուրբ  
գրոյ բացատրած ճշմարտութեան մէջ  
ըլլալու համար՝ պէտք է որ ընդունին  
Ա. Պօղոս առաքելին սա սկզբունքը՝  
թէ աստուածային վարդապետութիւնը  
երկու կերպով տրուեցաւ , կեդրոնի յայ-  
նով և քրով . Բ. թե՛ս . Բ. 14 . Բ. թէ եկե-  
ղեցին այս երկու վարդապետութիւնն  
ալ պահած է , եւ իր հասարակուն և ընդհա-  
նուր վայրոյնսմբը կհաստատէ զանոնք .  
Գ. թէ ամեն մարդ պէտք է որ այս վը-  
կայութիւնն ընդունի՝ թէ՛ դրաւոր եւ  
անդիր վարդապետութիւնը հաստա-  
տելու , եւ թէ՛ գրաւոր վարդա-  
պետութիւնը մեկնելու համար , եւ  
թէ մարդ հասարակաց իմացուածը միշտ  
իր մասնաւոր իմացուածէն նախամե-  
ծար դնելու է :

Այս կանոնները չընդունող բողո-  
քականը Աստուծոյ խօսքը իր աւելի  
կամ պակաս լուսաւորուած ու բացուած  
խելքին համեմատ մեկնելով՝ իր իմա-  
ցուածը իբր Աստուծոյ իմացուածը կը-  
ծախէ , խելքին յարմար չեկած բա-  
ները կմերժէ , եւ իրեն քանաւոր երեւ-  
ցած իմաստներ կփնտուէ , որով քանակ-  
նայ աշարհէ մէջ կիյնայ՝ թէ որ իր ըս-  
կզբունքէն տրամաբանական հետեւու-  
թիւն հանել ուզէ : Ահա այս է այսօ-  
րուան օրս բողոքականներուն շատերուն  
գլխուն եկածը :



ՄԱՍՆ ԱՌՈՒՋԻՆ



Ուղղափառ եկեղեցւոյ վարդապետներ  
Նիկիոյ

Ուղղափառ եկեղեցւոյ հիմնական վարդապետութիւնները Նիկիոյ Հանգանակին, այսինքն Նիկիոյ և Կոստանդնուպօլսոյ տիեզերական ժողովներուն շարագրած հաւատոյ դաւանութեան մէջ համառօտ կերպով կը բովանդակին :

Ահաւասիկ այն հանգանակը\* :

\* Նիկիոյ ժողովոյն հանգանակը Հայաստան բերաւ սուրբ Արիստակէս Հայրապետը . որ սուրբ Լուսաւորիչ Հօր որդին եւ յաջորդն է : Սուրբ Լուսաւորիչ Հայրն իւր ժողովրդոց պետին համեմատ հանգանակին մէջ քանի մը բացատրութիւններ աւելցուց , ինչպէս որ Կաստանդնուպօլսոյ ժողովոյն Տաք աւելցուցին , որ այս հանգանակը Նիկիոյ հանգանակին հետ բաղդատողները կրնան իմանալ :

« Հաւատամք 'ի մի Աստուած 'ի հայրն ամենակալ , յարարիչ երկնի և երկրի , երեւելաց և աներևութից :

« Եւ 'ի մի տէր Յիսուս Գրիստոս , միածին որդին Աստուծոյ , ծնեալն 'ի Հօրէ յառաջ քան զամենայն յաւիտեանս . աստուած յաստուծոյ , լոյս 'ի լուսոյ , աստուած ճշմարիտ յաստուծոյ ճշմարտէ , ծնունդ՝ և ոչ արարած . համագոյակից հօրն , որով ամենայն ինչ

Թէ որո՞նք են սուրբ Լուսաւորչի յաւելուածները , ուզողը կրնայ բողոքատել մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ կարդացուածը Նիկիոյ հանգանակին հետ , եւ տարբերութիւններն հասկնալ :

Նիկիոյ հանգանակն այս է .

Հաւատամք 'ի մի Աստուած հայր ամենակալ , ամենայն երեւելաց և աներևութից արարիչ . եւ 'ի մի տէր Յիսուս Գրիստոս յորդին \* Աստուծոյ . ծնեալ 'ի հօրէ , միածին , այսինքն յետինէ հօր : Աստուած Աստուծոյ , լոյս 'ի լուսոյ , Աստուած ճշմարիտ յաստուծոյ ճշմարտէ , ծնունդ եւ ոչ արարած . համագոյակից հօր , որով ամենայն ինչ եղև յերկինս և յերկրի : Ար վասն մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան էլ եւ մարմնացաւ , եւ մարդացաւ , շարչարեցաւ եւ յարեաւ յառուր երբորդի , ել յերկինս եւ զաւրց է դատել զկենդանիս եւ զմեռեալս . եւ 'ի Հոգին սուրբ :

Իսկ որք ասնն թէ էր երբեմն՝ զի չէր , եւ յառաջ քան զծնունդն չէր իսկ . եւ թէ էր , յունչէ կղև , կամ յայժմէ գոյաւորութենէ կամ յետինէն ասն իսկ , կամ արարած , փոփոխելի կամ սլայլելի զորդն Աստուծոյ , զայնպիսինն նորով կամ ժողովիկ եւ առաքելական եկեղեցի , Ծ . Թ .

եղեւ, որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան էջ 'ի յերկնից և մարմնացաւ հոգւոյն սրբով 'ի Մարի, ամայ կուսէն, և մարդացաւ. խաչեալ վասն մեր առ պոնտացի Պիղատոսիւ, չարչարեալ, թաղեալ, և յարուցեալ յերրորդ առուր ըստ գրոց, և ելեալ յերկինս, նստաւ ընդ աջմէ Հօր, և միւսանդամ դալոց է փառօք 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ եղիցի վախճան:

« Եւ 'ի Հոգին սուրբ տէրն և կենդանարարն, որ 'ի հօրէ բղխի, և ընդ հօր և ընդ որդւոյ երկրպագի և վառաւորի, և խօսեցաւ մարդարէիւք:

« Եւ 'ի մի միայն սուրբ, կաթողիկէ և առաքելական եկեղեցի:

« Խոստովանիմք մի մկրտութիւն 'ի թողութիւն մեղաց:

« Եւ ակն ունիմք յարութեան մեռելոց և կենաց հանդերձեալ յաւիտենին »:

II.

Երրորդ գլուխ

Հանդանակին առաջին երեք հաստաձներէն մէկը Հօր, երկրորդը Որդւոյ, եւ երրորդը Հոգւոյն սրբոյ վրայ է. բսել է հանդանակը երրորդութեան վարդապետութիւնը կրովանդակէ:

ՅԱտուած երեք անձինք կան:

Հայր, պատճառ ամենակարող, ուրկէ կեղեն ' Որդին ճնդեա՞ք, եւ Հոգին քնդեա՞ք, եւ ինքը ստեղծեց ամեն երեւելի եւ աներեւոյթ արարածները:

Որդի, ծնունդ հօր յառաջ քան զամենայն յաւիտեանս, որով աստուածային կարողութիւնը յայտնուեցաւ ժամանակաւոր արարածներուն ստեղծուելովը:

Հոգի սուրբ, որ հօրմէն կբղխի,

անոր համար աստուածային բնութիւնն ունի, եւ հօր եւ որդւոյ հետ երկը պագելի է :

Երեք անձերը միեւնոյն աստուածային էութիւնն ունենալով՝ զի սուրբն են՝ իրարու յաւէտակից . բայց իրենց անյնական յարկութիւններով իրարմէ կտարբերին :

Հօր անյնական յատկութիւնն է որով կամ «նշխ» ըլլալ, Որդիինն է Հօրմէն ծնանել, Հոգիինն է Հօրմէն քշեւել . ըսել է թէ Հայրը երկու որիչ գործողութիւն ունի՝ իբր պատճառ իբ գործոց . մէկը կըսուի ծնանք, որուն առարկան է Որդին, մէկալը կըսուի քշեւանք, որուն առարկան է Հոգին սուրբ :

Այս երկու գործողութիւնները, որ ըստ ինքեան անխմանալի են, Որդւոյ և սուրբ Հոգւոյն յաւիտենական երումը առաջ կրերեն :

Երրորդութեան մէջ ո՛չ եական յատկութիւնները իրարմէ զատելու, և ո՛չ անյնական յատկութիւնները ի-

րարու հետ շփութելու է . որովհետեւ ան ձանց երբէք սուրբեր եական յատկութիւններ տալը՝ շատ աստուածներ խոստովանիլ է, և Աստուծոյ միութեան վարդապետութեանը դէմ կուգայ . ասոր հակառակը՝ մէկ անձին յատկութիւնը մէկալին տալը՝ անյնական զանազանութիւնը ջրել է, և անձանց երրորդութեան վարդապետութեանը կը դուրսի :

Մէկ խօսքով, անյնական յատկութեանէն եական յատկութիւն հանելը՝ երեք էակից անձանց միայն մէկուն յարմարած յատկութիւնը մէկալներուն ալ տալ է :

Հայրը իբ երկու ներքին և յաւիտենական գործողութեանէն զատ արտաքին գործողութիւն մըն ալ ունի, որուն առարկան երեւելի և աներևոյթ աշխարհն է : Առաջինը նիւթերէն է՝ ակներէ կրաղկանայ . երկրորդը հոգեւէն էակներէ :

Հօր արտաքին գործողութիւնը Որդւով եղաւ . և սուրբ Հոգին այս

երկու աշխարհներուն վրայ իր ներդրու-  
ծութիւնները կազդէ 'ի Հօրէ և յՈրդւոյ  
առաքմամբը : Այս առաքումը Որդ-  
ւոյ մարդեղութենէն առաջ Աստուծոյ  
իր կամքը մարդոց իմացներու համար  
ընտրած անձանց վրայ բրած ներշն-  
չութենէն , եւ եկեղեցւոյ մէջ հոգիներ-  
րուն վրայ և աստուածային աւանդոյն  
պահպանութեան համար բրած ազդե-  
ցութենէն աւելի կ'յայտնուի :

Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ  
առաքմամբը անոր յաւիտենական քրիման հետ  
շփոթելը մեծ մոլորութիւն է , որով-  
հետեւ բղխումը միայն Հօրմէն կըլլայ ,  
որ միայն է պատճառ երրորդութեան  
մէջ : Իսկ Որդւոյ ոչ ուղղակի եւ ոչ ան-  
ուղղակի յաւիտենական քրիման չկրնար տը-  
րուիլ՝ առանց Հօր անձնական յատկու-  
թիւնը անոր տալու , որով անձանց եր-  
րորդութեան վարդապետութիւնը կը-  
ջնջուի :

Երրորդութեան վարդապետութեան վրայ  
որիս անկէն եկեղեցիներուն անեցած  
որքերս-իւնները

Բոլոր քրիստոնէից եկեղեցիները  
այս վարդապետութիւնը կրնդունին .  
այսինքն կհաւատան՝ Ա . թէ միայն մէկ  
աստուած մը կայ . Բ . թէ երեք այլ  
և այլ անձինք կան , բայց երեքը մէկաս-  
տուած են :

Այսու ամենայնիւ հռովմէական ե-  
կեղեցին անուղղակի կերպով երրոր-  
դութեան վարդապետութեան հակա-  
ռակեցաւ , հանդանակին մէջ 'ի Հօրէ քը-  
նի բառերուն վրայ աւելցընելով և  
յորդոյ բառերն ալ , լատիներէն Թէլէ-  
գոնէ :

Այս յաւելումը եօթներորդ դա-  
րուն մէջ Սպանիա սկսաւ . ութերոր-  
դին մէջ Գաղղիա ալ մտած էր , ուր  
սաստիկ հակառակորդներու հանդի-  
պեցաւ : Իններորդ դարուն սկիզբները



մեծն կարօրսս լեւոն Գ. պապին առաջարկեց՝ որ ընդունի ասիկայ, բայց այն պապը մերժեց: Կարօրսսի ազդեցութեամբը, որուն իշխանութիւնը կեդրոնական Եւրոպեոյ մեծ մասին վրայ կտարածուէր, շատ եկեղեցիներէ ընդունուեցաւ այս յաւելումը: Արևելեան եկեղեցիին այս նորաձեւութեան գէտ բողոքեց, բայց իր ձայնը չլսուեցաւ: Եւ հռովմէական եկեղեցիին ինքն ալ մեռասաներորդ դարուն սկիզբը Հենրիկոս Ա. կայսեր ազաչանօք ընդունեց յաւելումը. անկէ ետեւ բոլոր արեւմտեան եկեղեցիներուն ալ ընդունելի եղաւ:

Այլ եշտասաներորդ դարուն մէջ անդղիականք և բողոքականք այս յաւելումին միտ չդրին. Եւ առաջինները հռովմէական եկեղեցիէն դատուելէն ետեւ հանդանակին հետ աս ալ պահեցին, Եւ անոր պէս ասիկայ պաշտպանել ալ ջանացին. Այս բանիս համար երկու միջոյ դորժածեցին. մէկ մը՝ երրորդութեան մէջ երկրորդական պարճա-

անունը տուին Որդւոյ մէկ մ' ալ՝ եկեղեցւոյն Հարց խօսքերը մէջ բերին՝ որ յաւելումը անանդական վարդապետութեան համաձայն ցըրեն:

Արևելեան եկեղեցիին դիւրաւ կարող եղաւ ցըրել թէ՛ Երրորդութեան մէջ երկրորդական բան չկրնար մտնել. Եւ թէ պարճաբ յատկութիւնը միայն Հօր անշարժական յատկութիւնն ըլլալով՝ անհնար է ո՛ր և իցէ կերպով Որդւոյ ստղջայն առանց Հօր անձնաւորութեան մէկ մասը անոր տալու, որով և երրորդութեան վարդապետութիւնը կտապալի: Նաև դիւրաւ կարող եղաւ ցըրել թէ սուրբ Հարց գրուածքներէն մէջ բերուած վկայութիւններէն ոմանք ինքնահնար բաներ են, ոմանք խարդախուած, մէջերէն բառ աւելցուած կամ պակասած են, և ստոյգ խօսքերն ալ Հողւոյն սուրբ առաքման կը վերաբերին, և ո՛չ թէ յախտեանական բղխման:

Ուստի Արեւմուտք հանդանակին մէջ եղած յաւելումը չէ թէ միայն

մասնաւոր եկեղեցւոյ մը ապօրինաւոր  
ու անկանոն գործն է, հապա ուղղա-  
փառ հաւատքին հակառակ մեծ մն-  
լորութիւն ալ կ'ապրունակէ :

Եւ յորդոց բառին Երրորդութեան  
վարդապետութիւնը ջրող բացատրու-  
թիւն տալէն աղէկ է բարեմտութեամբ  
հաւանիլ թէ այս բացատրութիւնը ուղ-  
ղափառ չէ, եւ հանգանակին վէջէն  
հանել անանկ վտանգաւոր բառ մը,  
որ Աստուծոյ խօսքին եւ եկեղեցւոյ  
ճշմարիտ աւանդութեան հակառակ է :



Բ.

ԱՅԻԱՐՆ

« Հաւատամբ 'ի մի աստուած 'ի հայրն  
ամենակալ, յորարիչ երկնի և երկ-  
րի, երեւելեաց և աներեւութեց » :

Յաւիտենական պատճառին ար-  
տաքին գործողութիւնը Որդւով եղաւ :

եւ աշխարհիս պէս իրենց գոյութեան  
պատճառը ինքնիրենցմէ չունեցող ա-  
մեն արարածոց ստեղծումը առաջ բե-  
րաւ :

Երկու աշխարհ կայ . մէկը հոգե-  
ղէն էակներէ բաղկացած է, մէկալը  
նիւթական էակներէ : Զդայարանաց  
տակը չիյնող բաները աներևոյթ են .  
զգայարանաց տակը ինկող բաներն ալ  
երևելի են :

Հոգեղէն էակներէն հրեշտակները  
և մարդոց հոգիները գիտենք . Հրեշ-  
տակները զոր հոգի են, այսինքն մարմ-  
նոյ հետ միացած չեն . իրենց ստեղ-  
ծուելէն ետքը ազատութեան գործա-  
ծութիւննին փորձիտակ ինկաւ . ոմանք  
հաւատարիմ մնացին, որք են բարի հը-  
րեշտակները . ոմանք ալ հպարտացան  
և իրենց ձիրքերէն շատերը կորսնցու-  
ցին . ասոնք ալ չար հրեշտակ կամ դև  
բաւաճներն են, որոնց գլխաւորն է  
Սատանան :

Բարի և չար հրեշտակները երկու-  
քըն ալ երկրաւոր աշխարհիս մէջ ուղ-

ղակի կգործեն , առաջինները բարին , երկրորդները չարը : Երկու կարգին գործըն ալ Աստուծոյ գերագոյն կամքէն կախումն ունի\* :

Ըսել է թէ նիւթեղէն ու հողեղէն աշխարհները իրարու հետ միշտ յարարերութիւն ունին :

Սներեւոյթ աշխարհը թէպէտ եւ երեւելի աշխարհիս գոյութեան կերպը որոշող միջոցին նման մէկ միջոցի մը մէջ ամբոխուած չէ , բայց ուրիշներէն ալ տարբեր վիճակ մը ունի : Հոն Աստուած իր փառքը մասնաւոր կերպով բարի հրեշտակաց եւ արդարոց հոգիներուն կյայանէ , եւ անոր անունը եւ քն+ կըսուի . Դ. 4. ԺԾ . 22 . Յայտն . 2 . Իսկ չար հրեշտակները դատապարտութեան վիճակի մէջ ինկան , որ դէռեւ անունով կճանչցուի : Դատապարտելի մարդոց հոգիներն ալ վերջին դատաստանէն ետեւ նոյն չար հրեշտակաց վի-

\*Յայտ . ԺԲ . 7, 8, 9 . Մատթ . Գ . 4 . 44 . ԺԳ . 59 : ԺԶ . 27 : ԻԵ . 41 : Բ . Կորն . ԺԱ . 14 . Եբբ . Ա . 14 : Ե . Պետր . Ե . 8 . 9 :

ճակակից պիտի ըլլան անդարձ կերպով :

Հաւատացելոց երկրիս վրայ իրարու հետ ունեցած հազարդակցութեան կապերը մահուանի չեն քակուիր : Այս հազարդակցութիւնը զվսաւորաբար անոնց իրարու համար Աստուծոյ աղօթելնուն վրայ կկայանայ : Բնաբերաները իրենց եզրաբոց համար աշխարհիս մէջ եղած ասեմնուն պէս կազմեն . և թէ որ երկրաւոր աշխարհիս վրայ եղած ատեննին կրնայինք անոնցմէ աղօթք ուղել , ո՛րչափ ևս առաւել հիմայ որ երկնային աշխարհին մէջ զԱստուած կժառանգեն , կրնանք անոնցմէ նոյնը ուղել : Այս է սուրբերը բարեբօս կանչելու հիմը :

Մարդոց հոգիներէն անոնք՝ որ ո՛չ երկնային աշխարհին մէջ բարի հրեշտակաց դասակից եղած , և ո՛չ բոլորովին դատապարտուած են , մինչև որ աշխարհիս վերջը իրենց համար վճիռ մը տրուի՝ առժամանակեայ վիճակի մը մէջ կմնան , ուր կրնանք մեր աղօթքներով , բարեդործութիւններով

ու պատարագով օգնել անոնց, և Աստուծոյ ողորմութիւնը անոնց վրայ կանչել Յիսուսի ֆրիստոսի ձեռօք:

Հրեշտակաց դասուն մէջ չընդունուած մարդկային հոգիներուն մէջ անանկ մեղաւոր հոգիներ ալ կան, որ մարմինէն զատուելուն պէս աւելի կամ պակաս սաստիկ ու անվերջանալի պատիժներու կգատապարտուին: դեւերուն պէս Աստուծմէ յաւիտեան կզրկուին, եւ անանկ տանջանքներու կը մատնուին, որ սուրբ Գիրքը սոսկալի կերպով ստորագրած է: Սուրբ Գրոց խօսքերը այլաբանական ալ ըլլան նէ, ակնարկած բաներնին ստոյգ է. եւ Աստուծմէ յաւիտեան զրկուելով անհրեշտարին տանջանք քաշելու վիճակ մը կենալը անձխտելի վարդապետութիւն է:

Եւ սակայն թէ՛ երանութեան եւ թէ՛ դատապարտութեան վիճակները մարմնոց յարութենէն՝ այսինքն վերջին դատաստանէն ետքը կարողաւ պիտի ըլլան. Յայտն. Զ. 9. 10. ԺԹ: Մարդս հոգիէ ու մարմինէ բաղկացած է. որոնց

բաժանմամբը մեռնելով՝ ՚ի յարութեան մարմնոց պիտի վերանորոգի, եւ այնպիսի վիճակ մը ունենա, յորում երջանիկ կամ ապերջանիկ պիտի ըլլայ իր կարողաւ բնութեան մէջ: Յարուցեալ մարմինը հոգւոյն երանութեան կա՛մ պատժոյն եւ անոր համար սահմանեալ նոր վիճակներուն հաղորդ պիտի ըլլայ: Ա. կորնթ. ԺԵ. 42: Փէլեո. Գ. 21 Մարթ. ԻԲ. 30:

Նիւթական աշխարհը զանազան արարածներէ բաղկացեալ է, որոնք երբեք կարգի կրնան բաժնուիլ. առաջին՝ որ պարզապէս էութիւն ունին. երկրորդ՝ որ էութիւն եւ կեանք ունին. երրորդ՝ որ էութիւն, կեանք եւ իմացականութիւն ունին. Այս վերջին կարգին տակ կերթայ մարդկութիւնը:

Այս ամէն էից արարելիք միայն Աստուած է, զորս ստեղծած է իւր ամենակարողութեան մէկ գործովը, եւ յաջորդական վայրկեաններով չափի տակ դրած է գոյութիւննին, որ կրտսի յամենայն. Ինք միայն է յաւիտեանական,

ինքնագոյ , ինքնարուն . ՈՐԻՆ Է , եւ  
էութիւնը անժամանակ . Արարածնե-  
րը , որոց բոլորն ալ մասնական էակներ  
են , ոչ ծագումն եւ ոչ բղխումն են ա-  
նոր անհուն եւ մշտնջենաւոր էութեան .  
այլ միայն բարձր արարչագործ զօրու-  
թեան նորա , որով կոչեցան յէութիւն  
յոչէութենէ :

Աստուած մէկ մարդ մը միայն ըս-  
տեղծեց Ագամ անունով , եւ կին մը  
եւա անունով . ամէն մարդիկ ալ այս  
մէկ զուգութենէն սերեալ ըլլալով գը-  
րէթէ մէկ ընտանիք մ' են :

Այս մեր նախածնողները Սատա-  
նային ազդեցութեան եւ փորձութեան  
տակ իյնալով մեղանչեցին . իրենց ա-  
ռաջին բնութեան յատուկ եղած շատ  
մը շնորհքները կորսնցուցին , անմեղու-  
թիւննին ալ մէկտեղ՝ յորում ստեղ-  
ծան . սպսկանեալ Բնութեան ճշ ունեցան :  
Մեկմանէն վերջը զաւակ ծնաներնուն հա-  
մար , մեղանչական և սպականեալ բնու-  
թիւնը միայն կրցան զաւակաց փոխան  
ցել . մարդկութեան այս բնական մեղ-

քըն է , որ «կրնան» կրտուի :

Առաջին անկման հետեանքներն  
եղան Գեղարմատն , Գանգարմատն , ճահ . այն-  
պիսի հետեանքներ՝ որ աստուածային  
գործն այլայլեցին եւ մարդկութիւնը  
ներհակ եւ թշնամի ըրին Սատուծոյ ,  
որ իսկութեամբ Լոյս կամ ճշմարտութեան ,  
Բարի և անճանարմատն է :

Անկեալ մարդկութիւնը Սատուած  
ուզեց վերանորոգել ըստ հոգևոր մա-  
սին . ուստի յանձին Որդւոցն կամ իւր  
Բանին հաղորդեց մարդկութեան նախ՝  
զճմարտութիւն . երկրորդ՝ շնորհք կամ  
բարիք գործելու գերբնական օգնու-  
թիւն . երրորդ՝ սկիզբ մը յարութեան  
եւ անմահութեան մահուան երթակայ  
եղած մարմնոցն \* :

\* Աշխարհի արարչութեան , եւ մարդոցն անկ-  
ման ու նորոգման վրայ սուրբ Գրոց մէջ գրուածնոր  
հետ դնել անօգուտ կհամարեմ , զի ամեն մարդ գիտէ :

Այս քրիստոնէ պարտանակած վարդապետութեան  
 թեան վրայ քրիստոնէից եկեղեցիներուն  
 մէջ եղած քաղցրութեանները :

Այս վարդապետութեան մէջ երկու կէտ կայ , որով քրիստոնէից եկեղեցիք իրարմէ կտարբերին . մէկ մը երկնքի սրբոց եւ աշխարհի հաւատացեալք իրարու հետ ունեցած հաղորդակցութիւնը , մէկ մ' ալ մեռնելէ յետոյ այն հոգւոց վիճակը ` որոնք ոչ դատապարտուած են , եւ ոչ ալ սրբոց կարգը դատուած . եւ հետեւապէս մեռելոց համար եղած ազօթքը :

Բողոքականք հոգւոց այս վիճակը , եւ հետեւապէս անոնց համար ազօթքին հարկաւորութիւնը բացարձակապէս չեն ընդունիր . ուստի բողոքականաց համար ` միայն սուրբ եւ միայն դադապարտեալ կայ , որ շուտ մը մեռածնուն պէս կամ երանութեան վիճակի կհասնին , կամ բացարձակ դատապարտու-

թեան . եւ անոնց հետ ամէն առընչութիւն ջնջուած խղուած է : Կրօնն նաև թէ երկնքի սրբոց եւ աշխարհի հաւատացեալոց մէջ ալ հաղորդակցութիւն չկայ , այնպէս ` որ կենդանի հաւատացեալք չեն կրնար հանգուցեալ սուրբերէն ազօթք խնդրել : Մահը , անոնց համար , տեսանելի եւ անտեսանելի աշխարհաց յարաբերութեան լիազոյն ջնջումն է :

Անդգիականք իրենց հաւատաց քսաներորդ երկրորդ յօդուածով քաւարանի եւ սուրբերը բարեխօս կանչելու հռովմէական ամէն վարդապետութիւն բացառչակապէս կմերժեն , առանց խտրելու թէ այն վարդապետութեանց ո՛րը ճշմարիտ եւ ո՛րը սխալ է :

Ստիպան իրենց օրագուցին մէջ սրբոց տօնախմբութիւնները պահած են եւ կկատարեն , ըսել է ` սուրբերը եւ ոմեն եւ կյարբէն , բայց քարեօս չեն ընդունիր : Յայտնի բան է ` որ այսպէս ընելով իբր թէ կբողոքեն կապաղապական պարտան մը դէմ , որով կմեղադրեն զհռովմէա-

կան եկեղեցիքն . սակայն Բարեօրոշիւն  
ինքնին այդ կարգի պաշտմանց և ոչ  
մէկուն տակ չերթար : Եթէ հաւատա-  
ցեալները դեռ աշխարհի վրայ եղած  
ատեննին կրնան և պարտաւոր են իրա-  
քու համար աղօթել . եթէ սուրբն Պօ-  
ղոս իւր 'ի հաւատս ծնած հաւատա-  
ցեալներէն աղօթք կենդրէր , ինչու  
համար աղօթք չպիտի խնդրենք այն  
հաւատացեալներէն , որ Դանիէ և Կո-  
ռակոս են , աստուածամերձ են , և մահը  
զատած չէ այն քրիստոնէական եկեղե-  
ցիէն՝ որուն պարծանքն և պաշտպանեմ  
եղած են : Մահը չխզեր հաւատացելոց  
կապակցութիւնը : Ուրեմն կրնան իրա-  
քու համար աղօթել , և փոփոխակի իրար  
մէ աղօթք խնդրել . այս իմաստով  
սրբոց Բարեօրոշիւնը խնդրել ոչ թէ  
կապակցական չէ , այլ անոնց համար  
խոստովանեալ յարգութիւն մը : Սուր-  
բերը Բարեօրոշիւնը չեն , այս բառին  
ճիշդ իմաստովը , այլ հաւատացեալներ՝  
որոնց աղօթքը կենդրեմք աշխարհի  
վրայ :

Անդրեականք քաւարան չեն ըն-  
դունիր , բայց մեռելոց համար կաղօ-  
թեն , ինչպէս որ կտեսնեմք իրենց  
Աղօթքի մեռելաթաղի արարողու-  
թեան մէջ . ըսել է՝ կխոստովանին թէ  
կան այնպիսի հաւատացելոց հոգիներ ,  
որոնք աղօթից օժանդակութեան պէտք  
բլլալիք Վճռի ճշ կունենան : Թէպէտ  
և այս վարդապետութիւննին ինքնին  
պէտք եղածուն չափ սրտը և կանոնա-  
կան չէ . սակայն անոնց արարողու-  
թեանց գրքէն , կարծեմ , կրնայ ա-  
պացուցուիլ թէ սենին այն վարդապե-  
տութիւնը , բայց խափանեալ է :

Հստակեական արդէ եկեղեցիքն , ոչ  
դատապարտեալ եւ ոչ ալ սրբոց կար-  
գը դասեալ հոգւոց վիճակին վրայ  
յայանի մարդութիւններ ունի . Գա-  
րան անուսով Կեղ ճշ յատկացուցած է  
այս հոգւոց , ուր հրոյ տանջանօք նե-  
րելի մեղքերը կառնեն , մեղաց ար-  
ժանի պատիժները կրեն եւ թողու-  
թիւն չեն ստանին :

Ս. յս թողութիւնը , կըսէ նա , բո-

ըրոյվին կամ ըստ մասնէ Պապը կրնայ տալ՝ այս կամ այն բարեպաշտական գործոց կամ ազօթքին փոխարէն շնորհուած մասնաւոր կամ կատարեալ ներողութեանց միջոցով ։

Արեւելեան եկեղեցին չհաւատարթէ հոգին մեռնելէ վերջը ինքնին բան մը կրնայ ընել կամ չընել արժանիք մը ունենալու համար, եւ կամ կրնայ «<sup>+</sup>» «<sup>+</sup>» \* հետեւեալէս կներժէ ամեն քաւիչ պատիժները կամ քաւարանը . չընդունիր՝ թէ հոգիները «<sup>+</sup>» «<sup>+</sup>» մէջ են, այլ ժամանակեայ քեռի «<sup>+</sup>» մէջ թողութիւնները կնկատէ իբրեւ մեղմութիւն մը այն կանոնական ապաշխարութեանց, որոնք կատարուած պէտք էին ըլլալ «<sup>+</sup>» «<sup>+</sup>» վրայ, եւ հանդերձեալ կենաց մէջ չեն կրնար ըլլալ հետեւեալէս գալիք կենաց վերապա-

\* Հռովմէական աստուածաբանից մէկ յայտնի և այլանդակ հակասութիւնն ալ ան է որ կրնգունին թէ մահուանէ յետոյ հոգիները «<sup>+</sup>» արժանիք մը չահելու բան մը չեն կրնար ընել » . այս ալ կրնգունին թէ «<sup>+</sup>» փոխարէն », կամ որ նոյն է ըսել, «<sup>+</sup>» արժանիք վաստկցունող տանջանք մը » կկրեն ։

հեալ թողութիւններ չընդունիր . և նրն շեւոյ պարզապէս եկեղեցական՝ եւ եկեղեցական իշխանութեամբ աշխարհի մէջ եւ աշխարհի համար գորուած պատիժներէ ըստ մասնէ կամ լիովին արձակման իրաւունքը ո՛չ Հռովմի եպիսկոպոսին կրնծայէ եւ ոչ ուրիշ ո՛ր եւ է եպիսկոպոսին ։

Արեւելեան եկեղեցին փրկութեան որոշեալ հոգւոց ժամանակեայ վիճակին վրայ իր ունեցած հաւատքը նախնի եկեղեցւոյն հաւատքին վրայ կհաստատէ, որ կապացուցուի խիստ հին պաշտամանց մատեաններէն, եւ մասնաւորապէս յանուն Երուսաղեմի եպիսկոպոս սուրբ Յակոբին ճանչցուած ամենէն աւելի հին պաշտամանց գրքէն ։ Ամենքն ալ մեռելոց համար ազօթք կը պարունակեն . Ս . կիրեղ երուսաղեմացի, չորրորդ գարուն, նախնի եկեղեցւոյն հաւատքը կբացատրէ՝ յասելն . «<sup>+</sup>» Մեղմէ յառաջ աշխարհէ հրաժարեալ հոգւոց համար խիստ հարկաւոր է ազօթել սուրբ եւ ահաւոր պատարագէ



ատեն » : Կողմն ընթ. է. 9 :

Ճշմարիտ վարդապետութիւնը, զոր  
առ հասարակ ունին արեւելեան եկե-  
ղեցիք եւ արեւմտեան հին եկեղեցիք,  
բողոքականաց բոլորովին հերքելուն և  
հռովմէական արդի եկեղեցւոյն վեր-  
ջամուտ վարդապետութեանց մէջ տե-  
ղըն է :



Գ.

ՄԱՐԳԵՂ ՈՒԹԻԻՆ

« Հաւատաւք եւ 'ի մի Տէր Յիսուս  
Քրիստոս , միածին որդին Աստուծոյ  
ճնեալն 'ի Հօրէ յառաջ քան զամենայն  
յաւիտեանս , Աստուած յԱստուծոյ ,  
լոյս 'ի լուսոյ , Աստուած ճշմարիտ  
յԱստուծոյ ճշմարտէ , ճնունդ եւ ոչ  
արարած . համազօրակից հօրն , որով  
ամենայն ինչ եղեւ . որ յաղագս մեր  
մարդկան եւ վասն մեզոյ փրկութեան  
էջ 'ի յերկնից , եւ մարմնացաւ Հոգ-  
ւոջն սրբով 'ի Մարիամոյ սրբոյ կուսն  
եւ մարդացաւ » :

Միկիոյ հանգանակին երկրորդ հա-  
տուածը Որդւոյն վրայ է , որ մարմնա-  
յաւ կամ մարդացաւ զաշխարհ նորո-  
գելու և իր պատարագաւ զնեղու հա-  
մար :

Աստուած Միածին որդե՛ջն ունի , իւր  
Բանը , որ իր էութեան յաւիտեանական

նկարագիրն է , եւ ծնած է յամենայն  
 յաւիտեանց : Միածին Բանը , յամենայն  
 յաւիտեանց , Ծնանոք ըսուած գործու  
 զուժեամբ կծագի յՍկզբնէ կամ 'ի Հօ  
 րէ : Սոս գործողութիւնը յառաջ է քան  
 զամենայն յաւիտեան , այսինքն նախ քան  
 զլինել ժամանակ ըսուած յաջորդական  
 վայրկեաններու , և նախ քան զամե  
 նայն արարածս՝ որ ժամանակի տակ  
 կլինան : Հայրը չէ եղած առանց Որդ  
 ւոյ . ապա թէ ոչ՝ առեն մ' եղած կըլ  
 ւայ , յորում Որդւոյն էութիւնը կսկզբ  
 նաւորի , որով եւ արարածոց պէս  
 յաւիտենականութեանը մէջ ժամանակ  
 կմտածուի , որ անկարելի եւ հակա  
 սական է : Ուստի Բանը յաւիտենական  
 Սկզբան յաւիտենական ծագումն է : Աս  
 րոսած յԱսրոսծոյ , Լոսս 'ի Լոսսոյ , Աս  
 րոսած ճշմարիտ յԱսրոսծոյ ճշմարտէ , Յնանոք  
 եւ ոչ արարած . համարոյ Հօր , այսինքն  
 է՝ յետնինն նորս : Եթէ այսպէս չըլլայ՝  
 'ի հարկէ արարած կըլլայ . կամ եր  
 բոր , ինչպէս Արիտեսանք կըսէին , հա  
 մարուի՝ թէ անոր բնութիւնը Հօրը բը

նութեան նման է , դարձեալ արարած  
 կըլլայ . զի այն առեն ոչ թէ յաւ  
 րեանիս ճննարեամբ ընդունած կըլլայ իւր  
 բնութիւնը , այլ այնպիսի գործու  
 զութեամբ , որ յատուած հարկաւոր չըլ  
 ւար , այլ արարին , և հետեւապէս ա  
 ըրարած մը : Ուստի որդին՝ կամ հա  
 մագոյակից է հօր հարկաւոր եւ յա  
 լիտենական ծննդեամբ , կամ Աս  
 րոսած — արարած մը . բայց ասով երկու աս  
 տուածներ կըլլան , մէկը միւսին արա  
 ընչ . ինչ այլանդակ կարծիք :

Արարածական էակներուն վրայ  
 աստուած իւր Բանիւր կգործէ , ուս  
 տի անով գոյացած է տեսանելի եւ  
 անտեսանելի երկու աշխարհքի բոլոր  
 էակները :

Որդին մարդկութեան վերանորոգ  
 ման եւ փրկութեանն համար երկնքէն  
 իջաւ , այսինքն անտեսանելի աշխար  
 հէն դուրս երկրաւոր աշխարհի վրայ  
 երևեցաւ . մարմնացաւ , այսինքն մարդ  
 կային կատարեալ էակի մը հետ ասրոսա  
 ծոցին աննաւորութեանը միացոյց , որ Յի

սուս ֆրիստոս կկոչուի :

Յիսուս անունը երկու կնշանակէ , զի մարդկութիւնը վրկերու եկաւ օծուակամ ֆրիստոս եղաւ աշխարհի նորոգման պաշտօնը կատարելու համար : Աստուածային և մարդկային բնութիւնք կատարեալ են 'ի Յիսուս ֆրիստոս եւ կատարելապէս որոշ , այնպէս որ մէկ բնութեան յատուկ եղածը միւսին չը վերաբերիր . բայց իւրաքանչիւր բնութեան մէն մի յատկութիւններն ալ զի « յի » կվերաբերին . ի Յիսուս ֆրիստոս համէն ալ երկուք է , մին մարդկային եւ միւսն աստուածային . գործողութիւններն ալ երկուք են . բայց մարդկային կամքն եւ գործողութիւնքը աստուածային կամաց և գործողութեանց ենթակայ են .

Յիսուսի ֆրիստոսի մարմինը մարդկային ծննդեան օրէնքով կազմուած չէ , ասոր համար ալ սկզբնական մեղքի տակ չինկաւ . սուրբ Հոգին կազմեց այն մարմինը Մարիամ սուրբ կուսին արդանդին մէջ . աստուածային այս

պիսի գործողութեամբ բանը մարդ եղաւ : Մարիամ կոյս էր յառաջ , եւ 'ի ծննդեանն եւ յետ ծննդեանն , որ սքանչելապէս եղաւ , ինչպէս յղութիւնը էր :



Մարդեղութեան վարդապետութեան լէրայ ֆրիստոսէնց եկեղեցիներուն դարբերութիւնները :

Մեր աւուր բողոքականաց մեծ մասը , Սոկրինեանց պէս , կըսեն թէ ֆրիստոս աստուած չէր , այլ մարդ մը որուն Աստուած բացառիկ յատկութիւններ չնորհեց : Այս մոլորութիւնը ընդունելու համար առաջ սուրբ Դիւքը պէտք է ձգեն ձեռքերնէն , զոր կհամարին թէ իրենց հաւատքին կանոնն է . զի հոն կկարդամք . « իսկզբանէ եր

Բանն , և Բանն էր Աստուծոյ ( յԱստուած ) և Աստուծոյ էր Բանն . . . . .  
 եւ Բանն մարմին եղև և բնակեաց ՚ի մեզ . » Յ՛Ն . Ա . 1 . 14 . — « Ես և Հայր իմ ՚ի եմք » : Ա՛նր Ե . 30 . — « Որ ետեսն զիս , ետես զՀայրն , ես ՚ի Հայր և Հայր յիս է » : Ա՛նր Ե . 9 . 11 .

Հին բողոքականք և բողոք միւս քրիստոնէական ընկերութիւնք կհամաձայնին արևելեան եկեղեցւոյ ՚ի մասին վարդապետութեան Մարգեղութեան :

Իսկ հռովմէական արդի եկեղեցին անուղղակի կերպով այս վարդապետութեան դէմ կմեղանայէ Յիսուսի սուրբ « Եւրոպէ » երկրպագելով . մարդկային բնութիւնը , անոր մէջ , այն երկրպագութեան ուրիշ կերպով հաղորդ չէ , եթէ ոչ աստուածային բնութեան հետ ունեցած անձնաւորական միութեամբը : Ըսել է թէ առանձին կամ բաժանեալ վիճակի մէջ Յիսուսի ֆրիստոսի մարդկային բնութիւնը չկրնար երկրպագութիւն ընդունիլ , ուր կմնայ անոր մարմ

նոյն մէկ գործարանը . Հռովմէական եկեղեցին ինքն ալ հաւնած չէ այս բանին որ կըսէ՝ թէ երկրպագութիւնը Յիսուսի ֆրիստոսի « Եւրոպէ » կվերաբերի բայց ինչ օգուտ , այսօր շատ գրիչներ կան՝ որ ըսած են հրատարակութեամբ , թէ Յիսուսի սիրտը երկրպագելի է :

Բողոքականներն ալ հանգանակին մէջ՝ Յիսուսի ֆրիստոսի սուրբ մօրը տրուած կոյտ տխրոտը բացարձակ իմաստով մը չեն առներ . այլ կըսեն՝ թէ ուրիշ զաւակներ ալ ունեցաւ : Այս բանին մէջ իրենք իրենց կանոնէն զարտուղած են , զի սուրբ գրքին մէջ չգրուած բան կընդունին : Բնաւ նշան մը անգամ չկայ գուշակելու՝ թէ ուրիշ զաւակներ ալ ծնաւ Մարիամը , երբ « Եւրոպէ » ըսուածներն ալ ուրիշ Մարիամի մը այսինքն կղէովպասին կնոջ զաւակներն են : Սուրբ Գիրքը յղէովպայ Մարիամը կոյտ Մարեմայ քոյր կըսէ՝ եւ անոր զաւակներն ալ Յիսուսի « Եւրոպէ » չին ատեն մօրաքեռորդիներ կամ ուրիշ մօտ ազգականութենէ եղողներ զի-

րար եղբայր կանուանէին :

Արեւելեան եկեղեցին , ուրիշ բո-  
լոր նախնական եկեղեցւոյ հետ , կհա-  
ւատայ թէ Յիսուսի մայրը Կոյս էր յա-  
սակ , 'ի շննդեան , եւ յետ շննդեան , ինչպէս  
նաև 'ի յղանալն գՅիսուս Գրիստոս :

—→→→→→

Դ .

« Խաչեալ վանն մեր յառ Պոնտա-  
ցի Պիղատոսիւ , շարչարեալ , թա-  
ղեալ եւ յարուցեալ յերրորդ աւուր  
բոս գրոց , եւ ելեալ յերկինս ,  
նստաւ ընդ աջմէ Հօր , եւ միւս-  
անգամ գալոց է փառօք 'ի դատել  
զկենդանիս եւ զմեռեալս , որոյ  
թագաւորութեանն ոչ եղիցի վախ  
ճան » :

Քրիստոս ճշմարտութիւնը մարդոց  
սորվեցընելէն ետքը՝ իր մարդկային բը-  
նութիւնը մահուան մատնելով մարդ-  
կութիւնը մեռցընել ուղեց , որ իրեն

հետ ապրեցընէ յարուցեալ և նորոգեալ  
կենօք : Ասոր համար խաչուեցաւ . մե-  
ռաւ շարժորշնեբոն մահուամբը . որով  
հետև մարդոց բոլոր Թղտբը իր վրայա-  
ռած էր . մեռաւ անոնց համար , մե-  
ռաւ զանոնք գնելու , փրկելու և ա-  
նոնց յաւիտենական կեանք ժառան-  
գել տալու համար :

Միայն Յիսուս Գրիստոսով՝ մեր  
Թախ փրկչով ու միջնորդով կրնանք ար-  
դարանալ . միայն անձ այսինքն հասար-  
քով անոր հետ միանալով կարգարա-  
նանք :

Բայց այս հաւատքը մեզ Քրիստո-  
սի հետ միացնելու համար պէտք է որ  
ճշմարիտ ըլլայ , ըսել կուզեմ՝ Ստու-  
ծոյ պատուիրանքները կատարելու և  
առաքինութիւն գործելու շարժէ մեզ :

Մեր բարեգործութիւնները ինք-  
նիրեննուն չեն կրնար մեզ արդարացը-  
նել . բայց ճշմարիտ հաւատքին կարե-  
ւոր պտուղներն են . և այս գործքե-  
րով յայտնուած հաւատքն է՝ որ մեզ  
մեր փրկչին և արդարացնողին հետ կը-

միայնէ :

Քրիստոնեայն բարեգործութիւններու շարժող այս հաւատքը Աստուծոյ պարզէն է . քրիստոս արժանի ըրաւ մեզ ասոր . ապա ուրեմն մեր ներսիդին ինչ բարի բան որ կայ՝ քրիստոսի ձեռքով Աստուծոյ շնորհքը կուտայ մեզի . և առանց այս շնորհքին բարի և մեր փրկութեան օգտակար բան մը չենք կրնար ընել :

Մեր բնութիւնը առաջին անկումէն ՚ի վեր աւելի չարին հակամիտ ըլլալով քան թէ բարիին , Աստուծոյ շնորհքն է որ բարին աւելի սիրելի կրնէ մեզի , և մեր անձնիշխանութիւնը անանկ վիճակի մը մէջ կդնէ՝ որ ճշմարիտ բարին գործել կարելի կըլլայ :

Աստի երբոր Սրբուհի կոյսը և Սուրբերը օգնութեան կկանչենք և բարեխօս կըռնենք , միայն կաղաչենք անոնց՝ որ քրիստոսի մեր համար վաստակած արդարութիւնը և շնորհքը աստուծմէ ընդունին մեր համար , բայց բնաւ ափրապէս չենք սեպեր

զանոնք Աստուծոյ քով :

Քրիստոս Պոնտացի Պիղատոսին Հըրէաստանի գատաւորութեան , և Տիբերիոսի Հռովմայ կայսրութեան ատենը խաչուեցաւ :

Այս ժամանակներս մարդիկ անոր ապագայ գալուստը գիտէին , ինչու որ Աստուած սկիզբէն ՚ի վեր յայտներ էր . Բայց այս առաջին յայտնութիւնը մարդոց մտորութիւններու մէջ էյնալուն պատճառաւ մթնցած ըլլալով , Աստուած իսրայէլացւոց ազգը ընտրեց , եւ աստուածային առաքելին կամ Մեֆային խոստումը անոր տուաւ , որ իր մէջը պահէ և մէկալ ազգերուն առջևը անոր վկայն ըլլայ : Այս ժողովուրդը Մովսէսի ձեռքով օրէնքներ ու կրօնական արարողութիւններ ընդունեց , որոնց դիտումն էր այն խոստումը պահպանել . մարգարէներ ունեցաւ , որ կգուշակէին Մեսիային կենաց ամէն հանգամանքները , եւ թէ ինչպէս իսրայէլացիները աշխարհքս փրկելու համար խրկուող այն Անձը խոստարտութեամբ

պիտի մեռցընէին .

Քրիստոս մարդարէներուն բոլոր ըսածները կատարեց իր կենաց մէջ, չար չարանքներովը, մահուամբը, եւ երբորդ օրը ըստ հոգի յարութիւն առնելովը .

Ահա այսպէս քրիստոս աշխարհքիս սկիզբէն 'ի վեր բոլոր բովանդակ ճշմարիտ կրօնից կեդրոնն եղաւ . ինքն էր իբր Մեծայ ակնկալութիւն . ինքն իբրև փրկիչ պաշտուի . ինքն եղաւ ամեն մարդոց փրկութեան պատճառ, եւ միայն իրմով կգտնենք հոգեւորական և շնորհք : Առաջին կրօնքին և իսրայէլացւոց կրօնքին վարդապետական եւ բարոյական հիմը պահեց, որ Աստուծմէ եկած ըլլալուն համար ճշմարտութիւն էր . ստուերական արարողութիւնները, որ իրեն առաքման խոստումը յիշեցընելու համար դրուած էին, վերցուց, տեղը ճշմարտութիւնը դրաւ . Ահա այս կերպով աշխարհքիս սկիզբէն 'ի վեր մէկ ճշմարիտ կրօնք մը, մէկ փրկիչ մը կայ . և քրիստոնէութիւն ըսածնիս ուրիշ բան

չէ, բայց եթէ առաջին կրօնքին եւ իսրայէլացւոց կրօնքին բացայայտութիւնը եւ ըստ :

Քրիստոս յարութիւն առնելէն ետև երեւելի աշխարհքս թողուց, նորէն աներևոյթ աշխարհքը մտաւ : Բանը, իրեն հետ յաւիտեանս անձնաւորապէս միաւորած մարդկութեամբը, Հօրը հաւասար իշխանութիւն ունի . աս կնշա նակեն սա խօսքերը . նորոշ ընդ անէ Հօր : Քրիստոսի մարդկութիւնը Հօրը եւ ութիւնը չունի, բայց բանին հետ միա նալովը՝ նոյն էութեան հետ միացած է, և յԱստուած բոլոր նորոգուած մարդկութիւնը կցցընէ :

Բանը նորէն աշխարհք պիտի գայ նոյն մարմնով, սկիզբէն 'ի վեր աշխարհքըս եկող գացող մարդիկները պիտի դատէ . բարիներուն և չարերուն համար կտրուկ վճիռ պիտի տայ, և յաւիտեան պիտի թագաւորէ մարդոց վըրայ, որ ընտրեալներու և անարգեալներու բաժնուելով՝ անմահ կենօք պիտի ապրին ասեղ դատաւորին ամէն

մէկուն համար որոշած վիճակներուն մէջ .

Տեսանելի աշխարհքս պիտի եղծանի ,  
և երկիրս ալ կրակով պիտի երի , հատ  
նի . Բ . Պետր . Գ . 12 .

Իրիշարժութեան և բարապետութեան  
վրայ բրիտանիայ եկեղեցիներուն մէջ  
եղած դարբերութիւնները

Հռովմէական եկեղեցին մինչև այս  
վերջին դարերս փրկադործութեան վը  
րայ արևելեան եկեղեցւոյ վարդապե  
տութիւնն ունէր . մեր օրերը մեծ խառ  
նակութիւն մտաւ անոր մէջ . Աստուա  
ծաբանները առաջին վարդապետու  
թիւնը կաշտապանն . մէկայննք նոր  
վարդապետութիւններ հնարեցին . Այս  
վերջինները առաջիններէն աւելի ըն

դունելի կերևին . և անոնց վարդապե  
տութիւնը պապական կոնդակներուն  
աւելի համաձայն է . ասոր համար կըր  
նանք անոնց վարդապետութիւնը հի  
մակուան հռովմէական եկեղեցւոյն վար  
դապետութիւնը սեպել .

Հոս կը նենք արևելեան եկեղեցւոյն  
և լատինական հին եկեղեցւոյն վարդա  
պետութենէն յունեցած տարբերութիւն  
ներնուն գլխաւոր կէտերը .

**Ա . Մեր գործերը արդարանալու**  
պատճառ են . որովհետև առաջին շնորհ  
քը մեռ մեր արդիանսովը կ'առաջինն , որ ըսել է  
թէ մեր արդարութիւնը մեր սկսած ար  
դեանց և ո՛չ թէ Աստուծոյ Քրիստոսի  
արդեամբք ձրի տուած շնորհաց պտու  
ղըն է . Այս վարդապետութիւնը , որ կի  
սապեղադեանց մնորութիւնն է , մեծին  
կոնդակին վրայ հաստատուած է , որն  
որ հռովմէական եկեղեցին հաստատու  
նա ճանչցած է .

**Բ . Մուրբերը լեւիտոսը արդիւնք**  
ունեցան , որոնց մով մէկ քան զը կկազ  
մուի , որուն մատակարարութիւնը պա



պին անօրէնութեան ներքեւ է . և ուզածին պէս ողջերուն և մեռելներուն կը շնորհէ զանոնք ներդոմանս միջոցով .

**Այս** ներողութեանց վարդապետութիւնը , որ սուրբերուն լիակատար արդեանց վրայ հաստատուած է , սա ողջամիտ սկզբան հակառակ է՝ թէ բնաւ մէկը Աստուծոյ առջևը անշահաւորութեան չունի , և թէ մեր բոլոր արդիւնքը ֆրիստոսինն է , որ մերը կը լըլայ , և անով միայն փրկութեան կը հասնինք .

**Գ**՝ Սրբուհի կոյան Մարիամ մարդկութեանն զուրս էր՝ սկզբնական մեղքով յղացած չըլլալով . մեր փրկութեան գործակից եղաւ . ֆրիստոսի պէս միջնորդ , և ամենասուրբ Երրորդութեան պսակն է .

**Ա**հա այս անհեթեթ մոլորութիւնները մտած են այսօր հռովմէական եկեղեցւոյ հասարակաց վարդապետութեան մէջ , ինչպէս որ անոնց վաւերական և ընդունելի դիրքերէն կտեսնուի . Ուրեմն անիկայ փրկագործու

թեան ճիշդ վարդապետութիւնը մէկդի ձգած է , որ կկայանայ ընդունելու վրայ **Ա** . թէ մեր միակ միջնորդը ֆրիստոս է . **Բ** . թէ մարդկութեան միակ փրկիչը ան է . **Գ** . թէ մենք հաւատքով անոր հետ միանարով կարդարանանք . **Դ** . թէ մեր արդարութեան սկիզբն ալ կատարումն ալ Աստուծոյ ձրիատուր շնորհքովն է . **Ե** . թէ մեր արդիւնքն այսինքն՝ ֆրիստոսի արդիւնքը մեզի սեպհականելը Աստուծոյ պարզեւ է . **Զ** . թէ սուրբերը ֆրիստոսի արդիւնքովը փրկուեցան , որով և իրենց լիակատար արդեանց կարծեցեալ գանձը մոլորական ջնորք մըն է .

**Ա**նգղիականք փրկագործութեան և արդարացուցման վրայ արևելեան եկեղեցւոյ համաձայն վարդապետութիւն ունին , ինչպէս որ կտեսնուի հաւատոյ 9 . 10 . 11 . 12 . 13 . 14 . և 15 երորդ յօդուածներէն , որ իրարմով կամբողջանան , և հաւատքով արդարանալու՝ միանգամայն և կենդանի ու արդարացուցիչ հաւատքէ առաջ եկած

բարեգործութեանց վրայ ունեցած վարդապետութիւններուն կատարեալ դաւանագիրն են :

Բողոքական աստուածաբաններուն շատերուն մէջ առանց փոքր հաւատքով արդարանալու վրայ չափազանց խնդիրներ կան : Բայց անոնց ընդհանուր վարդապետութեան նայելով կրնանք ըսել թէ անոնց արդարացուցիչ հաւատք սեպածը ոչ թէ տեսականը , հապա գործնական հաւատքն է , այսինքն այն հաւատքը որ բարեգործութիւններ առաջ կրերէ :

Ասանկ հասկրնանքնէ՝ անոնց վարդապետութիւնը գրեթէ արեւելեան եկեղեցւոյ վարդապետութեան կհամաձայնի , եւ անոնց աստուածաբաններէն մէկ քանիներուն չափազանց խօսքերը հռովմեական մէկ քանի աստուածաբաններուն չափազանց խօսքերուն փոխադարձն ըլլալը կհասկնանք , որոնց յաղթել էր միաբերնին :

Ե .

ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

« Եւ 'ի Հոգին սուրբ սէրն և կենդանարարն , որ 'ի Հօրէ բղխի , և ընդ Հօր և ընդ Արդւոյ երկրպագի և փառասորն , և խօսեցաւ 'ի մարգարէս » :

Մարդս մինչև ֆրիստոսի վերջին թագաւորութիւնը բարիին ու չարին մէջ տեղը կկուռի և կծիփայ : Բայց որովհետեւ ցանկութեան պատճառաւ չարին սէրը բարին սիրոյն կյաղթէ , անոր համար Աստուծոյ Հոգին , որ Հօր և Արդւոյ էակից է , երկուքէն ալ ճարտարիւնեցաւ , որ իր փրկարար պղբեցութեամբը օգնէ անոր : Այս պղբեցութիւնը շուրջ կրտուի որովհետև մարդուս չէ՛ արուած օգնութիւն մ'է , այսինքն մարդս անոր հասնելու համար արդիւնք

մը ունեցած չէ , հապա միայն փրկու  
տոսի արդեանց համար արուեցաւ , ու  
բուն մարդկային բնութիւնը բանին հետ  
անձնաւորական միաւորութեամբը կա  
տարեւապէս արդիւնաւորեցաւ : Ապա  
ուրեմն Հոգին սուրբ է մարդու կենդա  
նացընողը . պատճառն որ ան միայն իր  
ազդեցութեամբ վերստին կեանք կու  
տայ անոր :

Հոգին սուրբ՝ Որդւոյ պէս միակ  
Սկիզբէն կամ Հորմէն կելնէ քրիստոս  
սուած յաւիտենական գործողութիւնով  
մը : Պէտք չէ շիտթել այս ներքին գոր  
ծողութեան հետ , որով քրիստոս Հոգին ,  
եւ Հօր միայն յատուկ է , մէկալ  
արտաքին գործողութիւնը , որ Հօր  
եւ Որդւոյ հասարակաց է , եւ սուրբ  
Հոգւոյն արտաքս առաքման կվերա  
բերի :

Այս երկու գործողութիւնները  
սուրբ Գրոց մէջ նշանակուած են սա  
խօսքերով « յորժամ եկեացէ մխիթա  
րիչն , զոր եւս սուրբացի յեւ ՚է Հօրէ , ըզ  
հոգին ճշմարտութեան որ ՚է Հօրէ եւսն » :

Յ.Է. Ժ. 26 :

Ներկիոյ Ժողովը հանդանակին մէջ  
սուրբ Գրոց այս խօսքերը օրինակեց ,  
և որ ՚է հօրէ քրիստոս բառերուն վրայ բան  
մը չաւելցուց , գիտնալով որ մարդկային  
հոգին Աստուծոյ յայտնութեանց վրայ  
բան մը աւելցընելու չէ :

Ինչպէս որ Որդին զինքը ծնող Հօր  
էակից է , նոյնպէս և Հոգին սուրբ զինքը  
բզխող Հօր էակից է . անոր համար Հօր և  
Որդւոյ հետ միևնոյն Աստուածն է . և  
միայն իր անձնաւորական յատկութիւն  
ներովը կտարբերի անոնցմէ : Հանդանա  
կը , ՚է հօրէ քրիստոս զատ , սուրբ Գրոց պէս ,  
մարդոց հետ աստուածային հաղորդակ  
ցութեանց յատկութիւն ալ կուտայ  
սուրբ Հոգւոյն . անոր համար է որ կը  
սէ . եւ իսեցաւ ՚է ճարգարէս : Արեւելեան  
եկեղեցին կհաւատայ թէ Հոգին սուրբ  
միշտ աշխարհի կխօսի եկեղեցւոյ միջո  
ցով՝ որուն անսխալութիւնն տուաւ . Բայց  
Հոգւոյն սրբոյ եկեղեցին կառավարելը  
տիրապէս ներշնչութիւն չէ , որովհետեւ  
եկեղեցին աշխարհի նոր նոր յայտնու

Թիւններ տալու համար չէ որ սուրբ  
Հոգիէն օգնութիւն կընդունի, հասցա-  
միայն քրիստոսի վարդապետութիւնը  
իր առաջին անարատութեամբը պահե-  
լու համար: Բսել է թէ եկեղեցւոյ մէջ  
ստուածային ներշնչութիւնն է զանիկայ  
կառավարելը և միշտ անոր հետ ը-  
լալը: Հոգւոյն սրբոյ այս առաքումը  
Հօր և Սրբւոյ հասարակաց է:

Հոգին սուրբ Հօր և Սրբւոյ հաւա-  
սած աստուած ըլլալով՝ պէտք է որ  
անոնց փառակից ըլլայ, և անոնց հետ  
մէկ տեղ երջրպագուի:



Հոգւոյն սրբոյ վրայ քրիստոսեց եկեղեցի-  
ներուն մըլ եղած դարբերութիւնները

Ըսինք՝ թէ արևմտեան եկեղեցի-  
ները հանգանակը ինչպէս որ շարա-  
գրուեցաւ Նիկիոյ և Կոստանդնուպօլսոյ

տիեզերական Ժողովներէն՝ այնպէս  
չպահեցին. որ ՚ի հօրէ Բղիբ բառերուն  
վրայ աւելցուցին և յորդոյ: Այս յաւել-  
ուածը «բոյ» Սխառտի ըսուած հանգա-  
նակին մէջ ալ խօթեցին, որ իններորդ  
դարու գործ ըլլալը յայտնի կերևի:

Ինչպէս որ վերն ըսինք, Նիկիոյ  
հանգանակին մէջ եղած յաւելուածը  
եօթներորդ դարուն մէջ Սպանիա սկը-  
սաւ. ութերորդ և իններորդ դա-  
րերուն մէջ մեծին կարողութի հրամանո-  
վը արեւմտից մէջ տարածուեցաւ: Հը-  
ռովմ մետասաներորդ դարուն սկիզբը  
ընդունեց զայն Հենրիկոս կայսեր ա-  
զաչանքովը. անկէ ետեւ բոլոր արև-  
մտեան եկեղեցիներն ընդունեցին:

Վեշտասաներորդ դարուն մէջ  
Սնդղիականք և Բողոքականք, որ Հը-  
ռովմայ զեղծումները բարեկարգելու  
ելան, աս յաւելուածին դէմ բան մը  
չըսին: Անդղիականք պահեցին զայն.  
Իրենց աստուածաբաններէն շատերը  
Ղատաղովեցին և աւանդական վար-  
դապետութեան համաձայն ցցրեւու-

ալ աշխատեցան : բայց Հռովմայեցւոյ  
պէս անոնք ալ կրճատած , այլափո-  
խած , ինքնահնար և քաջքըշուքխօս-  
քեր մէջ բերելէն զատ ուրիշ բան  
չըրին :

Արեւելեան եկեղեցին հանդանա-  
կը ճիշդ իւր յօրինուած կերպովը պա-  
հեց առանց բան մը ավելցնելու կամ  
պակսեցնելու : Մեկիայ կպնդէ նախ  
թէ յաւելուածը ապօրինաւոր է , որ  
անհնար է ուրանալ : երկրորդ՝ թէ  
յաւելուածը ամենասուրբ երրորդու-  
թեան խորհրդոյն վրայ անհնարին մու-  
լըութիւն կպարունակէ :

Եւ յերաւի թէ որ Բիւրոսն ըսելով  
Հոգին սուրբ առաջ բերող յաւիտենա-  
կան՝ գործողութիւնը կհասկնանք , առի-  
կայ Հօր անձնական յատկութիւնն է ,  
որ միայն է պատճառ երրորդութեան  
մէջ : Այս պատճառի յատկութիւնն է՝  
որ Հօր անձնաւորութիւնը Որդւոյ եւ  
սուրբ Հոգւոյ անձնաւորութենէն կու-  
րոչէ : Հօր անձնական մէկ յատկութիւ-  
նը Որդւոյ ապր անոր անձնաւորու-

թիւնը Որդւոյ տալ , երկրորդութեան  
մէջ եղած որոշմունքը շիտթել , եւ  
բուն իսկ խորհուրդը տապալել է :

Ուստի եկեղեցւոյ հայրերը միա-  
ձայն կսորվեցընեն՝ թէ Հոգին սուրբ  
Հօրմէն կբղխի : Ստոր դէմ՝ բերուած  
վաւերական խօսքերը արտաքին գոր-  
ծողութեան կվերաբերին՝ որով Հոգին  
սուրբ Հօրմէն ու Որդիէն կխրկուի , եւ  
ոչ թէ ներքին գործողութեան՝ որ ըզ-  
սուրբ Հոգին կբղխէ :

Սուրբ Օգոստինոս , որ բառ երե-  
ւութիւն արեւմտեան յաւելուածին աը-  
ուած կարծիքը պաշտպանել կերևի ,  
իրօք կհերքէ զայն . վասն զի իր Երրօ-  
րդութեան վրայ յօրինած հաւան մէջ ասոր  
վրայ դրածները ամէննալ համառօտիւ  
մէջ բերելէն ետքը պարզ խօսքերով  
կաւելցընէ թէ մարդ իր խելքը կորսնցու-  
ցած ըլլալու է՝ որ ըսէ թէ հոգին սուրբ  
իր ծագումը Որդիէն ալ կհառնէ Հօրմէն  
ալ : Ուրեմն Բիւրոսն յորդուոյ բառերով  
ի Հօրէ և յորդւոյ առաւորածը կհասկնար :  
Այս՝ ի Հօրէ և յՈրդւոյ առաւորումը

չմերժեր արևելեան եկեղեցին, այլ միայն կպնդէ՝ թէ արևմտեան ապօրինաւոր յաւերլածը եկեղեցւոյ մինչև ութերորդ դարը ընդհանրապէս ունեցած վարդապետութեան հակառակ է, և վտանգաւոր մոլորութիւն կպարունակէ, թէ՛ և արևմուտցիք ամէն ջանքերնին կթափեն որ արդարացրնեն զայն:

Ասիկայ ընելու համար ձեռք առած գլխաւոր միջոցնին է ըսել՝ թէ Որդին միայն երկրորդական պատճառ է Երրորդութեան մէջ: Այս բացատրութիւնը նախ և յառաջ աւանդական վարդապետութեան առջևը չկրնար արդարաւայլ, և նորաձևութիւն է. երկրորդ անգամ՝ յԱստուած երկրորդական բան ալ եղած կցցընէ, որ ուղղափառ վարդապետութեան ալ հակառակ է, խելքի ալ. վասնզի խելքն ալ մեզի կցցընէ թէ յԱստուած միայն հարկաւոր բան կըրնայ ըլլալ: Հայր միակ պարճառ է ներքին գործողութեանց մէջ. Հայր և Որդի միմայն պարճառ են արտաքին գործողու-

թեանց մէջ, ինչպէս կըսէ սուրբն Օգոստինոս: Այս է ուղղափառ եկեղեցւոյ հաստատուն վարդապետութիւնը:

Արդ արևմտից բոլոր եկեղեցիները հանդանակին մէջ այս յաւերլածը խօթելով Հոգւոյն սրբոյ վարդապետութեան մէջ ճշմարտութենէ շեղեցան, թէ՛ և ամենասուրբ Երրորդութեան խորհրդոյն էական կէտերը ուղղափառապէս կխոստովանին:

Հռովմէական եկեղեցին Հոգւոյն սրբոյ դէմ մեղանչեց՝ եկեղեցւոյ անսխալական վարդապետութիւնը այլայլելով, և Պապին անանկ իրաւունքներ տալով որ Բրիտանոս Հոգւոյն սրբոյ վերակացութեան տակ եղած քրիստոնէից տիեզերական եկեղեցւոյն խոստայալ:

Անգղիականք և Բողոքականք եկեղեցւոյ մէջ անսխալ իշխանութիւն չեն ընդունիր. նոյնպէս Հոգւոյն սրբոյ յարատե ազդեցութիւնն ալ կմերժեն, և սուրբ Գրոց դէմ կխօսին, ըստ որոյ Բրիտանոս եւ եկեղեցիէն հետ դեռի ըլլայ մէկ է:

հարարած աշխարհի . և սորբէ Հոբն պիտի  
ասպնարբէ անոր :



9.

« Եւ Կ մե միայն սուրբ , կաթուղիկէ  
եւ առաքելական եկեղեցի » :

Եկեղեցին Տեառն մերոյ Յիսուսի  
Քրիստոսի ամեն յայտնած բաներուն  
հաւատացողներուն ժողովն է :

Այս եկեղեցին Կ է , այսինքն  
այլ և այլ դաւանանքէ եղող անդամ  
ներէ չիրնաք բազկանալ :

Սորբ է , այսինքն՝ անանկ մարդոց  
մէ միայն կկազմուի , որոնց դաւանած  
վարդապետութիւնները հական սրբու  
թեան՝ այսինքն Աստուծոյ պէս սուրբ  
են :

Արեւիկէ է , այսինքն՝ իսրայէ .

չայւոց սինակոսիային պէս մէկ տեղի մը ,  
ազգի մը և ժամանակի մը կապուած  
չէ , հապա ամեն ազգերն ալ ամեն ժա  
մանակ անոր հաշորդ ըլլալու կանչուած  
են , և յայտնեալ վարդապետութիւնը  
ամբողջ կպահէ , առանց աւելցընե  
լու և պակսեցընելու :

Աստուծոյ Կ է , այսինքն առաքեալ  
ներէն կուգայ , և անոնց Քրիստոսի  
կողմանէ սորվեցուցած վարդապետու  
թիւնները կզաւանի :

Քրիստոնէական եկեղեցւոյ կառա  
վարները ի սկզբանէ անտի քահանայ  
ներն եղան , որոնց պաշտօնը նոյն ին  
քն Քրիստոսի քահանայական պաշտօնն  
է , որ առաջ առաքելոց և ընտրեալ  
աշակերտաց տուաւ , և անոնք ալ ու  
րիշներուն հաղորդեցին : Քրիստոնէա  
կան քահանայութիւնը Քրիստոս ինքը  
հաստատեց , և անոր պաշտօնն ալ որո  
շեց սա խօսքերով .

« Տուաւ ինձ ամենայն եշխանու  
թիւն յերկնս ևւ յերկրի : Գնացէք  
այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն

հեթանոսս . մկրտեցէ՛ք զնոսս յանուն  
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ : Ու  
սուցէ՛ք նոցա պահել զամենայն՝ որ  
ինչ պատուիրեցի ձեզ , և հաւատարմ  
եա ընդ ձեզ եմ զամենայն առւերս մին  
չև 'ի կատարած աշխարհի " . Մատթ .  
ԻԲ . 18 . 20 .

Ապա ուրեմն ֆրիստոս Գրք իր քա  
հանայութեան հետ պիտի ըլլայ , որ  
մինչև աշխարհիս վերջը պիտի տևէ " .  
Լուք . Լ . Գրք . Լ . պաշտօնով :

Ասոնցմէ 'ի զատմեղաց թողութիւն  
տալու պաշտօն ալ ունի . ինչու որ ֆրիս  
տոս իր առաքեալներուն վրայ վշե  
լով ըսաւ . " առէ՛ք հողին սուրբ . ե  
թէ ումեք թողուցուք զմեզս՝ թողեալ  
լիցի նոցա . եթէ զուրուք ունիցիք ,  
կալեալ լիցի " . Յով . Ի . 22 . 23 :

Հաղորդութեան խորհուրդք հաս  
տատելէն ետև առաքեալներուն ըսաւ ,  
" զայս արարէք առ իմոյ յիշատա  
կի " . Ղուկ . ԻԲ . 19 .

Արդ քահանայութեան պաշտօնն է  
" որ վեցընէլ , խորհուրդները հարակարգել , պաշ

քահանայութեան , և ֆրիստոս թէ այս  
քահանայութեան , և թէ եկեղեցւոյ  
հետ պիտի ըլլայ մինչև աշխարհիս վերջը :

Առաքեալներուն քահանայութիւ  
նը աւանդելու համար գործածած ե  
ղանակը յետադրուութենէն էր , աղօթքով  
մէկ տեղ : Պօղոս առաքելը իր քահա  
նայացուցած Տիմոթէոս աշակերտին կը  
գրէ . " մի' անկողթ առնէր զչնորհացդ՝  
որ 'ի քեզ են , որ տուաւ քեզ մարդա  
րէութեամբ 'ի ձեռնադրութենէ երի  
ցութեան " . Ա . ՏԷ . Գ . 14 : " Յիշե  
ցուցանեմ քեզ արծարծել զչնորհան Աս  
տուծոյ՝ որ են 'ի քեզ 'ի ձեռնադրու  
թենէ իմմէ " . Բ . ՏԷ . Ա . 6 :

Քահանայութեան մէջ առաքելաց  
ատենէն 'ի վեր երկու աստիճան որս  
չուած է : Առաջին աստիճան ունեցող  
ները երկրորդ աստիճանը ունեցողնե  
րուն վրայ իշխանութիւն կրանեցընէ  
ին : Բայց այս երկու կարգի աստիճա  
նաւորներն ալ քահանայ կամ երէց եւ  
եպիսկոպոս կամ տեսուչ կրտսին . Գրք .  
Ի . 17 . 28 . Փէլէո . Ա . 1 . ՏԷ . Ա . 5 . 7 .



Այսու ամենայնիւ թէպէտ եւ ամէն քահանայական աստիճանի բարձրացողներուն մի և նոյն անունը կուտային , բայց առաջին աստիճանին վիճակողները մէկայնոնցմէ վեր էին : Յովհաննէս առաքեալը հրեշտակէ կեդեցեաց կկոչէ զանոնք . Յոյր . Ա . 20 : Բ . 1 . 8 . 12 . 18 . Գ . 1 . 7 . 14 :

Հրեշտակ բառը՝ պարգեամար կնշանակէ . եւ ասորիւնք , բարի պարգեամար բառերուն նշանակութիւնն ունի , որոնք առաքելոց իրենց առաքելական ընթացից մէջ ընկերացող , եւ անոնց ձեռքք եկեղեցիներուն վերատեսուչ դրուած մարդոց կարուէին :

Պօղոս առաքեալը այս ստաւն է բեցեբեռն պաշտօնը մէկիկ մէկիկ կը հասկցընէ Տիմոթէոսի եւ Տիտոսի գըրած թղթերուն մէջ , որոնք երկուքն ալ երէց ձեռնադրուած էին , առաջինը Եփեսոսի վրայ , երկրորդը Կրետէի : Այս պաշտօններուն մէկն ալ ձեռնադրութեամբ քահանայութիւն՝ տալ էր , Ա . Տի . Ե . 22 .

Ուստի սոսկ քահանային եւ եպիսկոպոսին մէջ տեղը եղած դասական որոշմունքը յաստատային իրասանց է . որովհետեւ ՚ի սկզբանէ անտի այնպէս սահմանուած էր , եւ սահմանուած ասանէն ՚ի վեր եկեղեցւոյ սահմանադրութեան հիմն էր :

Նոյնպէս քահանայութիւն տալու եղանակը , այսինքն եպիսկոպոսին քահանայից ժողովոյն հետ , աղօթքով մէկտեղ ձեռք դնելն չալ յաստատային կարգմանն է . վասն զի քահանայական շնորհք և իշխանութիւն կրերէ . եւ եկեղեցւոյ ծագմանէն ՚ի վեր ալ կայ ու կայ :

Քահանայութիւնը քրիստոնէական եկեղեցւոյ մէջ նուիրապետական կարգմն է եպիսկոպոսներու և քահանայներու , որ իրենց իշխանութիւնը Աստուծմէ դրուած եղանակով կամ արարողութիւնով մը կառնեն , և օրինաւոր կերպով առնողներն ալ չունեցողներուն կուտան :

Քրիստոնէական եկեղեցւոյ մէջ՝

եպիսկոպոսին և քահանային պաշտօնն է  
բոլոր սրբազան պաշտամունքները կա-  
տարել . եկեղեցւոյ հաստատ կեր-  
պով իբր յայտնութիւն ընդունած  
հաւատալիքները սորվցընել , յայտ-  
նեալ վարդապետութիւնը ամեն կերպ  
յարձակումներէ պահպանել : Անոնք  
այս վարդապետութեան վրայ երաւան  
մը չունին , միայն թէ պարտաւոր են ամեն  
մէկը իրենց մասնաւոր եկեղեցւոյն  
անունովը , այն եկեղեցւոյն ամեն ժա-  
մանակ ընդունած հաւատքը ցցընել :  
Վարդապետութեանց մէջ՝ ամեն հովի-  
ւի եկեղեցւոյն ձայնը , արձագանգը և  
երևեցուցիչն է միայն :

Սարկաւագութեան գալով , թէ՛  
առաքեալներէն սահմանուած ըլլայ ,  
ինչպէս կպատմուի Գրք . 2 . 6 . և թէ՛  
Քրիստոս ինքը հաստատած ըլլայ ,  
ինչպէս Հարց շատերը կկարծեն , ա-  
րևելեան եկեղեցին սրբազան կարգ , այ-  
սինքն քահանայութեան երրորդ առ-  
տիճանը սեպած է : Սարկաւագներն  
ալ քահանայներուն պէս աղօթ ըով մէկ

տեղ ձեռնադրութեամբ կրարձրանան  
այս կարգին , միայն թէ անոնց իշխա-  
նութիւնը քահանայից իշխանութեան  
պէս ընդարձակ չէ . և եպիսկոպոսները  
միայն քահանայութեան ամէն իշխա-  
նութիւններն ունին :

Եկեղեցւոյ ծաղմանէն ՚ի վեր ա-  
ռաջին հովիւները քահանայից եւ սար-  
կաւագաց հետ մէկտեղ իրար կուգա-  
յին հաւատքի գէմ ծաղած մուրու-  
թիւնները հերքելու համար : Այս ի-  
րար գալերնին ծաղ կըսուէր : Ատնց  
մէ ոմանք տեղական էին , ոմանք ալ ընդ-  
հանրական կամ տիեղերական , ինչու-  
որ բոլոր եկեղեցին կներկայացընէին :

Այս ժողովներուն մէջ վարդապե-  
տական ինդիքներու վրայ կխօսէին ,  
և եկեղեցւոյ բարեկարգութեան հա-  
մար կանոններ կհաստատէին :

Վարդապետական ինդիքներու մէջ  
եկեղեցւոյ առաջին հովիւները հերքե-  
կտեպէին ամեն տեղ հաստատ կերպով  
ընդունուած վարդապետութիւնը մէջ  
բերել , և ոմանց եկեղեցւոյ մէջ խօթել

ուղած նորաձեւ վարդապետութիւնները անով շրեւ : Այսպէս Նիկիոյ և կոստանդնուպօլսոյ տիեզերական ժողովները մինչեւ իրենց ատեն ծագած հերետիկոսներուն մերժած խնդիրներուն վրայ եղած աւանդական վարդապետութիւնը իրենց հանգանակին մէջ անցուցին :

Ժողովները , եկեղեցին կառավարելու համար եպիսկոպոսներուն տըրուած աստուածային իշխանութեան զօրութեամբ՝ բարեկարգութեան համար կանոններ հաստատեցին : Անոնց վրայ ուրիշ տեղ կխօսինք . հոս միայն եկեղեցւոյ արտաքին կազմութեան վերայ քանի մը խօսք պիտի ընենք , որ հինգ պատրիարքութիւններու բաժնուեցաւ , և ասոնք ալ նախագահութիւններու , գաւառներու կամ մետրապօլիտներու , և թեմերու կամ եպիսկոպոսարաններու բաժնուեցան : Այս կարգադրութիւնները , անունները և իշխանութիւնները յեկեղեցական սահմանադրութենէ են :

Աստուծոյ հաստատուած միակ նորիրապետութիւնը քահանայութիւնն

է , որ եպիսկոպոսութեան , քահանայութեան եւ սարկաւազութեան կրօննուի :

Եպիսկոպոսներուն իրաւունքներէն մէկն է իրենց իշխանութեան տակն եղած ժողովրդապետական բոլոր եկեղեցիները ներկայացընել , որոնցմէ կը կազմուի իրենց եպիսկոպոսական եկեղեցին , եւ այս եկեղեցւոյն մէջ անընդհատ ընդունուած հաւատքին համար վկայել : Ասանկ ամէն եպիսկոպոսներուն վկայութենէն վարդապետական խնդրոց վրայ եկեղեցւոյ հաստատուն եւ ընդհանուր վկայութիւնը առաջ կուգայ : Այս ընդհանուր եւ հաստատուն վկայութեան վրայ կապուած է եկեղեցւոյ անսխալութիւնը :

Թէ որ եկեղեցին անսխալ չըլլար , ըսել կուղեմ՝ ճշմարտութենէ կարենար մտրիլ , ճշմարտութեան սիւն և հիմն չէր ըլլար . մարմնացեալ բանին՝ որ ճշմարտութիւն է , սուրբ եւ անարատ հարս չէր ըլլար . Քրիստոս անոր հետ չէր ըլլար , և մինչև աշխար-

հիւփերը անոր հետ ըլլալու խոստումը պահած չէր ըլլար . ինքք անոր գերազոյն քահանայապետը և գլուխն ըլլալէ , և Հոգին սուրբ զանիկայ կառավարելէ դադարած կըլլար , և ա՛լ չէր գոյ ըլլար :

**Ա**պա ուրեմն եկեղեցին անսխալ է , և իր առաջին հովիւներուն բերնովը ինքն է որ կիսօսի , երբոր ամենքք մէկ տեղ իրենց մասնաւոր եկեղեցիներուն կողմէն , և անոնց մէջ զտնուած քահանայներուն և սարկաւազներուն հետ միաձայն հաստատուն եւ ընդհանուր հաւատքը կցցընեն :

**Ա**հա այսպէս եպիսկոպոսութիւնը ամենատեն ընդհանուր եկեղեցւոյ ներկայացուցիչն և արձագանգն ըլլալով , եկեղեցւոյ անսխալ գործիքն է :

**Ա**յս մտքով անսխալ են տիեզերական ժողովները :

**Ա**րեւելեան եկեղեցին եօթը տիեզերական ժողով կընդունի\* .

\* Հեղինակին հոս արեւելեան եկեղեցի բաժը միայն Յունականը հասկնալու է . սրովհետեւ Հայաս-

**Ա**ռաջին Նիկիոյ .

**Ա**ռաջին կոստանդնուպօլսոյ .

**Ե**փեսոսի .

**Ք**աղկեդոնի .

**Ե**րկրորդ կոստանդնուպօլսոյ .

**Ե**րրորդ կոստանդնուպօլսոյ .

**Ե**րկրորդ Նիկիոյ .

**Ո**ւրիշ ամեն ժողովներն , որ գումարուեցան թէ արեւելք և թէ արեւմուտք , մէկ կամ շատ պատրիարքներու , մէկ կամ շատ գաւառներու ժողովներ եղան , և տիեզերական եկեղեցին չներկայացուցին :

**Ե**կեղեցւոյ բոլոր անդամները , մեռած ըլլան ողջ ըլլան , հերիք է որ եկեղեցւոյ անդամակցութեան յատկութիւնը չկորսնցընեն այս աշխարհիս կամ հանդերձելոյն մէջ , իրարու հետ հաղորդակցութիւն կունենան , այսինքն կրնան աղօթքով իրարու օգնել , և իրարու համար շնորհք խնդրել :

**Ա**յս կեանքէս հրաժարող և եր-

տանեայց եկեղեցին միայն երբ ժողով կընդունի տիեզերական , որք են Նիկիոյ Ա . կոստ . Ա . և Եփեսոսի սուրբ ժողովները :

կինքն ընդունուող անդամները յազնէ  
հան եկեղեցին կկազմեն , որովհետև  
հաւատարմութեան խոտացուած պատ-  
կը ընդունեցին : Ողջ անդամներն ալ  
տեսանելի և զնորեւեկեղեցին կկազ-  
մեն , որովհետև տակաւին փորձու-  
թեանց դէմ կկռուին :

Եկեղեցւոյ անդամակցութիւնը  
հանդերձեալ կենաց մէջ կկորսուի դա-  
տապարտութեամբ . այս աշխարհիս մէջ  
ալ հերձուածով , հերետիկոսութեամբ ,  
ուրացութեամբ և բանադրանօք :

Հերձուածողն ան է՝ որ եկեղեցւոյ  
օրինաւոր հովուաց իշխանութեան չը-  
հնազանդելով անոնցմէ կբաժնուի :

Հերետիկոսն ան է՝ որ յայտնուած  
և եկեղեցիէն վճռուած մէկ ճշմարտու-  
թիւնը յամառութեամբ կմերժէ , աւել-  
ցրելով , պակսեցնելով , կամ բոլոր-  
ովն ուշանալով :

Ուրացեալն ան է՝ որ յայտնապէս  
քրիստոնէութիւնը կուրանայ :

Բանադրեալ է այն յանցաւորը՝ որ  
օրինաւոր իշխանութեան ձեռօք եկե-

ղեցւոյ հաղորդութենէն կկտրուի :

Ամէն բարի կամ չար քրիստոնեայ ,  
որ այս շորս հանգամանքներէն մէկուն  
մէջ չէ , եկեղեցւոյ անդամ է : Բարի  
կամ չար կըսենք , որովհետև քրիստոս  
մեզի սորվեցուց՝ թէ եկեղեցին զաշտի  
մը նման է , որուն մէջ բարի սերմին հեա  
խառն որոմն ալ կգտնուի , և պիտի  
գտնուի մինչև աշխարհիս վերջը .  
Մատթ. ԺԳ :

Եկեղեցին իր արտաքին գոյութեան  
մէջ և կառավարութեանց հեա ունե-  
ցած յարաբերութեան մասին՝ ազատ ալ,  
պաշտպանութեան տակ ալ , հալածեալ  
ալ կրնայ ըլլալ . և այս սյլ և այլ վարչու-  
թեանց տակ ալ պարագայներուն հա-  
մեմատ կրնայ ապրիլ : Թէ որ ազատ  
է , իր անդամները իբր քաղաքացի օրի-  
նաւոր իշխանութեանց հնազանդելու  
պարտաւոր են . թէ որ պաշտպանու-  
թեան տակ է , իր էական վարդա-  
պետութիւնները եւ սահմանները տե-  
րութեան ձեռքը չպիտի տայ . թէ որ  
հալածանաց մէջ է , իր անդամները

պէտք չէ որ օրինաւոր իշխանութենէն  
ապստամբին :

Եկեղեցւոյ իշխանութիւնը ամեն  
կերպով եւ ամեն բանի մէջ հոգւոր է .  
իր գլխաւորները արտաքին բաներու  
վրայ իշխանութիւն չունին , և ասոր  
անօր ու տէրութեանց դէմ ստիպում ,  
դաւ և բռնութիւն բանեցընելու չեն :



Եկեղեցւոյ վարդապետութեան վրայ իւր  
շիտոնէից եկեղեցւոյ մէջ եղած որոշ  
քերականները :

Հռովմէական եկեղեցին իններորդ  
դարէն ՚ի վեր կայդէ՛ թէ Հռովմայ  
Պատրիարքը եկեղեցւոյ տեսանելի գը-  
լուխ է յաստատման երաւանց եւ ՚ի յաջոր-  
դութենէն սրբոյն Պետրոսի , որ՝ անոր  
խօսքին նայելով , եկեղեցւոյ գլուխ եւ  
Հռովմայ եպիսկոպոս էր :

Այսօր ալ կաւեցընէ թէ Հռովմայ

հայրապետը բովանդակ եկեղեցւոյ աւ-  
ստաներկայացուցիչը և սուրբ Գրոց և  
կաթողիկէ աւանդութեան աւստ մեկ  
նիչն է . բոլոր եկեղեցիներուն վրայ գե-  
րագոյն իշխանութիւն ունի , եւ եպիս-  
կոպոսներն անոր փոխանորդներն ըլլա-  
լով՝ իրենց բոլոր իշխանութիւնը ան-  
կէ կառնեն :

Պետրոս առաքեալը թէ՛ եւ եկե-  
ղեցւոյ գլուխ եղած ըլլար , ասկէց չէր  
հետեւէր թէ այս յատկութիւնը Հռով-  
մայ եպիսկոպոսին հաղորդուած է . ին-  
չու որ աս պատուանունը կրնար Պե-  
տրոսի այն նախնի մէկ յատկութիւնն ըլլալ .  
եւ անհնար է հաստատել թէ առա-  
քելոց անձնական յատկութիւնները ի-  
րենց կառավարած եկեղեցեաց եպիս-  
կոպոսներուն անյաժ են :

Բայց պէտք է առաջ անցընել թէ  
Պետրոս առաքեալը Հռովմայ եպիսկո-  
պոս եղած է : Արդ պատմութիւնը կը-  
վկայէ թէ Լինոս եղաւ այն քաղաքին ա-  
ռաջին եպիսկոպոսը . և սուրբն Պետրոս  
նահատակուելու համար միայն դնաց

հոն . և այն եկեղեցին Պօղոս առաքեալը հաստատեց : Ուրեմն Հռովմայ եպիսկոպոսները զիրենք Պետրոսի յաջորդ անոր համար կանուանեն , որովհետև Հռովմայ նահատակուեցաւ , և ոչ թէ Հռովմայ եպիսկոպոս եղած ըլլալուն համար :

Դարձեալ , Պետրոս առաքեալը եկեղեցւոյ տեսանելի զլուխ եղած չէ , այլ միայն առաքելոց մէջ մտնելն : Այս պատիւը անշահան էր անոր , եւ բնաւ բռնի եւ ճայրագոյն իշխան բառերուն նըշանակութիւնը չունի :

Հռովմէական եկեղեցին պապերուն պահանջումները Սուրբ Գրովք և աւանդութեամբ հաստատել կլնանայ :

Սուրբ Գիրքէն մէջ բերած խօսքերնին իրենց տուած նշանակութենէն բոլորովին տարբեր նշանակութիւն ունին , ինչպէս որ կհաստատեն սուրբ Գրոց ուրիշ խօսքերը , և կվկայեն սուրբ Հարք , որ այն խօսքերը Պապերէն տարբեր կերպով մեկնած են ,

Աւանդութեան գալով , Հռովմ

անանկ իրողութիւններ ու վկայութիւններ մէջ բերած է , որ կամ բոլորովին ինքը հնարած է , կամ այլայլած , խանգարած է , և կամ իրեն ուղած բանը չեն հաստատեր :

Ուստի Պապականները եկեղեցւոյ շինուածքը կոտպալին , որ միայն մէկ բռնի մը ունի գերիստոս , որ միշտ իրեն հետ կընակի , և մէկ իշխանութիւն մը քահանայութիւնը , որուն եպիսկոպոսները լիակատար իշխանութիւն ունին իրենց կարգին պատճառաւ , զորի գործ կընեն յաստատանայն իրենց ձեռնադրութեան զօրութեամբ , և ոչ թէ ուրիշ ո՞ր և իցէ մէկու մը հրամանաւ , եւ միայն մէկ անսխալութիւն մը , որ Հոգւոյն սրբոյ ներկայութիւնը տուած է իրեն :

Ընդհանուր եկեղեցին , որ թէ՛ հովիւներէն և թէ՛ հաւատացեալներէն կը բաղկանայ , Հոգւոյն սրբոյ ներկայութիւնը և օգնութիւնը կվայելէ , և յայտնեալ ճշմարտութեան համար տուած հաստատուն վկայութեամբը անսխալը :

լալը կյայտնուի : Յաստատուի իրանց  
 մտնան մէջ կերտն ճը միայն ունի, զբրիտ  
 տու և անոր ճշմարտութիւնը, որուն  
 կվկայէ ամէն դարերու քրիստոնէից  
 հաստատուն և տիեզերական ձայնը, ո  
 րոյ մշտնջենաւոր արձագանդն է եղե  
 ւոյստանիանը :

Ուրեմն կերտնական արտաքին իշխա  
 նութիւնը եպիսկոպոսութեան լրու  
 թեան մէջն է, որ մէկ է, և ամէն ո  
 րինաւոր եպիսկոպոսներն ունին, ինչ  
 պէս կրտէ սուրբն կիպրիանոս :

Հոովմայ եպիսկոպոսներուն պա  
 հանջումները կհակառակին այս ճշմար  
 տութիւններուն, որոնց վկայած են տիե  
 ղերական ժողովները, և կաթուղիկէ  
 աւանդութեան վկայ եղող սուրբ Հայ  
 րերը :

Պապերն ու իրենց աստուածաբան  
 ները եկեղեցւոյ արտաքին կառավա  
 րութեան վրայ ալ ծուռ դաղափարու  
 նին՝ որոպէն զօրութիւններ ընծայելով  
 անոր, որ կառավարութեանց դէմ դոր  
 ծածեղու իրաւունք ունի եպիսկոպոս

ներուն և գլխաւորապէս զպապին միջո  
 ցաւ, որուն ի մարմնաւորս տեղադրնե  
 րն իշխանները և եպիսկոպոսներն ալ  
 ՚ի հոգեւորս անոր գեղարմներն կամ ժող  
 ուրդներն են :

Բողոքականներն ալ ուրիշ կերպով  
 կհակառակին այս ճշմարտութեանց,  
 քահանայութիւնը մերժելով : Անոնց  
 կարծիքին նայելով, պաշտօնէութիւնը  
 հաւատացելոց կարգմամբ կտրուի,  
 և ձեռնադրութիւնը լոկ արարողու  
 թիւն մըն է, որ ո՛չ շնորհք կուտայ և  
 ո՛չ իշխանութիւն :

Ասանկ, բողոքական պաշտօնեայն  
 պաշտօնունք կատարելու համար չոր  
 քեւ լոկ աշխարհական մըն է, և ո՛չ թէ  
 աստուածային ձեով մը սրբագործեալ  
 պաշտօններ ընդունող քահանայ մը, ո  
 լով ո՛չ թէ Գրիստոսի կողմանէ կտր  
 վեցընէ և խորհուրդ կմտակարարէ,  
 հապս հաւատացելոց կողմանէ, և ըն  
 ժաման է որ քանի մը առաւելութիւն  
 ներ կուտայ անոր :

Ճիշդը խօսելով, ընայութիւնը բո



ըրբական եկեղեցիներուն շատերուն մէջ ա՛լ սովորութիւն չըլլալով՝ պաշտօնեայն հաւատացեալներէն չկարգուիր, այլ ուրիշ մէկ քանի պաշտօնեայններէն, որ անոնք տլ առանց ժողովրդեան մասնակցութեան ընտրուած են :

Անանկ է նէ՛ այս օրուան օրս բողոքականաց մէջ տիրապէս ո՛չ քահանայութիւն կայ, և ո՛չ պաշտօնէութիւն, հապա միայն հաւատացելոց ժողով մը՝ որ մէկ քանի պաշտօններ առած են ուրիշ հաւատացեալներէ, որոնք իրենց ընտրածնուն նոյն պաշտօնները տալու իրաւունքն իրենց կսեպհականեն :

Ասանկ պաշտօնեայներու ո՛չ աստուածային և ո՛չ մարդկային իշխանութիւն մը չկրնար տրուիլ, վասն զի ո՛չ ձեռնադրութիւն ունին և ո՛չ ճշմարիտ ընտրութիւն: Դարձեալ չեն կրնար նոյն իշխանութիւնը իրենց սեպհականել առանց բողոքականութեան հիմնական մէկ սկզբունքը տապալելու, որուն նայելով ամէն հաւատացեալ պէտք է որ իր հաւատքը ինքնիրեն տրվի

աւրբ Գիրքէն՝ ուղածին պէս հասկնալով զայն :

Բողոքական ընկերութիւններուն մէջ եկեղեցւոյ մէջ, սուրբ, կոթողիկ եւ սուրբական նշաններէն մէկն ալ չեն տեսնուիր, որովհետեւ թէ՛ վարդապետութիւններուն և թէ՛ կառավարութիւններուն չեն յարմարիր բնաւ :

Անգղիական եկեղեցին եպիսկոպոսութեան, քահանայութեան եւ սարկաւազութեան երեք սրբազան կարգերը կընդունի. այս կարգերուն ձեռնադրութեամբ տրուիլն ալ կընդունի. այս երկուքին մէջ արևելեան եկեղեցւոյ համաձայն է՝ ձեռնադրութեան կնքոյն վրոյ ունեցած կարծիքէն զատ, որուն վրայ վարը պիտի խօսինք :

Բայց ընդհանուր եկեղեցւոյ եպիսկոպոսական լրութեան կլլանայ եկեղեցւոյ հաստատուն եւ տիեզերական հաւատքը յանուն եկեղեցւոյն անսխալութեան ցընելու իրաւունքը . Յօդ. 21 . եւ եկեղեցին ալ անսխալ չճանչնար, թէ եւ ՚ հաստատոյ ճարտի ինքրններուն մէջ է :

բաւաստեմքն իստոյ անոյ. Թմբ. 20.

Աստեղը հակասութիւն կայ որովհետեւ վարդապետական իրաւաստեմքն անխաղըւտով միայն կրնայ գոյ ըլլալ:

Անիրաւ է անխաղութիւնը այս կամ այն վարդապետութիւնը հաստատելու չբաւանտ սեպելը. ասիկայ Հռովմէականաց մոլորութիւնն է, որուն համար անշուշտ բողոքել ուզեց Անգղիական եկեղեցին. իւրաքանչիւր վարդապետութեան նայելով անխաղութիւնը ճշմարիտ եկեղեցոյ մէկ առանձին պարգևն է, որով յայտնեալ վարդապետութենէ բան մը չփոխեր՝ Քրիստոս իրեն գլուխ և սուրբ Հոգին իրեն առաջնորդ ունենալուն համար. Ասկէց կհասկցուի որ անտեղի չէ սորվեցընել թէ եկեղեցին իր հովիւներուն բերնովը կխօսի, և թէ եպիսկոպոսութիւնը որ Աստուած հաստատեց եկեղեցին կառավարելու համար, անսխալ է երբոր այն եկեղեցոյն անունովը խօսի, և անոր հաւատքը ցընէ. Թէ որ եկեղեցին անտխալ չըլլար, սուրբ Հոգիէն կառա-

վարուած չէր ըլլար, թէ որ անոր հովիւները անոր անունովը խօսեցու կարող չըլլային, անոր անսխալութիւնը միայն իրաւարարն կըլլար, և չէր կրնար յայտնի ըլլալ:



է.

ՄԿԻՏՈՒԹԵԱՆ

ԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻՒՍ ԻՈՐ ՀՈՒՐԴԵՆՐՈՒՆ ՎԸՍԵ:

Հաւատամք մի մկրտութեան ի թողութիւն մեղաց:

Արեւելեան եկեղեցին կհաւատայ թէ Քրիստոս եթը որբազան արարողութիւններ կամ խորհուրդներ դըրաւ, որք են մկրտութիւն, դրոշմ-

հաղորդութիւն , ապաշխարութիւն , կարգ , ամուսնութիւն , ե. օծումն հիււանդաց . Այս սրբազան արարողութիւնները խորհուրդ ( սաղմունք ) ըստածեն արեւմտեան եկեղեցւոյն մէջ . Արեւելեան եկեղեցին զորքէ կկոչէ . որ նոյն պէս խորհուրդ կամ գաղտնիք ըսելէ , եւ աստուածային շնորհաց մարդու հոգւոյն վրայ ըրած գործն ներգործութիւնը մեկպէս ազէկ կըացատրէ . "

Խորհուրդ մը խորհուրդ ըլլալու համար երեք բան կպահանջուի . Ա . Աստուած սահմանած պիտի ըլլայ . Բ . զգալի նշան մը պիտի ըլլայ , որուն կից է շնորհքը , որ ազօթքով կտրուի . Գ . այն սրբարար նշանին միջոցաւ շնորհք մը պիտի տրուի , քրիստոս , ինչպէս կգիտէ Ռսկեբերան , միայն հոգևոր բաներ տուաւ մեզի , նիւթական բաներու միջոցաւ . Հոգին մարմնոյն հետ միացած ըլլալով մարդու մարմնուր է . անոր համար քրիստոս իր պարզէնները մարմնուր է , այսինքն մարդու բնութեան յարմար միջոցներով տուաւ մեզի .

Խորհուրդ մը մատակարարելու համար երեք բան պէտք է . Ա . զգալի , այսինքն զգայարանաց տակ ինկող նշան մը . Բ . այս նշանը սրբացնելու համար աղբի . Գ . օրէնսուրդ զարմնեայ մը , խորհուրդաւոր արարողութիւնը հաստատուած ձևոյն համեմատ կատարելու համար .



### ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Մկրտութիւնն է սրբազան արարողութիւն մը կամ խորհուրդ մը՝ քրիստոսէ դրուած՝ անկէ առաջ գործուած մեղաց թողութեան , սկզբնական արատը սրբելու , եւ ՚ի քրիստոս վերածնեալ կենաց սկիզբը մեզի տալու համար .

Մկրտութիւնը քրիստոս ինքը հաւ-

ատեց . որովհետև իր առաքելները  
մկրտելու խրկեց . « դնայէ՛ք ըսելով  
անոնց , աշակերտէյէ՛ք զսուկնայն հե-  
թանոսս , մկրտեցէ՛ք զնոսս յանուն Հօր  
և Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ » :

Մկրտութիւնը առաքելոց ատենէն  
ի վեր ամէն քրիստոնէից եկեղեցիներ  
րուն մէջ երբեք անգամ զբն թիւ ընդհան-  
կըւար , ձեն ալ հետը ըսելով , « յա-  
նուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սր-  
բոյ » : Զգու՛ն նշանն է շուրջ . սրբարար  
աղօթքն է այս ձևը . « յանուն Հօր »  
և այլն . օրինաւոր պաշտօնեայն է եպիս-  
կոպոսը կամ քահանայն , որովհետև  
քրիստոս առաքելոց և անոնց յաջորդ-  
ներուն ըսաւ . « դնայէ՛ք մկրտեցէ՛ք »  
և այլն . Խորհուրդը կատարելու համար  
դրուած եղանակն է երբեք անգամ զբն թիւ  
ընդհանր .

Արևմտից եկեղեցիները շատ դա-  
րերէ ՚ի վեր ընդունած են շուրջ մկր-  
տողին զլիսուն վրայ թափելու , և  
սրսկելու սովորութիւնը , քրիստոսի ը-  
սած խօսքն ալ մէկտեղ ըսելով .

Նախնի եկեղեցւոյ մէջ միայն ան-  
կողին պառկող հիւանդները այս կեր-  
պով կմկրտէին : Ուստի թէպէտ այսպի-  
սի մկրտութիւնը ըստ ինքեան վաւե-  
րական և ճշմարիտ է , ապա թէ ո՛չ  
նախնի եկեղեցին հիւանդութեանց ա-  
տենն անգամ չէր ընդունէր զանիկայ ,  
այսու ամենայնիւ ստոյգ է որ թէ՛ հե-  
թանոսս թէ՛ սրբաճաք մկրտելը օրինաւոր չէ ,  
որովհետև հակառակ է առաքելական  
մէկ կանոնին , որ ամեն եկեղեցիներու  
մէջ պէտք է որ յարգի բունուի : Այս  
է արեւելեան ուղղափառ եկեղեցւոյն  
այս մասին վրայ ունեցած վարդապե-  
տութիւնը :

Մկրտութիւնը հարկաւոր է , վասն  
զի ըստ Յովհաննու . Գ . Ծ . « Որ ոչ  
ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ , ո՛չ կարէ  
մտանել յարքայութիւնն երկնից » :

Մարդս մկրտութեամբ քրիստո-  
նէական կենաց վերածնած ըլլալով ,  
անհնար է երկու անգամ մկրտել զա-  
նիկայ , որովհետև ծնունդը թիւ անգամ  
միայն կըլլայ .

Հաւատացելոց տղաքը դեռ բանա-  
վարութիւննին չբացուած մկրտելու է .  
որովհետեւ ծնողք կրօնից աստուածայ-  
նութեան հաւատարմիւն՝ պէտք է որ  
հաւատքնին իբր թանկագին ժառագու-  
թիւն իրենց որդւոց հաղորդեն , իրենց  
հաւատքին մէջ մեծցընեն զանոնք , և  
առանց կրօնքի չթողուն մինչև այն հա-  
սակնին՝ որուն մէջ կիրքերը դիւրաւ  
կխաբեն Աստուծոյ եւ վերածնութեան  
չնորհքէն զուրկ՝ եւ ճշմարտութենէ ու  
բարիէն հեռի եղող մարդը :

Եկեղեցին մշտնջենաւոր ընկերու-  
թիւն մը ըլլալով՝ պէտք է որ անոր ան-  
դամները իրենց որդիքներովը մշտն-  
ջենաւորին : Ուստի պէտք չէ որ իրենց  
որդիքը սատանային չար ազդեցու-  
թեան ներքեւը թողուն մինչեւ որ  
մեծնան՝ իրենց ուղածին պէս ինք-  
նիրենց հաւատք մը ընտրելու կարող  
ըլլան , եւ կրից վատթար ներդործու-  
թեանց խաղալիկ ընեն զանոնք : Ա-  
սանկ ընելով յայտնի կցընեն ծնողք  
թէ իրենց հաւատքին ճշմարիտ ըլլա-

լուն վրայ տարակոյս ունին :

Տղայոց մկրտութեան ատենը կրն-  
քահայր եւ կնքամայր կկենայ քովեր-  
նին , որ անոնց հոգեւոր հօր և մօր պէս  
են , որոնց պաշտօնն է բնական ծնողք  
չունեցող տղայոց քրիստոնէական դաս-  
տիարակութեանը հոգ տանիլ :

Բանավարութիւննին բացուելէն  
ետեւ մկրտուող տղայք ալ կնքահայր  
եւ կնքամայր կունենան , որոնք եկե-  
ղեղեցւոյն առջև նորահաւատներուն  
հաւատքին երաշխաւոր կըլլան :

Արեւելեան եկեղեցին մկրտութիւն  
ընելու ատենը շատ հին եւ խորհրդոյն  
յարմար իմաստներ պարունակող ա-  
րարողութիւններ ունի . ինչպէս են  
երգուընցնել , խաչակնքել , եւ մկր-  
տուողին խաչ տալ , որ բոլոր կենացը  
մէջ ճիտը կախէ \* :

Մկրտութեան պաշտօնեայն թէ  
պէտեւ եպիսկոպոսը եւ քահանայն է ,  
բայց առաջին դարերուն մէջ սարկա-

\* Յայտնի է որ թէ այս և թէ մկրտելոյն քով  
կնքամայր կենալու սովորութիւնը յունական է : Մ . Թ .

« Թղններուն եւ աշխարհականներուն ալ մկրտելու թոյլ կուտային 'ի հարկաւորութեան պահու : »

Սակ կտորվըցընէ ուղղափառ եկեղեցին թէ Բրիտանոսի համար մեռնելն էն առաջ մկրտուիլ չկրցող մարդոց մարտիրոսութիւնը մկրտութեան տեղը կրունէ :



ԻՌՈՇՄԻՆ

ԿԱՄ ՍՈՒՐԲ ՄԻՒԹՈՅԻ ՕՇՄԱՆ ՎՐԱՅ

Արեւելեան եկեղեցին այս օժումբ Բրիտանոսէ հաստատուած սրբազան աբարդութիւն մը կսեպէ՝ նոր մկրտողներուն սուրբ հոգի տալու համար :

Ասոր ազացոյցը սուրբ Գրքին սոխօսքերէն կգանէ . « Իբրև լուան՝ որ յերուսաղէմ առաքեալքն էին , թէ և 'ի Սամարիա ընկալան զբանն Աստուծոյ , առաքեցին առ նոսա զՊետրոս եւ զՅովհաննէս : Որք իջեալ կացին

խաղօթս 'ի վերայ նոցա , որպէս զի առցեն զհոգի սուրբ . զի ցայնժամ չև ևս էր եւ ոչ 'ի վերայ միոյ նոցա հասեալ . բայց միայն մկրտեալք էին յանուն Տեառնն Յիսուսի : Յայնժամ եդին զձեռս 'ի վերայ նոցա՝ եւ առնուին հոգի սուրբ » . Գործ. Ը . 14 : Բրիտանոսի համբարձմանէն ետև առաքեալները մէկէն սկսան աս սրբազան արարողութիւնը կատարել , որ առջեւ եւ յետագային վրայ կկայանայ , և նոր մկրտողներուն սուրբ հոգի կուտայ :

Պօղոս առաքեալը Եփեսոս երթալով հոն Յովհաննու մկրտութեամբ մկրտուած ազէտ հաւատացեալներ դրտաւ , որոնք « Մկրտեցան յանուն տեառնն Յիսուսի : Իւ 'ի դնել 'ի վերայ նոցա Պօղոսի զձեռն , եկին Հոգին սուրբ 'ի վերայ նոցա » : Գործ. Եթ . 6 :

Երբայեցուոց թղթոյն մէջ Զ . 2 . Պօղոս առաքեալը մկրտութեան հետ ձեռնադրութիւն ալ կդնէ :

Այս ձեռնադրութեան հետ զառաջան արարողութիւններ ալ կային :

դիտուած արդիւնքներուն համեմատ .

Դրոշմի ատեն ձեռնագրութիւնը սուրբ իւղով օծման հետ մէկտեղ կըլլար . Ասոր համար սուրբ հոգի տըրուիլը օգուտն ըսուած է սուրբ գըրոց մէջ . « Եւ դուք օծութիւն ունիք առ 'ի սրբոյն , և գիտէք ամենեքին . . . Եւ օծութիւնն՝ զոր ընկալարուք 'ի նըմանէ՝ բնակեացէ 'ի ձեզ » : Ա . Յ . Գ . Բ . 20 , 27 .

Պօղոս առաքեալն ալ նոյն խօսքը կգործածէ . « Որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ 'ի քրիստոս , և որ օծմեզ , և ետ զառհաւատչեայ հոգւոյն 'ի սիրտս մեր » : Բ . Կ . Գ . Ա . 21 . 22 .

Հոգւոյն սրբոյ տուչութիւնը այլաբանօրէն օգուտն կկոչուի այս տուչութեան նշանն պատճառաւ , որ է սրբութիւնը յետնորոշութեամբ և սղօնով մէկտեղ .

Արեւելեան եկեղեցին խորհրդոյն այս երեք էական յատկութիւնները պահած է , և կհրամայէ որ օծումը

երախային սրտին , ականջներուն , աչքերուն , բերնին , ոտքերուն , և ձեռքերուն վրայ ըլլայ\* , որպէս զի բովանդակ մարդը իր հոգեւոր վերածնութենէն ետեւ օգուտն օրհնուած անուշահոտ իւղ կգործածէ՝ որ փառն կըսուի , կպատուիրէ որ օծումը անմիջապէս մկրտութենէ ետեւ ըլլայ . բոլոր քահանայներուն օծելու իշխանութիւն ունենալը կճանչնայ . կտրվըցընէ թէ դրոշմը , այսպէս ըսենք , մկրտութեան կատարումն է , հոգւոյն սրբոյ նշանը կտրպաւորէ 'ի մեզ , ուստի եւ անհնար է նշանը զայն :

\* Մեր եկեղեցւոյ սովորութիւնն է ասոնց հետ հոտոտելիքը եւ քամակն ալ օծել : Մ . Թ .

## ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Հաղորդութիւն կրսուի փրկատուի մարմնոյ եւ արեան աստուածութեան հետ միացած խորհուրդը, որ հաշակողներուն հոգւոյն կհաղորդուի ընդ տեսակաւ հացի եւ գինւոյ :

Քրիստոս այս խորհուրդը աշակերտներուն հետ ըրած վերջին ընթրեաց մէջ հաստատեց՝ երբոր օրհնած հացն ու գինին անոնց տալով ըսաւ .  
 « Առէ՛ք կերայք, այս է մարմին իմ արբէ՛ք ՚ի դմանէ ամենեքին, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ՚ի վերայ բազմաց հեղանի ՚ի թողութիւն մեզաց :  
 Չայս արասլիք առ իմոյ յիշատակի » :  
 Մատթ. Ի 2 . 26 : Մարկ. Ժ Գ . 22 : Ղուկ . Ի Բ . 19 :

Առաքեալները հնազանդեցան իրենց վարդապետին հրամանին . հաւատացեալներուն հետ իրար կուգային, հացը եւ գինին կորբազ օրծէին, և հա-

ւատացելոյ կրամնէին իբր մարմին եւ արիւն փրկատուի, Ա. կորն. Ե . 16 . ԺԱ . 20 : Ասիկայ կընէին անոր չարչարուած մարմնոյն և թափած արեան, այսինքն Գողգոթայի վրայ ըրած պատարագին յիշատակին համար . Ուտի անոնց կատարած ընթրիքը փրկատուի խաչին վրայ մատուցած պատարագին խորհրդաբար կատարումն էր, բայց մարմնոյ և արեան իրականութիւնը չէր մերժէր :

Արևելեան եկեղեցին այս առաքելական վարդապետութիւնը պահեց . կը հաւատայ թէ հացին և գինւոյն սրբագործութենէն ետև՝ փրկատուի մարմինը և արիւնը իրապէս և քրիստոսն են . կայ են հաղորդութեան մէջ, և հացն ու գինին այնուհետև քրիստոսն չկան, այլ ըստ երեւոյթին միայն, այսինքն զգայարանաց տակ ինկած յատկութիւնները միայն կմնան :

Իսկ թէ ի՞նչ կերպով է մարմնոյ և արեան այսներկայութիւնը, կհաւատաց թէ անոնք զգալի և բնական կերպով ներկայ չեն, այլ հոգևորապէս, այսինքն մեր



զգայարանաց տակ չեն իյնար, եւ յա-  
րուցելոյն ֆրիստոսի մարմնոյն պէս հո-  
գեւորեալ կերպով կկենան անոնց մէջ :  
Կհաւատայ թէ հացն ու դինին սրբա-  
գործութեն ետեւ հարսնացեալ մարմին  
եւ արիւն ֆրիստոսի կըլլան իրենց տե-  
սակաց ներքեւը, եւ Աստուածութիւնն  
ալ անոնց հետ միացած ըլլալով՝ ֆրիս-  
տոսի անձը ինչպէս երկինքը՝ նոյնպէս  
և հաղորդութեան մէջ երկրպագելի է .  
հիւանդներուն համար սուրբ հաղոր-  
դութիւն կրնայ պահուիլ . կրնանք ա-  
ռաջին քրիստոնէից պէս ասոր անոր  
տունը տանել զայն . ո՛չ միայն հաւատք  
ունեցողները՝ այլ եւ չունեցողներն  
ալ կրնան գոյացապէս և իրապէս ճա-  
շակել զայն, միայն թէ հաւատքով  
չճաշակողները իրենց դատարանը և դա-  
րաստանը՝ անը կուտեն՝ ըստ բանի սըր-  
բոյն Պողոսի :

Կհաւատայ թէ հաւատացեալները  
երկու տեսակէն՝ հացէն եւ դինիէն  
մէկտեղ հաղորդուելու են, եւ զանոնք  
գինեոյն տեսակէն զրկելը քրիստոսի

յայտնի խօսքին դէմ է . « Արքէք 'բ  
դմանէ առնեալն . այդ է արիւն իմ՝ նո-  
րոյ ուխտի » , եւ այլն :

Սուրբ հաղորդութիւնը կատարե-  
լու կերպին վրայ խօսելիքնիւ գործոյս  
դատարանն մասին կ'ընդունք :

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ասիկայ խորհուրդ մը կամ սրբազան  
արարողութիւն մըն է՝ ֆրիստոսէ դը-  
րուած՝ մկրտութենէ ետեւ գործուած  
մեղաց թողութեան համար :

Առաքեալները՝ և 'ի դէմն նոցա՝  
անոնց յաջորդ քահանայները մեղաց  
արձակում տալու կամ՝ չտալու իշխա-  
նութիւն առին՝ երբոր իրենց աստուա-  
ծային վարդապետը վրանին փչելով  
ըսաւ . « Առէք հողի սուրբ . եթէ  
ուժք թողուցուք զմեզս՝ թողեալ լիցի

Յոցա . եթէ զուրուք ունիցիք՝ կոչու  
 լեալ լիցի ” Յովհ . ի . 22 . 23 : « Ամէն  
 ասեմ ձեզ , զոր կապիցէք յերկրի՝  
 եղիցի կապեալ յերկինս , և զոր արձա  
 կիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յեր  
 կինս ” . Մատթ . ԺԸ . 18 :

Մեղքերու թողութիւն կտրուի կամ  
 չտրուի քահանայական կարգ ունեցող  
 ներուն տուած վնասով : Այս վճիռը  
 կրնայ կաշի կամ արջակի , ուստի պէտք է  
 որ դատին տեղեակ ըլլալով արուի . և  
 անհնար է աս բանս ըլլալ առանց մե  
 ղաւորին մեղքը և վիճակը գիտնալու :  
 Այս գիտութիւնը մեղաւորին իր մեղ  
 քերը պատմելովը կրնայ ըլլալ , և աս է  
 խոստովանութեան ըսածնիս :

Արևելեան եկեղեցին խոստովա  
 նանքը եսկան գործողութեան կհամարի ա  
 պաշխարութեան խորհրդոյն՝ այսինքն  
 քահանայն իր վճիռը տալու կարող  
 ըլլալու համար . և ըստ ինքեան Աս  
 սուծմէ սահմանուած կոնպէ զայն :  
 Իսկ խոստովանանքին կերպին մէջ ե  
 ղած ամէն ձևերը եկեղեցին բարձ է :

Խոստովանանքը առաջին դարե  
 թուն մէջ հրապարակաւ կըլլար . եպիսկո  
 պոսները կամ քահանայները հրապա  
 թակաւ կուտային իրենց վճիռը : Խոս  
 տովանելու պարտք կգրուէր անոնց վը  
 րայ՝ որ յայտնի գայթակղութեան մեղ  
 քեր գործեր էին , և հրապարակաւ  
 ապաշխարանքներ կդնէին անոնց վը  
 րայ : Ուրիշ մեղք գործողները իրենք  
 իրենց խղճմտանքուն մէջ կընենէին թէ  
 սուրբ խորհրդոց մօտենայէ առաջ խոս  
 տովանելու բան մը ունի՞ն : Բայց որով  
 հետև մարդս իր վիճակը ինքնիրեն քըն  
 նած ատենը սովորաբար կխաբուի , ուս  
 տի ամենքը կատիպուէին քահանայնե  
 րուն երթալ , իրենց խղճմտանքին վի  
 ճակը անոնց հասկցընել : Աս էր նախ  
 նի եկեղեցւոյ վարդապետութիւնը . և  
 աս է տակաւին արևելեան ուղղափառ  
 եկեղեցւոյ վարդապետութիւնը :

Հրապարակական խոստովանու  
 թեան վրայ եղած եկեղեցական կա  
 նոնները չափաւորուեցան , որովհե  
 տև կրնային մեծամեծ անտեղութեանց

պատճառ ըլլալ : Բայց արևելեան ուղ-  
ղափառ եկեղեցին պահած է աս հրա-  
պարակական ապաշխարութիւնը քա-  
նի մը քաջածանօթ և ըստ օրինի հաս-  
տատուած մեղքերու համար . մէկալ-  
նոնց համար ալ սա կանոնն ունի .

Հաղորդութեան պատրաստուող-  
ները ամէնքն ալ պէտք է որ իրենց  
մեղքերը քահանային առջևը խոստո-  
վանին .

Խոստովանանքը եկեղեցին կըլլայ ,  
քահանային առջևը , որ փիլոն հագած  
կըլլայ՝ ի նշան իր պաշտաման՝ եւ յօ-  
րինակ խաչեալ փրկչին .

Խոստովանանքը մեղքերնիս պատ-  
մելով կըլլայ՝ հետը զղջում և վարքեր-  
նիս շտկելու առաջադրութիւն ալ ու-  
նենալով .

Խոստովանանքի ատեն պէտք է  
քննել ան մանրամասն պարագայները՝  
որ ապաշխարողին հանգամանքը բնաւ  
չեն փոխուի , վասն զի աս հանգա-  
մանքը գլխաւորապէս մեղաւորին իր  
յանցանքը խոնարհարար պատմելուն և

արտանց զղջալուն վրայ կկայանայ .

Խոստովանահայրը կրնայ ապաշ-  
խարութեան կանոնաց համեմատ ալ  
և այլ ապաշխարանքներ զնել խոստո-  
վանորդւոյն . կամ թէ ապաշխարողին  
կամքին ձգել՝ որ պէտք եղած ա-  
պաշխարանքը քաշելու հոգ տանի .

Սասնկով արևելեան արդի եկեղե-  
ցւոյն խոստովանութեան կերպին վրայ  
ունեցած կանոնը՝ նախնի եկեղեցւոյն  
հրապարակական խոստովանութիւնը  
վերնալէն ետև ունեցած կերպին ըստ  
կարի կ'ստենայ .

Սպա ուրեմն ապաշխարութեան  
խորհուրդը կկայանայ Ս. ապաշխարո-  
ղին խոստովանութեան . Բ. քահանային  
վճռոյն վրայ .

Խոստովանանքը թէ որ զղջմամբ  
չըլլայ , հշտեի չէ :

Բայց մեղաց թողութեան համար  
յայտնէ խոստովանութիւն հարկաւոր չէ ,  
թէ որ ընել կարելի չըլլայ .

## ԿՍՐԳ ԿՍՄ ՔԱՀԱՆԱԳՅՈՒԹՅՈՒՆ

Ասիկայ սրբազան արարողութիւն մը կամ խորհուրդ մըն է՝ մեր Տէր Յիսուս ֆրիստոսէ դրուած՝ իր քահանայութիւնը եկեղեցւոյ մէջ մշտնջենաւորելու՝ այսինքն սորվեցընելու, խորհուրդներով շնորհք տալու, եւ հաւատացեալաց ժողովը կառավարելու իշխանութիւն տալու համար :

« Այսպէս համարեային զմեզմարդիկ, իբրև գլխադնեայս ֆրիստոսէ և հաւատացեալ խորհուրդոյն Սատուծոյ » : Մ. Կ. Բ. Բ. Գ. 1 : « Զդոյշ կայէք անձանց և ամենայն հօտիկ, յորում երգչել Հոգին գարբի Կեստալ հոլեւել զխորհուրդ Տեառն, զոր ազրեցոյց արեամբ իւրով » : Գ. Բ. Գ. Բ. 28 :

Կարգին զբան նշանը ձեռնադրութիւնն է. « Մի՛ անկոյթ առնելը զնորհաշր որ ՚ի քեզ են, սր սուտ քեզ մարդարէսութեամբ ՚ի յեռնադրութեան երկրոյս »

Թեան » : Մ. Տէ. Գ. 14 : « Յիշեցուցանեմք քեզ արծարծել զնորհան Սատուծոյ՝ որ են ՚ի քեզ ՚ի յեռնադրութեան ի մէջ » : Բ. Տէ. Ա. 6 :

Առաքեալը քահանայից ժողովոյն հետ ձեռք դրեր էր իր աշակերտին վրայ, և այն ձեռնադրութիւնը նորհաբերեր էր այն աշակերտին : Պօղոս առաքեալը նոյն Տիմոթէոսին կգրէ : « Ձեռս վազվազակի յուրուք վերայ մի դնիցես » : Ա. Տէ. Ե. 22 :

Եկեղեցւոյ վրայ խօսուած դիտոյն մէջ, երկրութեան երեք դասակարգին՝ այսինքն եպիսկոպոսութեան, քահանայութեան և սարկաւազութեան վերայ ուղղափառ եկեղեցւոյ վարդապետութիւնը մէջ բերած ենք : Այս վերի վկայութիւններն ալ կարգին նշանը որն ըլլալը ցուցնելու համար դրինք : Յայտնի է թէ այս նշանը եպիսկոպոսին յեռնադրութեանն է, որուն հետ քահանայական ժողովն ալ կրնայ ձեռք դնելը : Այս նշանը իրեն հետ եղած ազգութքովը սրբանայ :

Քահանայութեան կարգը մատա-  
կարարելու այս միջոցը սկիզբէն ՚ի վեր  
գործածական ըլլալով՝ արևելեան ե-  
կեղեցին Քրիստոսէ հաստատուած կը-  
սեպէ զայն : Իրօք ալ ան միայն կրնար  
սորք չօգտու շնորհք բերող արարողու-  
թիւն մը հաստատել : Արդ՝ վերը մէջ  
բերուած վկայութիւններէն կտեսնուի  
որ սորք չօգտնելու է ձեռնադրուող  
ներուն քահանայութիւն տուողը : Նոյն  
պէս Պօղոս առաքեալը մեղի կտորվե-  
ցընէ թէ ֆրիսոս քիչը հաստատեց զանա-  
զան աստիճանի հովիւներ՝ իր եկե-  
ղեցին կառավարելու համար : Եփե՝  
Գ. 11 - 12 :

Նաև կտեսնուի շվերը վկայու-  
թիւններէն՝ թէ յեռնարդողները առաքեալ  
ներն ու կտարեմալ քահանայական կարգ ունե-  
ցողներն՝ այսինքն եպիսկոպոսներն էին :  
Ասոր համար արևելեան եկեղեցին կը-  
հաւատայ թէ կարգին պաշտօնային եպիս-  
կոպոսն է, և թէ առանց եպիսկոպոսին  
ձեռնադրութեան՝ քահանայութիւն  
արուիր :

### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ամուսնութիւնը երեք կերպով  
կնկատուի . մէկ մը՝ իբր բնական դաշինք  
առնել կնոջ մէջ . մէկ մը՝ ալ՝ իբր  
քաղաքական դաշնագրութիւն , երբոր  
քաղաքական իշխանութիւնը բնական  
դաշնագրութեան վրայ հրապարա-  
կական և օրինական կնիք մը ալ աւել-  
ցընէ . երբորդ՝ իբր Խրիստոսը կամ սու-  
բանային արարողութեան , երբ այր և կին  
կրօնապէս ըստ օրինաց եկեղեցւոյ կը-  
միանան :

Քրիստոսն էից մէջ այս վերջին ա-  
մուսնութիւնը միայն շնորհք է . վասն  
զի Քրիստոս անանկ սահմանեց թէ առն  
ել կնոջ միաւորութիւնը : Շնորհք ըլլա-  
լու համար կրօնական ըլլալու է : Այս է ա-  
րևելեան եկեղեցւոյ վարդապետու-  
թիւնը . որ Քրիստոսէ հաստատուած  
քրիստոնէական ամուսնութեան սահ-

մանադրութեանը վրայ ունեցած հաւ  
ւատքը Պօղոս առաքելոյն հետեւեալ  
խօսքերուն վրայ կհաստատէ . « թողցէ  
այդ զհայր և զմայր իւր , և երթիցէ ըզ  
հետ կնոջ իւրոյ , և եղիցին երկուքին  
ի մարմին մի . խորհուրդս այս մեծ է ,  
բայց ես ասեմ ՚ի քրիստոս և յիշեցե՛ն » .  
Ե . 31 . 32 . Ուրեմն ՚ի քրիստոս  
և յիշեցեցի ամուսնութիւն մը կայ ,  
որ բնական սոսկ միաւորութենէ տար  
բեր է . եւ աս է որ Պօղոս առաքեա  
լէն խորհուրդ կկոչուի : Առաքեալը այս  
ամուսնութեան վրայ այնպէս կխօսի՝  
որպէս թէ իր ժամանակն ալ կեցած  
սահմանադրութեան մըն էր : Արդ՝ սկիզբէն  
ի վեր առաքելոյց ՚ի գործ զբաժ բանը՝  
Քրիստոսէ ծագումն առած աստուա  
ծային սահմանադրութիւն մը եղած  
կըլլայ :

Արևելեան եկեղեցին ամուսնու  
թիւնը ամէն մարդու վրայ դրուած  
պարտք չսեպէր . կհաւատայ թէ կու  
սութիւնը՝ երբոր կրօնապէս և գերբ  
նական պատճառներով պահուի՝ ամուս

նական վիճակէն զերազանց է , ըստ բա  
նից սուրբ գրոց . « Ոչ ամենեքեան բա  
ւական են այդմ բանի , այլ որոց աս  
եալ է » . Մատթ . ԺԹ . 11 . « Բայց ա  
մուսնացն և պրեացն ասեմ . լաւ է  
նոցա թիւէ կայցեն իբրև զիս : Ապա  
թէ ոչ ունիցին ժուժ՝ ամուսնացին . զի  
լաւ է ամուսնանալ՝ քան զմեռնուլ . Որ  
անկինն է՝ հոգւոյ զՏեառն , թէ ո՞ր  
պէս հաճոյ լիցի Տեառն . և որ կանամ  
բին է՝ հոգւոյ զաշխարհիս , թէ ո՞րպէս  
հաճոյ լիցի կնոջ իւրում : Որ ամուսնա  
ցուցանէ զկոյն իւր՝ բարեք սունէ .  
և որ ո՛չ ամուսնացուցանէ՝ ըստ եւս  
սունէ » . Ա . կրթ . Է . »

Բայց ասիայն արևելեան եկեղեցին  
որչափ որ կուսակրօնութիւնը ամուսնա  
կան վիճակէն զերազանց կսեպէ , բացա  
ռուցի վիճակ մը համարած է զայն . ա  
նոր համար մեկուն վրայ ալ կուսակրօն  
ըլլալու պարտք չընէր . Նոյնպէս ա  
մուսնութիւնն ալ սուրբ վիճակ մը կը  
սեպէ , և կհաւատայ թէ միայն բարձր  
և քրիստոնէական պատճառներով կըլ

նայ մէկը ամուսնութենէ հրաժարիլ :

**Ա**մուսնութեան արտաքին շարժումը ամուսնացելոց միաւորութիւնն է . այս միաւորութիւնը աղօթքով սրբուելով՝ փեսային ու հարսին մասնաւոր շնորհք կուտայ իրենց ընդունած վեճակին համար . եւ «աշտօնեայն ալ անոնց միաւորութիւնը աղօթքով սրբող քահանայն է :

**Ա**մուսնութիւնը երբոր մէկ մը ըստ օրինաց կկատարուի՝ ա՛լ անքակտելի է՝ Աստուծոյ սա խօսքին համեմատ . « Զոր Աստուած զուգեաց , մարդ մի՛ մեկնեսցէ » . Մատթ. ԺԹ . 6 : Նոյն ճշմարտութիւնը սուրբ գրոց ուրիշ շատ տեղերէն ալ կսորվինք . Մարկ . Ժ . 2 . 9 . 11 , 12 : Դավ . ԺԶ . 18 : Ա . Կորնթ . Է . 10 . 11 :



ՕՇՈՒՄՆ ՀԻՒՍՆԴԱՅ

**Հ**իւանդաց օծումը սրբազան արարողութիւն մը կամ խորհուրդ մըն է՝ Աստուծմէ դրուած՝ հիւանդաց հոգեւոր ու մարմնաւոր առողջութեան համար :

« **Հ**իւանդանայցէ ոք ՚ի ձէնջ , կրսէ Յակոբոս առաքեալը , կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն , և արասցեն ՚ի վերայ նորա աղօթս , օձցեն իւղով յանուն տեառն . և աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն , և յարուսցէ զնա տէր , եւ եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա » : Յով . Ե . 14 . 15 :

**Ք**րիստոսի մահուանէն առաջ տալ Առաքեալներն հիւանդները , օծելով կրճշկէին . Մարկ . Զ . 13 :

**Ա**պա ուրեմն այս օծումը՝ որ աղօթքով կսրբանայ , Աստուծմէ սահմանուած արարողութիւն մըն է , Առա-

քելոց ժամանակէն 'ի վեր կգործա՛  
ծուէր , և մասնաւոր շնորհք մը կրե-  
րէր : Ուստի Արևելեան եկեղեցին Աս-  
տուծմէ դրուած խորհուրդ կճանչէ  
դայն :

Յակորոս առաքեալը յայտնապէս  
կցցընէ Ա . թէ այս խորհրդոյն հշնը  
իւղով օծումն է . Բ . թէ այս նշանը  
աղօթիով սրբուելու է . Գ . թէ օծման  
պաշտօնայն քահանայն է . Դ . թէ այս  
օծումը հոգևոր ու մարմնաւոր շնորհք  
կրերէ : Արևելեան եկեղեցւոյ վարդա-  
պետութիւնն ալ այս է :



ԽՈՐՀՐԳՈՅ ՎՐԱՅ ԲԲԻՍՏՈՆԵԻՅ ԵԿԵՂԵՑԻ  
ՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԵՂԱՅ ՏԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա . Ընդհանրապէս խորհրդոց գրայ եղած սար-  
բերութիւնները :

Հռովմէական եկեղեցին սարքման  
անունով Աստուծմէ հաստատուած եօ-  
թը արարողութիւններ ընդունած է , ո-  
րոնք արևելեան ուղղափառ եկեղեցին  
ժողի կիցէ\* : Ինչպէս որ Աստուծմէ  
սահմանուած կհամարի զանոնք , նոյն-  
պէս կընդունի թէ աղօթքով սրբուած  
զգալի նշաններ են՝ որ շնորհք կրե-  
րեն : Միայն թէ խորհրդոց մատակա-  
րարութեան մէջ մեծամեծ մոլորու-

\* Թէ՛ « սարքման » եւ թէ՛ « միութիւն » բա-  
ռը խորհուրդ կլծարգմանուի 'ի մեզ : միայն թէ  
« միութիւն » բառը խորհուրդէն 'ի զատ « գաղտ-  
նիք » ալ նշանակելով՝ եկեղեցւոյ խորհրդոց մարդուս  
հոգւոյն վրայ բրած գաղտնի ներգործութիւնը « սար-  
քման » բառէն լաւ կբացատրէ :



Թիւններ ընդունած է, որոնց վրայ վարը պիտի խօսինք :

Անդղիական եկեղեցին միայն մկրտութեան ու հաղորդութեան կուտայ խորհուրդ անունը, մէկալ հինգ արարողութիւնները, որոնք աստուածային ճանչցած են արևելեան եւ հռովմէական եկեղեցիք, Աստուծոյ ողբապատման նողմանէ առաջ եկած, կամ թէ սուրբ Բրոյ սեղ ընդունուած կենաց վիճակներ, բայց Խորհրդոյ բնութիւն չանեցող բաներ կը սեպէ. Յօդ. ԻԵ : Բայց եւ այնպէս կընդունի թէ այս արարողութիւնները շնորհ : կէրէն : Կհաստատէ թէ ձեռնադրութիւնը քահանայութիւն կուտայ. Յօդաւոր ԼԳ. և եպիսկոպոսին, քահանային ու սարկաւազին ձեռնադրութեան արարողութեան մէջ կցուցընէ թէ ձեռնադրութիւնը կարևոր է կարգ տալու համար. Դրոշմի արարողութեան մէջ եպիսկոպոսը ձեռքը ենթակային վրան կդնէ աղօթքով մէկտեղ, խնդրելով որ Հոգին սուրբ գրոշմեւոյն վրայ իջնէ : Պատկի ատե-

նը՝ քահանայն ամուսնական միութիւնը աղօթքով կարբէ, և այս սուրբ միութեան հետ շնորհք ալ տրուած կը ճանչնայ, Հիւանդաց պոյեղութեան արարողութեան ատենը քահանայն անոնց համար կաղօթէ միայն, բայց պատուէր ունի խոստովանցնել զանոնք ու մեղքերնուն արձակում տալ, որ շնորհք բերող արտաքին արարողութիւն մը ըսել է :

Ուստի կրնանք ըսել թէ անոնց Ժամաբերքը Հասարոյ յօդաւորներուն մերժած հինգ արարողութիւններէն գոնէ չորսը պահած է : Հիւանդաց օծումէն զատ մէկալնոնք քիչ ու շատ պահուեցան, և շնորհք բերելին ճանչցան : Արդ ի՞նչ է շնորհք բերող արարողութիւնը, եթէ ոչ Աստուծոյ, հաստատուած արարողութիւն մը : Մարդկային սահմանադրութիւնը շնորհք ընդունելու պատրաստութեան յօն կրնայ ըլլալ, բայց ինքնին շնորհք չկրնար բերել : Ուրեմն անդղիական եկեղեցին պէտք է որ իր Ժամաբերքը երեսուն և ինն յօդաւոր-

Երան հետ միաբանէ, և հիմակուան  
 խոստովանածէն աւելի լուսաբանէ և  
 ճշգէ իր վարդապետութիւնները: Այս  
 լուսելեան և հռովմէական եկեղեցեաց  
 խորհուրդ մատակարարելու ատենը  
 դորժածած օծումը վերցուցած ըլլալով՝  
 անտարակոյս այս արտաքին նշանը ահ-  
 նարկել կողէ՝ երբ հաւատոյ իե. Յօ-  
 դուածին մէջ կպնդէ թէ խորհրդոց  
 կարգէն դուրս եղած հինգ արարու-  
 ղութեանց շատերուն մէջ առաքելոց  
 ապականեալնմանողութիւն մը կգտնէ:  
 Ասով անգղիական եկեղեցւոյ վերանու-  
 ըրդիչները կպարսաւեն միւս ամէն ե-  
 կեղեցիները՝ որ օծումը առաքելական  
 և առաքելոց ձեռօք փրիստոսէ ընդու-  
 նուած սովորութիւն կսեպեն: Ի-  
 ըօք իրենք ալ կընդունին թէ օծումը  
 առաքելական սովորութիւն է, մի-  
 այն թէ անոր նմանողութիւնը ապա-  
 կանեալ է կըսեն: Ի՞նչ բանի մէջ է այս  
 կարծեցեալ ապականութիւնը. ի՞նչ  
 բանի մէջ կտարբերի հիմակուան օծու-  
 մը առաքելոց ժամանակի օծումէն.

Հասարակ էրեւոան և Ենն յօդուածոց հեղինակ-  
 ներն ասոր ըսելիք մը չունին: Ուրեմն  
 իրենց այդ խօսքը սխալաւ խօսք մըն  
 է, և բողոքականաց մտաց հետեւելով  
 առանկ մէկ առաքելական սովորութիւ-  
 նը անխորհրդաբար ջնջած են պատճա-  
 ուելով թէ խանդարուած է, բայց չեն  
 կրնար յըցընել թէ ի՞նչ բանի մէջ է  
 այդ խանդարմունքը:

Բողոքականները բողոքովին կմեր-  
 ժեն այս հինգ արարողութիւնները,  
 որոնց վրայ անգղիական եկեղեցին ան-  
 կատար ու հակասական վարդապետու-  
 թիւն ունի: Միայն երկու խորհուրդ-  
 կընդունին, մկրտութիւն և ընթրիք.  
 այս վերջինն ալ քահանայութիւն չու-  
 նենալնուն համար լոկ արտաքին արա-  
 ըողութիւն մըն է. վասնզի սուրբ հա-  
 ղորդութեան միակ պաշտօնեայն քա-  
 հանայն է, եւ բողոքականութիւնն ալ  
 քահանայութիւնը ջնջած է: Մկրտու-  
 թիւնը ամեն մարդ վսեբեբէր կարենա-  
 լով ընել՝ երբ ջուրը մկրտուողին ան-  
 ձին սպլի և խորհրդոյն ձեւը զրուցուի,

բողոքականաց մկրտութիւնը ճշմարիտ խորհուրդ է եւ պէտք չէ կրկնել քանի որ օրինաւոր կերպով եղած ըլլալուն վրայ սուրբին կայ :

Ապա ուրեմն բողոքականները թէ պէտեւ երկու խորհուրդ ունինք կրսեւ, բայց իրօք մէկ հատ մը ունին :



Բ. Մկրտութեան իրայ եղած սուրբերէ  
բոլորիննէրը :

Բողոքականները ընդհանրապէս որոշմամբ կմկրտեն, այսինքն ջուրը երախային վրայ կցանեն սա ձեւը զրուցելով. « Ես մկրտեմ զքեզ յանուն Հօր և Որդւոյ և Հօգւոյն սրբոյ » : Հռովմէական եկեղեցին հետեւեալ կմկրտէ, այսինքն ջուրը երախային գլխուն վրայ կլծափէ վերի ձևն ալ մէկտեղ բսե-

լով : Այս սովորութիւնը մինչև հնգերտասաներորդ դարը ամէնէն ընդունուած չէր արևմտից մէջ, ինչպէս կտեսնուի հին ատենի մաշտոցներէն, չորեքտասաներորդ դարուն մէջ տակաւին երեք անգամ ընկղմելով կմկրտէին արևմտից մէջ :

Անգղիական եկեղեցին կպատուէրէ որ երախայն թէ որ տղայ է ջրին մէջ ընկղմեն. թէ որ չափահաս է՝ ջրին մէջ ընկղմելն ալ ներելի է, վրան ջուր թափելն ալ : Ե. Ժամագրէն : Ասկէց կրնանք հաստատել թէ անգղիական եկեղեցւոյ մկրտութիւն ընելու օրինաւոր եղանակը ընկղմելն է :

Արևելեան եկեղեցւոյն պէս երեսնամբ ընկղմել չպատուիրեր, բայց չարգիլեր ալ :

Ասկէց կստուգենք թէ անգղիական եկեղեցին թէ որ իր Ժամագրէն համեմատ վարուի, մկրտութիւն ընելու մէջ արևմտեան բոլոր եկեղեցիներէն աւելի ինքը մօտ կըլլայ արևելեան եկեղեցւոյն :

Վերն ըսինք թէ մկրտութիւնը հեղ-  
ճածք ալ , սրկածք ալ , և միայն ընկղճածք  
ալ ըլլայ , վաւերական է , սյոսինքն ճշմա-  
րիտ մկրտութեան արդիւնք կը երէ ,  
բայց օրնսուր չէ . որովհետեւ մասնաւոր  
եկեղեցիները խորհրդոց մատակարա-  
րութեանը մէջ առաքեալներէն հաս-  
տատուած և անոնց ժամանակէն 'ի վեր  
'ի գործ դրուած կարգը փոխելու ի-  
րաւունք չունին :



Գ . Դրոշմն լըայ եղած որոբերութենները :

Արեւելեան եկեղեցին կսորվեցընէ՝  
թէ դրոշմը մկրտութենէ ետեւ մէկէն ը-  
նելու է , և թէ քահանայներն ալ եպիս-  
կոպոսներուն պէս կրնան այս խոր-  
հուրդս կատարել . կսորվեցընէ թէ  
դրոշմին արտաքին նշանը մարմնոյն զա-  
նազան մասանց վրայ եղած օճումն է :

Հռովմէական եկեղեցին մկրտու-

թիւն ընելու ատենը մարմնոյն զա-  
նազան մասերը օծելը պահած , և այս  
օծումը քահանայն կրնէ . բայց ասիկայ  
զատ կը ընէ ուրիշ օծումէ մը , սրով զա-  
փահասները էպիսկոպոսէն կօծուին ,  
և ևս ևս ետքինն է որ դրոշմ կանուանէ :  
Սնոր վարդապետութեան նայելով՝  
դրոշմին խորհրդոյն պաշտօնեայն եպիս-  
կոպոսն է , այսու ամենայնիւ սահմա-  
նած չէ՝ թէ քահանային ըրած դրոշմը  
անվաւեր է . իր աստուածաբաններէն  
շատերը կանգնեն՝ թէ քահանայն կը ը-  
նայ էպիսկոպոսին հրամանաւ՝ և եպիս-  
կոպոսական կնիք չունեցած՝ դրոշմն  
ընել . և Հռովմ ալ Բոսիւլ — Յոյն քա-  
հանայից մկրտութենէ ետեւ տուած  
դրոշմը վաւերական կճանչնայ : Խոր-  
հուրդոյն արտաքին նշանին դարով՝ հը-  
ռովմէական աստուածաբաններէն ո-  
մանք օծումն է կը սեն , ոմանք ձեռնա-  
դրութիւնը և ոմանք երկուքն ալ են  
կը սեն :

Դրոշմը մինչև երեք տասաններորդ  
դարը անմիջապէս մկրտութենէ ետքը

կտրուէր բոլոր արևմտեան եկեղեցեաց մէջ . այն ատենէն ՚ի վեր այս խորհուրդքս կատարելը եպիսկոպոսին վերապահեցին . Բայց քահանայներն ալ դարձեալ նոր մկրտուողները Մեծիմաստ կօծէին՝ դրոշմ ընելու համար հին ծիսարաններուն մէջ գրուած աղօթքները մէկտեղ կարդալով . Յայտնի է որ ասիկայ դրոշմը մկրտութեան հետ կցելու հին սովորութեան մէկ մնացորդն է . Այս սովորութիւնը մինչև նախնի եկեղեցին կելէ \* :

Ստուգիւ , հասկոյնի քահանային մը կրտեալն օծելը եթէ ճշմարիտ բրնձն համարիմք՝ եպիսկոպոսին ձեռքով եղած ապաւնի դրոշմը լսկ արարողութիւն կ'մնայ , քանի որ ըստ բուն հռովմէական վարդապետութեան դրոշմի խորհուրդը չկրնար կրկնուիլ :

Անգղիական եկեղեցին դրոշմի մէջ օծումը խափանած է , եւ սրբազան արարողութեան իբր արտաքին նշան միայն ձեռք դնելը պահած է . Դրոշմը

\* Տես , Տ . Մարթէնէ , ՚ի Խորհուրդս եկեղեցւոյ :

զատած է մկրտութենէն երեքասաններորդ դարուն Հռովմի եկեղեցւոյն մէջ սպրդած սովորութեան հետեւելով . Հռովմի եկեղեցւոյն մտորութիւնըն ընդունած է այս մասին , եւ կըսէ՝ թէ միայն եպիսկոպոսին պէտք է այս խորհուրդը կատարել :

Բողոքականներն դրոշմի խորհրդոյն հետքն անգամ թողած չեն իրենց վարդապետութեան մէջ :

Գ . Հաղորդութեան խորհրդոյն վրայ ելած  
որբերութիւնները .

Հռովմէական եկեղեցին սրբապօրծելի հացին բնութիւնը փոխած է : Առաջ արեւելեան կաթուղիկէ եկեղեցւոյն սովորութեան համեմատ խմորուն հաց կգործածէր , վերջէն անխմոր կամ բաղարջ հաց գործածել սկսաւ , եւ զանազան այլալուծիւններէ անցընելով հացի երեւոյթ անգամ չթողուց վրան : Արեւմտեան եկեղեցւոյն բաղարջ հաց

գործածելը տասներորդ դարուն է ,  
 կոտտանդնուպոլսոյ պատրիարք Միքս  
 յէ կերուլարիոսը ազդու կերպով յան-  
 դիմանեց զարեւմտեայս այս փոփոխու-  
 թեան համար : Լեւոն Թ. պապը պա-  
 տասխանեց՝ թէ բազարջի գործածու-  
 թիւնը հազար ասն տարիէ ՚ի վեր է , այն  
 է՝ փրկչին մահուընէն ՚ի վեր : Արեւ-  
 մտեան մատենագրերէն ոմանք՝ Լեւոն  
 Թրդի այս խօսքէն հետեւեցուցին՝ թէ  
 Միքայէլ կերուլարիոսն արեւմտեան ե-  
 կեղեցիները զրպարոեց , եւ թէ ան-  
 յիշատակ ժամանակէ մնացած սովո-  
 ղութիւն մը տգիտաբար նորաձեւու-  
 թիւն համարեց : Լեւոն Թրդի կարծիքը  
 պաշտպանելու հետամուտ եղան , բայց  
 բան մը չհասցելէ զատ , մետասան եւ  
 երկուսասան դարու հաւատարիմ՝ մա-  
 տենագիրներէ վկայուեցան՝ թէ այն  
 դարու մէջ արեւմտեանք բոլորովին տը-  
 գէտ էին պատմութեան , Ուրիշներ ալ  
 եղան՝ որ բազարջի գործածութիւնը  
 տասներորդ դարուն հնարուած նորա-  
 ձեւութիւն մը ըլլալը հաստատող բազ-

մութիւ փաստերու հակառակ՝ յան-  
 դ. գնեցան հաստատելու թէ այնպէս չէ ,  
 եւ զՄիքայէլ կերուլարիոսը կշտամբե-  
 ցին : Ասոնցմէ էին Հ. Սերմնոս ճիզ-  
 ուիթն եւ պատարափ արարողութեան  
 վրայ խօսող Պոնա կարդինսպը\* :

Արեւմուտքի մէջ՝ հռովմէական ե-  
 կեղեցին հաղորդութեան խորհրդոյն  
 նկատմամբ աւելի ծանր փոփոխութիւն  
 մ՝ ալ ունի , որ անհակառակելի է , Ամէն

\* Յոյն եկեղեցւոյ այս սովորութիւնը պաշտպա-  
 նող հեղինակը եւ անոնք որոնցմէ որ իւր կարծիքն  
 առած է , տգիտաբար կհօսին այս մասին վրայ : Հա-  
 ւանական է՝ թէ Լատինք ալ իրենց պէս յառաջուց իր-  
 մորուն հաց գործածելու սովորութիւնը կրնան փո-  
 խած ըլլալ յետոյ անխնոր հացի գործածութեան . ա-  
 սիկալ հեքելու ոչ փաստ ունինք եւ ոչ կամք : Սա-  
 կայն այս ճշմարիտ է՝ որ անխնոր կամ բազարջու պա-  
 տարաբերու սովորութիւնը ընդհանրապէս բոլոր քրիս-  
 տոնական եկեղեցւոյ սովորութիւնն էր , զոր հինգե-  
 բորդ դարէն առին կրնան փոխած ըլլալ Յոյնք : Մեր  
 Ս. Ներսէս Շնորհալի հայրապետը թերեւ կրցաւ հա-  
 մոզել այս մասին Յոյները այն նամակով՝ զոր առ Սա-  
 նուէլ Կայսրը զրկեց , որուն մէջ խմբուն պատարագի  
 վարդապետութիւնը սուրբ Գրոց վկայութեամբ հեր-  
 քելէ յետոյ՝ չորրորդ դարու մէջ Կ. պոլսոյ պատրիարք  
 Ս. Գրեգոր Ատուածարանին Պատեքի ծառէն ալ սա  
 վկայութիւնը մէջ կրերէ . « Խմբունայն ոչ լինի հաց  
 կենդանական » : Լատինք և Յոյնք թո՛ղ վեճարանին , իսկ  
 մեր մեր եկեղեցւոյն հաւատարիմ աւանդապահութեա-  
 նը վրայ մեր հաց յիշատակը պարծանօք ներողելօք :

մարդ գիտէ՝ թէ մինչև երկոտասանե-  
րորդ դարը հաղորդութիւնը հացի եւ  
գինեոյ երկու տեսակէն ալ կտրուէր  
հաւատացելոց, ինչպէս որ է տակա-  
ւին Արևելեան կաթողիկէ եկեղեցւոյն  
մէջ . իսկ միայն հացի տեսակէն հա-  
ղորդեցունելը յԹԳրորդ դարուն հաստա-  
տուեցաւ Արևմուտքի մէջ . Այս փոփո-  
խութիւնը աստուածային հրամանի հա-  
կառակ է . որովհետև Յիսուս Քրիս-  
տոս հացը օրհնելէն յետոյ ըսաւ . « Ա-  
ռէք կերայք, այս է մարմին իմ » .  
Գինին ալ օրհնելէն յետոյ՝ ըսաւ . « Ար-  
բէք ՚ի սմանէ » *Իմանէն*, այս է յարմա-  
ն իմ » . Փրկելը գոգցես կանուխէն Հոռով-  
մի եկեղեցին ( մարգարէութեամբ )  
դատապարտեց, որն որ հիմայ հակա-  
ռակ պատուիրանի փրկչին կրսէ . Ար-  
բէք ՚ի սմանէ *ու անէն*, այլ մայն *ու*  
*համայնք* :

Հոռովմէական այս նորաձեւութիւ-  
նըն ալ Արևմտից մէջ ծանր գիտողու-  
թեանց եւ բողոքոյ տակ ինկաւ . Հա-  
ւատացելոց համար հաղորդութեան այս

Ինչը գլխաւոր պատճառ եղաւ այն  
ապստամբութեանց՝ որոնցմէն վերջապէս  
ճնաւ բողոքականութիւնն, եւ ամբողջ  
եկեղեցիներ բաժնուեցան Պապակա-  
նութենէ : Բոլոր այս բաժանեալ եկե-  
ղեցիներն երկու տեսակէ հաղորդուելը վե-  
րահաստատեցին :

Անգղիական եկեղեցին վերահաս-  
տատեց ասիկայ, և պահեց պատարագա-  
մատուցի հին աղօթքները, հաղորդու-  
թիւնը եւ քահանային ձեռքով հացին  
եւ գինեոյն սրբազործութիւնը .

Բողոքական եկեղեցիք քահա-  
նայութիւնը մերժեցին, հետևապէս ճշ-  
մարիտ սրբազործութիւն չունին : Սա-  
կայն հացն և գինին ալ նշանակաւ  
հանդերձ կրնդունին՝ թէ ըստ պատ-  
ուիրանի փրկչին բոլոր հաւատացեալք  
պետք է հացն ու գինին ճաշակեն իրենց  
նշանական արարողութեանը մէջ, զոր  
ընեն կանուանեն :

Ասորոպոսական իմաստին դարով՝ Հը-  
ռովմի եկեղեցին պատարագի խորհրդոյ  
վրայ մոլորութիւն չունի . կհաւատայ՝ թէ

հացն և գինին սրբազործուելէ յետոյ  
 և երևայ՛ զհաց եւ գինի կմնան , և ծածկեալ  
 երականութեամբ մարմին և արիւն են  
 Յիսուսի Բրիստոսի : Բողոքականներուն  
 իրական նեկայութեան վարդապետութեան  
 դէմ հնարած և հնարելիք փախուստներուն  
 դէմ առնելու համար՝ Գոյափոխութեան  
 ( գրամասիւկութան սիւսիսն ) բառը հնարեց ,  
 Բառը նոր և անհերթեթ , սակայն ճշմարիտ է՝ թէ եկեղեցւոյն  
 հաստատուն և հին հաւատքը ճշդագոյն  
 կրացատրէ : Արևելեան եկեղեցին բառն  
 ընդունած չէ , ի վերայ այսր ամենայնի  
 հաւատքով այս մասին բովանդակապէս  
 համաձայն է հովովմէականին \* :

Միջին դարու մէջ մէկ քանի արեւմտեան  
 աստուածաբաններ՝ իրական նեկայութիւնը  
 ստուարացուցին , եւ , այսպէս ըսենք՝  
 Յիսուս Բրիստոս Պատարադի մէջ  
 նեկայութեամբ պէս ըրին : Ուրիշ  
 աստուածաբաններ ալ պնդեցին՝

\* Մեր եկեղեցին զգոյափոխութիւն բառին տեղ  
 « Փոխարկութեան » բառը կը ործածէ . Ս . Թ .

Թէ Յիսուս Բրիստոս Պատարադին մէջ է  
 հոգեւորական կերպով մը : Այս վերջին բառը  
 երկու իմաստ կրնար ունենալ . մէկը  
 ճիշդ՝ որ իրականութեամբ չէր  
 ցրեր , և միայն նեկայութեամբ գաղափարին  
 դէմ կուգար . միւսը սխալ՝ որ իրականութեանը  
 կցրէր , և Յիսուսի Բրիստոսի պատարադին  
 մէջ նեկայութիւնը զոյափոխութեան  
 ( իտեալ ) նեկայութիւն մը կը ներ  
 ներ :

Հոգեւորական բառը կարվինականք այս  
 վերջին իմաստով կհասկնան . ընթրիքին  
 մէջ միայն հաց և գինի կտեսնեն , իսկ  
 հացին եւ գինւոյն մէջ պարզ ոչինչ Յիսուսի  
 Բրիստոսի մարմնոյն և արեան : Սակայն  
 զիկիչն ըսաւ . « Այս է մարմին իմ ,  
 այս է արիւն իմ , արիւն նորոյ ուխտի՝  
 որ հեղան » : կարվինականք Յիսուսի  
 Բրիստոսի կհակառակին , եւ նոյնպէս  
 կհակառակին համաձայն Բողոք եկեղեցւոյ ,  
 որոնք ի ծագմանէ անտիքրիստոնէութեան  
 միշտ ուղղակի եւ բնական  
 իմացուածով կհասկնան Յիսուսի  
 Բրիստոսի հաց եւ գինի ներկա



յայնուղ խօսքերը :

Նոյն ինքն լուստերականք կալլի նախանաց շինծու մեկնութիւնները կը հերքեն , եւ կը հաւատան թէ Յիսուս Քրիստոս իրապէս ներկայ է ՚ի Պատարագի : Սակայն իրենք ալ ուրիշ շնորհաստ ճշ կընծայեն Յիսուսի Քրիստոսի խօսքերուն , որովհետեւ կանգեն թէ հացն և գինին կտեւեն այնչափ՝ որչափ Յիսուսի Քրիստոսի մարմինն եւ արիւնը : Սակայն իրկիչը չըսաւ . « ՚ի սո՞ կամ շնորհաստ են մարմինն եւ արիւնն իմ » , այլ « Այս է մարմինն իմ , այս է արիւնն իմ » : Նաեւ լուստերականք , որովհետեւ քահանայութիւն չունին , ճշմարիտ չըսեցին . ալ չեն կրնար ունենալ . իրական ներկայութեան հաւատաւնին ալ ընդունայն է :

Անգղիական եկեղեցին գրեթէ լուստերականաց մոլորութեան նման մոլորութեան մէջ ինկած է՝ Յիսուսի Քրիստոսի մարմնոյն հետ հացին եւ գինւոյն գոյակցութիւնն ընդունելով : Սակայն պատարագ ամատուցի հին աղօթք

ներու մէջ՝ զորոնք պահած են , կրնան գտնուիլ այնպիսի տարերքներ , որոնց մէկ հաստատուի թէ վերջէն այնպէս ընելով մէկ քանի հոռովմէական ատուածարաններու նիւնայնացելուն դէմ բողոքել ուղած են : Անգղիական եկեղեցին պարտաւոր է յայտնեալ վարդապետութեան այս կարեւորագոյն կետին վրայ իւր հաւատքը որոշել . քանի որ պատարագին մէջ Յիսուսի Քրիստոսի իրականութիւնը կընդունին , տրամաբանօրէն , պէտք է որ հացին եւ գինւոյն իրականութիւնը դուրս ձգէ , ինչո՞ւ համար մի և նոյն ենթակային վրայ երկու հակառակ իրականութիւններ կընդունին : Ս . Գրոց վկայութենէն կառնու : Ոչ , անտարակոյս , որովհետեւ Յիսուս Քրիստոս զի իրականութիւնն ճշ , իւր մարմնոյն եւ արեան իրականութիւնը միայն որոշեց : Մեր զգայարանա՞ց վկայութենէն : Ասոնք ալ ոչ թէ իրաց բնութիւնը , այլ արտաքին հանգամանքները միայն կըմբռնեն : Արդ ընդունուելու պէս՝ թէ սրբագործութենէն յետոյ երևոյն կամ ու-

ակ եղողներ կման , զգայարանաց վը-  
կայութեան հակառակ բան չմտաբ . իսկ  
ըստ բանից Յիսուսի Քրիստոսի , էբն  
ճարմոյ եւ արեան իրականութեանը ընդունուե-  
լով՝ նոյն ինքն վերկշին մեղի աւանդել  
ուզած յայտնութեան կատարեալ խոս-  
տովանութիւն մը եղած կըլլայ :

Յոյն , Հայ եւ հռովմէական եկե-  
ղեցեաց այս մասին վարդապետութիւ-  
նը՝ որ բոլոր արեւելեան հին ազան-  
դոց մէջ ալ պահուած է , մի և միշտ  
համաձայն է թէ՛ սուրբ գրոց , թէ՛  
մտքի եւ թէ՛ առաջին դարու քրիս-  
տոնէից հաստատուն վարդապետու-  
թեան :



Է. Ապաշխարութեան իրերգոյն վրայ եղած  
որբերութիւնները :

Ապաշխարութիւնը պետք է նկա-

տել . նախ իբրև առաքինութիւն գոր-  
ծուած յանցանքին վրայ զղջալու . եր-  
կրորդ՝ իբրև սրբազան արարողու-  
թիւն 'ի թողութիւն մեղաց մասնական-  
չնորհք մը մեղի տալու համար սահ-  
մանուած :

Ապաշխարութիւնն իբրև զղջումն  
գործեալ մեղաց՝ հաստատեալ է 'ի Յի-  
սուսէ Քրիստոսէ . ամէն քրիստոնեայք  
այս մասին միաբան են , և կրիստոսովանին  
նաեւ՝ թէ զղջումը ինքնին մեղքերու  
թողութիւն չկրնար տալ , եւ թէ մեղաց  
թողութեան արժէքը Յիսուսի Քրիստոսի  
զոհէն կամ արգիւնքէն կախեալ է :

Բայց զղջումը միայն ներքին ըլլալու  
է՝ թէ արտաքին գործերով ալ երեւ-  
ալու է , զոր օրինակ պահովք եւ ուրիշ  
ասոր նման իրքերով :

Բողոքականները ներքին ըլլալու է  
կրտեն , և ասոր համար իրենց եկեղեցի-  
ներուն մէջէն վերցուցած են արտա-  
քինները , մինչեւ այն բաներն անգամ  
որ խիտ հին ատենէ 'ի վեր կան .  
իւստի ասոնց կարծիքը հակառակ կեղք-

տրբազան գրոց՝ որ զղջման վկայութիւնն եղող արտաքին ապաշխարութեան պատուիրաններով լեցուն է իսկ իրենք գլխովին հեռացած են նախնի եկեղեցւոյն շաղէն՝ որ առաքելոց ժամանակէն մինչեւ հիմայ շարունակաբար կը պահէ արտաքին ապաշխարութեանց խիստ դուրսութիւնները :

Այս ապաշխարութեանց կարգէն է գործուած յանցանքը գործողին կողմէն պատմուիլը, կամ, խոստովանութիւնը :

Խոստովանութեան վերաբերեալ վիճաբանութիւններուն մէջ մտնել չէ մեր միտքը, այլ պաշտպանողներուն եւ հերքողներուն կողմէն մէջ բերուած ապացոյցները ուշի ուշով քննելէ յետոյ, սահետեւեալ ճշմարտութիւններուն հաւանիլ, նախ՝ խոստովանութիւնը թէ՛ հրապարակական և թէ՛ առանձնական կար եւ կայ միշտ եկեղեցւոյ մէջ՝ երկրորդ՝ հրապարակական խոստովանութիւնը ոչ թէ գաղտնի՝ այլ հրապարակաւ կամ յայտ յանդիման գործուած մեղքերուն համար միայն էր, երրորդ՝

հրապարակական խոստովանութիւնը ՚ի յորրորդ գարուն խախտուեցաւ, եւ անկէ առաջ գալիք անպատեհութեանց առաջքն առնելու համար իրաւաբանական սահմանադրութեան պէս բան մը հաստատուեցաւ, որով քահանայ մը իրաւունք կունենար Բնեւո՝, յանցաւորութիւնն ստուգելու եւ ՚ի հարկէ կատարելիք հրապարակային ապաշխարութիւնները որոշելու : Չորրորդ՝ այս ապաշխարութեան քահանայ սահմանուիլը տեական չեղաւ : Հինգերորդ՝ ՚ի հինգերորդ գարուն միայն առաջի Ասորոյ խոստովանութիւն կտեսնուի, այսինքն գաղտնաբար քահանայի առջև : Վեցերորդ՝ խոստովանութիւնը թէպէտեւ անխտիր չէ իբր պարտաւորութիւն, սակայն անոնց համար ալ որոնք յանդիմանելիք մեղք չունին ներգործաբար մնաց :

Մեր հաստատելիք բանին նպատաւոր վկայութիւններ կրնայինք մէջ բերել, բայց նպատակնիս մեր այս գրքը ոյկը ստուարացունել չլլալով՝ բաւական կհամարիմք յունական եւ հայկա-

կան եկեղեցիները մէջ բերել, որ հին գերորդ գարէն առգին իրարմէ զատուած են, եւ անկէ ՚ի վեր իրարմէ բան մ՝ առած չունին. այս երկու եկեղեցիներն ալ գաղանի խոստովանութիւնը ունին առանց մասնաւոր եկեղեցական պարտաւորութեան: Միայն այս իրողութիւնը բաւական է ապացուցանելու թէ ՚ի հինգերորդ գարուն մեղաց խոստովանութեան վրայ մեր ըսած սովորութիւնը կար:

Ըսել կուզեմք թէ առջի չորս գարուն խոստովանութիւնը միշտ հրապարակական էր ինչպէս կհաստատեն մէկ քանի մատենագիրներ, կամ, թէ՛ հրապարակական եւ թէ՛ առանձինն, մեղքին բնութեանն նայելով կարծեմ, ոչ պակաս ճշմարիտ է՝ թէ խոստովանութիւնն ինքնին նախնական և առաջնական գրութիւն մ՝ էր: Չե՞զ լոկ արարողական բան մ՝ է, որ կրնայ փոխուած ըլլալ, պարագայներու եւ ժամանակներու հետ, ՚ի վերայ այսր ամենայնի խոստովանութիւնը յարգասանդին իրաւանց է:

որովհետեւ ծագումը առաջին գարէն է, առաքեալներէն հաստատուած է, որ ըսել է Քրիստոսէ հաստատուած է, ըստ որում առաքեալները իրենց սովածէն աւելի բան չէին աւանդեր:

Յոյն եւ Հայ եկեղեցիներու համար խոստովանութիւնը արտաքին մասն է ապաշխարութեան խորհրդոյն, կամ չե՞լի նշան ապաշխարութեան խորհրդոյն, ոչ թէ այն իմաստով՝ որ խոստովանողը միշտ բացատրութեամբ կամ բերնով պիտի խոստովանի, այլ բնականապէս անկարելի եղած ատենները՝ նշաններու ձեռքով ալ: Խորհրդոյն հոգեւոր մասը աղօթքը կամ վճիռն է՝ որով քահանայն յանուն Աստուծոյ ապաշխարողին մեղքը կթողու:

Ապաշխարողին բնիք արտաքին ապաշխարութիւնները սրբազան սրբազան լեան կամ խորհրդոյն մասն չեն. եկեղեցւոյ կանոններուն հնազանդել և մեղաց խոստովանութեան կցորդ զղջման վկայութիւն են:

Այս վերջին կետին վրայ Հռովմէ

եկեղեցին մուրուսթիւն ունի : խոստո  
 վանութիւնը զղջումէն կզատէ , կա  
 նուանէ Սորջան ( քօնթրիսիօն ) , եւ  
 արտաքին ապաշխարութեանց մէջ իբ  
 րեւ խորհրդոյն էական ծան կմտցունէ՝  
 կանուանէ Հատուցմուն ( սաթիսփաք  
 սիօն ) : Ըսել է թէ ապաշխարութեան  
 խորհրդոյն չորս մասն կուտայ , խոս  
 տովանութիւն , սարջանք , արձակումն  
 եւ հատուցմունք : Այս տարբերութիւ  
 նը կամ բաժանումը պարզապէս դրսւ  
 ղոցական է . որով զղջումը խոստովա  
 նութենէ՝ եւ մեղաւորին ապաշխա  
 րութիւնն ու գործած մեղքին վաստն  
 հատուցումը զղջումէն կբաժնեն : Որով  
 հետեւ զղջումն ըսածնիս ապաշխարու  
 թիւն ըսուածն է եւ առանց զղջման  
 երբեք խոստովանութիւն չկրնար ըւ  
 լալ :

Այս սխալ եւ նրբագոյն բաժա  
 նումներէն հետեւցունելով՝ հռովմէա  
 կան եկեղեցին ինքնօրէն հակասու  
 թեան մէջ է . որովհետեւ չորս ծանկու  
 տայ մէկ խորհրդոյն՝ որ իւր ընդ

հանուր տեսութեանն համեմատ միայն  
 երկու կրնայ ըլլալ , նիւ ե յե , ինչպէս  
 կըսեն իր աստուածաբանները , այսինքն  
 է՝ մէկ մը արտաքին նշան , եւ մէկ մ՝  
 ալ նոյնը սրբող հոգեւորական գործ :  
 Արտաքին ապաշխարութիւնները՝ որ  
 չեն կրնար ըլլալ ոչ նիւ եւ ոչ յե խոր  
 հրդոյն , հատուցմունք անուն տալով՝  
 խորհրդոյն մասանց մէջ տարած գրած  
 է :

Այս խորհրդոյն վարդապետու  
 թեան մէջ աւելի ծանր մուրուսթիւն մ՝  
 ալ ներդասեանց վրայ ունի հռովմէական  
 եկեղեցին :

Մերողութիւն կըսուէր ՚ի նախնա  
 գոյն ժամանակէ հրապարակայէն ապաշխա  
 րութեան ըստ ծանէ շորհոմօը թէ՛ Յիսուսի  
 թրխտոսի համար չարչարուող մարտի  
 ըոսաց խնդրանօքը , եւ թէ՛ ապաշխարու  
 ղին բացառիկ վիճակին պատճառաւ :  
 Հռովմի եկեղեցին ներողութեան բը  
 նութիւնը բոլորովին փոխած է . որով  
 հետեւ կընդունի թէ ընդհանրապէս  
 ապաշխարութեան գլխովին կամ ըստ

մանէ շնորհումն է ներողութիւնը, եւ թէ ներողութիւն ըսուածը այս կամ այն մարդուն՝ Յիսուսի ֆրիտտոսի, սուրբ կուսի եւ սրբոց արժանիքը շնորհելն է, որպէս թէ այս արժանիքները մէկտեղ դառնալ եւ առարանալով կրկնան քանջել, անկէջ ալ պատշաճ արժանիքներ կառնու եւ չունեցողներուն կուտայ. որովհետեւ կրնդունի թէ այս արժանիքները կտրուին ամէն անոնց՝ որոնք այս կամ այն նշանաւոր գործն ըրած են՝ գործը թէ՛ յարմարի եւ թէ՛ չյարմարի տրուած արժանիքին. որով հետեւ կրնդունի վերջապէս՝ թէ պապին իշխանութիւնը մինչև ֆաւարանի հոգւոց վրայ կտարածուի, հոն տանջուողները տուած ներողութեան չափով իրենց տանջանքներէն ըստ մասնէ կամ լիովին կփրկէ:

Այս վարդապետութեան նախապէս հիմք սխալ է, որ պապին մոտայածին գանձուն մէջ Յիսուսի ֆրիտտոսի եւ սրբոց արժանիքները խառն ՚ի խառն լցուած են կրսէ: Այս վարդապետու-

թիւնը, ինչպէս որ յառաջ ալ ըսած ենք, փրկագործութեան կաթուղիկէ հաւատքին կհակառակի: Հռովմէական վարդապետութիւնը որչանց լատերաբանալի՞նը կամ արդիւնաւանութիւնն աղպապին աղատ տրամադրութեան ներքեւ կընէ, որ աղաչխարութեան եւ արդարացուցման կաթուղիկէ դադարաւորին դէմ կուգայ, որպէս թէ Յիսուսով ֆրիտտոսով զմեզ արդարացունող աղաչխարութեան դժուարին գործերը կրնան շնորհուիլ մեզի՝ եթէ Յիսուսի ֆրիտտոսի եւ սրբոց առատագեղ արժանիքները ըստ կամաց Պապին մեզի համար լատերաբանալի եւ կամ, լիովին կարդարանամք եւ ամէն աղաչխարութիւն մէկէն կըմնան՝ եթէ Պապին ներողութեանց հետ քանի մը բառէ շինուած աղօթք խառնուին:

Ասիկա դժուար է հասկնալը՝ թէ ինչո՞ւ հռովմէական եկեղեցւոյ մէջ քաւարանի վարդապետութիւն կկենայ. մինչդեռ ներողութեանցը կայ որ կտրուին քաւարանի մէջ տանջուողներուն:

Պատար քանի որ ներողութեամբ փրկելու իշխանութիւն ունի՝ ինչո՞ւ այդչափ անգթութիւն կրնէ, և թո՞ղ կուտայ որ չարչարուին ուղորմելիները, Գթութիւնը եւ կարեկցութիւնը պարտք է իրեն, եւ հաւատացելոց հոգւոյն համար՝ պէտք է որ շուայլէ իւր գերագոյն կարողութիւնը. ասանկով կրնայ քաւարանը թէ անօգուտ տեղ մը՝ և թէ՛ կենալը խելքի դէմ ըլլալը ցուցնել:

Հուովմէական եկեղեցին յերեքտասաներորդ դարուն տարեկան խոստովանութեան եկեղեցական պաշտօնական հրաման մ' հանեց, որուն կպարտաւորէր զժողովուրդը մահացու մեղաց պատժով կամ դատապարտութեամբ: Այս հրամանը լատերանուչորորդ ժողովէն ելաւ, որ ատենի պապն էր իննովկենտիս Գրդ. այս ժողովը կրնար ասանկ պատուիրան մ' ընել, բայց օրինազանցներու համար դատապարտութեան վրձիւ տալու իրաւունք չունէր, որովհետեւ Աստուած միայն կրնայ փրկել և դատապարտել:

Արեւելեան կաթողիկէ եկեղեցին ասանկ պաշտօնական հրաման մը հանած չէ. միայն թէ որոնց որ հարկաւոր է անոնց վրայ ընդհանուր պարտք մը դրած է խոստովանելու եւ հաղորդուելու գոնէ տարին մէկ անգամ, այն է Չասկին:

Խոստովանութեան պարտանկումը երեք ժանր մուրուրութիւն ալ ունի հուովմէական եկեղեցին. իբր սկզբունք կրնգունի թէ խոստովանութիւնը մահացու մեղաց համար միայն հարկաւոր է, բայց անթիւ մահացու մեղքեր հնարած է. վերջէն աստուածաբանները, իւրաքանչիւրն իւր խելքին փչած կերպովը, ամէն մէկ կրօնական կամ բարոյական գործքերուն շրջապատը կարգ մը տեղեր եւ պարագայներ տնկեցին, որոնց մէջ մահացու մեղքը զանազան արարուածներով կներկայանայ: Անոնց համեմատ ապաշխարողին պարտքը կըլլայ զանազան ձևերու տակ մտնել, որոնց շատը պատմելն անգամ դայթակղութիւն կրերէ: Մէկ քանի աստուա

Ճարաններ այս դրութեան վրայ մինչև այն աստիճան լարչեցան , մինչդի դըրքերնին կարդալն անդամ կարելի չէ առանց սոսկալի ամօթոյ , այսպէս է , օրինակի համար , Սանչէզի հոս անուանեալ ըսածը , զոր Լիգուորիոս իւր բարոյական ըսուած աստուածաբանութեան մէջ համառօտեց , հռովմէական եկեղեցին ալ իրեն դասական աստուածաբանութիւն ըրած է այսօր Լիգուորիոյ այս գիրքը : Այսպէս են քահանայութեան կոչուած պատանեակ սարկաւազներու գաղտնի կօտորոյնիւն ըսուած մասնաւոր ճառերը , որքան որ անոնք անուն ունին :

**Մտատես.** կամ խղճի գէպքերը քննող հմուտ աստուածաբաններու ( քապուխդ ) քով ուրիշներ ալ կան որոնց բանը գործն է խաբուսիկ միջոցներ գտնել ոչ միայն պարզ գաշնագրութեամբ մը մահացու մեղքերէ մեղաւորը խալցցնելու , այլ խղճմտութեան անաչառ յանդիմանութիւններն ալ բարոյական ոչնչացուներու :

**Այս** հակառական ջանքերը հռովմէական եկեղեցւոյն մէջ խոստովանութիւնը դիտնական արեւս մ' ըրած են , յորում խարդաւանութիւնն ու անբարոյականութիւնը ամէն խաղ կնեքկայացունեն : Արուեստին խորամանկները կյառաջադիմեն , բայց բարոյականը կտուժէ : Փոքր պահարանի պէս գաղտնի տեղի մը մէջ՝ որ խոստովանարան կըսուի՝ եղած հռովմէական խոստովանութիւնները շատ անգամ աւելի խոստովանողին բարոյականը կտապալեն , քան ապաշխարութեան սրբազնագոյն շահերը կամ բարոյականութիւնը կը պաշտպանեն : Ասոր համար Արեմուսքի մէջ սլոգալի եղած է խոստովանութիւնը :

**Արեւելեան** եկեղեցին ո՛չ խոստովանարաններ ունի , ո՛չ մտատեսներ , եւ ո՛չ գաշինքով մը լուծուելու մահացու մեղքեր : Ապաշխարողը խոստովանելու ատեն օտքի վրայ կկանգնի՝ բաց տեղ մը Յիսուսի Գրիստոսի պատկերին առջեւ . քահանայն կողմնակի դիմացը կը



կանգնի քահանայական զգեստներով ,  
 Կյիշեցունէ քահանայն ապախարողին՝  
 թէ Աստուծոյ կխոստովանի ինք , յե-  
 տոյ կլսէ խոստովանողին մեղքերը ա-  
 ուանց անխելք հարցումներ ընելու :  
 Խրատները կուտայ , եւ գլխուն վրայ քա-  
 հանայական փորուրարը դնելով՝ որ նը-  
 շանակ է քահանայական արժանեացը ,  
 արձակման խօսքերը կզուրցէ յանուն  
 Յիսուսի Ֆրիստոսի , որուն պաշտօնեայն  
 է ինքը \* : Այս խոստովանութիւնը ,  
 յորում ամէն բան վսեմ , կրօնական եւ  
 պարկեշտ է , հռովմէականին պէս մե-  
 ղաբերելի բան մ՝ ալ չունի , չէ ունե-  
 ցած եւ չկրնար ունենալ : Այս ձե-  
 ւոյն մէջ , ինչպէս նաև արեւելեան ե-  
 կեղեցւոյ ամէն բաներուն մէջ , քրիս-  
 տոնէական ներքին ոգի մը կայ եւ ե-  
 կեղեցւոյ առաջին դարերը կյիշեցու-  
 նէ : Չկայ մէջը բնաւ ոչ ցած լրտեսու-  
 թիւն եւ ոչ պիղծ հետաքրքրութիւն :

\* Մեր եկեղեցին խոստովանողին գլխուն վրայ  
 փորուրար դնելու յունական սովորութեան փոխարէն  
 քահանային ձեռք դնելն ունի :

Ըսել է թէ քրիստոնէական ճշմարիտ  
 խոստովանութիւնը , ոչ թէ մեղաւորին  
 յանցանացը եւ անոնց պարագայներուն  
 մեծ ու փոքր ժամանակագրութիւնն է ,  
 այլ միայն յանցաւոր ըլլալը Աստուծոյ  
 առջև խոնարհութեամբ եւ զղմամբ  
 խոստովանել մը :

Այս հանդամանքներէն կհասկը-  
 ցուի , թէ ո՛րչափ տարբերութիւն կայ  
 արեւելեան եւ արեւմտեան եկեղեցւոյ  
 խոստովանութեանը մէջ . արեւելեա-  
 նինը փրկաւէտ եւ կենդանարար , ա-  
 րեւմտեանինը շատ մը զեղծմունքներով  
 շփոթ եւ խառնակեալ :

Անգղիական եկեղեցին , իբր սկզբ-  
 բունք , դաղտնի խոստովանութիւնը եւ  
 անոր կցորդ քահանայական արձակու-  
 մը ունի :

Արձակման էական ձեւը արեւե-  
 լեանին համաձայն է , խոստովանու-  
 թիւնը խափանուած է , որուն պատճա-  
 ուրն անտարակոյս հռովմէական խոս-  
 տովանութեան յուր դրութեան դէմ  
 գւժգին դիմակալութիւն մը ընելն է :

Պակայն շատ անդդիական քահանայներ  
խոստովանելու եկող հաւատացելոց  
խոստովանութիւնը մտիկ կընեն՝ և ար-  
ձաշումն կուտան :

Ասոր համար թէպէտ եւ անդդի-  
ական եկեղեցին ճիշդը խօսելով ապաշ-  
խարութիւնը խորհրդոց կարգ չընդու-  
նիր , բայց կհամարի՝ թէ արժանաւոր  
ապաշխարողին վրայ շնորհք բերող  
«բնական արարողութիւն մ' է , ուստի այս  
կէտին վրայ աւելի կմտենայ արեւե-  
լեան եկեղեցւոյ : Գազանի խոստովա-  
նութեան համար յատուկ օրէնք մը չու-  
նի , բայց արձակում ապէն կընանք  
հետեւցունել՝ թէ ծանր մեղքի մէջ ին-  
կողներու համար , խոստովանութիւնն  
ալ կերպով մը հարկաւոր կհամարի :

Արտաքին ապաշխարութեանց ըս-  
կզբունքն ալ ունի , եւ իւր տարեցոյցի  
մէջ պահած է մեծ պահքը եւ ապաշ-  
խարութեան օրերը , զորոնք՝ հօսովմէ-  
ական եկեղեցւոյն պէս՝ տարւոյն չորս  
եղանակաց երեքօրեայ Ծմնապահու-  
թիւնքը եւ Հսկմունքը կանուանէ , և

տել է թէ ապաշխարութեան մասին  
բողոքականներէն շատ հեռի է . իսկ  
արեւելեան կաթողիկէ եկեղեցւոյն բո-  
լորովին նմանելու համար իւր վարդա-  
պետութեան մէկ քմնի կէտերն աւե-  
լի պարզելու եւ յրացունելու է :



Չ . կարգին կամ Բահանայութեան վրայ  
եղած որոշեցումները

Հօովմէական եկեղեցին ծանր մո-  
լորութիւն մ' ալ կարգին վրայ ունի ,  
որ ամուրի մնալու ուխտը կարգին հետ  
կապած է . եւ քահանայ չկարգեր՝ ո-  
րոնք որ մշտնջենապէս ամուրի մնալ չեն  
ուխտեր : վասն զի մէկ մը՝ որ ամու-  
րի մնալու պայմանը , իւր ընդհանուր  
օրէնք մտածելով , «նիշտակ ժամանա-  
կէ մը 'ի վեր է . մէկ մ' ալ՝ որ օրի-  
նաւոր ամուսնացեալները , միայն ամուս-

նաւոր ըլլալնուն համար թէ եւ արժա-  
նիք ունենան , կարգէ կըրկուին՝ որով  
կարգին վնաս կհասնի : Ուստի թէպէտ  
կարգին խորհրդական էութիւնը կպա-  
հէ , եւ իւր սարկաւապները , քահա-  
նայներն եւ եպիսկոպոսներն օրինաւո-  
րութեամբ կարգեալ են , բայց խիստ  
գէշ վարդապետութիւն մը ներմուծած  
է այս խորհրդոյն մէջ ալ :

Իւր վարդապետութիւնը սա կէ-  
տին վրայ ալ թերի է . որոշ վարդա-  
պետութիւն մը չունի՝ թէ խորհրդոյն  
զալի արարողութիւնը , կամ իւր ը-  
սած կերպովը , նե՛ւէ ի՞նչ բանի վրայ  
կկայանայ . Աստուածաբաններէն ո-  
մանք՝ ձեռք դնելն է կրսեն , ոմանք  
օծութիւնը , ոմանք ալ խորհուրդը  
կատարելու ժամանակին յարակից զա-  
նազան առարկաները , այնպէս մ' որ՝  
եպիսկոպոս մը իւր աւանդած կարգին  
վրայ վստահ չըլլար՝ մինչև որ բոլոր ա-  
րարողութիւնները միանգամայն չըու-  
զընթանան :

Սուրբ գիրքը կարգին զգալի նը-

շանը գրապէս ազօթքով մէկտեղ յե-  
նարդութիւնն է կըսէ . արեւելեան ուղղա-  
փառ եկեղեցին ալ միշտ այսպէս կը-  
հաւատայ :

Բողոքականները կըսեն՝ թէ քա-  
հանայութեան յատուկ նշանը դարաւոր  
չարունակութեամբ յՍուաքելոց եւ ա-  
նոնցմով քահանայութեան մէկ հատիկ  
աղբիւրն եղող Յիսուսէ ֆրիստոսէ վըշ-  
տնջնաւորելը չէ . Սյս մասին գործա-  
ծած ազօթքնին՝ զոր իրենք «*Ի՞նչ որ-  
ո՞նէն*»-իւն արարանք կանուանեն սովո-  
րական ազօթքներէ տարբեր զօրու-  
թիւն մը չունի . եւ արարութիւնը ընող  
Հո՞նէն ալ չեն կրնար տալ այն յատ-  
կութիւնը՝ զոր իրենք ալ չունին :

Բողոքականները , ճիշդը խօսելով ,  
ոչ քահանայութիւն ունին եւ ոչ եկե-  
ղեցական նուիրապետութիւն . հո՞ն-  
«*Ի՞նչ*» եւ ուրիշ անունները առանց  
իրողութեան լոկ բառեր են , եւ այս  
անունը կրողներն ալ պարզ աշխարհա-  
կաններ :

Մէկ քանի բողոքականներ կըսեն՝

Թէ ընդդէմն ինչ, և ոչ թէ կարգն է՝ որ  
եկեղեցականութեան յատկութիւն եւ  
պաշտօն կատարելու իրաւունք կրերէ :  
Բայց այս վարդապետութիւննին ալ խա-  
փանուած է ըսել է՝ քանի որ եկե-  
ղեցիներն իրենց հովիւներն ընտրելու  
չեն կանչուիր : Թող որ հակառակ ալ  
է սուրբ գրոց, որուն մէջ կտեմենք՝  
որ միայն առաքեալները եւ անոնցմէ  
կարգեալները քահանայութիւն կու-  
տային՝ աղօթել հանրեք յեւանաբարութեամբ :

Անդդիական եկեղեցին կարգ եւ  
եկեղեցական նուիրապետութիւն ունի :  
Առաջուց ձեռնադրութիւն առած եւ  
պիսկոպոսները սարկաւազ, քահանայ  
եւ եպիսկոպոս կկարգեն ձեռնադրու-  
թեամբ եւ աղօթիւք :

Միայն թէ կարգը խորհրդոց թի-  
ւէն դուրս հանած է, որով կտարբերի  
թէ արեւելեան և թէ արեւմտեան հա-  
մօրէն եկեղեցւոյ վարդապետութենէն :

Միշտ կընդունի՝ թէ կարգը առա-  
քելական արարողութիւն մ' է, որ ինք-  
նին քահանայութեան շնորհք եւ յաս-

կութիւն կրերէ, վարդապետութիւնն  
ըստ հիման ճիշդ է, եւ գլխովն  
ուղղափառական ըլլալու համար ու-  
րիշ բան պէտք չէ, այլ միայն ընդունել  
յայտնի խոստովանութեամբ՝ թէ կարգը  
աստուածային արարողութիւն մ' է, զոր  
առաքեալները կկատարէին՝ ինչպէս  
որ սորվեցան ՚ի Քրիստոս և ՚ի սրբոյ  
Հոգւոյն :

Խորհրդոց մէջէն կարգը դուրս  
հանելուն պատճառը հռովմէական  
եկեղեցւոյն խորհրդոց տուած սահմանէն  
ըլլալու է. որ պիտի ըլլայ, ըստ լա-  
տինացւոց, Քրիստոս հաստատած զգալի  
նշանը : Աւետարանին մէջ Քրիստոսի  
կարգ հաստատելը չկենարուն համար,  
անգլիական վերանորոգիչներն հե-  
տեցուցին՝ թէ ուրեմն կարգը խորհուրդ-  
մը չէր : Սակայն թէ՛ Յիսուս Քրիստոս,  
իւր երկրաւոր կենաց մէջ եղած ատենն,  
եւ թէ՛ առաքեալներն հաստատած ըլ-  
լան յարութենէն վերջը ՚ի Քրիստոս  
առած հրահանգով մը և կամ՝ սուրբ  
Հոգւոյն ներշնչմամբ, սա ճշմարիտ է՝

որ կարգն ալ միւս խորհրդոց պէն Աստուծոյն սկիզբ մ' ունի , եւ յաստուածուստ կարգեալ սրբազան արարողութիւն մ' է , որ օրինաւորապէս ձեռնադրուողին վրայ քահանայութեան շնորհք և իրաւունք կհաստատէ :

Ուրեմն անգղիական եկեղեցին կարգը կամ քահանայութիւնը Աստուծոյն խորհրդոց կարգէն դուրս հանելով մոլորած է :

Հռովմի եկեղեցոյն մէջ ծանր վիճաբանութիւններ տեղի ունեցան Անգղիականաց ձեռնադրութեան վաւերականութեան վրայ : Ըսուեցաւ թէ վերանորոգութեան առաջին եպիսկոպոսները օրինաւորապէս ձեռնադրեալ չըլլալով , ճիշտ հետեութեամբ իրենց չունեցած քահանայական յատկութիւնը չեն կրցած տալ : Խնդիրը սա իրողութեան որոշելու վրայ կկայանայ , թէ վերանորոգութեան առաջին եպիսկոպոսներն օրինաւոր ձեռնադրութիւն առին Բարքէրէն , կամ որ աւելի դիտելին է թէ այս եպիսկոպոսը , որ ուրիշներ

ձեռնադրեց , ինք օրինաւոր ձեռնադրութիւն ունէ՞ր :

Այս խնդիրը պատմութեան հեղինակութիւնը կորոշէ , հետեւապէս մենք ալ վիճելու բան մը չունինք : Միայն թէ , խնդրոյն դժուարութենէն խուսափել չուզելու համար , ժօն լէնկարտ անգղիացի դիտուն դասէն եւ հոգեւորականութեան վկայութիւնը մէջ բերենք , որով անգղիականաց ձեռնադրութիւնը վաւեր կներկայանայ : Այսպէս կխօսելուր Պատմութեան Անգլիոյ դրքին մէջ . « Բարքէր եպիսկոպոսի ձեռնադրուելուն արարողութիւնը կատարուեցաւ , թէ եւ թեթեւ տարբերութեամբ մը , Երեսուրդ Զ. է յետնորոգութեան ձեռնադրեալ մեմատ . երկու ձեռնադրողները , Պարլով եւ Օտտգէնս հոգեւորական քահանայականութեան կարգեալ եպիսկոպոսներ էին , երկու ուրիշներն ալ վերանորոգութեան ձեռնադրեալ համեմատ ձեռնադրուածներ » :

Եզուարդ Զ. ի ծիսարանը եւ վերանորոգութեան ծիսարանը , ինչպէս որ հիմակ ալ Հասարակաց աղօթարանն մէջ

կերևի , օրինաւոր ձեռնադրութիւն մը կատարելու էական կետերը կպարու- նակեն :

ժօն լէնկարտի վկայութիւնը 'ի հարկէ մեծ նշանակութիւն ունի , ուրովհետև հոովժեպիսն ասանայ ըլլալուն հա- մար՝ Բարքէրի ձեռնադրութեան վա- ւերականութեան դէմ պիտի մաքա- ուէր , եթէ զօրագոյն ապացոյցներ զին- քը համոզած չըլլային՝ թէ վաւերա- կան էր :



Է. Ամուսնութեան վայ եղած փար- բերութիւնները

Հռովմէական եկեղեցին ամուսնու- թեան խորհրդոյն վրայ ալ եկեղեցւոյ բուն վարդապետութենէն շեղած է :

Խորհրդոյն պաշտօնէին վրայ վը- ճատողական չէ Հռովմի վարդապետու- թիւնը : անոր աստուածաբանները տա-


կաւին կվիճեն գիտնալու՝ թէ արդեօք խորհրդոյն պաշտօնեայն քահանայն է , թէ նոյն ինքն ամուսնացեալներն , ուրոց իբր թէ ամուսնութիւնը խորհրդոյ յատկութիւն կունենայ եկեղեցւոյ զա- ւակներ ըլլալուն համար :

Տրիտենդեան ժողովը ինդիբը ու- ռոշելէ խուսափելով՝ միայն յայտնեց թէ ամուսնութիւնը կրօնական տեսու- թեամբ օրինաւոր համարուելու համար՝ քահանայն հարկաւոր վայ է :

Անդղիականք և բողոքականք կը- րօնական ամուսնութեան հարկաւորու- թիւնը կխոստովանին , այսինքն կրսեն՝ թէ ամուսնութիւնը պէտք է առաջի քահանային կամ հովուին ըլլայ . բայց յատուածային կարգմանէ սրբազան արարողութիւն մ՝ ըլլալը չեն խոստու- վանիր , այսինքն խորհուրդ է չեն ըսեր : Ասոնց վարդապետութեան նայելով՝ քահանայն կամ հովիւը պաշտօնեայ չէ , և ամուսնութիւնն ալ աղօթքով մը լմնցած լիզ դաշնադրութիւն է :

Այս վարդապետութիւնը հակա-

ուակ է կաթուղիկէ եկեղեցւոյ վարդապետութեան, զոր արևելեան եկեղեցին ճշմարտութեամբ պահպանած է, եւ կիսատովանի՝ թէ ամուսնութիւնը խորհուրդ է, ինչպէս որ են միւս յաստուածային կարգմանէ եղած սրբազան արարողութիւնները:



է. վերջին օձման վրայ եղած դասերէ  
բռնիւնները

Հռովմէական եկեղեցին արդարեւ օձման կանուանէ այս խորհուրդը. ուրովհետեւ միայն անոնց վրայ կկատարէ՝ որոնք մահաւան դատար հասած հիւանդ են:

Սրբեւելեան եկեղեցին կուսուցանէ՝ թէ ամէն ծանր հիւանդութիւններու վրայ ալ կրնայ կատարուիլ այս խորհուրդը, առանց նայելու՝ որ հիւանդը մահուան դուռն ըլլայ, եւ այն նը-

պատակաւ կկատարէ՝ որ հիւանդին բժշկութիւն ըլլայ:

Անգղիականք օծումն չունին, այլ միայն աղօթք՝ զոր մահաբեր հիւանդութեանց դէպքին մէջ հիւանդին վրայ կրնեն, խոստովանցունել եւ արձակումն տալն ալ մէկտեղ ըլլալով:

Բողոքականք բան մ' ալ չունին: Հովիւը օծման տեղ հիւանդին քով կերթայ միխթարական խօսքեր կրնէ՝ սուրբ Գրոց մէջէն սղած տեղերը կարդալով:



Ը .

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՅ ԵՒ ԿԵԱՆՔ  
ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԵՐՁԵԱԼ ԱՇ  
ԽՍՐՉԻ

Եւ ակն ունիմք յարութեան մուռե-  
լոց եւ կենացն յաւիտենից :

Մարդս հոգիէ մը եւ մարմինէ մը  
բաղկացեալ է . այս երկու տարերաց  
միութիւնը մարդկային անձնաւորու-  
թիւնը կկազմեն : Երբոր հոգին մարմի-  
նէն բաժնուի , մարմինը ոչ միայն իմա-  
ցականութիւնը՝ կեանքն ալ միանգա-  
մայն կկորսնցունէ . որովհետեւ մարդ-  
ըսուած անհատին մէջ հոգին է սկիզբն  
թէ՛ կենաց եւ թէ՛ իմացականութեան .  
գործարանաւոր կարողութիւնները  
հոգեկան տարրին ներգործութեան

ներքեւ են : Մարդը կայուցանող այս  
երկու տարերաց անշատումէն մէկ կը  
հետեւի : Հոգին աննիւթ ըլլալով՝  
քակտման կամ լուծման ենթակայ չէ ,  
ինչպէս որ է նիւթ մը , եւ անշատու-  
մէն յետոյ ինք իր յատուկ բնութեամբը  
կմնայ :

Մարմինն , ընդհակառակն , կե-  
նաց սկիզբէն զրկուած մնալով՝ կա-  
պականի , եւ այն տարերքները՝ որոնցմէ  
որ շինուած էր , Աստուծոյ դրած ընդ-  
հանուր օրէնքին համեմատ , զգալի աչ-  
խարհս բաղկացունող նիւթական մեծ  
կտորին մէջ կերթան կխառնուին :

Աստուծոյ յայտնութեամբը ճանչ-  
ցուած օրէնքներէն մէկն ալ աս է՝ թէ  
մարդկային մարմինք այն մեծ կտորին  
մէջ պիտի պահեն իրենց վերաշինու-  
թեան յատուկ տարերքները , եւ թէ  
ամէն մարդկային մարմինք վերակաղ-  
մուելով՝ նորագապէս պիտի միանան  
իրենց հոգիներուն հետ Աստուծոյ ա-  
մենակարողութեան մէկ գործուիլը , եւ  
այնուհետեւ միասնաբար պիտի ապրին



այնպիսի կեանքով մը՝ որ վերջ չպիտի  
ունենայ :

Այս յարութիւնը աշխարհիս վերջը  
պիտի ըլլայ , այսինքն այնպիսի ատեն  
մը՝ որուն թուական սահմանը միայն  
Աստուած գիտէ : Այն ատեն զգալի  
աշխարհս կացուցանող ամէն բան պիտի  
եղծանի , և նոր աշխարհ մը պիտի  
յաջորդէ , որ յաւիտեանս տեւէ . ք .  
Թողի , Ս . Պետրոսի . Գ . 7 . 17 . մարդ-  
կային մարմինները , աշխարհի միւս  
նիւթերուն պէս , նոր բնութիւն մը  
պիտի առնեն և իբր թէ ոգևորու  
պիտի ըլլան . Ա . Կորնթ . ԺԵ . 43 և այլն .  
անսպասելի և ազատ պիտի ըլլան հետեւա-  
պէս այն ամէն հիւանդութիւններէն՝  
որոնք ներկայ կենաց մէջ յաջորդական  
խանդարման հետեւանքներն են , որոնց  
մէ վերջը ՚ի հարկէ մահը վրայ կուգայ :

Մարդկային մարմինները մահուամբ  
լուծուելով ապակիանելու վրայ եղած  
ատեն՝ անոնց հետ երբեմն միացեալ  
հոգիները կենաց այնպիսի վիճակի մը  
կհասնին , որոնց պայմանները տարբեր

տարբեր կըլլան միացեալ ժամանակին  
գործուած աղեկութիւններուն եւ չա-  
բութիւններուն համեմատ : Ս. ըզար  
հոգիները երանութիւն կվայելեն , որ  
թէ եւ կատարեալ չէ՝ բայց սակայն ճա-  
շակն է այն երջանկութեան , որ յարու-  
թենէ յետոյ մարմնոց հետ մէկտեղ պի-  
տի վայելեն . Դող . ԺԶ . 22 . Թողի սու-  
փեւոյ . Ա . 23 . Մեղաւորաց հոգիները՝  
իրենց յանցաւորութեան համեմատ ա-  
ւելի կամ պակաս տանջանքներով պի-  
տի չարչարուին . Ասք . Աստուծոյ ո-  
ղորմութիւնը , ՚ի շնորհս արդեանց Յի-  
սուսի ֆրիստոսի , այս պատիժները կը-  
մեղմէ . եւ կենդանի հաւատացեալ-  
ներն իրենց աղօթքովն ու բարեգոր-  
ծութիւններովը այս մեղմութիւնը կըր-  
նան խնդրել , ինչպէս որ արդէն ըսած  
ենք Աշխարհի վորդապետութեան եւ  
անոր տարբերութեանց վրայ խօսելու  
ատեննիս :

Մեղաւոր հոգիներուն մէջ այնպի-  
սիներ ալ կան՝ որ անդարձ դատա-  
պարտութեան ներքեւ են , եւ թէ հի-

մայ կտանջուին, եւ թէ՛ յարութենէն զերջը մարմնով հանդերձ յաւիտեան պիտի տանջուին :

**Այս հոգւոց թէ՛ երջանկութիւնը եւ թէ՛ թշուառութիւնը այն ատեն կատարեալ պիտի ըլլայ՝ երբ յարութիւն մեռելոց ըլլայ, եւ Յիսուս Քրիստոս ՚ի վախճանի աշխարհիս դատողական վըճուով որոշէ .** Բ. Տէրն. Գ. 8 : Բ. Կորնթ. Ե. 10 : **Այս ատեն է՝ որ արդար դատաւորը արդարութեան պակ պիտի բաշխէ, եւ իւրաքանչիւր ոք իւր լար եւ քուրսն զորոց հասուցումը պիտի ընդունի :**

**Մոր կեանքը, հանրեցնել աշխարհի կեանքը, պիտի սկսի արդարոց եւ մեղաւորաց համար . երջանիկ՝ արդարոց, աղետալի՝ մեղաւորաց :**

**Արդարները պիտի տեսնեն զԱստուած, պիտի վայլին իրրեւ զարեղակունս Հօր արքայութեան մէջ, եւ այնպիսի երջանկութիւն պիտի վայելեն՝ զոր մարդկային լեզու չկրնար բացատրել :** Ա. Կորնթ. ԺԳ. 12. Ժե. 28. Բ. Կորնթ. ԺԲ. 2. 4. Մարթ. ԺԳ. 43 : Մարմինը

իւր հոգւորեալ ընտթեան ընդունակ եղած ամէն երանութիւն պիտի ունենայ : Ա. Կորնթ. ԺԷ, 43 : Բայց ամէն արդար հաւատար չափով երանութիւն չպիտի վայելէ . աւելի կամ պակաս աստիճաններ պիտի կենան : Ա. Կորնթ. 41. 42 :

**Գատապարտելոց գալով՝ ողբալի պիտի ըլլայ վիճակին, անոնց սահմանւած տանջանքը դժուար կրստի, յորում աւելի կամ պակաս տանջանք պիտի նեղուին իրենց յանցաւորութեան չափով, Բայց ամէնքնալ Աստուծոյ տեսութենէն յաւիտեան զուրկ պիտի մնան :**

Մեռելոց յարութեան եւ հանդերձեալ կենաց  
 Հրայ եկեղեցեաց զիջ եղաք որքեբրութեաննէրը :

Մեռելոց յարութեան եւ հանդերձ  
 ձեալ աշխարհի անմահ կենաց վրայ բո-  
 լոր քրիստոնէական եկեղեցիք հիմնա-  
 պէս համաձայն կդանենք : Յիսուս ա-  
 նոնց վարդապետական բուն եւ վաւե-  
 րական գրուածոց ուշադրութիւնը  
 նեմք : Սակայն շատ եկեղեցիներու մէջ  
 աւելի կամ նուազ հաստատեալ պաշ-  
 տօնական ձեւով մը վճարեալ են այն  
 գրուածքները :

Հռովմայ եկեղեցւոյն մէջ , ոմանք  
 կատարացունեն դատապարտելոց սահ-  
 մանեալ վշտերը , ուրիշներն ալ , իրենց  
 զգումներէն ըսուած դրութեամբ , կ'անան  
 չափազանցութիւնը կոտրել : Ամենա-  
 ծանր անտեղութիւնն աս է՝ որ սոյն  
 եկեղեցւոյ մէջ սովորաբար ընդունուած  
 հաւատք մ' է , թէ Պապին երեսփո-

խանութեամբ ներկայացեալ եկեղեցա-  
 կան հեղինակութիւնը իրաւունք ունի  
 դատապարտելու անուղղակի բոլոր  
 զանոնք՝ որ չեն հպատակիր ծառա-  
 յաբար եւ ընդդէմ անդամ խղճի իւր  
 կարգացնել նորաձեւութեանց . կդատա-  
 պարտէ՝ կամ եկեղեցիէն մերժելով՝  
 կամ չարաչար նղովելով եւ կամ իբրև  
 մահացու մեղք մը դործող ծանր մեղաւո-  
 րի մը պէս այնպիսեաց հետ վարուելով :  
 Այս զեղծմունքները վճարեցին հանդեր  
 ձեալ կենաց վարդապետութիւնը , եւ  
 բնական ձեւէն բոլորովին հանեցին ճշ-  
 մարիտ ծանօթութիւնը :

Անգղիական եկեղեցին կերևի՝  
 թէ Ս . Գրոց մէջ գործածուած յարե-  
 նականութեան բառը ուրիշ իմաստով մը  
 կառնու , եւ կհասկնայ անորոշ տևող-  
 ութիւն ժամանակի , որ լմննալէ յետոյ  
 մեղաւորաց դատապարտութիւնն ալ  
 պիտի լմննայ : Բայց այս մասին հան-  
 ուած նորագոյն վճիռները իրենց հին  
 ատենի ընդունած հաւատքին կհակա-  
 ոակին :

Բողոքականք ծանր կերպով կմե-  
ղանչեն իրենց Նախահմանութեան ըստած  
գրութեամբը :

Ճշմարիտ է թէ Աստուած ՚ի կա-  
նուխ գիտութեան կճանչնայ թէ որո՞նք  
են՝ որ պիտի վերկուին , և որո՞նք  
պիտի դատապարտուին :

Ճշմարիտ է նաև թէ Աստուած  
յայտնի որոշմամբ ոմանք գերազոյն և  
ոմանք նուաստագոյն վիճակներու նախ-  
ահմանց հանդերձեալ կենաց ընդհա-  
նուր անտեսութեան մէջ , ինչպէս որ  
այս արդի կենաց մէջ ալ : Քայց կա-  
րելի բան չէ , առանց այն գերազա-  
րոյն էական մէկ ստորոգելիքն՝ այն է  
արդարութիւնը ուրանալու , խոստո-  
վանել՝ թէ՛ նա ոմանց վարձք և ոմանց  
պատիժ որոշեց , առանց արդիւնք վն-  
տուելու :

Արդարոց և մեղաւորաց համար  
Աստուծոյ կանխագիտութեանը չենք կրնար  
ուրեմն որոշ լինի մը համարել ոմանց  
երանութեան և ոմանց դատապար-  
տութեան , այլ որեւէսին մը յաւիտենա-

կանութեան առջև իւր նախախնա-  
մութեան հաստատած ընդհանուր  
կարգին օրինօք բոլոր ՚ի ժամանակի  
տեղի ունենալիքներուն և մարդկան  
աղատ գործողութեանց վրայ , որք ի-  
րենց անհատական գործոց մէջ կատա-  
րեալ ազատութիւն կվայելեն :

Այս գործոյս երկրորդ մասին  
մէջ՝ այս կէտին վրայ ուղղափառ ե-  
կեղեցւոյ վարդապետութիւնը բացա-  
տրելու առիթ պիտի ունենանք : Այս  
տեղ այսչափ մ' ըսած ըլլամք՝ թէ  
բողոքականք սուրբ Գիրքը ճշու-  
թեամբ հասկցած չեն , երբոր նախա-  
սահմանութեան անձուկ և չափաւոր  
վճիռը առհասարակ կտարածեն հան-  
դերձեալ կենաց դատապարտութեան  
և երանութեան վրայ , այլ կմերժեն  
թէ՛ Աստուծոյ արգարութիւնը , թէ՛  
մարդկային աղատութիւնը և թէ՛  
հանդերձեալ կենաց ճշգրտագոյն ծա-  
նօթութիւնները :



ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅԻՈՅ

Ա.

Ընդհանուր սկզբունք

Բարոյականը մարդկային գործողութեանց կանոնն է : Այս գործողութեանց մէջ կան , որոնց մարդս գիտակցութիւն չունի՝ կամ իւր գոյութեան գեռ անկատարութեանը եւ կամ կարողութեանց վայրկեանական կամ շարունակ անպիտանութեանն համար : Պարզ եւ բնական զգայական գործողութեանն են ասոնք , կամ այնպիսի գործողութիւններ՝ որ գործողին վրայ պատասխանատուութիւն բերող հարկաւոր պայմանները չունին :

Ողջ իմացականութիւնն եւ ազատ կամքն են մարդս իւր գործոց պատասխանատու ընող պայմաններն :

Իմացականութեամբ կիմանայ բնութիւն կամ իրոճոյսաց , եւ որքան օրէնքները . ազատ կամք . իւր գործողութիւնը այս օրինաց կհամեմատէ :

Օրինաց համեմատ գործը բարի է , հակառակն ալ չար կամ մեղք : Չար գործերու սովորութիւնը կըսուի մոլութիւն , բարի գործոց սովորութիւնն ալ սուտութիւն :

Չար կամ մեղք կոչուած գործողութիւնը աւելի կամ պակաս ծանր կըլլայ օտքի տակ առնուուած օրէնքին կարևորութեան եւ գործողին ազատութեան եւ խելքին աստիճանին չափով : Մարդը՝ որ ծանր օրէնք մը կարհամարհէ լի գիտութեամբ եւ կատարեալ ազատութեամբ , աւելի յանցաւոր է

քան զայն՝ որուն խելքը տկար և իմացականութիւնը աղօտ է, եւ արհամարհած օրէնքն ալ այնչափ մեծ չէ:

Բնական օրէնքները՝ Աստուծոյ մեր ներսը տպաւորած առաջին լուսոյն եւ զգացմանց մէջ են, եւ կկազմեն մեր բարոյական բնութիւնը, ինչպէս զգայութիւնք եւ գործարանք դրնականը: Բնական օրէնք բսելով խղճմտանքի օրէնքը պէտք է հասկնանք՝ որ ներքին վկայութիւնն է, եւ այս կամայն գործողութեան բարոյական աստիճանը կրվճուէ: Խղճմտանքին հիմը՝ բարին և չարն ընտրող գիտութիւնն է. Աստուծոր էսպէս բռն է՝ այս գիտութեան սկիզբն է, առանց աստուծոյ բարի եւ չար բառերը նշանակութիւն չունին. գործերն ինքնին անխտիր և ըստ դիպաց գրգռեալ այս և այն զգայարանաց գործարանաւոր վիճակէն յառաջ եկած հարկաւորութիւններ են: Բարին ու չարը աննշան բառեր՝ մարդն ալ գործարանաւորութեան մը իշխանութեան ներքև նկատելով՝ բարոյականը երևա-

կայական կմնայ\*:

Այս ծայրայեղութեան հասնելու համար, նոյն ինքն մարդուն ընտրութիւնը կացուցանող տարերքները ուրանալու ենք. բարոյական օրէնքները բնականներուն հաւասար ծանօթ են՝ ի մարդում. ասոնք ուրանալն ալ նոյնպէս մարդկութիւնը ուրանալու հաւասար է: Ամեն ժամանակի եւ ամեն անհատի մտաց մէջ բարոյական ճանաչմանց մշտնջենաւորութիւնը կցցունէ՝ թէ ճանաչմանքները մարդուն բնութեան մէջ օրէնքն են, ինչպէս որ բնական բնութիւնը կայուցանող զգացմանց մի եւ նոյնութիւնը կցցունէ՝ թէ մարմինը օրինաց ներքև է: Այս օրէնքներուն մէջ՝ որոյ ամենքն ալ մէկ նպատակի կերթան՝ մարդ ըստած իմացական է, ալիին իմացական գործողութեանց մէկ վկայութիւնը կկայլի, այսինքն է թէ

\* Վերջին տարիներս՝ Ներսիս անաստուածները «Անկախ բարոյական» անուով գիրք մը հրատարակեցին: Այս երկու բառերը մարդու ամենէն ցած պատկաւութիւնը կըացատրեն:

Աստուած ուզեր է մարդուս վրայ բարոյական եւ բնական օրէնքներ դնել :

Ըսել է՝ թէ Աստուած է մարդուս խղճմտանքին օրինաց սկիզբը , խղճմրտանքն ալ անոր կամաց արձագանդը :

Բայց մարդս իյնալով այն նախնադոյն վիճակէն յորում ստեղծուեցաւ , խելքին լոյսը ազօտացաւ , կամքն ալ տկարացաւ , այնպէս որ բարին ընելու կատարեալ ազատութիւնը ձեռքէն ելաւ :

Աստուած մարդուն ազատութիւնը վերահաստատելու համար իմացականութիւնը լուսաւորեց և կամքը ուղղեց :

Իմացականութիւնը լուսաւորելու համար Գրական ճանաչմունք տուաւ այն ճշմարտութեանց վրայ , զորոնք մարդինքնին չէր կրնար հնարել . յայտնութեան վարդապետական մասնէ ասիկա : Կամքը ուղղելու համար Գրական օրէնքներ տուաւ :

Վերջապէս իւր հօգւոյն տպաւորութեամբը, որուն արդիւնք ունեցանք

Յիսուս Քրիստոսով , ներքին օգնութիւն մը տուաւ մարդուն . Այս օգնութեան միջոցով , որ շնորհք կըսուի , մարդը առ ճշմարիտն և առ բարին կատարեալ ազատութիւն ձեռք բերաւ :

Ուստի մարդս բարոյապէս երկու կերպով կրնանք նկատել , Արտաքոյ շնորհաց , եւ Ընդ շնորհօք : Արտաքոյ շնորհաց վիճակին մէջ մարդկութեան բարոյականը կացուցանող բարւոյն տարերքները բնականապէս ունի . միտք ունի՝ որ կէտրհի սկզբնական ճշմարտութեանց վրայ . խիղճ ունի՝ որ ՚ի ներքուստ բարին կզգացունէ . բայց ամէն հարկաւոր ճշմարտութիւն տեսնելու չափ լոյս չունի . բարւոյն զգացումն ալ այնչափ զօրաւոր չէ՝ որ յարատեւ եւ նոյնօրինակ բարոյականսով մը վարի՝ ըսել կուզեմք՝ կատարեալ ազատութիւն մը չունի այս բանին համար :

Ընդ շնորհօք վիճակին մէջ , կամ որ նոյն է՝ մարդս Քրիստոսեայ մտածելով, ճշմարտութիւնը տեսնելու եւ զբարին կատարելու մասին լիազոյն ազատու

Թիւն կիւայեղէ : Այս ազատութիւնը՝ որովհետեւ Աստուծոյ է, պէտք է խոստովանեմք թէ մարդ մը՝ ինչ բարի բան որ քրիստոնէութեան մէջ կընէ, շնորհքին օգնութեամբ կընէ, եւ ինչ արժանիք որ ունի՝ ամենքն ալ Աստուծոյ շնորհքէն են :

Ասկէց քրիստոնէական բարոյականի սա մեծ սկզբունքները կ՛ծագին. նախ՝ մարդս Աստուծոյ շնորհքին բացարձակապէս կարօտ է, ուստի այս շնորհքը հաշտար է, երկրորդ՝ գործն է, մարդկային գործողութիւնը կկանոնաւորէ. երրորդ՝ շնորհքը չբռնադատէր դմարդ ճշմարտութիւնը տեսնելու և բարին գործելու, որովհետեւ օգնական միայն է մարդկային ազատութեան և ոչ ուրիշ բան. չորրորդ՝ յիստորիկ Աստուծոյ է՝ այսինքն՝ մենք փոխարէն արդիւնք մը չունինք այն շնորհքը վայելելու, որովհետեւ մեր գործերն՝ արտաքոյ շնորհաց արդեցութեան մէկ յասկութիւն մը միայն ունին՝ որ է Յերևոտար ըլլալ, որ նոյն ինքն հետեանքն է մեր իմացական

եւ բարոյական անկման :



Այս վարդապետութեան վրայ բրեւոյնեաց եկեղեցեաց դարբերաւթիւները :

Քրիստոնէական բարոյականին հիմերը երկու հակասական մեծ մտորութիւններէ շարժեցան, որոց մէկը Պեղագեանութիւն \* , միւսը Նախասահմանականութիւն կամ ճակատագրութիւն կըսուէր : Առաջինը՝ զոր նախնի եկեղեցին դատապարտեց, ճիշդիլծները

\* Պեղագեանութիւն կրօնի Պեղագիտի վարդապետութեան հետեւողութիւնը, որ հինգերորդ դարու նշանաւոր հերետիկոսն է. ծնաւ ի Մեծն Կրիստանիս, հոն մենական կեանք ուխտեց, Հռոմէ կ'աւր, աւրք Օգոստինոսի բարեկամացաւ, բնագանցութեան վերաբերեալ վեճերու մէջ մտաւ, և շնորհաց ու մարդկային ազատութեան խնդիրներուն մէջ ծանր մոլորութեան մէջ ննկաւ : Որովհետեւ կուրանար շնորհաց հարկաւորութիւնը, սկզբնական մեղքը, սննունք երախտից մեռնելէն յետոյ դատապարտուիլը կրէր թէ մարդ եւր յատուկ զօրութեամբ կընայ մեղքէ ազատիլ, եւ կատարեալ արդարութեան հասնիլ : Թ. Թ.



նորոգեցին եւ համօրէն հռովմէական  
եկեղեցւոյ մէջ մուտեցին, բայց ոչ թէ  
բուն եւ աղանդոյն յատուկ անունով,  
այլ աստուածաբանական մանուածոյ  
խորամանգութիւններով: Մոլինա ճիզ  
ուիթն էր այս խորամանգութեանց ա-  
ռաջին հեղինակը, Շնորհաց աւանդա-  
կան վարդապետութեանց՝ դէմ ընդ-  
դէմ չէր հակառակեր, մանաւանդ թէ  
պաշտպանել կցցունէր: Սակայն պա-  
պութիւնը, որ դեռ եւս ուղղափառ  
էր, ՚ի վեշտասաներորդ դարուն Օթման  
Ժողովներու յանձնեց այս նոր վարդապե-  
տութեանց քննութիւնը: Ճիզուիթաց  
պեղագեանութիւնը դատապարտեցաւ,  
սակայն բաց դռներ թողուեցան՝ որոց-  
մէ ներս կսպրդեցունէին ճիզուիթքի-  
րենց չար մտորութիւնը: Պարզամիտ  
կաթողիկէները իրենց նենգութիւնը մէկ-  
դէի դրին, եւ ողջ վարդապետութիւնը  
սորվեցուցին: Ճիզուիթները անոնց վը-  
րայ հերետիկոսութեան կեղտ անուն  
եւ մուր քսեցին եւ պապութեան բա-  
նադրել տուին զանոնք իբրեւ Յաննէն:

նախ ճիզուիթներն եկեղե-  
ցւոյ մէջ օրինաւոր իշխանութեան եւ  
շնորհաց յատկագոյն գաղափարները  
չիթեցին, եւ վերջապէս պապերուն  
ձեռօք իրենց պեղագեան վարդապե-  
տութիւնը ընդունել տուին: Կղեմէս  
ԺԱրդի Մեծի կոնդակը Պեղագեա-  
նութեան պաշտօնական հրատարակողն  
է, զոր այսօր բոլոր Հռովմէական  
աստուածաբանք եւ եպիսկոպոսք Կո-  
նստոս հասարոյ կճանչնան:

Հռովմէական եկեղեցին ոչ նուազ  
ժանր մտորութիւններ ալ բարոյականին  
վրայ ունի. մատտեսներու նորահայե-  
ցութեանց ներքեւ զայն վեր ՚ի վայր  
բրած է: Մտատես անուն տուած է  
այն աստուածաբաններու՝ որ պաշտօն  
ունին Խոջէ զանազան դեպք վրայ տե-

\* Յաննէնու Մոլինա ճիզուիթին դրութեանց ա-  
ռաջին հակառակորդն է, որ Օրոստինոսի դրոց վրայ ու-  
նեցած ի հմտութեամբ շնորհաց և անձնիշխանութեան  
վարդապետութիւնը Մոլինանց դէմ կպաշտպանէր:  
Ճիզուիթներն հակառակեցան ասոր մինչև վերջը  
և որպէս թէ անոր դրոց մէջ չկինջ հերետիկոսականա-  
խաղատութիւններ դուսն Պապին բանադրել տուին:

սութիւններ ընելու և լուծուիմն տալու :  
Աստուածաբանութեան այս կտորին  
մէջ մեծ յաջողակութիւն ունին ճիշ-  
ութիւններն , և գործ մը երբ իրենց ըն-  
կերութեան նպատակին օգտակար կըլ-  
լայ ' նոյնը գլուխ հանելու ամէն փա-  
խստեան ճանապարհներ ունին , այն  
նպատակին խոչընդոտան ելլող բարոյա-  
կանութիւն մը չեն ճանչնար :

**Ա**սկէց կհետեւի գրութիւն մը  
բիւրաւոր նենգութիւններու և երևա-  
կայական սահմարկութիւններու՝ որոնց  
մով լօխոճը կվիրաւորի , և ամէն ծանր  
խոտորմունքներ դէպքին համեմատ  
օրինաւոր կամ ապօրինաւոր ըլլալու  
կնիք կառնուն . չմնար բարոյականի՞  
կէտ մը՝ որ այս գրութեամբ չբռնա-  
բարուի : Մասրեաներու վարդապետու-  
թիւնը առջի բերան հերքուեցաւ պա-  
պութեան և եպիսկոպոսութեան կողմէն  
եօթնևտասն և ութևտասն դարերուն .  
բայց դարէ մը 'ի վեր է՝ որ ճիղուիթ-  
ներն այս հերքումներն անպիտան ընե-  
լու յաջողեցան : Ասոնց անբարոյական

վարդապետութիւնը լռելեայն տարած-  
ուեցաւ , զոր յետոյ խաղաղի Լիդու-  
որիոս Ալփինոսոս եպիսկոպոսն իւր  
Աստուածաբանութեան մէջ ժողովեց .  
անուղղակի կերպով ճշմարիտ կանոնա-  
կանութեան մէջ մտաւ , եւ անկէ-  
ի վեր է՝ որ Գասակոս վարդապետութիւն-  
մ՝ եղած է : Յայանապէս կվկայեն այս  
ըսածիս Լիդուորիոսի , կուսէ կարգի-  
նալին , կիւրի ճիղուիթին և այլոց ա-  
նուանի երկասիրութիւնները : Հօովի  
եկեղեցւոյն մէջ այսօր ալ դեռ կան  
այնպիսի ձայներ՝ որ քրիստոնէական  
բարոյականը կջատագովեն . սակայն ,  
դժբաղդաբար խղբուկ են և կասկա-  
ծելի կհամարուին : Ճիղուիթաց մտա-  
տեսական գրութիւնը քրիստոնէու-  
թեան բարոյականին հին սկզբունքները՝  
որ կային հօովի և կեղեցւոյն մէջ՝ տա-  
պալեց , ինչպէս որ պեղադեանու-  
թիւննին ալ շնորհաց վրայ ողջամիտ-  
հաւատքը խանդարեց :

**Լ**ուտեր իրաւամբ կարհամարհուի  
որ քրիստոնէական բարոյականին հիմք

խախտեց այնպիսի վարդապետութեամբ որ ճշդիւ հակադրուիլէն բառին մէջ կրօնականի : Եթէ մարդն, ինչպէս կրսէ Լուտեր, նախատահմանեալ ըլլայ բարւոյ կամ չարի Աստուծոյ անդառնալի վճռոյն զօրութեամբ, գործերն այլ ևս նշանակութիւն չեն ունենար, աղատութիւնն ալ հերքուած կրկայ : Լուտեր այս հետեւակա նութեան առջեւէն չիտառաւ, և առջնիւնսն ինչպէս բառին տեղ հոյսահոյսնը դրաւ : Եթէ մարդ աղատութեամբ չգործէ, եւ շնորհաց ներգործութիւնն ալ փոխանակ մարդոյն աղատութիւնը նորոգելու կամ դարմանելու ջնջէ կամ եղծանէ, մարդ էակը ուրիշ բան չմնար, այլ միայն Աստուծոյ հրամանին տակ բռնաբար գործող չորս գործի, որ բարւոյն դիմելուն քնորէնութիւն չունենար : Եոյնպէս ալ գործած չարը իրեն վրայ պատուհաս չբերէր, որովհետեւ լոյսը և հարկաւոր կամքը կպակսին որ կվնտառուին մարդկային գործոց բարոյա-

կանութեան մէջ :

Բողոքական աստուածաբաններուն շատերը Լուտերի հետեւեցան այս վարդապետութեան մէջ . որուն հետեւականութիւնն է՝ թէ գործերը փրկութեան համար անօգուտ են : Սակայն այս ստոյգ է՝ որ շատ բողոքականներ այս վարդապետութեան եւ ասոր սոսկալի հետեւանաց առջեւ փախուստներ կրնեն : Բարեբաղդաբար Ս. Գրոց մեկնութեան մէջ ամէնքն ալ ազատ են, ուստի Լուտերի բռնաձիգ մեկնութիւնները խիստ շատերն հերքեցին, եւ խոստովանեցան թէ ընդհանրապէս Աստուծոյ խօսքին հակառակ կուգայ այնպիսի մեկնութիւն մը եւ անոր համեմատ եղած հաւատքը : Հանդերձ այսու՝ շնորհաց, անձնիշխանութեան և գործոց հարկաւորութեան վրայ ընդունուած զանազան դրութիւններուն նայելով՝ բողոքականաց մէջ այս մասին տարօրինակ վարդապետութիւն մը կայ : Բիւրաւոր յաւելուածոյ եւ օտար նախա-

դրեալներ բերին մխեցին այս ծանր նիւթերուն վրայ, որոց եզրակացութիւնը Աստուծոյ տնաեսութեան կարգը կխառնակէ. քրիստոնէական եկեղեցւոյ աւանդութեանց ընդհանուր և դրական վարդապետութեան չհետեւելնուն համար հակասական դրութիւններով խռկեցին խճողեցին իրենց աստուածաբանական գրքերը, որ գէշ աղեցցութիւն ըրին բողոքական անհամար ճիւղերու վրայ, եւ խլճերու մէջ անհուն եւ անհնարին շիութութիւններ ցանեցին:

Ճշմարիտ եկեղեցին թէ՛ Պեղադեանութենէ և թէ՛ Նախասահմանականութենէ միօրինակ կկորչի. բարոյականի սկզբունքներն իրենց որոշիմացուածովը կընդունի, եւ մտատեսական խորամանկութիւններէ կզուլի. Ուստի իւր վարդապետութիւնն ալ թէ՛ ուղիղ և համեստ խղճի զգացմանց, եւ թէ՛ յայտնութեան դրական վկայութեանց ըստ ամենայնի յարմար է:

Բ.

## ԱՍՏՈՒԱՆԱՅԻՆ ԴԲԱԿԱՆ ՕՐԷՆՔ

Բնական օրինաց վրայ չենք ուզեր խօսել, մէկ մ'որ ամէն մարդ իւր խղճին մէջ կըտեսնէ զայն, խղճին մէջ կըսեմ որուն վկայութիւնը թերեւս սխալ ըլլայ՝ բայց ամենեւին սուտ չըլլար նաև ամենամեծ խտորմանց մէջ ալ. մէկ մ'ալ մանաւանդ՝ որ Աստուած դրական օրէնքներն անոր համար տուած է, որպէս զի մարդուն բարոյական բնութեան հիմն եղող ընդհանուր օրէնքները լրացունէ:

Աստուածային դրական օրէնքները Մովսէս մարդարէին ձեռք իսրայելացւոց տրուած սկզբունքներուն մէջ կը բովանդակին, զորս ուղղափառ եկեղեցին Աստուածաշունչ գրքերով մեր առջեւ կդնէ, որք են:

“ Ա. Ես եմ աէր Աստուած քո .  
մի՛ եղիցին քեզ այլ (աստուած ք բաց  
փնէն .

“ Բ. Մի՛ արասցես դու քեզ  
կուռս ըստ ամենայն նմանութեան ,  
որ ինչ յերկինս՝ ի վեր է , եւ որ ինչ  
յերկրի՛ ի խոնարհ , եւ որ ինչ՝ ի շուրս  
՛ի ներքոյ երկրի . մի՛ երկրպագանի-  
ցես նոցա եւ մի՛ պաշտեսցես :

“ Գ. Մի՛ առնուցուս զանուն տեա  
ռըն Աստուծոյ քո՝ ի վերայ սնոտեաց :

“ Դ. Յիշեալիր զօրն շաբաթուց  
սրբել զնա : Զվեց օր գործեսցես ,  
եւ արասցես զամենայն գործս քո ,  
յաւուրն եօթներորդի շաբաթ տեառն  
Աստուծոյ քո :

” Ե. Պատուեա զՏայր քո եւ զմայր  
քո :

“ Զ. Մի՛ սպանաներ :

” Է. Մի՛ շնար :

“ Ը. Մի՛ գողանար :

“ Թ. Մի՛ սուտ վկայեր :

“ Ժ. Մի՛ ցանկանար տան ընկե-  
րի քո , եւ մի՛ անգոյ նորա , մի՛ կնոջ

նորա եւ մի՛ ծառայի նորա , եւ մի՛  
աղանոյ նորա , եւ մի՛ եղին նորա ,  
եւ մի՛ իշոյ նորա , եւ մի՛ ամենայն  
անասնոյ նորա , եւ մի՛ ամենայնի  
զինչ ընկերի քոյ իցէ ” :

Յիսուս Գրիստոս Մովսիսի ձեռօք  
տրուած օրէնքները չաւրեց , այլ մա-  
նաւանդ թէ լրացուց , Մատթ . Ե . 18 :  
Ուստի այս օրէնքներն են բոլոր քրիս-  
տոնէից առ Աստուած եւ առ ընկերն  
պարտուց հիմնական կանոնը\* . զի , ինչ  
պէս Գրիստոս ըսաւ , աստուածսիրու-  
թիւն եւ եղբայրսիրութիւն երկու հի-  
մեր են բոլոր օրէնքներուն :

\* Յիսուս Գրիստոս Մովսիսի ձեռօք տրուած օ-  
րէնքը չուժանելով՝ Հին Կտակարանին հեղինակու-  
թիւնը կենդանացուց : Ասոր համար է՝ որ ուղղա-  
փառ եկեղեցին զայն իբրեւ Աստուծոյ խօսք կըն-  
դունի եւ կպատուէ՝ ինչպէս Նոր Կտակարանը :

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆ

« Ես եմ տեր Աստուած քո, մի  
եղեցին քեզ այլ աստուածք բաց  
յինէն » :

Աստուած այս պատուիրանաւ կը  
հրամայէ զինքը ճանչնալ եւ պաշտել :

Մարդուն առաջին պարտաւորու  
թիւնն է ճշդիւ գիտնալ զԱստուած ,  
իւր բնութիւնը եւ իր ստորագելիքնե  
րը : Այս պարտաւորութիւնը կատարե  
լու համար՝ ոչ միայն իւր խելքին լոյսը  
եւ բոլոր արարածոց իրենց արարչին  
գոյութեան վկայութիւնը պիտի գործ  
ածէ , այլ եւ հին եւ նոր կտակարա  
նի գրոց աստուածային վարդապետու  
թիւնները պիտի ուսանի : Այս վար  
դապետութիւնները ուսանելու ատեն  
մտորութեան մէջ չիյնալու համար ,  
պէտք է իրեն առաջնորդ առնու այն

ընդհանուր վարդապետութիւնը՝ որ եւ  
կեղեցւոյն ձեռօք դարէ դար առանց  
ընդհատման փոխանցուած է . հետեւ  
ւապէս պէտք է կարգաւ կարելի եղա  
ծուն չափ այն մատենագիրներուն գոր  
ծերը զորս եկեղեցին Հայր եւ վար  
դապետ ցցուցած է : Այս կերպով մարդ  
Աստուծոյ վրայ չունենար սխալ գիտու  
թիւն, եւ հետեւապէս չազատ կըլլայ մը  
տաց եւ խղճի սոսկալի հետեւանքնե  
րէն :

Աստուծոյ վրայ առնուած յստակ  
գիտութեան հարկաւոր արդիւնքը ճշ  
մարիտ պաշտման գաղափարն է , որուն  
պարտական է մարդս , ինչպէս առաջին  
պատուիրանը կուսուցանէ սա՛ խօսքե  
րով . « Մի՛ եղեցին քեզ այլ աստուածք  
բաց յինէն » :

Ամէն պաշտմունք Աստուածասիրու  
նեան մէջ կըրովանդակի , ինչպէս կըսէ  
Յիսուս Քրիստոս . « Սիրեսցես զսէր  
Աստուած քոյ յամենայն սրտէ քումմէ ,  
եւ յամենայն անձնէ քումմէ , եւ յամե  
նայն մտաց քոյ : Այս է մեծն եւ առա

ջին պատուիրան » : Մատթ. Իբ. 37.

Աստուածային վարդապետին այս խօսքին համեմատ՝ Աստուած պէտք է ըլլայ նպատակը ձեր մոտին, այսինքն մեր խորհրդոց. ձեր սրտին, այսինքն մեր զգացմանց. ձեր հոգւոյն, այսինքն մեր բոլոր գործօնէութեան :

Ասոր համար է որ սուրբ Պօղոս առաքեալը առ Աստուած պատքերը նիս սա՛ երեք առաքինութեանց մէջ կբովանդակէ, որք են . հաւատք, յոյս, սէր : Հաւատք, որով ձեր մոտէն Աստուծոյ կնուիրենք . յոյս, որով մեր բաղջանքները եւ զգացումները իրեն կը նուիրենք . սէր, որով մեր բոլոր գործողութիւնները իրեն կնուիրենք . Ա. Կորնթ. ԺԳ, 13 : Այս գործօնէութիւնը սիրոյ էական յատկութիւնն է, ըստ սրբոյն Յովհաննու առաքելոյ . Յով, ԺԴ, 19 :



ՀԱՒԱՏՔ

Հաւատքը առաքինութիւն մ' է, որով կհաւատամք բոլոր այն ճշմարտութեանց, որ յԱստուծոյ յայտնուած եւ ամեն ատեն եկեղեցւոյ մէջ պահուած են, ապահով ըլլալով՝ թէ անոնք Աստուծոյ ճշմարտութեանը եւ այն անսխալութեան վրայ հիմնուած են, զոր եկեղեցին ունի՝ իրեն յանձնուած ճշմարտութեանց աւանդը պահելու համար :

Ուստի հաւատքին սրտիցն է յայտնեալ ճշմարտութիւնները : Այն ամեն բաները որ յայտնութեան աւանդ չեն՝ մարդկային կարծեաց կարգէն են, զորոնք ընդունելու կամ մերժելու կատարեալ ազատութիւն ունինք յայտնեալ ճշմարտութեանց համեմատ ըլլալուն կամ չըլլալուն պայմանաւ :

Հաւատքին սրտիցն է Աստուծոյ ճշմարտութիւնը, որ ո՛չ կխաբէ եւ ո՛չ

կիսարուի .

Հաւատքին էական պայմանն է լսել եկեղեցւոյ , որ միայն կրնայ հաղորդել մեզ Աստուծոյ ճշմարիտ յայտնութիւնը . որովհետեւ նա միայն անսխալութեան պարզեւ ունի՝ զայն պահպանելու համար : Եթէ եկեղեցւոյն ձայնը առաջնորդչը բռնէինք , Աստուծոյ յայտնեալ ճշմարտութիւնները ճշդութեամբ չէինք կրնար սովորիլ . այլ մեր յատուկ խելքին քննութեանը պիտի յանձնէինք զանոնք եւ պիտի հաւատայինք այնուհետեւ ո՛չ թէ Աստուծոյ այլ մեր խելքին . մեր հաւատքը ո՛չ թէ ճշմարիտ հաւատք պիտի ըլլար , այլ աւելի կամ պակաս կատարեալ եւ պարզ հաւանութիւն մը , որուն հիմը իմաստասիրութեան հետեւցուցած մէկ քանի պատճառներուն վրայ է , որոնց վրայ հաւատարմութիւնը ո՛րչափ ալ ըլլայ կեղտկարծ է :

Ճշմարիտ ֆրիստոնեան յայտնեալ ճշմարտութեանց կհաւատայ , որովհետեւ ճշմարիտ է . կհաւատայ թէ ոյս կամ այն ճշմարտութիւնը յայտնուած է , որովհետեւ

եկեղեցին իրեն կոստոյանէ :

Հաւատքը թէպէտ ներքին առաքինութիւն մ' է , բայց պէտք է որ արտաքուստ ցընենք , որ նոյն ինքն է խոստովանութիւնը , ինչպէս կրէ սուրբ Պօղոս առաքեալը . « Սրտիւ հաւատայք յարդարութիւն և բերանով խոստովանիք 'ի փրկութիւն » : Հոմ. Ժ . 10 : Ըսել է թէ ներքին հաւատքը , այսինքն սրտագին և խոր հաւանութիւնը հարկաւոր է . որովհետեւ առանց ասոր հաւատքը ճշմարիտ չէ . հաւատքը գրասուանց խոստովանիլ խղճին խորը ինչպէս որ է ցցնել հարկաւոր է . այնպէս որ առանց ասոր փրկութիւն չըլլար . « Զի որ ամօթ համարեսցի զիս և զբանս իմ , զնա և որդի մարդոյ յամօթ արասցէ , յորժամ զայցէ փառօք իւրովք և Հօր եւ հրեշտակաց սրբոց » : Ղուկ . Թ . 26 :



Առաքինութիւն մ' է ասիկայ, որով  
Աստուծոյ կնուիրենք ներկայ և հան-  
դերձեալ կենաց վրայ ունեցած բոլոր  
բաղձանքնիս :

Այս առաքինութիւնը հաւատքին  
տուած սա գիտութեան վրայ հիմնեալ  
է . թէ Աստուած գերագոյն բարին է .  
եւ թէ զամենքս ալ , այս զԿալի աշ-  
խարհս թողելնէս , յետոյ , անմահ երա-  
նութիւն մը իրմով վայելելու կանչած  
է . ուրեմն յուսոյ առաջին է նոյն ինքն  
Աստուած . պատճառն է Աստուծոյ խոս-  
տուամբ , որով այս աշխարհիս մէջ բա-  
րեգործութեան շնորհ , եւ հանդերձե-  
լոյն մէջ հաւատ կվայելեմք . այս առա-  
քինութեան հիմք նոյն ինքն Յիսուս  
Քրիստոս է , որ մեզի շնորհաց և փա-  
ռաց արդիւնք տուաւ , և որն որ ըստ  
արքայն Պողոսի , մեր յուսոյն միակ խա-  
ղիսին է . Ա . Տէօթ . Ա . 1 :

Առաքինութիւն մ' է ասիկայ , ո-  
րով ամէն բանի մէջ Աստուծոյ կամաց  
համեմատ կվարուիմք : Մեր բոլոր  
գործօնէութիւնն Աստուծոյ նուիրելու մ'  
է . ասոր համար սուրբ Պողոս առա-  
քեալն ամէն առաքինութեանց մեծը  
աս է կրսէ , և քան զհաւատքն ու յոյսը  
վերագոյն կգասէ : Ա . կորնթ . ԺԳ . 13 .  
Հաւատք և յոյս , յիբաւի , լոկ հայե-  
ցողական առաքինութիւններ կըլլան ,  
եթէ սէրը զիրենք հորհուրան չընէ . զի  
ամէն առաքինութեանց էական հան-  
դամանքը գործնականէն կտխեալ է :

Սիրոյ առաջին Աստուած է . բայց  
Յիսուս Քրիստոս կուսուցանէ , թէ կա-  
րելի չէ որ զԱստուած սիրեմք առանց  
ընկերնիս սիրելոյ : Ուստի Աստուած  
սիրութեան մէջ առաջին չորս պատուի-  
րանները համառօտելէն յետոյ , մնացած  
վեցը երկուսն մէջ կժողովէ , յետոյ

կայսրն է թէ այս երկրորդ պատուի ըստն ալ առաջնոյն նման է : Մատթ. Իբ. 39 :

Սէրը ճշմարտ ըլլալու համար պէտք է որ կատարեալ ըլլայ . այսինքն՝ առանց բացառութեան ամէն պատուիրան անթերի կատարել տայ . որովհետև Աստուծոյ օրէնքները մէկ աղբիւրէ միայն բղխելուն համար՝ հաւասար և հասարակ հեղինակութիւն ունին մեր վրայ :

Սէրն ալ ինքնին բնականապէս գործնական առաքինութիւն մ' է , այսինքն՝ բարեգործութեան վրայ կկայանայ : Այսպէս կըսէ Յիսուս Քրիստոս . « Որ ունի զպատուիրանս իմ , եւ պահէ զնոսա , նա է՝ որ սիրէ զիս . . . եթէ ոք սիրէ զիս , զբանն իմ պահեսցէ » : Յով. ԺԴ . 21 . 23 : Սուրբ Յովհաննէս առաքեալն ալ նոյն իմաստով կըսէ . « Այս է սէրն Աստուծոյ , եթէ զպատուիրանս նորա պահեսցուք » : Աթուղի Յով. Ե . 3 : Սուրբ Յակոբոս առաքեալն ալ կըսէ . « Զինչ օգուտ իցէ , եղբարք իմ , եթէ ասիցէ ոք հաւատու

ունել՝ և գործս ոչ ունիցի , մի թէ կարիցե՞ն հաւատքն ապրեցուցանել զնա . . . Զորօրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է , սոյնպէս և հաւատք՝ առանց գործոց մեռեալ են : Յով . Բ . 14 . 20 :

Բարի գործ ըսելով՝ հաւատքի հետ միացեալ սէրը կհասկցուի . եւ ասով միայն կարելի է ՚ի Յիսուս Քրիստոս արդարութիւն ձեռք բերել :

Հրեայներն արտաքին արարողական գործերով արդարանալ կկարծէին . Քրիստոնեայք չեն կրնար արդարանալ , բայց միայն Քրիստոնէական ճշմարտութեանց ներքին համոզմամբ , այսինքն Յիսուսի Քրիստոսի հետ հաւատովք միանալով . բայց այս հաւատքը մեռեալ է՝ եթէ սիրով կենդանացեալ չէ . մեծ առաքինութիւն , զոր Աստուած մեր հոգւոյն մէջ կտպաւորէ ՚ի ձեռն արդեանց Յիսուսի Քրիստոսի , որով կենդանացոյց , սրբեաց եւ կոչեաց ՚ի յաւիտենական երանութիւն :

## ՊԱՇՏՈՒՄՆ

Առ Ատուռած պարտքերնիս Հաւատոյ , Յուսոյ եւ Սիրոյ մէջ կրովանդակին . բայց եթէ այս առաքինութիւնները միայն ներքին ըլլան , մարդն չի կրնար որովհետեւ քանի որ մարդս երկու բնութեանէ կբաղկանայ այսինքն 'ի հոգւոյ եւ 'ի մարմնոյ , հարկաւ պէտք է ' որ իւր խորհուրդներն եւ զգացմունքները դրսէն ցցընէ : Ըսել է ' թէ մարդս հաւատոյ , յուսոյ եւ սիրոյ առաքին գործերը ընելու պարտաւոր է . այս գործերն են ' որ պաշտօնն կրսուին :

Պաշտումն երկու ձեւ ունի , առանձնական եւ հրապարակական . առանձնական ' երբ հաւատոյ , յուսոյ կամ սիրոյ գործերը միայնակ Աստուծոյ կնուիրենք . հրապարակական ' երբ հասարակաբար հաւատացելոց հետ 'ի միասին կնուիրենք :

Առանձնական պաշտումն ողորմ է . հրապարակական պաշտումն արարողութիւններն են , որ կրկան խորհրդոց մատակարարութեան եւ յատկապէս սուրբ Պատարագի մատուցման ատեն :

Աղօթքը , որ հիմն է առանձնական պաշտման , Յիսուս Քրիստոս բովանդակապէս ժողովեց սա համառօտութեան մէջ : Մատթ . 2 . 9 , և այլն :

Հայր մեր , որ յերկինս ես .

Սուրբ եղիցի անուն քո .

Եկեացէ արքայութիւն քո .

Եղիցին կամք քո ' որպէս յերկինս եւ յերկրի .

Չհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր .

Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր ' որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց .

Եւ մի' տանիր զմեզ 'ի փորձութիւն .

Այլ փրկեա զմեզ 'ի չարէ . ամէն :

Տերունական այս աղօթքին մէջ մէկ պաշտօնն և եջնն ինքրօրո՞ծ է կան :

## ՊԱՂԱՏԱՆՔ

Պաղատանքը սա խօսքերուն մէջն է . Հայր մեր որ յերկինս ես : Հայր քաղցր անունը Աստուծոյ տալոյ պարտաւոր եմք . զի նա միայն անոր լիազոյն իրաւունք ունի . որովհետեւ Յիսուս Քրիստոս կրտէ . « Ձեր մի է հայր՝ որ յերկինս է » : Մատթ. 11. 9 . Անոնց՝ որոնցմէ որ յետ Աստուծոյ մեր գոյութիւնն առած եմք՝ հայր անուն տալերնիս անոր համար է՝ որ բնական կարգին մէջ աստուածային հայրութեան պատկեր են . եկեղեցւոյ հովուաց ալ նոյն անունը տալերնիս անոր համար է՝ որ հոգեւոր կարգին մէջ Աստուածային հայրութեան պատկեր են : Երկու կարգի հայրերն ալ նշան կամ Երեւոյնքն են հայրութեան , որ միայն է յԱստուած , իբրեւ միակաբարիչ ամենայնի :

Փրկիչն իւր բոլոր աշակերտաց

բերանը Տէր բառը գնելով՝ կյիշեցունէ թէ նորոգեալ կամ գնեալ մարդկութիւնը առաջի Աստուծոյ մէկ ընտանիք մը միայն կկազմէ . ինչպէս կըսէ Ս . Յովհաննէս աւետարանիչը . « Որք ընկալանն զնա ( զբանն մարմնացեալ ) ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել » : Ա . 12 : Ընկերական բաժանումները պատճառ մը չեն կրնար տալ կարծելու՝ թէ վերածնեալ մարդկային ընտանիքը իրարմէ օտար եւ արտաքին մասերու ցրուած է : Ընկերական կարգէն գուրս իյնալով եւ հպարտութեամբ բացառիկ իրաւունքներ պահանջելը՝ Աստուծոյ ամենուն հայր ըլլալը ուրանալ , եւ քրիստոնէութեան հիմնական ճշմարտութեանց մէկը մերժել է :

Յիսուս Քրիստոս Հայր Տէր բառերուն վրայ կյաւելլու « յերկինս ես բառերը , մեզի յիշեցունելու համար՝ թէ Աստուծոյ որդիքներս չենք ծնած ոչ յարեմէ , ոչ ՚ի կամաց ճարձոյ եւ ոչ ՚ի կամաց սան , ոչ յԱստուծոյ . Յովհ . Ա . 13 .

Թէ մեր յոյսը և ակնկալութիւնները այս աշխարհիս մէջ սահմանաւորեալ չեն . Թէ առ աշխարհիս մէջ եմք նժդեհհուծեամբ իբրև անցաւոր յերկրի . Թէ մեր ծագումը կամ սկիզբն յերկնից , յերկինս և կամ առ Հօր է , այն ինքն է , երջանկութեան և անմահութեան վերագոյն գաւառի մը մէջ :



ԻՆԴԻՈՒԱՄ ԱՌԱՋԻՆ

« Սուրբ եղեցի անուն ք » :

Աստուծոյ անունն ինքնին սուրբ է . Ղուկ . Ա . 49 . բայց մենք ալ պարտաւոր եմք սուրբ ըլլի . Նախ 'ի մեզ , ապրելով ըստ Աստուծոյ սրբութեան , ցցնելով՝ Թէ արժանի որդիք եմք եւ զի սուրբ Հօր մը , կատարելով իւր օ

րէնքները , որ բացայայտութիւն են անոր սրբութեան : Երկրորդ առաջի այլոց , առաքինութեամբ մեր ներքին զգացմունքները ցոյց տալով . « Տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն զհայր ձեր՝ որ յերկինս է » . Մատթ . Ե . 16 :

Ուստի առաջին խնդրուածով Աստուծոյ շնորհքը կխնդրեմք՝ որ լոյս տայ մեզի 'ի գործ դնելու սա սկզբունքը՝ որուն մէջ միւս բոլոր սկզբունքները կբովանդակին . « Եղբրուք կատարեալք՝ որպէս եւ հայրն ձեր երկնաւոր կատարեալ է » . Մատթ . Ե . 48 . և պահելու երրորդ պատուիրանը . Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ ք՝ 'ի վերայ անտեսաց . Ապաքէն Աստուծոյ անունը սրբելն ուրիշ բան չէ՝ այլ յարգել , պաշտել , երկրպագել , անպատիւ չընել , միշտ փառաւորել խորհրդով , զգացմամբ , բանիւ և գործով :

Ուրեմն առաջին խնդրուածը Հաւատոյ , Յուսոյ և Սիրոյ գործ մ' է :

ԽՆԻՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԳ

« Եկեցէ արքայութիւն քո » .

Աստուած միայն է թագաւոր աշխարհի, կ'թագաւորէ և պիտի թագաւորէ միշտ գերագոյն իշխանութեամբ . բայց մարդիկ իրենց ազատութեամբ կգեղծանին, Աստուծոյ յայտնութեանց դէմ կհանեն իրենց խելքին կանոնը և կարհամարհեն աստուածային օրէնքները . մէկ խօսքով, կապտամբին Աստուծոյ դէմ :

Մենք եկեցէ արքայութիւն քո ըսելով՝ Աստուծոյ գերագոյն իշխանութիւնը կարգեմք, այսինքն հաւատոյ գործ մը կկատարեմք . կընդունիմք՝ թէ իբաւունք ունի թագաւորելու մեր մտքին և սրտին վրայ ինչպէս նաև մեր բնական բնութեան վրայ . ուխտ մը

կամ փափաք մը յայտնած կըլլամք՝ որ ամէն մարդիկ հաւատան՝ թէ իրենց վրայ կտարածուի նորա իշխանութիւնը, անոր նուիրեն իրենց կեանքը . աս ալ սիրոյ գործ է :

Ըստ որոյ առաքելոյն Պողոսի « Սրբայութիւնն Աստուծոյ . . . արգարութիւն եւ խնդութիւն եւ խաղազութիւն է 'ի Հոգին սուրբ » : Հռոմ. ԺԴ . 17 : Եկեցէ ըսելով փափաք յայտնած կըլլամք՝ որ ամէն մարդիկ արգարութեամբ ապրին, իրարու հետ խաղաղութեան ունենան, եւ սրտերնուն մէջ այն աստուածային խնդութիւնն և երանութիւնը վայելն, որ խղճմտանքէ յառաջ կուգայ շնորհօք հոգւոյն սրբոյ : Աս է Աստուծոյ ճշմարիտ թագաւորութիւնն, որ ոչ թէ հայ երեսնուհինգ ( արտաքին երեւութով ), այլ 'եկեցէ 'է Տէր է : Ղուկ. ԺԷ . 20 . 21 :

Բայց աշխարհի մէջ յայտնի է Աստուծոյ թագաւորութիւնը ճշմարիտ կը բոնքով : Փրկիչը իւր ստրկեցուցած աղօթքով կուզէ միշտ մեզի յիշեցունել՝

Թէ պարտաւոր ենք ջանք ընելու՝ որ  
աստուծոյ թագաւորութիւնը տարած-  
ուի աշխարհի վրայ, ճշմարտութիւնը  
քարոզելով և զսուրբ եկեղեցին ճանչ-  
ցունելով, որ միայն է աւանդառու  
ճշմարտութեան եւ արքայութիւնն  
այս աշխարհիս մէջ, այսինքն այն պէ-  
տութիւնն՝ ուր միապետաբար կտիրէ  
Աստուած, և անոր մէջ միայն կարելի  
է մարդոց իրենց օրինաւոր հպատա-  
կութիւնը ընծայել:

Որովհետեւ Աստուծոյ թագաւորու-  
թիւնն իւր շարունակութիւնը մինչև  
հանդերձեալ աշխարհի մէջ կձգէ, ե-  
կեցի որոշուիին և բառերը Յոսի գործն-  
դասի են, և փափաք կյայտնեն այն  
աւուր, յորում մահացու և ապակա-  
նեալ մարմնոյն կապերէն արձակուելով՝  
երջանիկ պիտի ըլլամք Յիսուսի ֆրիս-  
տոսի հետ Աստուծոյ յաւիտենական  
ժառանգութեան մէջ:

—

### ԽՆԴՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԻ

« Եղեցին կամք քո, որպէս յերկինս  
եւ յերկրի »:

Մարդուս բարոյական էութիւնը  
կացուցանող օրէնքները կամ խիղճը,  
ինչպէս նաև որպէս օրէնքները, բա-  
ցայայտութիւն են Աստուծոյ կամաց:  
Այս կամքը միշտ երկնից հետեւելու կա-  
նոնն է. որոնք որ միասին երջանիկ  
պիտի ըլլան հոն՝ Աստուծոյ բարերար  
կամաց իշխանութեան ներքև կգործեն,  
ոչ թէ բռնաբար՝ այլ Աստուծոյ կամաց  
հետ ներդաշնակաւոր կամքի ազատ  
գործողութեամբ: Երկրի վրայ այսպէս  
չէ այն ժամանակէն ՚ի վեր, յորմէ  
հետէ սկզբնական անկումը մարդուն  
մտաց վրայ մէզ ու մառախուղ սփռեց,  
եւ օրտին մէջ դէպ առ չարն հակամի-  
տութիւն սերմանեց: Ամէն մարդ պէտք

է ինք իրեն բուռն ընէ՝ Աստուծոյ  
 շնորհքով իւր գործերն օրինաց յար-  
 մարցնելու, և Աստուծոյ կամքը միայն  
 իրեն կանոն դնէ. պէտք է բաղձայ՝  
 որ ամէն մարդիկ ալ այսպէս ընեն,  
 որպէս զի կարգը ինչպէս անհատնե-  
 լու նոյնպէս և ընկերութիւններու վրայ  
 թաղաւորէ:

Աստուծոյ կամքը մի միայն օրէնք  
 ճանչնալով՝ Հասարակ գործ կատարած  
 կըլլամք. աչքերնիս դէպ յերկինս  
 ուղղելով, ուր Աստուծոյ կամքը կ'իթա-  
 գաւորէ, եւ երկինքն երկրի կանոն  
 բռնելով՝ Յասարակ գործ ըրած կըլլամք.  
 փառաքելով՝ որ համբռն մարդկու-  
 թիւնը իւր կառավարութեան ձեւը եր-  
 կնքէն առնու. Սէրոյ գործ ըրած կըլ-  
 լամք:

— 408 —

ԻՆԴԻՈՒՍԾ ՉՈՐՐՈՐԳ

« Զհաց մեր հանապազորդ տո՛ւր  
 մեզ պատր » :

Փրկիչը կուտուցանէ՝ թէ միշտ  
 դէմ յանդիման եմք Աստուծոյ, և թէ՛  
 հոգեւոր թէ՛ մարմնաւոր բաներու մէջ  
 ծայրագոյն կախումն ունինք իրմէն:  
 Մարդն իւր կենաց հարկաւորները եւ  
 նոյն իսկ կեանքն ալ Աստուծոյ շնորհ-  
 քէն ունի. իւր պահպանուիլը ուրիշ  
 բանէ չէ՝ այլ միայն Աստուծոյ արա-  
 ըող զօրութեան շարունակութենէն,  
 և, կամ որ նոյն է, կապրի անոր հա-  
 մար՝ որովհետեւ Աստուած ուղեր է  
 որ սպրի:

Ամէն օր պարտաւոր եմք Աս-  
 տուծմէ Տէր հոգը խնդրել, որովհետեւ  
 միշտ անոր արամադրութեան ներքեւ  
 է այն: Հանապազորդ ( օր ըստ օրեայ )  
 հոգը միայն պէտք է խնդրեմք, վասնզի



վաղն ալ ապրելնուս երաշխաւորու-  
թիւնը չունիմք . « Մի՛ հոգայք վասն  
վաղուին , կըսէ Յիսուս , զի վաղիւն  
վասն իւր հոգացի . շատ է աւուրն  
չար իւր » : Մատթ . 2 . 34 :

Եթէ Աստուած մեր պէտքէն ա-  
ւելի կուտայ մեզի՝ չէ թէ չարաչար  
դործածելու համար է , այլ որպէս զի  
մեր եղբայրներուն մատակարարելու  
հաւատարիմ՝ անտեսութիւնը կատա-  
րեմք , և անոնց իբրև նախախնամու-  
թեան պատկեր երեւիմք :

Մարգս միայն հացիւ չէ որ կապ-  
րի , այլ Աստուծոյ բերնէն ելած խօս-  
քերով ալ , Մատթ . 7 . 4 . վասն զի եր-  
կու բնութենէ բաղկացեալ է՝ ի հո-  
գւոյ եւ ՚ի մարմնոյ : Աստուծոյ խօս-  
քը հոգւոյն հացն է , ինչպէս որ նիւ-  
թական հացն ալ մարմնոյն :

Ուրիշ հաց մ՛ ալ կայ , որ է Պա-  
տարադի հացը , որ թէ՛ հոգինիս եւ  
թէ՛ մարմիննիս կկենդանացունէ . հո-  
գւոյ հետ միանալով նոյն ինքն Յիսուս  
Քրիստոս , որ է Կրիստոս , եւ ազնուա-

դործելով զմարմինը , որ աստուածա-  
յին հաղորդակցութեան միջոցն է :

Աստուծմէ ամէն օր կրնանք ին-  
դրնել՝ որ զմեզ արժանի ընէ միշտ այս  
կենաց հացին իրապէսկամբաղձանքով ,  
եւ մեզի տայ թէ՛ հոգևոր և թէ՛ մար-  
մնաւոր կենաց տարերքները :

Ուստի Հասարակ մեզի կճանչցունէ՝  
թէ Աստուած մեր կենաց իշխանն է .  
Յոյն կթելադրէ՝ որ գերադոյն կենաց  
բաղձամք , որուն սկիզբը նոյն ինքն  
Աստուած է . Մերը կյօժարեցունէ զմեզ  
որ մեր ընկերին մարմնաւոր և հոգևոր  
ողորմութեամբ օգնելով զԱստուած  
փառաւորելու միջոցները՝ ի դործ դը-  
նեմք :

## ԻՆՏԵՐՈՒԱՅԻ ՆԻՆԳԵՐՈՐԳ

« Եւ թո՛ղ մեզ զպարտես մեր որպէսն մեր թողումք մերոց պարտապանաց » :

Աստուծոյ միշտ պարտադան եմք . նոյն իսկ էութիւննիս իրեն պարտական եմք . ուստի , մեր մտաց խորհուրդները , սրտին յօժարութիւնները և կենաց բոլոր գործողութիւնները անոր են , եթէ մեր գոյութեանն բան մը աւոր ինայեմք , հոգիսն չը բաժնու և յանցանք գործած կըլլամք : Ո՞վ կրնայ ըսել թէ Աստուծոյ առջև միշտ պահանջուած ճշդութեամբ վարուեր եմ , անոր բոլոր օրէնքները պահեր եմ , խորհուրդներէս , յօժարութիւններէս եւ գործերէս բնաւ բան մը իրեն չեմ ինայեր , շատ մեծ արդարներն անգամ շատ կերպերով մեղանչեցին , և ո՞վ որ կրտէ թէ մեղք չունիմ , ինք

զինք կխարէ :

Ուստի պարտաւոր եմք միշտ ճանչնալ հասարակ թէ Աստուած մեր էութեան վրայ իրաւունք ունի , յասլ թէ իւր բարութեամբը մեր պարտքը մեզի կններ . եւ նոր նոր առաջագրութիւններ ընել սիրով , որ թողութեան արժանի վարք ունենամք :

Յետու ֆրիստոս մեզի կտորվեցունէ թէ Աստուած մեզի ողորմութիւն չընէր , եթէ մենք մեր եղբարցը ողորմութիւն չընեմք : Բոլոր մարդիկ իրարու հետ պարտաց և իրարաց փոխադարձ յարաբերութեամբ կապուած են : Բայց շատ անգամ կպատահի որ մարդ մը պարտքէն աւելի իրաւունք կպահանջէ , իրաւունքը ատուար պարտքը անձուկ կճաննայ . ասկէց կհետեւին հակառակութիւնք , և անոնց պտուղ ' ՚ի հարկէ հետեւեալս նութեամբ ծնանող անկարգութիւններն են :

Աստուած կհրամայէ ' սր փոփոխակի իրարու ներեմք , իրարու շա

րեաց անյիշաչար ըլլամք . եւ ինք մեզի ողորմութիւն կընէ ու կնեբէ , որ պէս զի մենք ալ իւր օրինակէն պարտաւորեալ մեր ընկերին ողորմիմք ու ներենք . ասոր համար է որ կըսէ , « Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա , թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր . Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա , և ոչ Հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր » : Մատթ . 2 . 14 . 15 .

Մեր եղբօրը յանցանքը ներելով , « եր ցցուցած կըլլամք , որ օրինաց կատարումն է : Աստուծոյ ողորմութեան վրայ յոյ գրած կըլլամք թէ մեզի մեր յանացնքը պիտի թողու . հասարայ դործ կատարած կըլլամք յանձին մեր ընկերին տեսնելով զնոյն ինքն Յիսուս Քրիստոս , որ ըսած է թէ եղբօր մը ըրած սիրոյ դործերնիս իրեն կվերաբերի :

ԽՆԿՐՈՒԱԾ ՎԵՑԵՐՈՐԳ

« Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն » :

Փորձութիւնն է զմեզ մեղաց վըտանդը ձգող պարագայներուն մէկ տեղ գալը . փորձութիւնները առ չարըն հակամիտութենէ , և սկզբնական մեղաց հետեւանքն եղող տգիտութենէն յառաջ կուգան : Սատանայն , որ թոյլտուութիւն ունի Աստուծոյ մարդափորձելու , զանիկայ վտանգի բերելու հնարքներ միշտ կխորհի , մարդուն տգիտութիւնը իւր շահուն յարմարցունելով ՝ մոլորութիւնը ճշմարտութեան երևութիւնը կցցուցնէ , որով մեղանչել կուտայ հասարակ դէմ , առ չարն հակամիտութիւնը իւր դործին յարմարցունելով , նոյն չարը կցցունէ իբր միջոց երջանկութեան , խղճի օրէնքները եւ Աստուծոյ պատուիրանները ոտ

նակոխ ընել կուտայ , մեր յոսոյն միակ  
նպատակը աշխարհի խաբէական բա-  
րիքներուն հետ կփոխէ , եւ բոլոր  
բարձունքներն կկապէ աշխարհիս հա-  
րատութեանց եւ հաճոյից հետ .  
Մարդ մը եթէ այս դիւական ազգե-  
յութեանց հետեւի ` կկորսնցունէ հա-  
ւատքը , յոյսը եւ սէրը . աշխարհի  
մէջ Աստուծմէ կբաժնուի , Աստուած  
ալ յաւիտենական վճռով մը այս բա-  
ժանումը օր մը կհաստատէ :

Աստուած որչափ որ Սատանային  
թոյլ տուած է ` որ զմեզ վորձէ , հրեշ-  
տակներուն ալ հրաման ըրած է ` որ  
բարի խորհուրդ և յոյս թելադրեն .  
բայց լուսաւորող և ՚ի բարին յորդորող  
շնորհքը ինք կուտայ մեզի և այնպիսի  
վիճակի մէջ կգնէ ` յորում կրնամք ա-  
զատօրէն ճշմարտութիւնը մոլորութե-  
նէն եւ բարին չարէն աւելի սիրել . Սա-  
կայն ` որովհետեւ տգիտութիւնն եւ առ-  
չարն հակամիտութիւնը շատ անդամ  
մեծ ազգեցութիւն կընեն մեր վրայ ,  
ուստի պարտաւոր եմք խնդրել Աս-

տուծմէ ` որ Սատանային թոյլչտայ զմեզ  
վորձել իմաս ծանր վորձութիւններով .  
կամ եթէ թոյլ տայ ` որպէսզի առիթ  
ունենամք աւելի և սպայծառ ցցնելու  
մեր առ ինքն ունեցած սէրը , մեզի  
օգնէ , և այն կուռոյն մէջ յաղթել տայ :



ԽՆԻՐՈՒՄԸ ԵՕԹՆԵՐՈՐԴ

« Փրկեա՛ զմեզ ՚ի Չարէն » :

Այս Չարը Սատանան է , անկեալ  
հրեշտակը , որ իւր չար հրեշտակներով  
մէկտեղ միշտ կճգնի զմեզ իր արժանիյա-  
ւիտենական պատժոյն մասնակից ընել .  
Սատանան անձնաւորութիւն չարի է ,  
ինչպէս որ Աստուած ալ անձնաւորու-  
թիւն բարւոյ . այս տարբերութիւնը  
կայ՝ որ Սատանան արբա՛ է , եւ անոր մար-

դու վրայ ունեցած չարի հեղինակու-  
թիւնը Աստուծոյ ամենակարող զօրու-  
թեան ներքեւ է, որով իր չարութենէն  
կտրուիմք :

Եկեղեցին միշտ որոնանեալ աղօթին  
հետեւելու համար է՝ որ այս փորձանոս-  
նէնը կրնէ .

“ Զի քո է արքայութիւն , զօրու-  
թիւն և փառք յաւիտեանս յաւիտե-  
նից . Ամէն ” :

Ասիկա նոյն իսկ աղօթքին հա-  
մառօտութիւնը և այն միջոցն է՝ որով  
աղօթքն ին կմաստուցանեմք : Կաղօ-  
թեմք իրեն , վասն զի մեր թագաւորն  
է , և Կոստանդնուպոլսոյ պարտաւոր եմք ընե-  
լու , զի տեղակարող է , և ինչ բարի եւ  
արդար ինքրուածքներ ընեմք՝ կուտայ-  
զի բոլոր արարածները՝ որոց էութիւն  
տուած է , պարտաւոր են իւր փառքը  
երգել յաւիտեան :

Այն բառը եկեղեցւոյ բոլոր աղօ-  
թից վերջը կը գործածուի . հաստա-  
տութիւն մ'է բոլոր ըսուածներուն . բո-  
վանդակութիւն է հաւատոյ , յուսոյ և

սիրոյ , որոնք պէտք է միշտ կցորդ ըլ-  
լան մեր լեզուին արտաբերած բառե-  
րուն :

Տէրը մեզի այս որոնանալու աղօթք  
սորվեցնելով իմացունելու զած չէ՝ թէ  
ասկէ ուրիշ աղօթք ունենալու կամ  
ընելու չեն իւր աշակերտները . այլ չէր  
ուզեր որ հեթանոսներուն կամ անբարի  
հրեայներուն պէս ձայնաւոր երկար  
աղօթքները ճշմարիտ Աստուածպաշ-  
տութիւն համարէինք . ուստի աղօթքի  
հետ հարկաւոր եղած զգացմունքները  
իւր սորվեցուցած աղօթքին իմաստովը  
մեզի յայտնեց : Ասոր համար եկեղեցին  
տէրունական աղօթքին զգացմունք-  
ները ճշմարիտ պաշտման հիմն բունելով՝  
զանազան աղօթքներ ալ ունի , որոնք  
աւելի բացայայտութիւն և մեկնու-  
թիւն են այն աղօթքին : Այս աղօթք-  
ներն են որ հասարակաց պաշտման աղօթք  
կըսուին :

Պաշտումը , բուն իմացուածով ,  
այսինքն է երկրպագութեան յարգանաց  
իմաստով , միայն Աստուծոյ կրնանք

տալ, Անոր միայն պէտք է ընծայեալք յիրաւի մեր խորհրդոց, զգացմանց և կենաց կատարեալ նուիրմունքը. այս զգացմունքներն ալ աղօթքով միայն կրեն կրնանք մատուցանել:

Բայց առաջին պատուիրանին անհնազանդել չէ՝ երբոր երկրորդական պաշտումն ալ սուրբ Աստուածածնի, հրեշտակաց և սրբոց ընծայել կհրամայէ եկեղեցին. միայն թէ այս պաշտումը այնպիսի պայմաններու տակ սեղմեալ ըլլայ, որմէն Աստուծոյ յատուկ եղած էական և ճիշդ երկրորդական սահմանը տարբերի: Երկրորդական պաշտմանց հիմը պատիւ և յարգանք տալ է անոնց՝ զորս ինք Աստուած նշանաւոր ըրած է կամ բնութեան բարձրութեամբ, կամ մեզի նկատմամբ անոնց յանձնած պաշտօնովը, կամ բացառիկ առաքինութիւններով և առանձնաշընորհութիւններով. յօգնութեան կանչում է այս, զոր բուն արեւին հետ պէտք չէ շփոթել:

Արեւն Աստուծոյ կմատուցանեմք

մեր յարգանքը՝ ի բոլոր էութենէ՝ յօգնութեան կանչելով կինդրեմք միայն՝ որ սուրբ Աստուածածինը, հրեշտակները և սուրբերը մեզի համար Աստուծոյ աղօթեն. Անոնց կգիմեմք իբրեւ առեղբայրներ՝ որ փառաց մէջ են եւ Աստուծոյ առջեւ մեզմէ աւելի համարձակութիւն ունին. կենդանի եղբարց աղօթքը խնդրելնս տարբերութիւն չունի: Մահը չէ խղած հաւատացելոց մէջ եղած յարաբերութեան կապերը. հրեշտակներն ալ հաւատացելոց եղբայրն են ըստ յատնեալ վարդապետութեան:

Ըսել է՝ թէ Աստուծոյ մատուցումած ճիշդ պաշտումը եւ սրբոց կամ հրեշտակաց մատուցումը իրարմէ էական տարբերութիւն ունին. եկեղեցին այս երկրորդական պաշտումը հրամայելով՝ հակառակ խօսած չըլլար պառակն պատուիրանին, որ կարգելու միայն՝ մէկ ճշմարիտ Աստուծմէ զատ ուրիշ աստուծոյ մ' ալ երեսփել:

## ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԹՅԱՆ

« Մի՛ արացես դու քեզ կուռս ,  
 ըստ ամենայն նմանութեան , որ  
 ինչ յերկինս 'ի վեր է , եւ որ ինչ  
 յերկրի 'ի խոնարհ , եւ որ ինչ 'ի  
 շուրս 'ի ներքոյ երկրի . մի՛ երկիր-  
 պագանիցես նոցա , եւ մի՛ պաշ-  
 տեսցես զնոսա » :

Աստուած այս պատուիրանով կուռս  
 պաշտելը կ'արգելու : Ըսել է կ'արգե-  
 լու որ եւ է արարած մը , թէ՛ անտե-  
 սանելի աշխարհքէն ըլլայ եւ թէ՛ տե-  
 սանելի աշխարհքէն , առարկայ ընել  
 այն բարձր պաշտման՝ զոր Աստուծոյ  
 միայն պարտական ենք :

Բայց իւր նկարագիրը կամ պատ-  
 կերն ընել արգելուած չէ սուրբ տեղի  
 մէջ : Որովհետեւ նոյն ինքն Աստուած ,  
 որ կուռս շինելն արգելեց , Մովսէսի հը-  
 րաման ըբաւ , որ ուխտի տապանակին  
 վրայ երկու ոսկեղէն քերովբէներ դը-

նէ , դէպ 'ի ո՛ր կողմ որ կհայէր ժո-  
 ղովրդեան դիրքը Աստուծոյ առջեւ  
 երկրպագած ատենը : Եւն . ին . 18 և  
 այլն : Նոյն ինքն Աստուած պղնձի օձ  
 շինել հրամայեց , որուն նաև հրաշալի զօ-  
 րութիւն տուաւ բժշկելու այն իսրայէ-  
 լացիներն՝ որ օձէ զարնուեցան : Թուոյ ,  
 իԱ . 8 . եւ այլն :

Ըսել է թէ սուրբ պատկերները և  
 զանոնք յարգանաց առարկայ ընելը  
 Աստուծոյ հրամանէն են . միայն կուռս  
 արդիւեց , այսինքն այն արարածական  
 պատկերները՝ որոնք փոխան Աստու-  
 ծոյ կըմբռնէին մարդիկ : Նոյն ինքն  
 տապանակն ալ , որուն վրայ Աստու-  
 ծոյ հրամանին համեմատ քերովբէներ  
 դրուած էին , ուրիշ բան չէր , այլ պատկեր  
 մը միայն , եւ ըստ Գաւթայ իբր սան-  
 դուղք մ' էր , որուն վրայ Աստուծոյ  
 ոտքը կեցած էր : Սուր . ճԼԱ , 7 =  
 այս պատկերը Աստուծամէ հրամայուած  
 երկրպագութեան առարկայն էր . Յե-  
 սու ասոր օրինակը տուաւ , ինչպիսի  
 առտու ընէ մինչև յերեկոյ տապանակին

առջեւ հանդերձ խորայէլի ծերերով :  
Յե... , է . 6 :

Արեւելեան եկեղեցին ճշդու-  
թեամբ կմեկնէ երկրորդ պատուիրա-  
նը . որովհետեւ նախ կ'արդելու հարկերը  
այսինքն այնպիսի պատկերները , որոնց  
իրբև աստուածներու պաշտումն կրն-  
ծայեն կուսապաշտները . երկրորդ կհը-  
րամայէ ունենալ այնպիսի բարեպաշ-  
տական նկարներ ` որոնք կ'իշխեցունեն  
մեզի զԱստուած , զսուրբ Աստուածա-  
ծինը , հրեշտակները եւ սուրբերը , եւ  
յարգել :

Այս յարդանքը ճշմարիտ պաշ-  
տումէն ասով կտարբերի , որ մէջը հա-  
ւատք , յոյս եւ սէր չկայ . այլ պարզ պա-  
տիւ մը տալ է անոնց ` զորոնք Աստու-  
ած բարձր աստիճանի մը հասուցած  
է , պատիւ մը ` որ վճուաբար Աստուծոյ  
կվերաբերի , որ երկրպագի ' ի սուրբս : Ուղ-  
ղափառական տեսութեամբ պատկեր-  
ները ուրիշ բան չեն , ինչպէս կրտս-  
տուրբ Գրիգոր մեծն , այլ միայն նշան-  
ներ , որ գրերու կամ բառերու պէս

կրօնական իրաց գաղափարները կու-  
տան , եւ նոր լոյս մը տալու հետ նոր  
զգացումներ կազդեն\* : Աստուած կըր-  
նայ ասոնց միջոցով իր զօրութիւնը ցը-  
ցունել , ինչպէս երբեմն պղնձի օձով ,  
զոր տնկեց Մովսէս անապատին մէջ .  
բայց այս զօրութիւնը պատկերին չէ ,  
զի ստիկա գործիք մ' է միայն Աստու-  
ծոյ ձեռաց մէջ : Այսպէս պէտք է իմա-  
նամք սրբոց Զնխարներուն համար ալ :

\* Այս իմաստը գեղեցիկ կըացատրէ մեր Ս .  
Ներսէս շնորհալի հայրապետը . « Զսրբոցն պատկերս  
պատուեմք եւ փառաւորեմք միջնորդ եւ բարեխօս առ  
Աստուած ունելով , սակայն զերկրպագութիւն Աս-  
տուծոյ ' ի ձեռն նոցա մատուցանեմք : Զի երկրպագելի  
միայն արարչին է պատկեր եւ ոչ արարածոյ : Քանզի  
պատկեր եւ անուն « բառ » միեւնոյն են , լոկ կերպա-  
րան եւ ստիկ ձայն նշանակեցելոյ իրեն ` ոմն աչաց եւ  
միւսն ականջաց տալով զգայութիւն եւ էութիւն » :  
Ընդհ . տիպ Պօլսոյ . յերես 87 :



## ԵՐՐՈՐԳ ՊԱՏՈՒԹԻԱՆ

« Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո՛  
 'ի վերայ անտեսց » :

Երեք կերպով կըլլայ Աստուծոյ այս պատուիրանին դէմ մեղանշելը . նախ՝ առանց հարկի և անպտուղ տեղը Աստուծոյ անունը յիշելով . երկրորդ՝ ստուծեան վկայ բերելով . երրորդ՝ հայհոյելով :

Քրիստոնեայն պարտաւոր է Աստուծոյ անունը յարգանք եւ ծանրակշիռ իրաւունքով մը բերանն առնուլ . զի սուրբ է այս անունը , եւ պէտք է յիշելնուս պէս խոր զգացումմը զգամք երկրպագութեան , ինչպէս որ պարտաւոր եմք իբրև մեր միակ արարչին , եւ որմէն կախեալ է ամէն վայրկեան մեր գոյութիւնը :

Աստուած ճշմարտութիւն է . ծանր թշնամանք ըրած կըլլամք իրեն , եթէ

մեր ստուծեան վկայ կանչեմք : Սուտ երգումներն աւելի եւս ծանր մեղք են , զի այսպիսի դէպքերու մէջ նոյն ինքն Աստուծոյ էութիւնը գործնական կերպով ուրացած կըլլամք :

Հայհոյելը Աստուծոյ դէմ ուղղակի յարձակումն է : Բաւական է ըսել՝ թէ խելացի մարդու մը , կամ որ աւելին է քրիստոնեայ եղողի մը անարժան բան է ազատտել բերանը որ և է գէշ խօսքերով :

## ՉՈՐՐՈՐԳ ՊԱՏՈՒԹԻԱՆ

« Յիշեալեր զօրն շաբաթուց սրբել զնա : Զվեց որ գործեսցես , և արտոցես զամենայն գգործ քո . յաւուրն եօթներորդի շաբաթ տեսան Աստուծոյ քո » :

Աստուած վեց աւուր մէջ ստեղծեց աշխարհս , եւ եօթներորդ օրը

հանդչեցաւ : Եօթներորդ օրը կամ շաբաթը սրբեց Աստուած իւր օրինակովն եւ ուղեւիլը : Վեց օրը կրնանք աշխատիլ : Եօթներորդ օրը պիտի նուիրեմք կրօնի :

Մովսիսական օրինաց մէջ՝ շաբթուն վերջին օրը կամ շաբաթը որոշուած էր հանդատեան օր ըլլալ . բայց նոր օրինաց մէջ պէտք է շաբաթին առաջին օրը ( կիրակէն ) սուրբ պահենք 'ի յիշատակ յարութեան Յիսուսի ֆրիստոսի . զի այն օր պսակուեցաւ փառօք մարդուն վրկութեան մեծ գործը :

Այս փոփոխումը առաքելոց ժամանակէն է . զի Գործք Առաքելոցին մէջ կկարդամք՝ Ի . 7 , թէ առաջին քրիստոնեայք առաքելոց հետ 'ի միասին կժողովէին շաբթին առաջին օրն՝ հաց բեկանելու՝ այսինքն պատարագի սուրբ խորհուրդը կատարելու համար : Այն ժամանակէն՝ այս օրը կերպով կը սուէր , որ կթարգմանի տերուական օր : Յայտ . Ա . 10 :

Հին օրինաց մէջ շաբաթէն զատ ուրիշ տօներ ալ հաստատեց Աստուած

'ի յիշատակ մեծամեծ անցից՝ յորս փառաւորապէս իւր կարողութիւնը ցցուց , եւ ապաշխարութեան օրեր՝ յորս կը բաւէր ժողովուրդն իւր գործած մեղքերը :


Ուղղափառ եկեղեցին հաւատարմութեամբ հետեւելով Աստուածային սահմանադրութեանց՝ ապաշխարութեան և տօնի օրեր որոշած ունի , զորոնք ամեն հաւատացեալք պարտաւոր են կիրակէին պէս սուրբ պահել :

Եկեղեցւոյ կիրակէ կամ տօնի օր որոշած օրերը պէտք է նախ՝ սովորական գործերէ դադրիլ . երկրորդ՝ կրօնական գործերու պարապիլ . եւ որովհետեւ պէտք է հանդիսութեան , ուստի աւելի հակառակ է Աստուծոյ և Եկեղեցւոյ օրինաց դատարկ կենալը՝ քան աշխատիլը :

Կիրակէն եւ տօնի օրերը պահելու համար , պէտք է նախ պատարագի ներկայ գտնուիլ , կամ որ նոյն է , հասարակաց աղօթքին կցորդել , եւ Աստուծոյ բանին քարոզութիւնը լսել :

երկրորդ՝ մասնաւորապէս աղօթքի և բարեպաշտական գրքեր մասնաւանդ սուրբ Գիրք կարգալու պարապիլ . երրորդ՝ ողորմութիւն կամ ուրիշ ընկեր սիրական գործեր ընել :

Ինչպէս որ Աստուծոյ և եկեղեցւոյն օրինաց հակառակ կգործէ՝ ով որ կիւրակէն կամ տօնի օրերը չորբերնոյնպէս կմեղանչէ՝ ով որ միւս մնացած օրերը պարապ կանցունէ . Ձի աշխատութիւնը պարտք է ամենուս ալ գործի որոշուած օրերուն մէջ , ինչպէս սրբելու յատկացած օրն ալ հանգչիլ պարտք է . Ըսել է թէ մարդ ո՛ր վիճակին մէջ որ գրուէր է Նախախնամութեան ձեռօք՝ պարտական անոր համեմատ աշխատելու և աշխատութիւնը սրբելու ամենօրեայ աղօթքով , և յամենայնի Աստուծոյ կամքը կատարելու :



### ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

« Պատուեա՛ զՏայր քօ և զմայր քօ » :

Ծնողաց տրուելու պատիւը՝ զանոնք սիրել , յարգել , հնազանդել , հիւանդութեան և ծերութեան ատեն օգնել , մեռնելէն յետոյ անոնց հողւոյն փրկութեան համար աղօթել և նոցա վերջին կամքերը ՚ի գործ դնելն է :

Աստուած օրինաց երկրորդ կարգը՝ որ առ ընկերն ունեցած պարտքերնիս կրովանդակէ , առ ծնողս ունեցած պարտքերնէս կսկսի . որպէս զի իմանամք՝ թէ մեր ազգատոհմը սրտերնուս մէջ առաջին տեղին ունի , և թէ առ Աստուած պարտքերնէս վերջը՝ առաջին պարտքերնիս առ մեր ընտանիքն է :

Տէրը հին օրինաց մէջ երկայնակեցութիւն խոստացաւ անոնց՝ որոնք

առ ծնողս պարտքերնին ամբողջ կկատարեն Ծն. Լէ. և զանցառուները մահու կպատժէր. Եւեց. ԻԱ. 16 :

Մոր օրինաց մէջ՝ սովորաբար թէ՛ վարձքն և թէ՛ պատիժն հողևորի դարձած է : Ուստի հողևոր մահու կամ դատապարտութեան արժանի են անոնք՝ որ առ ծնողս պարտքերնին չեն կատարեր . իսկ յաւիտենական և երջանիկ կենաց հատուցումն պիտի ընդունին՝ որոնք որ կկատարեն . զի Աստուած պիտի օրհնէ զիրենք և շնորհք տայ ուրիշ պարտքերնին ալ կատարելայ :



ՎԵՏԵՐՈՐԳ՝ ՊԱՏՈՒԻՄԱՆ

« Մի՛ սպանաներ » :

Ընդհանուր պատուիրան մ՛ է այս , և կ'արդելու թէ՛ ինքզինք և թէ՛ ուրիշը սպաննելն : Անշնորհաբանութիւն և Մարդասպանութիւն միապէս արգելուած են : Մարդասպանութիւն ըսելով՝ կհասկցուի սպաննելու գորական ուշադրութեամբ մէկուն կեանքը վերցունելը :

Մարդուս կենաց եւ մահու իրաւունքը միայն Աստուծոյ է : Բայց որովհետեւ կարգ հաստատած է իրը հիմն մարդկային ընկերութեան , նոյն ընկերութեան հիմնական օրէնքները հաստատուն մնալու համար՝ օրինաւոր իշխանութեանց տուած է այն իրաւունքը : Ուստի մարդասպանութիւն չէ գրել խապարտութիւնը այն յանցաւորաց , որ ընկերութիւնը անհանդիստ կընեն ի-

րենց չարութեամբը, ինչպէս, աւաղա-  
կութեամբ :

Մարդասպանութիւն չեն նաև այն  
սպանութիւններն, որ կ'ապտահին օրի-  
նաւոր պատճառներու, զոր օրինակ իւր  
անձը, հայրենիքը, ընտանիքը և ընդ-  
հանրապէս անիրաւ տեղն իւր վնասեալ  
ընկերը պաշտպանելու հարկերուն մէջ :  
Մանաւանդ թէ մարդասպանութիւն  
կըլլայ՝ երբոր թուլամորթութեամբ յօդ-  
նութիւն չենք դիմեր կեանքը վտան-  
գի մէջ եզող մէկուն . զի այն ատեն  
մարդասպանութեան անուղղակի առիթ  
մը տուած կըլլամք :

Եթէ օրինաւոր պաշտպանութեան  
դէպքերու մէջ յարձակողը կսպաննուի,  
սպանողը մարդասպան չսեպուիր . մա-  
նաւանդ թէ այս մահը արդար պատու-  
հասն է այն չարութեան՝ որուն դէմ  
սպանողը իրաւունք ունէր ինքզինք  
կամ զուրիշը պաշտպանելու :

Այնասպանութեանը կատարեալ մարդա-  
սպանութեան է, որովհետև ինչպէս ուրիշ-  
ներուն նոյնպէս և մեր կենաց վրայ

մենք իշխանութիւն չունինք . Աս-  
տուած տուաւ մեր կեանքը, և նա  
միայն կրնայ պունուլ մեզնէ :

Մենամարտութեանը հակառակ է Աս-  
տուծոյ այս պատուիրանին, զի իւր  
կեանքը դրաւ դնել և ընկերինը պա-  
հանջել է : Մենամարտութեան հե-  
տեանքն եզող մահը ճիշդ յանցաւոր  
սպանութիւնն է, և ընողը բուն մար-  
դասպան կամ աւաղակ կհամարուի :



ԵՅԹԵՆՔՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

« Մի շնոր » :

Ընտանեաց հիմնական օրէնքն է  
ամուսնութիւնը, և ընտանիքը բո-  
վանդակ ընկերականութեան հիմն է :  
Շնութիւնը ամուսնութեան հաւա-

տարմութիւնը կվտանդէ , ընտանիքի մը մէջ անկարգութեան և ապօրինաւորութեան սկզբունք մը կթելադրէ . և ո՛վ որ ընտանիք մը տակնուվրայ կընէ , նոյն խսկ ընդհանուր ընկերութեան վրայ յարձակումն ըրած կըլլայ : Ասոր համար է՞ որ Աստուած աս ալ իւր օրինաց կարգը դրած է , ո՛վ որ կ'ընայ թէ՛ Աստուծոյ օրինաց և թէ՛ ընկերականութեան հիմանց դէմ միանգամայն կմեղանչէ . այնպիսի մեղք մը գործած կըլլայ , որ հին օրինաց մէջ մահու կդատապարտուէր Աստուծոյ հրամանին համեմատ . Նոր օրինաց մէջ ընկերութենէ դուրս և անպատիւ կհամարուին . պատիժնին ալ , եթէ ճշմարտութեամբ չապաշխարեն , հանդերձելոյն կպահուի :

ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

« Մի գողանար » :

**Այս պատուիրանն ալ Աստուած կ'արգելու իւրացունել որ և է բան՝ որ ուրիշինն է :**

Ստացուածոց սեպհականութիւնը ընդհանուր մարդկային ընկերութեան հիմնական սկզբանց կարգէն է . ո՛վ որ այս սեպհականութեան օրինաց դէմ կմեղանչէ՝ յանցաւոր է :

**Այս պատուիրանին դէմ մեղք կը համարուի ոչ միայն պարզապէս դողութիւն ըստած բանը , այլ և իւրացունելու համար գործածուած նենդութիւնները , առևտուրի մէջ աւելի կամ պակաս չափերը , պարտք չվճարելը , ուրիշին ծառայութեան վարձքը կրտրելը , հասարակաց նեղութենէն պատեն առնելը՝ ձեռքն եղած հարկա-**

ութ վաճառքին գինը՝ չափէն աւելի բարձրցընելը, շուկային մէջ ո՛ր եւ իցէ բանի մը արժանքն աւելցունելու կամ իջեցունելու համար գործածուած խարդախութիւններն, եւ ուրիշներուն վնասով չարութեամբ ձեռք բերուած շահերը :

Վերջապէս, ամեն ո՛ր եւ է կերպ որով ընկերին սեփհականութեան վնաս հասցունել կրլայ, կ'արդելու Աստուծոյ օրէնքը :



### ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

« Մի՛ սուտ վկայութիւն վկայեր  
զընկերէ բուժմէ » :

Ամեն մարդ իւր պատիւն ունի՞ր  
այս պատուոյն դէմ՝ մեղանչել կրլայ՞

երբոր ատեաններու առջեւ, հակառակ մեր ընկերին, սուտ վկայութիւն կ'վկայեմք : Երբոր դիտմամբ անիրաւ գատապարտութեան կ'մատնեմք : Երբոր անիրաւ տեղը կտրանջամք : Երբոր առանց ՚ի իղճէ պարտաւորելոյ մէկուն համար գէշ կըսեմք կամ կ'խորհիմք : Ի խղճէ պարտաւորութիւն է գէշ ըսել կամ խորհիլ այնպիսի մարդոց վրայ՝ որոնք ընկերութեան դէմ յանցաւոր են, երբոր աս ալ հարկաւոր է արդարութեան սիրոյն համար : Այս ատեն ընկերական պարտք մը կատարած կրլլամք, եւ յանցաւորն ալ՝ որ յարձակեցաւ ընկերութեան դէմ, կ'կորսնցունէ բոլոր իր պատուոյ իրաւունքները, զոր վաղուց ինք իւր յանցանքովը կորսընցուցած էր :



## ՏԱՄՆԵՐՈՐԳ ՊԵՏՈՒԻՐԱՆ

« Մի՛ ցանկանար տան ընկերիքս ,  
 և մի՛ անդոյ նորա . մի՛ ցանկանար  
 կնոջ ընկերի և մի՛ ծառայի նո-  
 րա , և մի՛ աղախնոյ նորա , և մի՛  
 եզին նորա և մի՛ իշոյ նորա , և մի՛  
 ամենայնի զի՛նչ ընկերիքս իցե » :


Յանկանալն՝ անիրաւ միջոցներով ըն-  
 կերին ունեցածը ձեռք անցունելու  
 փափաքելն է :

Ուստի չար խորհուրդը չար գոր-  
 ծերու հաւասար արդիւլեալ է . մեղքը  
 միայն ներքին ըլլալով՝ պակաս կամ  
 թեթեւ մեղք եղած չըլլար : Ամէն խոր-  
 հուրդ և ամէն զգացմունք՝ որոնց  
 նպատակը արդիւլուած առարկայի մը  
 վրայն է՝ կաղատտեն մեր միտքը և հո-  
 դին , և յանցաւոր : Կընեն Աստուծոյ  
 առջև :

Պէտք չէ բնաւ՝ որ մեր ընկերին  
 կնոջը ցանկամք , այսինքն , արդիւլուած

է մեզի շնութեան զգացմունքներով  
 կամ խորհուրդներով զբաղիլը :

Պէտք չէ՝ որ մեր ընկերին ստաց-  
 ուածոց աչք տնկեմք , այսինքն մեր  
 ընկերին ունեցածներէն բան մը անի-  
 րաւ ճամբայներով ձեռք անցունելու  
 փափաք ունենալու չեմք :



Աստուծոյ օրէնաց լրոյ + բխարանեաց ե-  
 չեղեցեաց միջոցով արբեբարանները :

Հուովմէական եկեղեցին Աստուծոյ  
 տուած տանն պատուիրաններն ալ կըն-  
 դունի , բայց իր դասաւորութեան ձեւը  
 Արեւելեան եկեղեցւոյ ընդունածէն  
 տարբեր է : Պատուիրաններուն առջի-  
 երկուքը , որոց մէկը ճշմարիտ պաշ-  
 տումը կառաջարկէ , և միւսը սուաը  
 կամ կռապաշտութիւնը կ'արդելու , մէկ  
 ըրած է . և տասներորդը երկուքի



բաժնած է , որոյ մէկը ընկերին կ'նոջ՝  
եւ միւսը ստացուածոց ցանկալը կ'ար-  
դելու :

Այս կերպով՝ տասն պատուիրանաց  
եթէք միայն Աստուծոյ , և եթէ՛ն ընկերին  
յատկացուցած է :

Հոովմէականաց այս դասաւորու-  
թիւնը բոլորովին շինծու է , և հիմ մը  
չկայ տեսներու՝ թէ ի՛նչ իրաւունքով  
տասներորդ պատուիրանը երկուքի  
բաժներ են : Այս օրինաց մէջ , շրո  
պատուիրանը առ Աստուած պարտ-  
քերնիս կրովանդակէ , և վեցը առ  
ընկերն ունեցածնիս :

Արևելեան կաթուղիկէ եկեղեցին  
այսպէսաստուծովիւնը այնպէս կ'յարդէ՝  
ինչպէս որ արուած էր Մովսիսի ձեռ-  
քը Աստուծոյ կողմէն ,

Կրնանք , ընդհանուր իմաստով մը  
ըսել՝ թէ Հոովմի եկեղեցւոյն Բարոյա-  
կան վարդապետութիւնը ( ՚ի մասին մեկնու-  
թեան օրինաց ) համաձայն է Արևել-  
եան ուղղափառ եկեղեցւոյն : Մակայն  
աս ալ գիտնալ պէտք է՝ որ խորհր-

դոց կատարման ապօրինաւոր նորաձե-  
ւութեանցն և հաւատքի մէջ ունեցած  
խտորմանցն համար՝ պաշտման դէմ  
մեղանշած է , որ նոյն է ըսել , առաջին  
պատուիրանին դէմ : Մեղանշած է մա-  
նաւանդ Անբարձր Յղութեան նոր վարդա-  
պետութեամբ , որուն հետեանքն է  
աւրբ կոյսը աստուածացուցանել \* .  
իւր երևելի աստուածաբաններէն շատե-  
րը այս հետևութիւնը հանած են՝ որուն  
թերեւս Պապն և եպիսկոպոսները լու-  
րեայն հաւանութիւն տուին :

Այս սխալ վարդապետութեան  
մէկ ուրիշ հետեանքն ալ աս է՝ որ առ-  
աւրբ Աստուածածինն ուղղելի պաշա-  
ման ընտրութիւնը փոխած և աստուածա-

\* Մեր եկեղեցին , ամէն տարի՝ զհետմեր  
9ին , աւրբ Աստուածածնի Յղութեան տօն կրկատարե-  
բայց ոչ ընաւ այն հաւատքով թէ յղութիւնն անարտա-  
էր , այսինքն առանց սկզբնական մեղաց . այլ զի հիմար-  
կութիւնն էր այն անձնաւոր տաճարին , յորում անտա-  
նելին ընակեցաւ : Մեր եկեղեցւոյ դրեանց մէջ « երա-  
նելի յղութիւն » անուանեալ է , և ոչ անարտա .  
զի աւրբ կոյսն ալ « մարդ » եւ « ծնունդ փառի » էր ,  
ինչպէս կրտէ Իգնատիոս մեկնիչ և գիտնական վարդա-  
պետ մեր . երանելի էր յղութիւն , զի սրանչէրք էր :

կան երկրպագութեան կամ բուն պաշտման հետ շփոթած են : Պարզ յօգնութեան կանխ մը չէ այս պաշտումն , ըստ արդի վարդապետութեան Հռովմայ . այլ բուն սուրբ , այսինքն այն պաշտումը որ հիմնուած է հասարակ վրայ թէ սուրբ կոյսը նոյն ինքն Աստուծոյ վրայ ազդեցութիւն ունի . յասու թէ անոր միջնորդութիւնը Յիսուսի Գրիստոսի միջնորդութեան ըստ ամենայնի հաւասար է . եւ «երեւ» զինքը իբրև մեր կրօնական դործօնէութեան անմիջական նպատակը : Հաւատալն անգամ դժուար է թէ սուրբ Աստուածածնի մասին մինչև ի՞նչ աստիճան անխելք և պժգալի քաջքուքներու մէջ թաւալեցան Հռովմի եկեղեցւոյն մատենագիրներն : Այս մասին խիստ դայթակղական դործերն ալ երկիւղչըրին իբր ներշնչութիւն համարելու , ինչպէս են Մարիամ կրետացւոյն և քոյր Էմմէրիքի դործերն , որոնց ուժը Խորասիւ Աստուծոյն վրայ հիմնուած է , և հիւանդ խելագատակի հակասական և այլանդակ ցնորմունքներով Խորասիւ են :

Հռովմէական եկեղեցին , առանց բացառութեան , բոլոր պատուիրանաց մէջ մոլորութիւն ունեցած կրնայ համարուիլ այնպիսի խտրներ սահմանելու , որովք Կաթոլիկներն դրական եւ ծանուցեալ սահմաններն անգամ կշիռութեն : կրնայ ըսուիլ թէ չկայ բնաբարոյական պարտաւորութիւն մը , որուն առջևէն չկրնայ խուսափել մէկն այս ճիղտ իթական խորամանկութեանց խտրական միջոցներով :

Գաղափար մը տալու համար օրինակ մը դնենք . ենթագրքենք մարդ մը , որ իւր դրացւոյն դէմ ատելութիւն ունենալով , կուղէ անոր անասունը սպաննել , բայց սխարմամբ միւս դրացւոյն անասունը կսպաննէ . պարտաւոր է այս մարդը վրասն հատուցանելու : — Չէ . կրսէ . մտատեան : — Ինչո՞ւ : — Որովհետեւ դիտաւորութեան մէջ այն կենդանին սպաննել չկար զոր իրօք սպանեց : Հռովմի եկեղեցւոյն մէջ սրբազան Կաթոլիկները լեռնակարկառ բարձրութեամբ դիզուած են , որոնք խղճի և դիպաց

հանդէս պարագայները որոշելու , և հետևապէս ամէն բարոյական սկզբունք և զգացմունք խեղդելու համար միայն հեղինակուած են :

Բողոքականք չարաչար կմեկնեն առաջին պատուիրանը, ըսելով՝ թէ սրբ քոյ երկրորդական պաշտում մը չենք կրնար տալ, որ ընկալուին յոգնութիւնն ինչէր է և ոչ ուրիշ բան : Բուն ա ղօթքին հետ կշիռութեն յօգնութիւն կանչելն , որ խիստապէս իրարմէ շատ տարբեր բաներ են : Աղօթքով հասարոյ , յասարոյ և հերոյ գործողութիւն կրնեմք , միևսով ալ սուրբ Աստուածածնի , հըրեշտակաց եւ սրբոց բարեխօսութիւնը կինդրենք : Մեծարեալ չենք ընելը (բառին բացարձակ նշանակութեամբը), զի մի է միջնորդ՝ որ է Յիսուս Քրիստոս : Բայց անոնց միջամտութիւնը կինդըրենք՝ որպէս զի մեզ մեծարեալ արդեամբը Աստուծմէ մեղի հարկաւոր եղած շնորհքն ընդունելիք : Անգղիականք կը պատուեն սուրբերը : Բայց յօգնութիւն չեն կանչել , որովհետև այս մասին բողոք

քականաց մտորութեան մէջ ընկած են :

Անգղիականք եւ բողոքականք երկրորդ պատուիրանն ալ՝ որ կուսպաշտութիւնը կարգելու , չարաչար կմեկնեն , ըսելով՝ թէ ամեն պատկեր որ կյարգուի՝ կուռք կըլլայ : Բուն խիսուրբ գրքին կհակառակին եւ չեն համոզուիր կուրաբար՝ թէ Աստուած պատկերները իբրեւ աստուածներ, այսինքն կուռքեր, պաշտելը միայն արգելեց :

Ասոնք նմանապէս կմեղանչեն սուրբ Գրոց դէմ՝, ըսելով՝ թէ սրբոցն յխարները յարգել պէտք չէ , զի սրբոց մարմինները թէ՛ չին և թէ՛ Նոր կտակարանի վարդապետութեանց մէջ միշտ յարգութեան առարկայ համարուած են իբրև սրբազանեալք ՚ի Հոգւոյն սրբոյ , եւ գործիք սուրբ հոգւոց :

Իսկ Աստուծոյ օրինաց բարոյական մեկնութեանց դալով , անգղիականք և բողոքականք ճիշդ և բնական իմաստներով կհասկնան , ըսել կուղենք , հըրուովմէականաց պէս բարոյականութիւնը տապալող մտածանքներ չունին :

Գ .

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ  
ՕՐԻՆԱՅ ԱՍՏՈՒԹՈՅ

**Ա.** Ետարանական օրէնքը , զոր Յիսուս Քրիստոս Գալիլեայ լեռներէն մէկուն վրայ հրատարակեց , հակառակ չէ երբայական օրինաց ` որ Մովսիսի ձեռօք Սինա լեռան վրայ հրատարակուեցաւ . երկուքն ալ մի և նոյն աստուածային ազբերէ են . Միայն թէ ` աւետարանականը առաջնոյն մեկնութիւնն եւ անոր աւելի կատարեալն է . Համառօտութիւնն է բովանդակ քրիստոնէական բարոյականին , ինչպէս Սինայ օրէնքը համառօտութիւնն էր բոլոր մովսիսական բարոյականին .

**Յիսուս Քրիստոս** իւր օրէնքը ինն յօդուածով հրատարակեց , որոնք երևում են իր կրօնին , յօդուածներուն սկիզ

բը երանէ բառն ըլլալուն համար : Փրկիչը այս բառով կսկսի իւր օրէնքը , որպէս զի մեզ սորվեցունէ ` թէ ճշմարիտ երանութիւնը այս աշխարհիս մէջ առաքինութիւն գործելու վրայ կը կայանայ . և հանդերձեալ աշխարհի մէջ ալ առաքինութիւն գործելով միայն բուն երանութիւնը ձեռք պիտի կրնանք բերել :

**Ա.** հաւաստի ինն երանութիւնները .

**Ա .** Երանի՛ ազքատաց հողուով , զի նոցա է արքայութիւնն երկնից :

**Բ .** Երանի՛ հեզոց , զի նոքա ժառանգեցեն շերկիր :

**Գ .** Երանի՛ սգաւորաց , զի նոքա մխիթարեցին :

**Դ .** Երանի՛ որքազցեալ եւ ծաբաւի իցեն արդարութեան , զի նոքա յազեցին :

**Ե .** Երանի՛ ողորմածաց , զի նոքա զողորմութիւն գացեն :

**Զ .** Երանի՛ այնոցիկ , որ սուրբ են սրտիւք , զի նոքա զլստուած տեսցեն :

Է. Երանի՛ խաղաղարարաց, զինո՞քա՞ որդեք Աստուծոյ կոչեացին :

Ը. Երանի՛ որք հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւնն երկնից :

Թ. Երանի՛ է ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, եւ ապիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ՝ :

Յնծացէ՛ք եւ ուրախ լերո՛ւք, զի վարձք ձեր բազում են յերկինս . զի այսպէս հալածեցին զմարդարէս, որ յառաջ քան զձեզ էին : Մատթ. Ե. 3—12 :



### ԱՌԱՋԻՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

« Երանի՛ աղքատաց հոգևով, զի նոցա է արքայութիւնն երկնից » :

Հրատարման և ինքնուրացութեան հոգին գլխաւոր առաքինութիւնն է

քրիստոնէին, որուն պարտաւորութիւնն է մի՛ բնաւ իր գոյութեան նպատակ համարել աշխարհք և անոր բարիքները, եւ ո՛չ ալ ինք զինք համարել այն վախճանը՝ որուն համար ստեղծուած ըլլան աշխարհք և իւր բարութիւնները : Ինքնուրացութեան հոգին ներհակն է անհոգութեան, որ ամէնէն աւելի հակաքրիստոնէայ մոլութիւնն է : Անձնասէրն ինք զինք կմեծցունէ, եւ իւր խելքին վրայ ինք կզարմանայ, հպարտութիւն է աս ալ . կկարծէ՝ թէ ամէն բան իւր ախորժակն ու կրքերը գոհ ընելու համար եղած են, ասկէց յառաջ կուգայ աշխարհի բարիքներուն վրայ անկարգ սիրահարութիւնը, որ վատ ցածութեան կիջեցունէ մարդս, եւ կծառայեցունէ այն ամէն բաներուն՝ որոնց մէջ կկարծէ գտնել իւր երջանկութիւնը, Այս վատ ցածութեանէն կամ գերութեանէն ուրիշ գէշ վիճակ մը կհետևի, որ մարդոց համար ուրիշ բան չէ՝ ալ միայն ազրիւր ցաւոց, բնական և բարոյական խղճու-

Թեանց՝ կամ որ նոյն է, իշխանութեան և

Քրիստոնեայն, աղքատութեան հոգևով, բոլորովին ներհակ հետեալ կանութեան մը կհասնի: Եթէ Աստուած իրեն հարստութիւններ տայ, կգործածէ զանոնք ոչ իրը անձնա սիրութեան վախճան՝ և անոնցմով երջանիկ յլլալու համար, այլ իբրեւ ստանդը, որուն յանձն եղած է՝ ընկերսիրաբար անտեսութիւնը: Եթէ աշխարհի բարիքներէն զրկուի՝ սիրաբերկրաւոր բարիքներէն գեր ՚ի վերոյ կբարձրացունէ, եւ աչքը կլիբրցունէ գէպ ՚ի այն լաւագոյն աշխարհը, որուն հասնելու այնչափ ապահով է՝ որչափ աշխարհի հետ զինքը թերեւս կապող արգելքներէն ազատ է: Քրիստոնեայն, թէ՛ հարուստ ըլլայ թէ՛ աղքատ, պէտք չէ կապուի աշխարհի եւ անոր բարիքներուն: Այս թէութեամբ միայն կըրնայ, դեռ այս աշխարհիս մէջ ըլլալով, երկնց արտոյնութեանը ժառանգել: Ի՞նչ է այս արքայութիւնն, ս՞չ ապաքէն ճըշմարտութիւն եւ շնորհք: Կարելի բան

է՞ որ այս բարիքները ձեռք բերեմք, եթէ մեր խելքին կարողութիւնները հաւատովք Աստուծոյ ընծայելու տեղ, պաշտեմք, եւ աշխարհի բարիքներն ալ մեր սրբութեանն ու փրկութեանն համար գործածելու տեղ, սրտերնիս անոնց կապեմք:

Աշխարհի հոգին, ըստ Յովհաննու առաքելոյ Ա. Թոմ. Բ. 16, է. Յանկութիւն մարմնոյ, ցանկութիւն աչաց, եւ հպարտութիւն աստի կենաց: Քրիստոնէութեան հոգին բոլորովին ներհակն է, այսինքն մերժումն մարմնաւոր անկարգ հեշտութեաց, աչքի միջոցաւ որտերնիս գերող ժամանակաւոր հարստութեանց, աշխարհի գործողութեանց մէջ տեսնուած հպարտութեան, որ նոյն ինքն է անձին երկրպագութեան կամ անձնասիրութեան:

Առաջին երանութեամբ, Յիսուս Քրիստոս մէկ բառով իւր բուն աշակերտին էական յատկութիւնը կորոշէ, եւ շեշտէ կապուողներէն բացորոշ սահմանի մը մէջ կդնէ: Աշխարհասէրն

ևն զինս միայն կտեսնէ իբր նպատակ  
 ամենայնի , և ամէն բան իբր երջանկու-  
 թեան ճշնոյ գործածել ուղեով՝ ամէն  
 բանէ կնուածուի և թշուառ կըլայ :  
 Գրիստոնեայն , ընդհակառակն , շտես-  
 ներ աշխարհի վրայ բան մը՝ որուն կապէ  
 սիրտն ու միտքը . աչքը միշտ հանդեր-  
 ձեալ աշխարհի վրայ կտնկէ , ուր կա-  
 տարեւապէս երջանիկ պիտի ըլլայ , և  
 բոլոր աշխարհի բաներն ալ , ինչ կար-  
 գի ալ ըլլան , ուրիշ բանի համար չը-  
 գործածեր , այլ միայն իբրև ճշնոյ՝  
 որովք իւր վախճանին կհասնի , որուն  
 համար ստեղծուեր է , այն է երկնի :  
 Ասոր համար է՝ որ վերկիչն հոգի ազա-  
 տան կանուանէ հրաժարման կամ  
 ինքնուրացութեան հոգին : Հարուստ  
 եւ աղքատ միապէս կրնան այս հոգ-  
 ւով վարուիլ : Հարուստ և մեծատուն  
 մարդ մը կրնայ ազատ ըլլալ իւր զգաց-  
 մունքովը , երբ մտածէ՝ թէ իւր հարս-  
 տութիւնները և վայելած փառքերը  
 միջոցներ են՝ զորս շնախանութիւնը  
 իրեն տուեր է սէր և արդարութիւն

գործելու համար : Ընդհակառակն աչ-  
 խարհի բարիքներէն զուրկ մարդ մ՝  
 ալ կրնայ ազահ եւ հպարտ ըլլալ ան-  
 կարգ բաղձանքներով , և հարստու-  
 թիւններն՝ որոնց կիսաիւրի՝ աղբիւր  
 երջանկութեան համարելով : Ըսել է՝  
 թէ հարուստ վիճակի մէջ ալ աղքա-  
 տութեան օրհնութիւնը կամ երանու-  
 թիւնը կրնանք վայելել , և ընդհակա-  
 ռակն աղքատ ու կարօտեալ վիճակի  
 մէջ անէծք : Յիսուս Գրիստոս ոչ թէ  
 հարուստը կղրկէ , աղքատին երանի կու-  
 տայ , անոր համար որ՝ աշխարհի հարստու-  
 թիւններէն զուրկ մնացած է : Հարուստ  
 եւ աղքատ հաւասար են անոր առջեւ  
 միայն թէ աղքատութեան և կամաւոր  
 հրաժարման հոգին ունենան . ճշմարտա-  
 պէս ազատ Գրիստոնեայն ոչ թէ՛ կարօտ մնա-  
 ցողն է , այլ սիրտը աշխարհի բարեաց  
 չկապողը :

Աղքատը , կըսէ սուրբ Յովհան Ոս-  
 կերեբան , ճշմարտ հոգի . Բ. Յօդ . 5 , չէ թէ  
 այն է՝ որ բան մը չունի , բայց շատերու  
 կբաղձայ : Հարուստը չէ թէ այն է՝ որ շատ

ունի և իր բաղձանքը կշարխաւորէ: Չամբ  
քը , կամ ապրելուն եղանակն է , որ  
հարուստ կամ աղքատ կշինէ՝ և ոչ թէ  
չքաւորութիւնը կամ լիութիւնը ր :

Երանելին Օգոստինոս ալնոյն վար-  
դապետութիւնը կաւանդէ , « Սորվե-  
ցէ՛ք , կըսէ , աղտոտ եւ զտոտ ըլլալ , թէ՛  
շատ ու քիչ ունեցողներդ եւ թէ՛ բը-  
նաւ չունեցողներդ : Ծատ հպարտ աղ-  
քատներ ՚ի յետին չքաւորութեան , եւ  
շատ խոնարհ հարուստներ ՚ի բազում  
առատութեան : Աստուած հախտակ է  
մեքարդասանից , կուզեն ծիրանիներ հագ-  
նին՝ կուզեն ցնցոտիներ . եւ որոյ շնորհս  
խոնարհաց թէ՛ շատ հարստութիւններ ու-  
նենան , եւ թէ՛ բնաւ չունենան : Աս-  
տուած մարդուն սիրտը կնայի կըննէ  
ու կխորձէ : Գուք չէք տեսներ անոր  
գործածած կշիւը , գիտցած ըլլաք՝  
որ ամենուդ խորհուրդներն ալ այն կըշ-  
ուէն կանցնին » :

Եկեղեցոյ բոլոր վարդապետներն  
ալ , առանց բացառութեան , այս ի-  
մաստով մեկնած են առաջին երանու-

թիւնը : Աւետարանն ինքնին լրապէս  
այս վարդապետութեան մեկնութիւնն  
է :

Քրիստոնեայն , հրաժարման և ինք-  
նուրացութեան հոգւով , Աստուծոյ ա-  
րարչական իւր ներսը կունենայ . զի անոր  
ամէն խորհրդոց և բաղձանաց վրայ  
Աստուած հետեւորէ . ասով՝ անոր մտաց  
եւ սրտին մէջ այնպիսի աստուածային  
ներդաշնակութիւն մը կգոյանայ , որ  
ճաշակ մը կուտայ հանդերձեալ և ան-  
մահ կենաց մէջ վայելելիք երջանկու-  
թեան :

Հանդերձ այսու ամենայնիւ , թէ-  
պէտև ո՛վ որ ուզէ կրնայ «դաս» ըլլալ իւր  
հարստութիւններովը . սակայն աս ալ  
ճշմարիտ է՝ որ հարստութիւնները շատ  
անգամ փորձանք են , կկապեն մեր  
միտքը աշխարհիս բարիքներուն եւ  
կորսնցունել կուտան աղքատութեան  
հոգին : Ասոր համար Յիսուս ֆրիստոս  
ըսաւ , թէ աւելի դիւրին է ասղան  
ծակէն հաստ պարանին անցնիլը , քան  
մեծատան երկնից արքայութիւն մտ-




նելն . Մատթ . ԺԹ . 24 : Ըսել է թէ բոլոր  
 ունեցածներէն մերկանալովն անդամ  
 տակաւին դժուարութիւն կ'մնայ \* :  
 Ասոր համար է որ վրկիչն իրմէն կ'որո  
 ջելուի՝ ան կանոն ուղղող հարուստին ըսաւ .  
 « Եթէ կամիս կատարեալ լինել , ե'րթ ,  
 վաճառեալ զինչս քո և տուր աղքատաց ,  
 եւ ունիցիս դանձս յերկինս , եւ ե'կ  
 զկնի իմ » : Մատթ . ԺԹ . 21 : Բայց այս  
 կանոնը անոնց համար է՝ զորս աս  
 տուած բացառիկ վիճակի մը կկանչէ ,  
 եւ ոչ թէ ընդհանրապէս բոլորին վրայ  
 դրուած պարտաւորութիւն է :

Առաջին երանութեան տուած  
 կանոնին ներհակ մոլութիւնն է Անձնա  
 սիրութիւնը , որ կ'ծագի 'ի հպարտութենէ ,

\* Քիտնայ պէտք է որ մեր լեզուին մէջ « մա  
 լուի » ըստը ուղտի նազ ալ կ'ըստը մանուկ . Ըսյց  
 մենք « պարան » թարգմանեցինք , դիտնալով որ ուրիշ լեզ  
 ուաց թարգմանութիւներու սմանց մէջ ալ նոյն իմաս  
 տով թարգմանուած է : Թէեւ ինչ որ երկու նշանակութենէ  
 ո'րն ալ հասկնանք այլաբանութիւնը նոյն է , սակայն  
 աւելի ընական է « պարան » հասկնալը . որովհետեւ  
 աստղան ծակին անցնելու համար չափէն աւելի բարա  
 կութեան պէտք ունի պարանը , ինչպէս որ հարուստը  
 արքայութիւն մտնելու , համար բաւականէն աւելի կոյուղ  
 տուելու : Մ . Թ .

այսինքն ինքիւր վրայ ունեցած անկարգ  
 սէրէն : Այս մոլութիւնը կըրդէ՝ որ  
 ահա քան մեզի սեփհականենք , ամէն  
 բանի ծայր և նպատակ մենք զմեզ կար  
 ծենք , և ուրիշներէն գեր 'ի վերոյ  
 մէկը համարեմք :



ԵՐԿՐՈՐԻ ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

« Երանի՛ հեղոց , զի նոքա ժա  
 սանգեցեն զերկեր » :

Հեղութիւնը առաքինութիւն մ'է ,  
 որ մեր հոգին 'ի խաղաղութեան կպա  
 հէ թէ՛ երջանիկ եւ թէ՛ ապերջանիկ  
 արկածներու մէջ , որոց կհանդարինք  
 մեր երկրաւոր կենաց ժամանակը :

Չթողուր՝ որ երջանկութեանց մէջ  
 անձնատուր ըլլանք վայելչութեանց  
 այնչափ՝ մինչեւ մեր յաւիտենական

վախճանը մուսանք. ապերջանկութեան մէջ ալ տրանջամք՝ զմեզ փորձող Նախախնամութեան դէմ: Երանելին Օգոստինոս, Գորոշ 93, Յոյ, 2, այսպէս կ'մեկնէ փրկչին այս վճիռը:

« Աւարովք յինէն, ըսաւ Գրիստոս, զի հեղեմ և խոնարհ սրտիւ »: Մարտի, ԺԱ, 20. Այս խօսքը մեր փրկչին երկրաւոր կենաց համառօտնկարագիրն է. իւր բոլոր գործոց մէջ հոգւոյ խաղաղութեան կատարեալ օրինակը տուած է իբր էական յատկութիւնք քրիստոնէի:

Այս վիճակի մէջ եղողն իւր խօսից եւ գործոց մէջ կցուցնէ հեղութիւնը. « Առաքիլնի մարգոսն լեղուն, կըսէ հին կտակարանի բարեպաշտ գրչաց մէկը (Մերո, 2. 5.), քաղցրութեան մէջ առատ կըլլայ »: Եսայի յառաջուց Մեսիային ստորագրութիւնն ընելով, կըսէր. « Մի՛ տղաղակեացէ և մի՛ վիճեացի, և մի՛ ոք լուիցէ արտաքոյ դբարբառ նորա, զեղեգն շաղխտեալ մի՛ բեկցէ և ըզպատրոյկն առկայծեալ մի՛

չիջուացէ »: Եսայի, ԽԲ, 2: Մարտի, ԺԲ. 18: « Գրիստոս, կըսէ Ս. Պետրոս առաւելալն, Բ. Թորոշ, Բ, 21 և 22, վասն ձեր մեռաւ, ձեզ եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք հետոց նորա: Որ ոչն արաք մեղս, և ոչ գտաւ նենդութիւն ՚ի բերան նորա, որ բամբասեալ՝ եւ ոչ փոխարէն բամբասէր, չարչարեալ՝ և ոչ պահէր սպառնալիս, բայց իրաւամբն մատնէր դատաւորին »:

Հեղութեամբ հոգւոյ երկրաւոր բաներէն վեր կըարձրանամք, կենուածեմք, կիչխեմք և չեմք թողուր ոք անոնք մեղի տիրեն: Ասոր համար ըսաւ Գրիստոս, թէ հեղբրը երկեր ուրիշ ծառայէն և երջանի պիտի ըլլան: Ապագէն, եթէ աշխարհի դիպուածները մեր հոգւոյն խաղաղութիւնը ձեռքերնու հանեն, բիւրաւոր տագնապներու մէջ կձգեն, և այնպէս կ'պաշարեն՝ որ բոլոր մտածմունքնիս, կամ որ նոյն է ըսել՝ գոյութիւննիս կունչացունեն:

Երկը ըսելով՝ կենդանեաց երկեր պէտք է հասկնանք: Մաղմուսերդուն այս ա

նունը կուտայ երկնից , ուր երջանիկ պիտի ըլլամք 'ի փոխարէն առաքինութեան :

Հեղութեան ներհակ մտութիւնն է բարկութիւնը , որով Աստուծոյ եւ մեր ընկերին դէմ կղաւնամք , երբ իրաւունք կարծած բաներնիս ձեռք չեմք բերեր : Անտարակոյս , օրինաւոր իրաւունքնիս պէտք է պաշտպանենք յանիւրաւի յափշտակողներուն դէմ . սակայն հեղութիւնը մեզի կանոն կուտայ հրաժարիլ իրաւունքէ ' եթէ պահանջելու ատեն անտեղութեանց դիմելու պիտի ըլլամք , չպահել բնաւ ոխ , թշնամութիւն եւ վրէժինդրութիւն սրտերնուս մէջ :



ԵՐՐՈՐԴ ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

« Երանի՛ սգաւորաց զէ նորա մը-  
խիթարեացն » :

Յիսուս քրիստոս ոչ միայն խաղաղութիւն հրամայեց վշտաց և հակառակութեանց մէջ , այլ և ցաւերն և արտուունքներն առաքինութեան ծայրը հանեց :

Սկզբնական անկումէն 'ի վեր մարդկութեան մեծազոյն մասին բաժինն եղած է ցաւը : փիլիսոփայութիւնը բիւրաղգի անպտուղ դրութիւններով փորձ ըրաւ այս ցաւը ջնջելու , բայց չկրցաւ և չպիտի կրնայայլ ևս մինչև որ մարդկութեան բնութիւնը չփոխէ :

Փրկչին մեզի սորվեցուցածն աղէկ է՝ որով կրնանք յորբազործել արտսունքնիս և գործածել յօգուտ մեր երջանկութեան :

Ուստի պէտք է ապրինք ներքին «ւշադրութեամբ», որուն վրայ շատ տեղ լսուած է սուրբ Գրոց մէջ . և պէտք է գիտնանք՝ որ այս կենաց շարիքները միջոցներ են զմեզ աշխարհէ արձրկելու և յաւիտենական մխիթարութեանց բաղձալու : Աչքերէ վաղած արտաքին արտասունքները չեն՝ որ մխիթարութեան պատճառ համարելու եմք, այլ այն զգացումը՝ որ արտասուաց աղբիւրն է, այսինքն ապաշխարութեան և զղջման շարժեալ սիրտը :

Ինչպէս որ իրապէս աղքատ մը հարստանալու կիրք կունենայ, կամ հարուստ մը աղքատութեան հոգի կունենայ . այնպէս ալ աշխարհի ցաւերու տակ ճնշուած հոգիներ կրնան ըլլալ, որ մէկ կողմանէ ալ սաստիկ բաղձանք մը կունենան աշխարհային ուրախութեանց . ընդհակառակն հոգիներ կրնան ըլլալ՝ որ հեշտալի վիճակներու մէջ սրտերնին հեշտութեանց չեն կապեր :

Այս երրորդ երանութեան, ինչպէս միւսներուն մէջ ալ, խնդիրը սրբ-

տին զգացման վրայ է : Ուստի ֆրիատոս ցիտուս միայն սորվեցունել ուղած է՝ թէ հեշտալի վիճակները, հարստութեանց պէս, կրնան արգելք ըլլալ քրիստոնէական կատարելութեանց, և թէ աւելի դժուարին է հեշտութեանց մէջ փրկութիւն ձեռք բերելը, քան վշտալի կենաց մէջ : Որովհետեւ սիրտը աւելի դիւրաւ կրաժնուի աշխարհքէն, եթէ հեշտութիւններ վրայ գալով չսափանեն երկնաւորները, եւ աշխարհս իբր անդի երանութեան չներկայացունեն :

Գեռ աշխարհի մէջ ըլլալով, ապաշխարող եւ զղջացող քրիստոնեայն ապահով կրնայ ըլլալ այն շարիքներէն՝ զորոնք մարդս կանուխէն չկրնար գուշակել եւ յանկարծակի վրայ կուգան : Ուստի կրնանք ըսել թէ ապաշխարութեան հոգի ունեցողներն աւելի երջանիկ են աշխարհիս վրայ, քան հեշտութեանց սիրահար մարդիկ . զի հեշտութիւնք իրենց հետ բիւրաւոր աղէտներ կը բերեն, եւ յաւուր նեղու-

Թեան մինակ կձգեն յուսահատ վիճու-  
կի մէջ : Մահն անգամ ցաւ չէ ապաշ-  
խարդոյններուն համար . դերեզմանը այն  
պիսեաց համար երջանկագոյն կենաց  
որրանը կըլլայ , մինչդեռ ընդհակա-  
ռակն է գլխովին աշխարհային ուրա-  
խութիւնները ծայրագոյն երջանկու-  
թիւն համարոյններու համար :

Ուրեմն սոսրերն հիմակուրնէ երջու-  
նի են , որովհետեւ փորձութեանց դէմ  
պատրաստ եւ յիշարեալ են : Ասոր հա-  
մար է որ սուրբ Պօղոս առաքեալն իւր  
անհնարին ցաւերուն մէջ Աստուծոյ շը-  
նորհքէն իրեն ունեցած մխիթարութիւն  
ներովը զինքը կքաջալերէր . Բ. կորնթ.  
Է. 5, 6, 7 : Բայց փրկչին նպատա-  
կին մէջ գլխաւորապէս այն անմահ մը-  
խիթարութիւնը պէտք է հասկնանք ,  
որ աշխարհի վրայ ապաշխարութեամբ  
կեանք անցունողները պիտի վայելեն .  
Այսպիսեաց է որ պիտի ըսէ Տէրը ,  
« Ծառայ բարի եւ հաւատարիմ , մոռտ  
յարբախտիւն տեառն քո » . Մատթ. Ին-  
21 : Այս տտեն է որ անկասպտելի ու-

րախութիւն պիտի ժառանգեն . « Տրտ-  
մութիւն ձեր յարբախտիւն եղիցի , եւ  
զուրախութիւն ձեր » ոչ ոք հանիցէ 'ի  
ձէնց » : Յուէ . Ի . 20, 22 , :

Յիսուսի ֆրիատոսի երրորդ պա-  
տուիրանին ներհակը հեշտութեանց ան  
կարգ սէրը , կամ Աշխարհապիտանն է :

— « 0 » —

#### ՉՈՐՐՈՐԻ ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

« Երանի որ քաղցեալ եւ ծարա-  
ւի իցեն արգարութեան , զի նո-  
քա յագեցին » :

Արդարութիւնն է Աստուծոյ կա-  
մաց կատարումը . զի ինչ որ աստուա-  
ծային էութեան յարմար է , որպէս է . և  
ինչ որ Աստուած կկամի իւր էութեանն  
յարմար է : Յիսուս ֆրիատոս Աստու-  
ծոյ կամքը կատարելու հաստատուն

Յանքը ուսեղիքի կնմանցունէ . « Իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ , որ առաքեացն զիս » . Յ՛ւն . Դ . 34 . Արդարութեան քաղց ու ծարաւ ունենալը զօրաւոր փափաք մը ունենալ է փրկչին ըսած կերակրոյն , այսինքն Աստուծոյ կամքը կատարելութէ մեր մէջ եւ թէ բոլոր մարդկանց մէջ . Արդարութեան այս քաղցն ու ծարաւը տէրունական ազօթքին մէջ բացատրուած է . « Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի » , ի՞նչ կատարենք Աստուծոյ կամքը՝ մեր խորհուրդները , զգացմունքները եւ գործերը որոնք կըլլան , եւ բնաւ անոնց մէջ թերի բան չգտնուիր . Եթէ բոլոր աշխարհի մարդիկ Աստուծոյ կամքը կատարեն , այն աստուածային միաբանութիւնը կամ խաղաղութիւնը կ՛ծագի , որ յերկինս կ'իծագաւորէ .

Արդարութեան քաղցն ու ծարաւը եթէ իրական ըլլան , անպատճառ չըլլան . Հոգ պիտի ունենանք , այսինքն թեր ներքին և արտաքին գործերը

Աստուծոյ կամաց պիտի համեմատեմք . առ Աստուած և առ ընկերն պարտքերնիս պիտի կատարենք : Այս կերակուրը մեր հոգին կգորացունէ եւ չըլլայ . Ինչպէս որ հաճոյք կղզայ մարմինն անօթութեան ատեն կերած հացէն , այսպէս ալ հոգին երջանկութիւն մը կղզայ՝ երբոր Աստուծոյ կամք կամ արդարութեամբ կշտանայ .

Այս երջանկութիւնը , որ կըլլայ բարի խղճմտանքի մէջ , գեռ այս կենաց մէջ ըլլալով զգալի է . բայց հանգեք ձեռք աշխարհի մէջ միայն կատարեալ պիտի ըլլայ . զի հոն բնութեան ապականութիւն չկենալով մշտնջենապէս պիտի տեսէ Աստուծոյ կամքը : Մաղմուսեղուցն այս երջանկութիւնը ակնարկել կուզէ երբ կըուէ . « Ով Աստուած , արդարութիւնդ լեռներու պէս բարձր և անդունդներու պէս խոր է . . . Մարդկան որդիքները քու հովանոյդ ներքեւ պիտի յուսան : Բուտանդ բարիքներով պիտի արբենան , և քու քաղցրութեանցդ հեղեղը անոնց

պիտի խնայունես : Չի քու մէջ է կենաց  
աղբիւրը, և քու լուսովդ կրուսաւորուիմք :  
Մու՛հ, ԼԵ :

Բայց երջանկութեան յոգեւորը, ըստ  
սաղմոսերդուին, այն օրը կատարեալ  
պիտի ըլլայ յորում « Արդարութեամբ  
քալողը Տիրոջ առջև պիտի երևի, և  
անոր փառքը տեոնելով պիտի յազենայ :  
« Մու՛հ, ԺԳ, 15 :

Արդարութեան սիրոյն ներհակն է  
անարդարութեան կամ մեղաց մէջ յա-  
րատեութիւնը, շարժն սերն է այս : Շատ  
ճշմարիտ է՝ որ մարդիկ կրնան այն  
ցաւալի վիճակին մէջ ինկնալ՝ յորում  
չարն ու անարդարութիւնը իրեն հա-  
ճոյ կողմեր կունենան, և կուզէ անոնց դի-  
մել ապստամբելով Աստուծոյ բարերար  
կամքէն : Չարին բարեկամները,  
կամ Սատանային ճշմարիտ անդամները  
ամէն ժամանակ կան, և անոնք են սո-  
վորաբար՝ որոնք Աստուծոյ շնորհքը  
բանի տեղ չեն դնել : Այսպիսեաց սիրտը  
կարծր և միտքը՝ ի միջան կըլլայ, և կը-  
հասնին մինչև այն աստիճանը, որ

ըստ մարդարէին « Ասեն զչարն՝ բարի,  
և զբարին չար. եւ դնեն զխաւարն լոյս,  
ըզլոյսն խաւար » Երու՛մ, 20, և հոգինին  
կըլլայ քան շարունակն : Դու՛հ, Զ, 45 :



ՀԻՆԳԵՐՈՐԳ ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

« Երանի ողորմածաց զե նորս  
զողորմութիւն գոցեն » :

Այս երանութեամբ կհրամայէ  
Յիսուս ֆրիստոս ներել անիրաւու-  
թեանց . « Եղերուք գթածք, ըսաւ,  
որպէս և հայրն ձեր երկնաւոր գթած  
է » : Դու՛հ, Զ, 36 : Սուրբն պօղոս այս  
սկզբունքը ակնարկելով կըսէ : « Չգե-  
ցարուք այսուհետև . . . զգութ,  
շարունակն . . . ներել միմիանց, չը-  
նորհել իրերաց, եթէ ուրուք զուսմբէ :

արտունջ ինչ իցէ . որպէս Աստուած  
Քրիստոսիւ շնորհեաց մեզ , նոյնպէս  
եւ զուր » : Կողո , Գ , 12 , 13 : Տէ-  
րունական աղօթքը բացատրելու ատեն  
յիշած ենք՝ թէ Աստուած մեզի կը-  
ներէ մեր ուրիշներուն ներելուն հա-  
մեմատ :

Եթէ մեր յանցանաց թողութիւն  
գտնեմք Աստուծմէ , երջանի կըլլամք  
այս կենաց մէջ Աստուծոյ ողորմութեան  
վրայ ունեցած վստահութիւններնուս  
շնորհիւ . ալ աւելի հանդերձեալ կե-  
նաց մէջ , յորում մեր մեղքերը , եթէ  
մեր եղբարց նկատմամբ ողորմութիւն  
ըրած եմք , « Յե՛նի պէ՛ս ողորմի՛ պէ՛ս  
թէ՛և կրկնակի կարմիր ներկուած կտա-  
ւի պէս ալ ըլլան » : Եսայի , Ա , 18 :

Ողորմութեան ներհակ մոլութիւնն  
է ատելութիւն , կամ որ նոյն է , քէն  
նախանձ , վրէժինդրութիւն :

Այս մոլութիւնը կզրկէ զմեզ ներ-  
կայ կենաց երջանկութենէն իրմէ յա-  
ռաջ եկած ուժգին յուզմունքներով ,  
յաւ խանտական երջանկութենէն ալ պիտի

զրկէ , որովհետև ատեցող և վրէժինդիր  
մարդուն հետ այնպէս պիտի վարուի ,  
ինչպէս որ ինք ուրիշներուն հետ վար-  
ուեցաւ :

Ինչպէս որ ատելութիւնը կզրգուէ  
զմարդ իւր ընկերին ամէն գէշութիւն  
ընելու , այսպէս ալ ողորմութիւնը ամէն  
բարիք ընելու թէ՛ հոգևորապէս և թէ՛  
մարմնաւորապէս :

ՎԵՅՆԵՐՈՐԿ ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

« Երանի՛ որք սուրբ են որտե՛ր ,  
զի նորա զԱստուած տեսցեն » :

Սրա՛նք ողորմութեան ըսելով կհասկնամք  
մեր զգացմանց ըստ ամենայնի համե-  
մատութիւնը բարւոյն հետ , և առա-  
ջինութեանց ներքին և անկեղծ վիճա-



կը , զորս պարտաւոր ենք արաւքուստ  
ցցընելու : Ան որ սուրբ սիրտ ունի ,  
կատարեալ քրիստոնեայ է : Վասնզի ,  
ըստ առաքելոյն Պօղոսի , կատարեալ  
քրիստոնէին սրտին ապերը տասուր կըլայ .  
Եփ , Ա , 18 : Ուստի կրնայ ասանել զՊատուած  
դիւրաւ մը այս աշխարհի մէջ տիեզերքի  
գործերով , և կապատե՛ որ Կե՛ս յանդէ  
ման և առանց քօղոյ տեսնէ երանելոյ  
աշխարհին մէջ :

Աստուած , էապէս բարին և ճշմար-  
տութիւնը , մեր մտաց և սրտին հա-  
մար այն է՝ ինչ որ արևը բնութեան  
համար : Ինչպէս որ ամալը արեգակը  
կըլստփանէ , և զերկիրս անոր բարերար  
ճառագայթներէն կըրկէ , նոյնպէս ալ  
մեզքը մեր և Աստուծոյ մէջ տեղը կիյ-  
նայ , և զմեզ ՚ի լուսոյ և ՚ի կենաց կը-  
զրկէ : Եթէ մեզքը չըլլայ մեր մէջ ,  
մտքերնիս աստուածային լուսոյ ընդու-  
նակ կըլլայ , և սրտերնիս պարզ և բաց  
երկնքի կղաւնայ : Աստուած մեր քով  
կըլլայ , մեզ կըլուսաւորէ , զմեզ կըն-  
սուցանէ և և առատ պատուներ բերել

կուտայ : Բարին բնական բան մը կղաւ-  
նայ սրտին համար . ալ չունենար ո՛չ  
կեղծիք , ո՛չ մոլորութիւն , ո՛չ շար .  
զԱստուած կտառանդէ իր մէջ , կզգայ  
և և կտեսնէ . ասկէ յառաջ կուգայ , նոյն  
խոկ աշխարհի մէջ ըլլալով , անվրէպ  
երջանկութիւնը :

Միտն այսպէս միանալով Աստու-  
ծոյ հետ՝ սուրբ և ազատ կմնայ այն  
ամեն յօժարութիւններէն , որ կրնային  
աղտօտել , այսինքն է անկարգ և և  
պօրինաւոր յօժարութիւնները : « Միտ  
սուրբ հաստատեա՛ յիս Աստուած , կը-  
սէր սաղմոսերգուն , և և հոգի ապեր նո-  
րողեա ՚ի փօրի իմում » : Մարգ . Եր . 11 ,  
Յ . յս վիճակին մէջ , որ շնորհական է ,  
զԱստուած կտեսնեմք ըստ բանից փրկ-  
չին . « Եթէ կացլիք ՚ի բանի իմում ,  
ճշմարիտ աշակերտք իմ էք , և և ծանկ-  
ընէ զճշմարտութեան . . . Որ ունի զպա-  
տուիրանս իմ , և և պահէ զնոսա . . . .  
ես սիրեցից զնա և և երեսցոցեց նա զես » :  
Յովն . Բ . 31 , 32 : Եր . 21 : « Գոհանամ  
զքէն , հա՛յր տէ՛ր երկնից և և երկրի ,

զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ՚ի գիտնոյ , եւ յայտնեցեր տղայոց ( խաւարհայ ) » : Դ. 1. Ժ. 21 :

— 202 —

ՆՅՅՆՆԵՐՈՐԻ ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

« Երանի՛ խաղաղարարոց , զի որչեք Աստուծոյ կոչեցին » :

Խաղաղարարներն անոնք են՝ որ զխաղաղութիւնը կսիրեն , կջանանպահել զայն ամէն մարդոց հետ , եւ հաստատել՝ երբոր չկայ : Սուրբ Գրիգոր Նիւոացին . ( Ճ. 1 , 7 , ՚ի Վերոյ Երանո . ) կըսէ . « Կարելի չէ խաղաղարար ըլլալ այն մարդուն՝ որ ընկերին հետ խաղաղութիւն պահել չգիտեր » . և ասոր համար պէտք է որ մարդ մը խաղաղութիւնն առաջ ինք իւր մէջ սկսի ունենալ . « Ի՞նչ բանի կուգայ , կըսէ

բարեյիշատակն Հերոնիմոս , խաղաղութիւն ընելն այլոց մէջ , երբ արդէն քու մէջդ մտլութիւնները պատերազմ ունին » : Ս. Երանոս Մասիէի , Գերտ : Ա. Ս. յս ներքին կուրք , ըստ առաքելոյն Յակոբոց , արտաքին կուռոց ազբիւրն է . « Ուստի՞ պատերազմունք , և ուստի՞ կուրք են ՚ի ձեզ . ո՞չ յայդպիսի ցանկութեանց ( կրից ) ձերոց՝ որ զօրացեալ են յանդամն ձեր » : Յ. 1. Գ. 1 : Ուստի , կըսէ Ամբրոսիոս . « Դուք ձեզի հետ խաղաղութիւն ունեցէ՛ք , որպէսզի կարող ըլլաք ուրիշներն ալ խաղաղեցունել » : Յասեոս . Դասիայ . Գերտ Ե :

Երկու տեսակ խաղաղութիւն կայ , խաղաղութիւն Յիսուսի Քրիստոսի և խաղաղութիւն աշխարհի : « Զխաղաղութիւն թողում ձեզ , կըսէ վրկիշն իւր աշակերտներուն , պիտաղաղութիւն զիմ՝ տամ ձեզ , ո՞չ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ » : Յ. 1. Ժ. 1 , 27 : Քրիստոնէական խաղաղութիւնը ճշմարիտ խաղաղութիւնն է , որուն հիմն

է ընդ Աստուծոյ և ընդ ինքեան խաղաղութիւնը , այն յաղթութեամբ հանդերձ՝ որ կատարուած պէտք է ըլլայ միութեանց վրայ : Աշխարհի խաղաղութիւնն առերևոյթ խաղաղութիւնն է , անոր հիմը շահը , մարդահաճութիւնն եւ կեղծաւորութիւնն է : Քրիստոնէական իմացուածով խաղաղարար ըլլալն անաչառութեամբ մրցիլն է ահն ո՛ր և է շք բանի . դէմ . այս մրցումով կարելի է համեմել աստուածային խաղաղութեան : Բայց այն՝ որ մարդկային նկատումներով միութեանց եւ միութեանց աչք կիսբէ , քրիստոնէական խաղաղութեան հոգ տարած չըլլար , այլ աշխարհավար խարդախ խաղաղութեան : այս կերպ խաղաղարարութիւնը Յիսուսի Քրիստոսի դատապարտածն է : Քրիստոնէական խաղաղութիւնը , որուն սկիզբը ճշմարտութիւնն է , որչափ փափաքելի բարեք է , նոյնչափ ալ աշխարհավար խաղաղութիւնը , որուն հիմը խոտան հաճոյականութիւնն է , վտանգաւոր է . զի անոր տակը կեղ-

ծեաց և անխորականութեան վիհը ծածկուած է : Ասիկա խաղաղութիւն չէ , այլ հոգևոր հաշմութիւն :

Յիսուս Քրիստոս խաղաղարար էր , երբ խաղաղանով դուրս կ'ըլնուէր տաճարին մէջ առևտուր ընող վաճառականները . փառիսեյիներուն ըրածը պիղծ շահավաճառութիւն էր , որով անոսքեք էին տաճարին հարկաւոր եղած յարգութեանը :

Խաղաղարարութիւնը , իւր բոլոր նշանակութեամբը , պարտեաց եւ իրաւանց փոփոխ եւ ճիշդ յարաբերութեան պատկառ կենալն է : Խաղաղութիւն ուղելն աշխատել է՝ որ ամեն իրաւունք յարգուին , և ամէն պարտքեր կատարուին . աշխատել է որեւէ բռնութիւն : Այս կարգին պարտքն նոյն ինքն Աստուած է , աղբիւրն ամենայն բարեաց և իրաւանց . ո՛վ որ ասիկա հաստատուն պահել կուզէ՝ որքէ Աստուծոյ կըլլայ :

Ահա ասոր համար ըսած է Քրիստոս , թէ խաղաղարարներն՝ որքէ Աստուծոյ պիտի կոչուին :

Խաղաղարարն , աստուածային կամ

Քրիստոնէական խաղաղութեան ջանք  
ըրած ատենը՝ ամէն մոլորութեանց ,  
մոլութեանց և մարդկային մնտախի շա-  
հերու դէմ պատերազմ կունենայ . այս  
պատերազմը պարտաւոր է շարունա-  
կելու այնչափ քաջութեամբ , որչափ  
որ հարկաւոր է նպատակին անվրէպ  
հասնելու համար . Այս իմաստով պէտք  
է հասկնամք Յիսուսի Քրիստոսի ըսածը՝  
թէ . « Մի՛ համարիք եթէ եկի արկանել  
խաղաղութիւն յերկիր , ոչ եկի արկա-  
նել խաղաղութիւն այլ սուր » : Մատթ .  
ժ . 34 : Սուր բերած է աշխարհի պա-  
տիր խաղաղութեան դէմ . Ո՛ր Քրիս-  
տոնեայ՝ որ այս սուրը կործածէ ,  
ճշմարիտ Խաղաղութիւն է , զի Աստուծոյ Խա-  
ղաղութեան համար կպատերազմի , որ մի  
միայն նպատակն է Յիսուսի Քրիստոսի :

Քրիստոնէական խաղաղութեան  
ներհակ մոլութիւնն է չարի և մոլո-  
րութեան զիջումն , մարդահաճութիւն  
եւ կեղծաւորութիւն , որ « շխարհագր  
Խաղաղութեան աղբերքն են , և կամ ան-  
տարբերութիւնը :

ԵՐԱՆՈՒԹԻՒՆ ՈՒԹԵՆՈՐԳ

« Երանի որք հալածեալք իցեն  
վասն արդարութեան , զի նոցա է յ  
արքայութիւնն երկնից » :

Այս երանութիւնը նախընթաց ե-  
րանութեան հետեանքն է . Չարին և  
մոլորութեան դէմ կուռիլը , որպէս զի  
Աստուծոյ Խաղաղութեան հաստատուի , պատ-  
ճառ կուտայ հալածուելու արքայութեան  
համար . Այս նկատումը միթէ երկիւղ բե-  
րելու է ճշմարիտ քրիստոնէին . Ոչ . վը-  
կիչը կիմացունէ՝ թէ՛ ո՛վ որ արդարու-  
թեան համար այս հալածանքը կկրէ ,  
երկնից արքայութեան և հետեապէս եր-  
ջանկութիւն պիտի վայելէ :

Կրնանք հասկնալ ևս՝ թէ այս աշխար-  
հիս մէջ ալ արդար և իրաւասէր մար-  
դը՝ երբոր անարդարութեան դէմ բա-  
ցած կուռոյն մէջ գերբնական առիթ

ներով կորրեքուի, երջանիկ կըլլայ. ինքզինք երանութեան մը մէջ կտեսնէ այն վիճակն ունենալով անգամ՝ զոր անտտի շահերով և ներկայ կենաց պարագայներովը պաշարուած մարդիկներուն աչքերը ողբալի և աղետաւոր կհամարին: Երջանկութիւնը՝ աւելի պարտքը կատարած ըլլալու ներքին վստահութեան մէջ է, քան բոլոր աշխարհի վայելչութիւն համարուած բարիքներուն մէջ: Ներքին վստահութեան շքնորհիւ արդարութեան համար հալածուողն՝ հիմակուընէ երկնից «բարեկեցիկ» իր հոգիներնայ, աստէն երջանիկ է, եւ հանդերձեալ աշխարհի մէջ Աստուածայնչափ աւելի վարձք պիտի տայ, որչափ որ պատերազմը հոս սաստիկ ըլլայ:

Այս երանութեան հակառակ մտլութիւնն է վատեմբեր, որ թոյլ չտար պատերազմը արդարութեան համար, եւ երկրաւոր ընդունայն խաղաղութիւնը Աստուծոյ շահերուն համար պատերազմերու քաջութեանն նախապատիւ կընէ:

ԵՐԱՆՈՒԹԻՒՆ ԻՆՏԵՐՈՐԻ

« Երանի՛ է ձեզ, յորժամ նախտիցեն զձեզ և հալածեցեն, եւ ասիցեն զամենայն բան չար զձեզ՝ սուտ վասն իմ »:

« Յնժայէք և ուրախ լերձք, զի վարձք ձեր բազում են յերկնս: զի այսօրէս հալածեցին զմարգարէան, որ յառաջ քան զձեզ էին »:

Արդարութեան համար տարած կռիւներնուս մէջ՝ եթէ նախատինք, հալածանք և զրպարտութիւն ալ կըրեմք, պէտք է սիրով տանխմք: Որչափ չարչարուիմք, նոյնչափ մեծ կըլլայ վարձքերնիս երկնքի մէջ: Յիսուս ֆըրիստոս կյիշեցունէ մարդարէները, որոնց բոլոր կեանքը յանուն Աստուծոյ վարած պաշտօնէութեան մէջ հալածանք և մահ կրել եղաւ:

Ո՛վ որ կրկայէ վասն արդարու-

Թեան , վասն ճշմարտութեան և վասն  
բարւոյն , յաջորդ կըլլայ հին կտակա-  
րանի մարգարէներուն . անոնց վիճակը  
կունենայ աշխարհիս մէջ , և նոյն հա-  
տուցումը յաւիտենականութեան մէջ .  
հատուցումն բացառիկ , պսակ այն-  
չափ շքեղ , որչափ տարժանելի :

Յիսուս Գրիստոս խաչին վրայ մեռ-  
նելով ուսոյց իւր աշակերտներուն՝ թէ  
աւելի լաւ է մեռնիլ մարտիրոսու-  
թեամբ՝ քան զիջանիլ անիրաւութեան .  
ճշմարիտ քրիստոնէին քաջութիւնը  
պէտք է տեւէ մինչեւ Աստուծոյ և  
կրօնի համար մեռնելու աստիճանը :

Երբ որ վարդապետն այնչափ դա-  
տապարտեց որչափ Քրիստոնէական արու-  
նիանը դովեց :

Թեան՝ աստուածային օրինաց Յիսուսի  
Քրիստոսի , տարբերութիւններ չենք  
ճանչնար . Ամէն քրիստոնեայ ինն երա-  
նութեանց մէջ եղած ճշմարտութիւն-  
ները միաբան կընդունի . Բանական  
ըսուած ազանդոյն յատագոյլք քրիս-  
տոնէական վարդապետութիւնը չեն  
գիտեր , և սխալ կ'մեկնեն . ասոնց  
դրութեան դէմ խօսելու միտք չու-  
նինք . Մեր պարտքը փրկչին վճիռնե-  
րուն բուն իմաստը ճշդութեամբ բա-  
ցատրելն է , այն սկզբունքով՝ ինչպէս  
միշտ ընդունած են Յիսուսի Քրիստոսի  
աշակերտութիւնը իրենց փառք և  
պարծանք համարող համօրէն Քրիս-  
տոնեայք :

Քրիստոնեայ եկեղեցեաց մէջ , ի  
մասին աւետարանական վարդապետու-



ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՒՈՑ

Ա.

Սկիզբն կարգաց կամ օրինաց եկեղեցւոյ

Եկեղեցւոյ՝ կարգաւորութիւնը այն օրէնքներուն կամ կանոններուն հաւաքումն է, զորս առաքեալքն առեալ յԱստուծոյ՝ եւ անոնց յաջորդ եպիսկոպոսներն առաջնորդեալ ՚ի մի և նոյն Հոգւոյն Աստուծոյ, եկեղեցւոյ սկզբնաւորութեան ատեն Յիսուսի ֆրիստոսի աւանդած հաւատքը, բարոյականը և ուսուցածները պահպանելու համար

հաստատեցին :

Առաքեալներն առաջին եպիսկոպոսներուն կարգեր եւ կանոններ տուած են եկեղեցին բարիօք կառավարելու համար : Այս կանոնները որ առջի բերան աւանդութեամբ պահուած էին, երրորդ դարուն գրի առնուեցան, որ կրտսէին կոչուի առաքելոց : Ուղղափառ եկեղեցին իւր կարգաւորութեան հիմնական կանոն կընդունի ութսուն եւ հինգ յօդուած, եւ կմերժէ Առաքելական սահմանորոշիչն անունով ելած գործը. որովհետեւ հերետիկոսաց ձեռօք խանդարմունքներ ունեցած է :

Ուղղափառ եկեղեցին կանոն առաքելոց ըստածէն յետոյ՝ կընդունի Նիկիոյ տիեզերական ժողովոյն կանոնները, Անկիրիոյ, Նեոկէսարիոյ, Գանգրէայ, Անտիոքայ, Կեսարիոյ և Լաւողիկէի ժողովոց կանոնները, որ թէպէտ տեղական կամ մասնաւոր ժողովներ էին, բայց ընդհանուր կերպով ընդունելի եղած են. կոստանդնուպօլսոյ և Եփեսոսի տիեզերական ժողովոց կանոն

ները , Սարգեիկէի և Կարթագինէի ժողովոց կանոնները . այս ուղափառ ժողովներուն և ասոնց նմաններուն կանոնները , և եկեղեցւոյ առաջին դարերու մէջ հաւատովք եւ սրբութեամբ երևելի եղող հայրապետաց կանոնական թղթերը : Ասոնք են եկեղեցւոյ կարգաւորութեան աղբիւրներն , որոնք պահուած են մինչև հիմայ և կցցենն թէ՛ եկեղեցին ըստ կարգաց եւ օրինաց իւրոց բնաւ տարբերութիւն չունի մինչև հինգերորդ դարը եղող եկեղեցւոյն ընթացքէն :

Հռովմէական եկեղեցին կաթողիկէ եկեղեցւոյ ընդհանուր կարգաւորութենէն շատ կետերով կտարբերի : Այս զարտուղութիւնը եօթներորդ դարուն՝ աւելի յայտնի կերպով ցցուց , եւ հետզհետէ շարունակելով՝ բոլորովն զարտուղեցաւ :

Ի վեցերորդ դարուն կրասերն Դիոնեսիոս անուն հռովմէական կրօնաւոր մը յունական լեզուով դրուած կանոն քրի մը թարգմանութիւնն ըրած

է լատին լեզուի . առաջին կանոններուն առաջին 50 յօդուածները միայն հաւաքած , և յաւելցուցած է վրայնին Սիլրիկիոսի ժամանակէն ( 398 ) մինչև Անաստասիոս Բ . ի ժամանակ ( 498 ) եղող Հռովմի եպիսկոպոսներուն մէկ քանի կանոնական թղթերը կամ կանոնները : Այս հաւաքումը արեւմտից մէջ ընդունելի եղաւ մինչև ութերորդ դարուն վերջը :

Եկեղեցական այս հին կանոնագիրքըն ալ , հիմնապէս նկատելով , արևելեան եկեղեցւոյ ընդունածներէն շատ բերիլ :

Բայց յիններորդ դարուն ցրուեցաւ արեւմուտքի մէջ ուրիշ նոր կանոնագիրք մը , որ անուանեցաւ «*Կանոն*» . պատճառն որ՝ անոր գլխաւոր տրամադրութիւնները Հռովմի առջի դարու եպիսկոպոսներուն կարծուած կանոնական թղթերէն քաղուած էին : Այս հաւաքածոյին աղբիւրներուն վրայ անհնարին մթութիւն մը կտիրէ . համայն և այնպէս՝ աչքի զարնող բան մը ունի , որ է իւր երևան գալուն ու պապական



իշխանութեան պահանջմունքին մէկ տեղ դառն ու համեմատելը . այսչափը հերիք է հետաքրքրութիւնդ շարժելու մէկէն կտեսնես՝ որ այն բոլոր արամա գրութիւնները Հռովմի եպիսկոպոսաց ձեռնարկութիւնները օրինաւոր ցցունելու նպատակաւ գրուած են . վաշտգիտութեան՝ որ կտիրէր այս ատեն՝ եւ չէր երեցուներ եկեղեցեաց բուն ծագումը . բոլորովին և յայտնի կերպով սխալ յատկութիւններ ունեցող կանոնները իբր վաւերական ընդունելութիւն գտան , այսպէսով սկսեց երեւան դալ Արեւմտաքի մէջ այս նախապաշարմունքը՝ որ հիմայ ալ կայ . թէ պապական գերիշխանութեան ծագումը առաքելական դարէն ՚ի վեր է .

Արեւմտեան եկեղեցեաց շատերը այս նոր կանոնագրքին դէմ բողոքեցին , եւ հինին կապուեցան . զազդից կամ կապուեցան եկեղեցին ուրիշներէն աւելի կապուեցաւ հնոյն ասոր համար հին կանոնագրքին անունը մինչև կապուեցան ինչպէս կամ կապուեցան ըսուեցաւ : Արեւելեան

եւ արեւմտեան հին կանոնագրքերն հիմնապէս մէկ ըլլալով , արեւելեան ուղղափառ քրիստոնեայ մը և կալիքան մը եկեղեցւոյ կարգաւորութեան խնդրոյն մէջ բնաւ տարբերութիւն չեն ունենար : Սուտ կանոններու վրայ շատ մը հին կանոններու հաւաքածոյնը յաւելցուցին :

Պապերը հաւատարմութեամբ շարունակեցին և հետզհետէ ստուարացուցին «*սուր կանոններն*» արամագրութիւններն . և այսպէսով մինչև կարգը բերին արձակաբտութեան և անսխալութեան այլանդակ և գայթակղական յօդուածներուն . պապերը դարէ դար անցնելով եկեղեցւոյ նախնական կարգաւորութենէն աւելի շեղեցան :

Յերկոտասաներորդ դարուն Բենեդիկտեան կրօնաւոր մը , Գրատիանոս անունով , կանոններու նոր հաւաքածոյ մը յօրինեց , հինու նոր կամ սուտ կանոնները իրար խառնեց . եկեղեցւոյ կարգաւորութեան վրայ արեւմտից շարտուղութիւնները բոլորովին

ընդհանրացուց . որովհետև միջին դա-  
րու մէջ ասոր գործը ընդունուեցաւ  
իրև ուսումնային հանրային .

Բնեդիկոտեան կրօնաւորին հա-  
ւաքածոյից վրայ ետեւէ եկող պապե-  
րուն կանոններն ալ յաւելցան . ինչպէս  
են Բենեֆորցի Ռէմոնտի հինգ քրոյ  
ժողովածոյն\* , և ուրիշներու ժողոված  
կամ շինած կանոնագրքերը . երթալով  
չատցան այս կանոնները , և բոլոր հին ու  
վաւերական բարի կանոններուն տեղը  
բռնեցին :

Արևելեան և արևմտեան եկեղե-  
ցիներէն զատուող եկեղեցիներուն կար-  
գաւորութիւնները շփոթ , հակասա-  
կան և անգործ մնացած են , որոց վրան  
խօսիչն ալ աւելորդ է . Այս եկեղեցի-  
ները , կաթուղիկէ աւանդութիւնը  
ձգելու հետ , կառավարութեան հեղի-

\* Ռէմոնտ Իովնիկեան կրօնաւորներուն երրորդ  
արքայն է , 1175 ին ծնած . Սպանիոյ գաւառներէն  
մէկուն , Քաթալոնիոյ մէջ , Բենեֆոր բուսած տեղը , և  
մեռած է Պարչելոնայի մէջ 1275 ին . Իբր սուրբ կը-  
տանէ ասոր յիշատակը Լասին եկեղեցին , յունուար ամ-  
սոյ մէջ :

նակութիւնն ալ մերժեցին , ակնածու-  
թեան արժանի կանոն մը չունին , ու-  
նեցածնին ալ առերևոյթ է և ո՛չ բնաւ  
իրական . ինչպէս են բողոքականաց  
կանոնները :

Բ. ԱՐՄԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՅՆԵՐԸ

Եկեղեցւոյ բոլոր օրինաց առար-  
կայները ասոնք են . նախ՝ Յիսուսի Քրիս-  
տոսի հաստատած կառավարութեան  
կազմութիւնը , երկրորդ՝ հաւատոց և  
բարոյականի պահպանութիւնն եւ խոր-  
հրդոց օրինաւոր մատակարարութիւնը .  
երրորդ՝ ճշմարիտ պաշտման պահպա-  
նութիւնը :

Կանոններու խիստ իմաստուն կար-  
գագրութիւններ կան զանազան նիւ-  
թերու վրայ , որոց գլխաւորները ա-  
սոնք են .

Ա. — Եպիսկոպոսութեան , քա-  
հանայութեան եւ սարկաւազութեան  
մէջ եկեղեցւոյ դրած նուիրապետու-

Թեան աստիճաները .

Փոքր աստիճանները կամ կղերիկոսականները .

Եկեղեցականաց ընտրութիւնը .

Ատոնցմէ պահանջուած առաքիւնութիւնները .

Մորրութիւնները որոնցմէ պարտաւոր են չպաշարուելու .

Եկեղեցական իրաւասութիւնները եւ զանազան աստիճաններու իրարու հետ յարաբերութիւնները .

Ժողովները .

Եկեղեցական ատեանները .

Վանական վիճակը .

Բ . — Հաւատոյ սահման տալու պայմանները .

Հերձուած և հերետիկոս դատաւարտելու կերպերը .

Կանոնական ապաշխարութիւնները .

Եօթն խորհուրդները օրինաւոր մատակարարելու կանոնները .

Գ . — Տարւոյն եկեղեցական բաժանումը .

Ճամասացութիւնները .

Տօները .

Պահեցողութիւնները .

Եկեղեցիներն և անոնց օծումը .

Սեղանները .

Հասարակաց պաշտման յաւելուած առարկայները .

Այս գործոյս համառօտութեան մէջ եկեղեցւոյ արարողութեանց առարկայ եղածներուն գլխաւորները միայն կրնանք ցուցնել . մանրամասն սրբագայներու համար ընթերցողին պարտքըն է այս նիւթոյն վրայ գրող մասնաւոր գրքեր վնտռել, և ամէնէն աւելի վաւերական կանոնադրերը .

Սա միայն կուզեմք հոս ըսել՝ թէ կանոններու մէջ սա հիմնական տարբերութիւնը կայ, որ ոմանք մշտնջենաւոր և ընդհանուր են, ոմանք ալ տեղական և անցաւոր : Վերջինները բոլոր եկեղեցիք ալ պարտաւոր չեն ընդունելու : Առաջինները, ընդհակառակն, ընդհանրապէս պէտք է գործածուին և հիմն բռնուին այն մաս-

նաւոր կանոնադրութեանց, զորոնք եպիսկոպոսները կրնան ղենել իրենց յանձնուած եկեղեցիները բարոք կառավարելու համար :

Գ. ԿՍՈՒԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Այս համառօտ գործոյս մէջ, թէ պէտեւ եկեղեցւոյ արարողութեան վրայէն խիստ համառօտ անցնիլ մտքերն իս դրած ըլլալով, անոր կառավարութեան կերպին վրայ խօսիլը զանց ընելու էինք, սակայն սխալ ճանաչմունքները՝ որ տարածուած են արեւմուտքի մէջ, պարագ դրին մեր վրայ՝ ընդհանուր կերպով մը խօսելու :

Յիսուս Բրիտտոս մեր տէրը երեւոյթիւնը հաստատեց իւր եկեղեցին կառավարելու համար : Երեւոյթիւնը կամ բովանդակ նուիրական մարմինը, առաքելոց ժամանակէն ՚ի վեր երեք

կարգերու բաժնուած է, որք են . եպիսկոպոսութիւն, քահանայութիւն, սարկաւագութիւն. եպիսկոպոսութիւնը առաքելութեան յաջորդութիւնն է . ինչպէս որ առաքելութիւնը Քի եղաւ, կամ բոլոր առաքելները՝ ճառանց բացառութեան, նոյն և մի հեղինակութիւն և նոյն և մի պատիւ ունեցան . այսպէս ալ եպիսկոպոսութիւնը մէկ է, և բոլոր եպիսկոպոսները նազարէիցաբար և արեւմտեայ մէկ պատիւ և մէկ եղխանութիւն կվայելեն :

Եկեղեցւոյ հայրապետաց մեզի սորվեցուցած վարդապետութիւնն առ է :

Եպիսկոպոսութիւնը Քի է, և կկառավարէ զեկեղեցին Քի նազարէիական գործողութեամբ, օգնական ունենալով քահանայները և սարկաւագները. այս է Արարչոյն սանձնադրութիւնը կամ ձեռքայն կառավարութեան՝ զոր ինքն Յիսուս Բրիտտոս հաստատած է : Այսպէս կուսուցանէ մեզ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայրը : « Զաւեպարանին գործակիցսն զքա

հանայս սուրբս և զպաշտօնեայս եկեղեցւոյ՝ որք սպասաւորք են սրբութեանցն հրեշտակային կարգաւորութեամբ ոչ վարկպարաղի համարեսցուք, այլ որպէս յԱստուծոյ կարգեալք՝ ի փրկութիւն հաւատացեալ ժողովրդեանն Աստուծոյ: (Յանի. Ճառ Ի.)

Այս վարդապետութեան կամ աւանդութեան իմաստով եպիսկոպոսները իրեն երևեցուցիչ կամ երեսփոխան ունեցող եկեղեցին՝ քրիստոնեայ ընկերութիւնը կառավարելու գործոյն մէջ եպիսկոպոսութեան հասարական գործառնելուն աւելի դիւրին և հաւատարմութամբ անօրինելու համար՝ երկրորդական տրամադրութիւններ սահմանած է: Ասկէց յառաջ եկած է յեկեղեցական էրասանց նուիրապետութիւնը, զոր եկեղեցին յասորոշային էրասանց նուիրապետութեան կուշտը բազմեցուցած է:

Յեկեղեցական իրաւանց նուիրապետութիւնը առջի բերան, այսպէս ըսենք, բանին բերմունքը հնարեց:

Մեծ քաղաքի մը եպիսկոպոսը բնականապէս աւելի կարևորութիւն կունենար քան պղտիկ քաղաքի մը եպիսկոպոսը: Նիկիոյ տիեզերական սուրբ ժողովոյն գործերէն կերևի թէ չորրորդ դարու ըսկիզբէն՝ Հռովմի եպիսկոպոսը յատուկ իշխանութիւն մ' ունէր իւր նստած մայրաքաղաքին հետ յարաբերութիւն ունեցող քաղաքներու եպիսկոպոսաց վրայ՝ հին սոբորանեան մը նոյն դուրս: Աղեքսանդրիոյ եպիսկոպոսին իրաւասութիւնը կտարածուէր Եգիպտոսի և Լիբիոյ բոլոր եպիսկոպոսաց վրայ:

Այս սովորութիւնները հաստատութիւն դտան, հռովմէական կայսերութեան երեք մայր քաղաքներու, Հռովմի, Աղեքսանդրիոյ եւ Անտիօքայ եպիսկոպոսները եկեղեցւոյ առաջին եպիսկոպոս անուանեցան: Երուսաղեմի եպիսկոպոսին ալ նոյն պատիւը տրուեցաւ՝ նոյն քաղաքի սրբազան յիշատակաց մեծարանք մ' ըլլալու համար, սրով չորս եպիսկոպոսներ Պորթէբէ պատուանունը ունեցան:

Մեծն կոստանդնուսոս երբոր թիւ զանդիտնը կոստանդնուպօլսի փոխեց և զայն երկրորդ մայրաքաղաք ըրաւ զկնի Հռովմայ, կոստանդնուպօլսոյ Ս. Ժողովը պատրիարքական պատիւ տուաւ անոր եպիսկոպոսին :

Պատրիարքութեանց այս բաշխման հիմը Հռովմի կայսրութեան նա հանգալիան բաժանումներն ըլլալով, մեր ազգային եկեղեցւոյն անկախութեան վրայ չկրցան փոխօխութիւն մը դնել. բնական էր այսպէս ըլլալ, որովհետեւ ինդիրը պարզապէս եկեղեցւոյն արտաքին յարաբերութեան ձեւոյն կվերաբերէր, եւ ոչ թէ ներքին կամ առտուածակարգ անցելի սահմանադրութեան :

Ի սրբոցն թաղէսսէ և Բարթոլղիմէսսէ յաշորդութեամբ առ սուրբն Գրիգոր լուսաւորիչ և անկէց առ այժմոս Հայրապետն ամենայն Հայոց ի Զած եպիսկոպոսութիւնը մեր եկեղեցւոյն անկախ պատրիարքութիւնն է, որմէն իբր արմատէ կախումն ունի հա-

յատանեաց եկեղեցւոյն ըստը ճիւղերու կառավարութիւնն ՚ի հողեւոր և յեկեղեցական պայմանի :

Քաղկեդոնի Ժողովէն ՚ի վեր Յունաց և մեր ազգին մէջ արմատ դրած ժանտ ատելութիւնն ու չար խռովութիւնը՝ երբեմն երբեմն առիթ տուած է մեր պատրիարքութեան վրայ ինդիրներ յուղելու, որոնք կբացատրեն անոր անկախութեան կամ ինքնօրէնութեան պատճառն ու իրաւունքը :

Ստոյգ և անհերքելի իրողութիւն մը է՝ թէ մեր սուրբ Լուսաւորիչը կեսարու Արքեպիսկոպոսէն ձեռնադրութիւն առաւ. բայց յաշորդաց համար ոչ խորենացի և ոչ Յովհաննէս պատմաբան կաթողիկոսն յայտնի տեղեկութիւն մը չեն տար, թէ սուրբ Լուսաւորչի աթոռէն ձեռնադրուեցան՝ թէ կեսարիոյ աթոռէն. Ազաթանդեղոս կրտս սուրբ Սրիստակեոի համար՝ թէ՛ սուրբ Գրիգոր ձեռնադրեց զանկա իւր տեղը \* . վրժանիօի համար ալ խորենացին այսչափ միայն կը պրուցէ. « Արիստակե.

սէն յետոյ յաջորդեց յաթոռ Լուսաւոր չի » . այսպէս կիսօսի Յուսկանն և փառներսեհի համար ալ . բայց չեն յիշեր թէ ուսկից էր ձեռնադրութիւննին . Մեծին ներսիսի համար բոլոր պատմաց կարծիքն հասարակաբար կվկայէ թէ կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն ընդունեց . ասոր յաջորդ Շահակին համար ալ կվկայէ դարձեալ պատմութիւնն առանց բացառութեան թէ հայոց եպիսկոպոսներէն ձեռնադրուեցաւ . և անկէ վերջը բնաւ կեսարիայէն ձեռնադրութիւն առնող կաթողիկոս մ' եղած չէ . թէ մեր կաթողիկոսները կշարունակէին կեսարիա երթալն մինչև ցՇահակ պատմութիւնը դրական վկայութիւն մը չտար : Բուզանդ , Ասողիկ և վարդան Յուսկան , փառներսեհի և Արիստակիսի համար կըսեն թէ կեսարիայէն ձեռնադրութիւն ընդունեցան . այս կարծիքը չընդունելու ուրիշ պատճառներ կան , սակայն խորենացւոյն և Յովհաննէս պատմիչ կաթողիկոսին կարծիքները կերպով մը առիթ կուտան մեզ

ընդունելու . որովհետև խորենացին կըսէ Շահակայ համար , թէ « ասոնց ձեռնադրութեան հայրապետ կարգուեցաւ » . ասիկա հետևութիւն ունեցող խօսք մ' է , թէ ուրեմն անոր նախորդները կեսարիոյ արքեպիսկոպոսին ձեռնադրութեամբ հայրապետ կարգուեցան . Յովհաննէս կաթողիկոսն ալ կըսէ՝ դարձեալ նոյն Շահակին կաթողիկոսանալուն վրայ խօսելով . « առջի սովորութեան համեմատ կեսարիա չըրկեցին զինքը , այլ թողին այդ օրէնքը , և ձեռնադրեցին եպիսկոպոսներու ժողովով , ինչպէս որ սովորութիւն է Պատրիարքաց համար :

Յոյնք այս ճշմարտութեանց հաւատալն եղող գրուածքներէ առիթ առնելով կպատարակէին մեր եկեղեցւոյ կարգաւորութիւնը՝ իբր չկարգաւորութիւն . Ասոնց դէմ զօրաւոր պատասխան տուած է մեր սուրբ Ներսէս Լամբրոնացի հայրապետը Ռսկան անունով անտիոքացի յոյն ճգնաւորի մը պատասխանելու համար դրած նամակին մէջ ,

որ հրատարակուած է 1842 թուականին , յերուսաղէմ պատուած պատարազի մեկնութեան ծայրը . « Այնուհետև պէտք չունեցանք , կրօն , նորէն ձեզի գալ ձեռնադրութիւն ընդունելու . քանի որ արդէն սուրբ Գրիգորի և սուրբ Ներսէս ընդունեցին , և անով եկան ու լուսաւորեցին հայերը » . Թէ ինչո՞ւ այլ ևս պէտք չունեցանք կեսարիս երթալու . Պապական հայերը այս պատճառը կուտան . « վասնզի , կրօնն , կեարիս արքեպիսկոպոսները հաստատութեամբ գիտէին թէ մեր լուսաւորիչը Սեդրեապոսէն եպիսկոպոսապետութեան կամ պատրիարքութեան իշխանութիւն առած էր » . Լամբրոնացին այդպիսի պատճառ մը չտար , ուրիշ է անոր պատճառը , և ահա աւերկ , « վասնզի Նիկիոյ ժողովոյն կանոնն ալ կցուցնէ թէ երեք եպիսկոպոս իրար գալով իրենց նախաթառը ( Պատրիարքը ) կրնան ձեռնադրել , և եպիսկոպոսաց կարգ սահմանող տեփալիսին ( ցուցակի ) մէջ գրուած ալ

է՛ թէ Հայոց կաթողիկոսին պատու ( անկախութեան ) արուեսցաւ արդոյն Գրիգորի համար , ինչպէս որ Կիպրոս կղզւոյն տրուեցաւ Քառնարաս առաքելոյն համար , և արքեպիսկոպոսները իրենց եպիսկոպոսներէն ձեռնադրութիւն կառնուն . « ասիկա չէթէ մեր՝ այլ ձեր դրքերէն կրնանք ասպացուցանել » .

Կիպրոս կղզւոյն անկախութեան խնդրոյն հետ անբաժանելի նոյնութեամբ լուծուած կրնայ համարուիլ մեր պատրիարքութեան անկախ և ինքնորէն վարչութեան ինքիրն ալ . ասոր համար կուզեմք քիչ մը խօսիլ .

Միկիոյ սուրբ ժողովը պատրիարքութեանց բաշխման մէջ նորութիւն մը չբրաւ , այլ դէպքին ինքնին ըրածը՝ որ սովորութիւն կոեպուի , արքազանեց , Եկեղեցական իշխանութեան արտաքին ձևոյն մէջ՝ բոլոր կարեւորութիւնը սովորութեան վրայ հիմնած էր , անոր համար այնուհետև ամէն արքեպիսկոպոս , եպիսկոպոս և առաջնորդ այն հիման վրայ իր իշխանութիւնը կրս-



տուևարացունէր , և հինցունելու օրէնքի եւ իրաւունքի կերպարանօք ասոր անոր իշխանութեան սահմանը առնելու ձգտողներ ալ կըլլային : Այսպէս էր Անտիոքայ արքեպիսկոպոսին կամ պատրիարքին ըրածը , որով իւր իշխանութեան քեւ առնուլ կուզէր կիպրոս կղզւոյն եկեղեցին , որ անյիշատակ ժամանակէ 'ի վեր անկախ վարչութիւն մ' ունէր հանդերձ արքեպիսկոպոսով և եպիսկոպոսներով :

Երբոր դատը մեծցաւ և մինչև Եփեսոսի սուրբ ժողովոյն ատեանն ելաւ , արդարացաւ կիպրոսի եկեղեցին , և Անտիոքի Արքեպիսկոպոսը մեղադրելու ոճով մը ըսին սուրբ հայրապետները . « Պէտք չէ բառնալ մէկէն Յիսուսի Բըրիատոսի մեր ամենուս փրկչին արեամբը դնուած ազատութիւնը » :

Կիպրոսի արքեպիսկոպոսը առջի պէս «նկի» հրատարակուեցաւ :

Եթէ մեր՝ կեսարիոյ աթոռէն ունեցած անկախութիւնն իս սուրբ Ներսէս Լամբրոնացւոյն ըսածին պէս նիկիոյ

սուրբ ժողովոյն կանոններուն զօրութեան և սուրբ Լուսաւորիչ հօր ընծայուած կարևորութեան վրայ հիմնեալ չըլլար , անտարակոյս պիտի յուզուէր Եփեսոսի սուրբ ժողովոյն մէջ՝ աւելի ևս պատշաճութեամբ քան զնիպրոսինը , որուն անկախութեան թուականը խնդրոյ տակ կիյնար , մինչդեռ մեր կախման թուականը խիստ մօտ և յայտնի էր , և բնաւ կասկած չէր վերցունէր , լուծուելու համար հերիք էր՝ որ բողոքէր փրմոս կեսարիոյ Արքեպիսկոպոսը , որ ժողովոյն ներկայ էր , և զայրացած կրնար ըլլալ թերևս մեծին Սահակայ դէմ՝ որ Յունաց բաժնին մէջ կեսարու արքեպիսկոպոսին թեմը գտնուող Հայերն ալ նոյն ժամանակներուն առած էր իրմէն՝ թէոդոս կայսեր և Ատտիկոս Կ . Պօլսոյ պատրիարքին թոյլ տալովն : Ինչո՞ւ փրմոս չբողոքեց , չկրնար ըլլալ անոր համար , որ գիտէր՝ թէ Սեղբեստրոսը սուրբ Գրիգոր Լուսաւորչին արդէն անկախ պատրիարքութիւն տուեր էր , ինչպէս կրսեն պա-

պականք . որովհետեւ Լուսաւորչէն յե-  
տոյ մինչև ցճահակ իւր աթոռոյն հետ  
յարաբերութիւնը շարունակեցին . ո-  
րովհետեւ փիրմոս և ամէն խելքը դը-  
լուին եղող մարդ գիտեն՝ թէ Սեղբես-  
տրոսն այնչափ անարդար մարդ չէր՝ որ  
երկու աթոռոյ մէջ դրուած գաշինք մը  
առանց երկու կողմի գիտութեան աւ-  
րէր , և առանց գիտելու՝ թէ մէկուն ե-  
ղած շնորհքը միւսին զրկանք կրերէ՝ չու-  
նեցածէն հանէր մեծ շնորհք մը Հայոց  
եպիսկոպոսին ընէր . ինչու փիրմոս  
չբողոքեց , որովհետեւ գիտէր՝ թէ  
նահանգի մը եպիսկոպոսներն իրենց  
նախաթուր ( Պատրիարք ) կրնան ըն-  
տրել , և Բառնաբաս առաքելոյն շնոր-  
հիւ հիսպրոսի եկեղեցւոյն տրուած պա-  
տիւր , այն է անկախութիւնը , սուրբ  
Գրիգոր առաքելագործ հայրապետին  
շնորհիւ Հայոց եկեղեցւոյն ալ տրուե-  
ցաւ , ինչպէս կրտս սուրբ Ներսէս Լամ-  
բրոնացին :

Ուրեմն մեր եկեղեցւոյն անկախ և  
ինքնօրէն պատրիարքութիւնը հաստատ-

ուած է յեկեղեցակոն Էրասոնց , և ոչ Հը-  
ռովմէն . այս ճշմարտութեան գէմչեն  
զօրէր բնաւ պապական հայերուն անպա-  
տապար դառանցանքները և մեր հարց  
գրուածքներուն և պատմութեան վրայ  
ըրած այլանդակ քաջքշուքներն :

Մեր պատրիարքին կամ կաթու-  
ղիկոսին իշխանութեան ներքև կգա-  
նուին արքեպիսկոպոսական , եպիսկո-  
պոսական և առաջնորդական թե-  
մեր , որոնք իբր արարողական նիւթեր  
փոփոխութիւն կկրեն առանց բնաւ  
աստուածային սահմանադրութեան հի-  
ման դպչելու :

Արքեպիսկոպոսներն երբոր իրենց  
թեմի եկեղեցականներով ժողով մը կը-  
կազմեն , կրտուի այն թեմակոն ժողով .  
չատ մը թեմերու արքեպիսկոպոսներ  
երբոր պետութեան մը կամ ընդհա-  
նուր պատրիարքութեան մը սահմանին  
մէջ կժողովին , կրտուի այն սպէտին թ-  
ղէ :

Բոլոր պատրիարքութեանց եպիս-  
կոպոսներն և եկեղեցականներն երբոր

կժողովին, կըսուի այն՝ Ընդհանրական կամ Գեղեցեակն ժողով:

Եպիսկոպոսութիւնն այսպէս հասարակութեամբ կգործէ. իւրաքանչիւր եպիսկոպոսի տեսչութիւն եկեղեցւոյ ընդհանուր կառավարութեան «դեկրետ» է, ինչպէս անուանած են մեր հայրերը, (Տե՛ս Գլխորհ. Տէր Կասարանդոսոսոսոսոսոսոս 114): Եկեղեցւոյ կառավարութիւնը Բապտիստական չէ, այլ «Ընդհանրական» կամ հասարական. և Բեպիսկոպոսութեան միութիւնը անոր հասարական կամ հասարական գործովը կերևի:

Կարգի կամ ձեռնադրութեան տըւած իրաւունքները բոլոր եպիսկոպոսներու համար մի և նոյն են: Իսկ պատուոյ կամ իշխանութեան առաւելութիւնները որ աստուածային յատկութիւն մը չեն, այլ եկեղեցին իւր կողմէն կուտայ, կանոններով կբաշխըուին. զի կանոնն է անոնց հիմը:

Կանոնները ուրիշ պատրիարքներէ աւելի բացառիկ գերադոյն առաւելութիւն մը չեն տուած Հռովմի պատրի-

արքին, որմէն կհետևի՝ թէ իրաւունք չունի ինք զինք գլխորհ եկեղեցւոյ անուանելու, ուր կմնայ անհու համարելու, որի ձեռն սուրբ Հոգւոյն և խոստման Գրիստոսի յատկութիւնն է կաթողիկէ եկեղեցւոյ տիեղերական ժողովին: Կանոններու զօրութեամբ հռովմէական սահմանի մէջ եղող հինգ պատրիարքութեանց առջինն է միայն: Այս առաջնութիւնն ալ իւր պատրիարքութեանէ անկախ եկեղեցիներուն վրայ երբեք չէ տարածուած և չտարածուիր. իւրաքանչիւր ազգային եկեղեցի կկառավարուի իւր եպիսկոպոսներով. և երբոր բովանդակ եկեղեցւոյն վերաբերող խնդիր մը երևան գայ, հասարակական գործողութեան առաջնութիւնը այն եպիսկոպոսին կըլլայ, որնոր յատուկ պատճառ մը կունենայ ՚ի նպատտ ողջամիտ վարդապետութեան իրեն օգնութեան կանչելու եղբայր եպիսկոպոսներու ուղեկցութիւնը:

Երբոր ժողով մը կգումարի, անոր նախագահը, ըստ իրաւանց նուիրապե-

տութեան կարգի պատրիարքները կը-  
լան , ասոնք չեզաճ ասան մէկ կամ շատ  
մը եպիսկոպոս միանգամայն կնախա-  
դահեն , որ յետ պատրիարքաց կարևո  
որութիւն ունին եկեղեցւոյ մէջ :

Այս ժողովոյն վճիռները թէոր հա  
մօրէն եկեղեցին ընդունեց՝ ժողովը  
տիեզերականի յատկութիւն կունենայ .  
ինչպէս են Յնկիւրեայ , Կեսարիայ  
Նէոկեսարիեայ , Գանգրեայ , Լաւո-  
գիկեայ և Սարգիկեայ տեղական  
կամ թեմական ժողովները , անորոց կա-  
նոնադրութիւնները , կըսէ մեր ազ-  
գային ընդահանուր ժողովն որ ընդ-  
նախադահու թեամբ Գրիգորիս կաթու-  
ղիկոսին , ընդունելիք են մեզի , և  
ասոնցմէ ու ասոնց պէս ուղղափառ  
ժողովներէ սորվեցանք հաւատոյ դա-  
ւանութիւնը : Իսկ վճիռները կամ  
սահմանները ընդհանրական օրէնք կը-  
լան : Երբոր ժողովոյն յատկութիւնը  
զուտ տեղական է , անոր սահմանները  
այն եկեղեցեաց միայն կրկերաբերին  
որոնք որ ներկայ էին : Այս կանոնով

Քաղկեդոնի ժողովը մեզի հետ վերա-  
բերութիւն չունի իբր պէլական ժողով :

Այսպէսով ուղղափառ եկեղեցւոյ  
կառավարութիւնը եպիսկոպոսութեան  
հասարակական գործողութեան մէջ ը-  
լոր եպիսկոպոսաց իրարու ուղեկցութեամբ  
կանգուն է :



## Յ Ա Ն Կ

Յառաջարան հեղինակին	1
Թէ որն է հաւատոյ կանոնը	21
Հաւատոյ կանոնին վրայ քրիստոնէից եկեղեցիներուն մէջ եղած տարբերու- թիւնները	34

## Ի Ս Ս Ն Ա Ռ Ա Ռ Ն

Ուղղափառ եկեղեցւոյ վարդապետու- թիւնը	42
Ա. Երրորդութիւն	45
Երրորդութեան վարդապետութեան վրայ քրիստոնէից եկեղեցիներուն ունե- ցած տարբերութիւնները	49
Բ. Աշխարհ	52
Այս գլխոյն պարունակած վաղապե- տութեան վրայ քրիստոնէից եկեղե- ցիներուն մէջ եղած տարբերութիւն ները	60
Գ. Մարդեղութիւն	67
Մարդեղութեան վարդապետութեան	

Վրայ քրիստոնէից եկեղեցիներուն տարբերութիւնները	71
Դ • Փրկագործութիւն	74
Փրկագործութեան վարդապետութեան վրայ քրիստոնէից եկեղեցիներուն մէջ եղած տարբերութիւնները	80
Ե • Հոգին սուրբ	85
Հոգւոյն սրբոյ վրայ քրիստոնէից եկեղեցիներուն մէջ եղած տարբերութիւնները	88
Զ • Եկեղեցի	94
Եկեղեցւոյ վարդապետութեան վրայ քրիստոնէից եկեղեցեաց մէջ եղած տարբերութիւնները	108
Է • Մկրտութեան եւ եկեղեցւոյ միւս խորհուրդներուն վրայ	117
Մկրտութիւն	119
Դրոշմին կամ սուրբ միւռոնի օծման վրայ	124
Հաղորդութիւն	128
Ապաշխարութիւն	131
Կարգ կամ քահանայութիւն	136
Ամուսնութիւն	139
Օծումն հիւանդաց	143
Ընդհանրապէս խորհրդոց վրայ եղած տարբերութիւնները	145

Ա • Մկրտութեան վրայ եղած տարբերութիւնները	150
Բ • Դրոշմին վրայ եղած տարբերութիւնները	152
Գ • Հաղորդութեան խորհրդոյն վրայ եղած տարբերութիւնները	155
Դ • Ապաշխարութեան խորհրդոյն վրայ եղած տարբերութիւնները	164
Ե • Կարգին կամ քահանայութեան վրայ եղած տարբերութիւնները	181
Զ • Ամուսնութեան վրայ եղած տարբերութիւնները	188
Է • Վերջին օծման վրայ եղած տարբերութիւնները	190
Ը • Յարութիւն մեռելոց եւ կեանք յաւիտենական	192
Մեռելոց յարութեան եւ հանդերձեալ կենաց վրայ եկեղեցեաց մէջ եղած տարբերութիւնները	198

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ՝

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՅԻՈՅ

Ա • Ընդհանուր սկզբունք	202
Այս վարդապետութեան վրայ քրիստոնէաց եկեղեցեաց տարբերութիւնները	209

Բ. Աստուածային դրական օրինք	217
Առաջին պատուիրան	220
Հաւատք	223
Յայս	226
Սէր	227
Պաշտումն	230
Պաղատանք	232
Խնդրուած առաջին	234
Խնդրուած երկրորդ	236
Խնդրուած երրորդ	239
Խնդրուած չորրորդ	241
Խնդրուած հինգերորդ	244
Խնդրուած վեցերորդ	247
Խնդրուած եօթներորդ	249
Երկրորդ պատուիրան	254
Երրորդ պատուիրան	258
Չորրորդ պատուիրան	259
Հինգերորդ պատուիրան	263
Վեցերորդ պատուիրան	265
Եօթներորդ պատուիրան	267
Ութերորդ պատուիրան	269
Իններորդ պատուիրան	270
Տասներորդ պատուիրան	272
Աստուծոյ օրինաց վրայ քրիստոնէական	
եկեղեցեաց տարբերութիւնները	273
Գ. Բացատրութիւն աւետարանական	

կան օրինաց Աստուծոյ	280
Առաջին երանութիւն	282
Երկրորդ երանութիւն	291
Երրորդ երանութիւն	295
Չորրորդ երանութիւն	299
Հինգերորդ երանութիւն	303
Վեցերորդ երանութիւն	305
Եօթներորդ երանութիւն	208
Ութերորդ երանութիւն	313
Իններորդ երանութիւն	315

ՄԱՍՆ ԵՐՐՈՒՂ

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Ա. Սկզբն կարգաց կամ օրինաց եկեղեցոյ	318
Բ. Աարարողութեան առարկայները	325
Գ. Կառավարութիւն եկեղեցոյ	128




3495

25-

146  
25

UK

« Ազգային գրադարան »  
  
NL0030290





